

ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

مارزیک


مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԷ ՏԱՐԻ, 2008, ԹԻԻ 7 - 10 (313 - 316) VOL. XXVII N° 7 - 10 السنة السابعة والعشرون - العدد ٧-١٠





**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ԱՆԴԱՄՍ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ
ՈՐ Ի ՊԵՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ**

Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան ժրագան անդամներիդ:

Գոհունակութեամբ փեղեկացանք, որ այս փարի յոբելեանական հանդիսութիւններով փօնախմբուելու է հիմնադրման 90ամեակը Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, որ ինք փասնամեակներ շարունակ իր գնահատելի առաքելութիւնն է քերում ազգային մեր կեանքի անդաւրանում:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան երկարամեայ գործունէութիւնը եւ Ապրուածահաճոյ ընթացքը զարդարուած է գովելի շեռնարկների իրականացմամբ, օգտաշար շեռքերումներով՝ ի նպաստ նոր սերնդի դաստիարակման, ազգային ինքնագիտակցութեան գորացման եւ սրբազան մեր արժէքների հանդէպ նախանշախնդրութեան ամրապնդման:

Կոչուած նուիրական առաքելութեան, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան երախտաւորները ծառայական ոգի ու կամք են ներդրել՝ իրագործելով իրենց Ապրուածահաճոյ նպատակները՝ ի խնդիր հայութեան համընդհանուր զարթօնքի ու առաջընթացի: Ուրախութիւն է Հայրապետիս համար, որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան անդամներդ նոր յանձնառութիւններով եւ ծրագրերով շարունակում էք Ձեր նախորդների գովարժան գործունէութիւնը:

Ի խորոց արփի շնորհատրում եւ Մեր գնահատանքն ու օրհնութիւնն ենք քերում Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Կենտրոնական Վարչութեանը, յարգարժան բոլոր անդամներին նշանակալի այս յոբելեանի առիթով եւ յորդորում, որ նոյն քաջեռանդութեամբ եւ նուիրումով շարունակէք Ձեր արդիւնաւոր ընթացքն ու Միութեան քարի աւանդները՝ Ձեր կեանքն ու վաստակն ընծայաբերելով ազգանպաստ ու եկեղեցանուէր գործերի:

Աղօթում ենք առ Տէրն Ամենակալ, որ Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ իր գօրակցութիւնն ու օգնականութիւնը քերելով՝ շնորհի գործոց մշտանորոգ յաջողութիւններ եւ երկնապարզեւ բիր բարիքներ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄ ԲԻՍՏՈՒՅ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՍՕՔՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՄ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԵԿԻՈՅ**

**ՇՆՈՐՀԲ, ՄԵՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՏԵԱՌՆԸ ԵՒ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ՄԵՆՋ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՅՁՈՅ ՍՐԲՈՅ ՀՕՐԱ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՌՈՐՅՈՒՆ**

**ԱՌ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ
ՊԵՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կարողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն քրիստոնէական ջերմ սիրով ու հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութիւնը:

Ուրախութեամբ իմացանք, որ 2008 տարին 90-ամեակն է Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան: Տարիները միութեան մը կեանքին մէջ ոչինչ կ'արժեն երբ անոնք չեն լեցուած գործով, ծառայութեամբ, նուիրումով: Այլ խօսքով, արժէքը տարիներու թիվն մէջ չէ, այլ՝ տարիները հաւատքով ու գործով կենսատրոյղ ծառայութեան մէջ:

Արդարեւ, 90 տարիներու վրայ տարածուած Հ.Մ.Ը.Մ.ի կեանքը կարելի է արդարօրէն բնորոշել որպէս խոր հաւատքով զսպանակուած ու անանձնական նուիրումով շարձախուած հաւարական ծառայութիւն: Ի խնդիր մեր եկեղեցւոյ, ժողովուրդին ու հայրենիքին սրբազան արժէքներուն ու գերագոյն երազներուն կենսագործման: Հաւարական ծառայութիւն մը, որ իրագործուեցաւ մարդակերտումի ու հայակերտումի ճանքով, մեր բարոյական ու ազգային արժէքներու ու ասնդրութիւններու տարածումով, մեր պատանիներն ու երիտասարդները ազգային կառայցներու շուրջ համախմբելով:

Այսպէս ըմբռնեց ինքզինք Հ.Մ.Ը.Մ.ը եւ այս գիտակցութեամբ մեր գաղութներու կեանքէն ներս հսկայ աշխատանք կատարեց: Հակմտակ իր նիւթական ասինմանափակ կարեկիրութիւններուն ու շրջապատի դժուար պայմաններուն, գոհողութեան ոգիով եւ նոր սերունդներուն կեանքին մէջ ճշմարիտ հայը կերտելու յանձնառութեան մղուելով, Հ.Մ.Ը.Մ.ը իր կարելին կատարեց ու կարելին տուաւ մեր ազգի զաւակներուն:

Ու այսօր, 90 տարիներ յետոյ, Հ.Մ.Ը.Մ.ը տիրական ներկայութիւն է հայ կեանքէն ներս, Հայաստանէն սկսեալ Սփիւռքի ողջ տարածքին: 90 տարիներու հարուստ փորձառութեամբ հզօրացած, այսօր Հ.Մ.Ը.Մ.ը վերանորոգ զաւատքով ու նուիրումով կը ծառայէ անխտիր մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն:

Այս ուրախ առիթով Մեր Հայրապետական օրհնութիւնն ու գնահատանքը կը փոխանցենք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, ինչպէս նաեւ՝ բոլոր մասնաճիւղերուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի սնն ընտանիքի բոլոր անդամներուն:

Ողջ լեռուք ի Տէր, գօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւտ օրհնեալ ի Մե՛ջ. Ամեն:

Աղբաւ Ա.

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԵԿԻՈՅ**

*Տուաւ Հայրապետական Օրհնութեան Գիրս այս
Ի Կարողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Որ յԱնթիլիաս, 2008 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆՃԷ:*





Հ.Մ.Ը.Մ.Ի 90 ԱՄԵԱԿԻ ԲԱՅԱՌԻԿ ԱՅՍ ԹԻՒԸ

Բ. կողմ Գիր Հայրապետական Օրհնութեան և գնահատանաց
Գարեգին Բ. Կարողիկոս Ամենայն Հայոց
1 Հայրապետական Օրհնութեան Գիր
Արամ Ա. Կարողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ
Գ. կողմ Հաւատք, սէր և միութիւն
Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւն

2 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Գործ ու արդիւնք

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԵՐ

9 Օրհնութեան գիր Թորգոմ Արք. Մանուկեան

13 Պարբիս արժանատրաց Գեղամ Եպս. Խաչերեան

19 Հ.Մ.Ը.Մ. մեր արդար հպարտութիւնը
Շահան Եպս. Սարգիսեան

35 Յաղթանակի դրօշը Մուշեղ Արք. Մարտիրոսեան

43 Յառա՛ջ դէպի յաղթանակ Օշական Արք. Չոլոյեան

53 Առաջին դպրոցը՝ Հ.Մ.Ը.Մ.
Խաճակ Արք. Յակոբեան

59 Գիր օրհնութեան Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակին առիթով
Գիսակ Արք. Մուրատեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

67 Սրբի խօսք Հայաստանի անկախութեան և
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակներու առիթներով
Աւագ Արք. Ասատուրեան

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

5 «Մի՛շտ պատրաստ» Գրիգորիս Պողարեան

6 Դպրոցներուն դպրոցը Կարալիս Գալասազալեան

7 Ի խնդիր Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարներու և
նպատակներու իրականացման Գօգօ Պալեան

8 Պարասխաններ փնտրող հարցումներ
Միհրան Շիմշիրեան

10 Հպարտ ու երախտապարտ Վահրամ Գանիլեան

11 Հ.Մ.Ը.Մ. հայութեան երկրասարդութիւնը,
հայութեան ապագան Յարութ Յարութիւնեան

16 Բարոյական զինուորագրութիւն
Գանիկ Մկրտիչեան

20 Ծանօթանանք անցեալին, ճանչնանք ներկան,
ծրագրենք մեր վաղը Վարուժան Սերոբեան

22 Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակ Արրահամ Ահարոնեան

25 Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակին առիթով
Հրաչ Տէր Սարգիսեան

26 Հայօրէն ապրելու և գործելու հրամայականը
Պետիկ Սապունճեան

27 Երկար, արդիւնաբեր և անասան երթ
Համլէթ Չրախճեան

28 90ամեակ Հ.Մ.Ը.Մ.ի Մանուէլ Հալլաճեան

32 90 տարեկան, բայց մի՛շտ երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ը
Սարգիս Մահտէրճեան

36 Միշտ աւելի բարձր Վրէժ-Արմէն

38 Ամրակոտ բանակը՝ Հ.Մ.Ը.Մ.
Մեթր Փազ Չոլխատարեան

39 Միշտ ծառայելու պատրաստ Յակոբ Հաւաթեան

40 Պահակը Յ. Չորեցի

41 Բարձրանալու և բարձրացնելու հրամայականը
Չաւեն Թորիկեան

42 Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին փակ Տոքթ. Սուրէն Պայրամեան

44 Հ.Մ.Ը.Մ. 90 տարեկան Կարալիս Գույումճեան

46 Դէպի 100ամեակ Մանուկ Քեօշկերեան

47 90ամեայ դպրոցը՝ Հ.Մ.Ը.Մ. Ալին Պէննէեան

47 Ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.ական պարասխանարուններ ենք
Պետիկ Գասպարեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

48 90ամեայ յրեւելար միութեան պաշտօնաբերը՝
«Մարգիկ» Սաթենիկ Գրիգորեան

ՅՈՒՇԵՐ

52 Յուշեր և դէմքեր Հրաչ Պիտեռեան

54 Մանկութեան յուշեր Արմէն Կետիկեան

56 Յուշ մը անցեալէն Ժիրայր Սարգիսեան

57 «Գեղին ստրկանները» Վեթերան մը

58 Յուշ մը անցեալէն Վարուժան Սերոբեան

90ԱՄԵԱԿԻ ԱՅՍ ԹԻՒԸՆ ԴՈՒՐԻՍՏՈՒՆԵՐԸ

1000ական ամերիկեան րոյտի նուիրաբնութեամբ,
«Մարգիկ»ի այս բացառիկ քիւի
ծախսերուն կը մասնակցին.-
Փարիզէն փեր և փիկին Հրաչ և Էլիզապէր Միսեռեաններ,
փեր և փիկ. Ալլաք և Վարդուհի Քէլէշեաններ,
փեր և փիկ. Լեւոն և Հուրի Պաղտասարեաններ,
փեր և փիկ. Կասի և Մեղա Պոստոյեաններ
և Անդրանիկ Պահարեան:
Պէյրուքէն Պայրարեան եղբայրք:

60 Յուշեր, յիշարակներ Հալեպէն Զարեհ Տերվիշեան
64 Հ.Մ.Ը.Մ.ը իր կեանքին իմաստին վերածած եղբոր
մը խօսքը՝ 90ամեակին առթիւ Խորեն Քիրազեան
66 Փշրանքներ Հալեպի «առաջին փողոց»
պարունութենէն Յարութիւն Տերվիշեան

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

70 Պարունութեան Հ.Մ.Ը.Մ.ական էջերը Վ. Աւագեան
84 Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը իր բնօրրանին մէջ
«Խուզարկու»
89 Պիպի մարմնակրթէն նը Հայաստանը
Վահան Չերազ
90 90ամեայ պարունութեան դարբինները
(Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանակիրները)
92 Մահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշարակին
Պ.Գ. Մերճանֆ
94 Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը
Մերչատր Արեւելքի մէջ (Ե. մաս - անդիպ)
Ներսէս Արք. Բախտիկեան

ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

98 Հիմնադիրներուն պատգամը
99 Վահան Չերազ՝ հայրենիքի մասին
100 «Մեր ուժերուն մինչեւ վերջակէտը...»
«Մարմնամարզ»
102 Մեր գաղափարականը «Հայ սկառու»

ՉՀԻՆՅՈՂ ԷՉԵՐ

106 Հայ ինքնութեան փարոսը Ա. Ուրֆալեան
107 «Բարչրացի՛ր-բարչրացուր» Յ. Գեղարդ
108 Մեր փառքը Եղիշէ
110 Հ.Մ.Ը.Մ.ականը Երուանդ Տէմիրճեան

90ԱՄԵԱԿԷՆ ԱՆԳԻՆ

112 Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրարգումի
յանձնախումբին անդամները կը նային դէպի
100ամեակ եւ անկէ անդին
(Հարցազրոյց՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան
ռազմավարական ծրարգումի
յանձնախումբի անդամներուն հետ)

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԷՉԵՐ

120 Զօն Հ.Մ.Ը.Մ.ին Ծախանդուխտ
121 Ժրանշան Հ.Մ.Ը.Մ.ին Ծախպան
126 Պարիւռ ու փառք քեզ Հ.Մ.Ը.Մ. Միեր Գալիթեան
127 Սկառուքի երգը Գուրգէն Մահարի
128 Հ.Մ.Ը.Մ. Արմէն Անոյշ
129 «Բարչրացի՛ր-բարչրացուր» Ք. Ժպտունի

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍԻՆ

14 Հայ Եկեղեցույ Հայրնայեաններ
30 Հասարակական գործիչներ
50, 62 Սփիռքահայ մշտնորակներ
82 Հիմնադիր սերունդի անդամներ
104, 118 Վասարակաշար Հ.Մ.Ը.Մ.ականներ
130 Հանրածանօթ դէմքեր

90ԱՄԵԱԿԻ ԱՌՕՐԵԱՅ

132 Հարողագրութիւն
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն
134 Ծառաշէ-Քրիսեանի անուան լսարանի
բացում եւ զիպածողով
136 Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան
այցելութիւնը Ամենայն Հայոց Գարեգին Բ.
Կարողիկոսին
136 ... Եւ Սփիռքի պեպական կոմիտէի նախագահ
Հրանուշ Յակոբեանին
137 Յեղասպանութեան զոհերու յիշարակին
Ծառապնկում Ծիծեռնակաբերդի մէջ
138 Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական
Ե. համագումարը Սեդա Պէշլեան
145 Ո՞վ է հայը Սեդա Պէշլեան
146 Խմբապետական Ե. համագումարի
մասնակիցներու փառաբանութիւններ
148 Հ.Մ.Ը.Մ.ի 100րդ մասնաճիւղի
հիմնադրութիւն՝ Մոսկուայի մէջ
150 Հ.Մ.Ը.Մ.ի Պուլիպարիոյ սկառուքական
միջ-մասնաճիւղային բանակումը Թղթակից
152 Տարբեր հայեացքով Էլի Հուլիշեան

ՆԵՐԳԻՐ՝ 90ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՈՐՄԱՁԳ


«ՍԱՐՁԻԿ» Մարզական ամսաթերթ - Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԻԷ. ՏԱՐԻ, 2008, ԹԻԻ 7-10 (313-316)

ԽՄԲԱԳՐԻ Վիզէն Աւագեան ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան
«ՍԱՐՁԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ Պատրիկ Կիւլպէնկեան, Արօ Մոսիկեան, Գօգօ Սկրտիչեան, Վահան Համամճեան,
Տիրան Շահինեան, Սալբի Եճէճեան, Վահէ Թանաշեան

ԷՋԱՐՈՒՄ Զարեհ Չէօրքճեան ԳՐԱՇԱՐՈՒԹԻՒՆ Շողիկ Պոյաճեան, Վերա Բարսեղեան
Colour Separation - Photogravure Paklayan Կողքի եւ Որմազդի Չեւաւորում Y concept Տպագրութիւն

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ Պուրճ Համուտ, Երևանի Թաղ, «Սեւան» Շէնք, Գ. Յարկ, Հեռ: 01/248043,
Fax: 01/260117 E-mail: marzig@homenetmen.org, P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ Լիբանանի մէջ թերթին տարեկան բաժանորդագրութեան սակն է 35000 լ.ո.:
Լիբանանէն դուրս թերթին բաժանորդագրութիւնը կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի եւ Շրջանային
Վարչութիւնները: Թերթը ուղղակի Լիբանանէն կը ստացուի անձնական բաժանորդագրութեամբ.- տարեկան սակ՝
Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ \$50, Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55:



ԳՈՐԾ ՈՒ ԱՐԴԻՒՆՔ



Ժուար է սահմանել այն, որ կը զգացուի, կ'ապրուի, բայց չի կրնար գրուիլ: Այն, որ մեր առօրեայ կեանքին մաս կը կազմէ, բայց այդ կեանքէն վեր կը մնայ, իբրեւ գործ ու արդիւնք:

Յ.Ս.Ը.Ս. մաս կը կազմէ մեր առօրեային եւ իր գործով ու արդիւնքով խօսուն, շարժուն, կենդանի՝ իրականութիւն է, որուն տրոփուն բազկերակները կու գան վկայելու, թէ գոյութիւն ունի հայ երիտասարդութեան ներկայ մը, շնչող, ապրող ներկայ մը, որ իր սեփական աճումին կը գումարէ տարիները:

Յ.Ս.Ը.Ս. 90 տարիէ ի վեր մեր կեանքին մէջ ներկայ մըն է, որ կոչուած է նաեւ ապագայ ունենալու, այնքան ատեն որ ան կը հասնի հո՞ն, ուր հայ մարդիկ ազգապահպանման տենչով իր կարիքը ունին, իրեն կը սպասեն:

Յ.Ս.Ը.Ս. աւելին է՝ քան մարմնակրթական սովորական միութիւն մը: Ու եթէ այդպէս չըլլար, անկարելի պիտի ըլլար հասկնալ այն մեծ զարգացումը, զոր այս միութիւնը ունեցաւ, մեծցաւ եւ ուռճացաւ, աշխարհի հինգ ցամաքամասերուն մէջ ծնունդ տալով 100 մասնաճիւղերու:

Հայը հպարտ է Յ.Ս.Ը.Ս.ով, օտարը իր յարգանքը չի սակարկեր Յ.Ս.Ը.Ս.ին: Արդարեւ, 90 տարի շարունակ, Յ.Ս.Ը.Ս. եղաւ իր առաքելութեան եւ կոչումին գիտակից այն միութիւնը, որ հաւատք եւ ոգի ներշնչեց հայ երիտասարդութեան, լծուեցաւ երախտաշատ աշխատանքի, պետական հասունութիւն ցուցաբերող միութեան մը մօտեցումով:

Յ.Ս.Ը.Ս.ի գաղափարապաշտ հիմնադիրներու ոգին միշտ վառ մնաց սրտին մէջ այն բազմահազար երիտասարդներուն, որոնք իրենց կորովն ու խանդավառութիւնը ի սպաս դրին հայանուէր այս

միութեան վերելքին ու զարգացման:

Հայկական Յեղասպանութենէն անմիջապէս ետք, հրաշքի մը պէս յարութիւն առնող մեր ժողովուրդին ապրելու եւ յաղթանակելու կա՛մքը մարմնաւորեց Յ.Ս.Ը.Ս.:

Անկասկած, բազմաթիւ դժուարութիւններ դիմագրաւեց ան իր գոյութեան ընթացքին: Եւ սակայն, հաւատքով ու վստահութեամբ շարունակեց իր երթը եւ այդ հաւատքով ու վստահութեամբ ալ յաղթահարեց բոլոր դժուարութիւնները, շնորհիւ մեր աննման ժողովուրդին, որ իր սրտին այնքան մօտ զգաց այս միութիւնը, վստահեցաւ ու հետեւեցա՛ւ անոր:

Անցնող 90 տարիներուն, Յ.Ս.Ը.Ս.ի ակումբներուն եւ դաշտերուն մէջ նկարագիր եւ դիմագիծ ստացած երիտասարդներուն թիւը դժուար է ճշդել, առանց հաշուելու համակիրները, որոնք տասնեակ հազարներով բոլորեցան անոր շուրջ: Այսպէս, քանի մը սերունդ կրթեց, ոգեւորեց, ներշնչեց եւ մեր ժողովուրդին յանձնեց Յ.Ս.Ը.Ս.:

Այսօր, 26 հազարի կը հասնի Յ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիքի անդամներուն թիւը: Հին ու նոր անդամներ, մեծ թէ փոքր, բոլորն ալ իրենց հոգիէն, մտքէն ու հանգիստէն բան մը կը զոհաբերեն, բարձր բռնելու համար այն դրօշը, որ իրենց աւանդ ձգուեցաւ միութեան հիմնադիրներուն կողմէ, իբրեւ մեր նահատակներու ձեռքէն փոխանցուած անմար ջահ:

Փա՛ռք այդ պանծալի դրօշին:

Պատի՛ւ այդ դրօշը բարձր բռնած եւ պատնէշի վրայ կանգնած «Կամաւոր բանակ»-ի իւրաքանչիւր «գինուոր»-ին:

Եւ յարգա՛նք այս մեծ միութեան, որ իր գործով ու արդիւնքով ազգային բարիք եւ շունչ տուաւ մեր կեանքին, իր անջնջելի կնիքը դնելով անցնող 90 տարիներու մեր պատմութեան վրայ:

«ՄԻ՛ՇՏ ՊԱՏՐԱՍՏ»

Գրիգորիս Պողարեան
ՊԷՅՐՈՒԹ

Սկառուտական կեանքին մէջ յաճախ լսուող «Մի՛շտ պատրաստ»ը խտացուած արտայայտութիւնն է մշտանորոգ խոստումի եւ յարատեւ նուիրումի, աշխատանքի եւ անձնուրաց գոհողութեան: Հ.Մ.Լ.Մ-ի շարքերէն ներս, սակայն, «Մի՛շտ պատրաստ»ը սկառուտական շրջանակէն դուրս ելլելով դարձած է սեփականութիւնը իւրաքանչիւր իրաւ Հ.Մ.Լ.Մ-ականի, եւ ահա ճիշդ այս պատճառով իսկ Հ.Մ.Լ.Մ-ը կարողացած է 90 տարիներ բոլորել: Բայց երթը հոս կանգ պիտի չառնէ, այլ պարզապէս խոկումի ու յուշերու կարճատեւ վերապրումէ ետք, երթը պիտի շարունակուի թարմացած ոգեւորութեամբ, առաւել զօրացած կամքով, եւ ըստ կարելոյն լաւապէս սերտուած ռազմավարութեամբ:

90ամեայ Հ.Մ.Լ.Մ-ը այսօր կը հաշուէ 100 մասնաճիւղ եւ աւելի քան 25 հազար անդամ: Մերօրեայ հայ իրականութեան մէջ յիշեալ թիւերը իսկապէս տպաւորիչ են ու հպարտառիթ: Թիւերէն անդին կը մնայ թաքուն պատգամը եւ գործի մղող խթանը: Պէտք չէ, եւ իրաւունքն իսկ չունինք անցեալի փառքերով գոհացած՝ ներկայի մարտահրաւէրները անտեսելու: Այսօր Հ.Մ.Լ.Մ-ի գործադաշտը անհամեմատ չափերով ընդարձակուած է եւ կ'ընդգրկէ հինգ ցամա-

քամասեր, ներառնելով Հայաստանը, Զաւախքը, ինչպէս նաեւ՝ աւանդական ու նոր սփիւռքները: Այո, այսօր գործի կարելիութիւնները աւելցած են, հետեւաբար առաւել հաստատակամութեամբ պարտինք գործել, անսալով «Մի՛շտ պատրաստ»ի հրամայականին:

Թող որ 90ամեակը պարզապէս յուշարարը ըլլայ անցեալի իրագործումներէն թելադրուած՝ դալիքի աշխատանքները կողմնորոշելու մեր գործընթացին: 90 տարիներու վրայ երկարող յաջողութիւններէ գօտեպնդուած եւ պատահական ճախողութիւններէ դասեր քաղած, միութեան նուիրեալ հիմնադիրներուն վճռակամութեամբ շարունակենք Հ.Մ.Լ.Մ-ի երթը: 90ամեակի պատգամը հաւասարապէս բոլոր Հ.Մ.Լ.Մ-ականներուն է: Իւրաքանչիւրս ունի իր ընկիւնքը, կակուղ թաթիկէն մինչեւ արեւներ Հ.Մ.Լ.Մ-ականը, եւ ի գուր չէ որ մենք մեզ քոյր եւ եղբայր կ'անուանենք: Ճիշդ է որ Հ.Մ.Լ.Մ-ի ընտանիքը մեծցած է եւ տակաւին պիտի մեծնայ, սակայն նոյնքան ճիշդ է, որ ամէն մէկ անդամ, անխորտիր, ընկիւք ունի: Հ.Մ.Լ.Մ-ի ձեռքբերումներն ու յաջողութիւնները հաւաքական կամքի արտայայտութիւններ եւ միացեալ ճիգերու արդիւնքներ եղած են միշտ ու պիտի շարունակեն ըլլալ:

Ուրեմն, 90 տարիներու ընդմէջէն եկող կոչին անսալով, սկառուտի վճռակամութեամբ հաւաքաբար գոչենք «Մի՛շտ պատրաստ» շարունակելու Հ.Մ.Լ.Մ-ի ազգանուէր ու սրբազան գործը՝ նոր յոբելեաններ նուաճելու հեռանկարով:



ՊՐՈՑԵՆԵՐՈՒՄ ՊՐՈՑԵԸ



Կարպիս Գապասագալեան ՊԵՅՐՈՒԹ

Այսպէս թէ այնպէս, մեծին ու փոքրին առօրեային հետ շաղախուած է դպրոցը: Կեանքի բնական ընթացքով, այնպէս մը տնօրինուած է, որ մեր մանկութեան օրերէն իսկ դպրոցի ճամբան կը բռնենք:

Երբ դպրոց կ'ըսենք, կը հասկընանք, որ հոն կայ դասարան, դասատու եւ աշակերտ, ուր դասատուն ուսուցանողն է, իսկ աշակերտը՝ ուսանողը:

Կեանքի մէջ հաւանաբար այլ դպրոցներ ալ կան, բայց դպրոցներուն դպրոցը Հ.Մ.Ը.Մ.ն է:

Հ.Մ.Ը.Մ.ը մեծ դպրոց մը ըլլալով՝ չունի տնօրէնի, դասատուի եւ աշակերտի դիրք ու հասկացողութիւն: Հոն բոլորը շողկապուած, միաւորուած են եւ դարձած են մէկ ամբողջութիւն:

Գայլիկը երբ ծնողքին առաջնորդութեամբ առաջին անգամ ոտք կը դնէ ակումբ, հոն իր նմաններուն հետ խաղի կը տարուի ու կը բռնուի: Կեանքի հոլովոյթին ընթացքով իսկ ամէն ինչ խաղ է:

Օրերը, շաբաթները, ամիսները եւ տարիները իրարու կը յաջորդեն ու գայլիկը կը դառնայ արի, երէց, ապա վարչական:

Միութեան անզուգական ու հոգեպարար նշանաբանը՝ «Բարձրացի՛ր՝բարձրացուր»ը, որ առանձին դպրոց մըն է, ինքն իր մէջ կը պարունակէ մարդկային բոլոր տեսակի բարեմասնութիւններ, որոնք մարդը կ'ազնուացնեն ու կը հզօրացնեն: Ան քեզ կը մղէ, որ հայօ-

րէն ապրիս եւ հայու ճակատագրին իբրեւ ժառանգորդը գիտնաս անշեղ հետապնդել պապերուդ կտակը: Ան քեզ կը ստիպէ ինքնազարգացումի ու ինքնակերտումի, որպէսզի կարողանաս դէմ յանդիման գտնուիլ կեանքի բոլոր փորձութիւններուն եւ իբրեւ զինուած ու քաջարի մարդ՝ գիտնաս յաղթահարել կեանքի բոլոր դժուարութիւնները, բարոյական ըմբռնումներով եւ հասկացողութիւններով: Այս բոլորով կը դառնաս ինքնավստահ ու վեհանձն, որուն շնորհիւ կը դառնաս իսկական արժանաւոր մարդը ընտանիքիդ, անմիջական շրջապատիդ եւ ի մասնաւորի ազգիդ, որ ծնունդ տուաւ քեզի:

Հ.Մ.Ը.Մ.ը նաեւ կախարդական ոգի մը ունի: Ան կը սորվեցնէ սիրել:

Սիրել նմաններդ, սիրել բնութիւնը, սիրել կեանքը, ի վերջոյ սիրել ինչ որ նախախնամութիւնը մեզի պարգեւած է: Կեանքի մեծագոյն գաղտնիքներէն է սէրը: Երբ սիրել գիտես եւ առօրեադ անով միախառնես կը դառնաս առաքինի մարդ ու կը սկսիս ունեցածդ անհաշիւ տալ: Տալը հաճոյք է, ան նաեւ քեզ կը հարստացնէ ու կը յաւերժացնէ:

90 թուանշանը կրնայ մեծ կամ շատ թուիլ, սակայն շնորհիւ միութեան իմաստուն հիմնադիրներուն ճշդած ուղիին, որդեգրած գաղափարաբանութեան եւ հետապնդած նպատակներուն, ան կը մնայ անժամանց եւ պիտի չնչէ առյաւէտ:

Փա՛ւք Հ.Մ.Ը.Մ.ը ծնողներուն, Պատի՛ւ իրեն ծառայողներուն, Պարծա՛նք զայն անմահացնողներուն:

Ի ԽՆԴԻՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՒ ԵՒ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

**Գօգօ Պալեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ**



ատանի էի, երբ Լիբանանի մէջ առաջին անգամ ըլլալով առիթը ունեցայ առնչուելու Հ.Մ.Ը.Մ.ին հետ: Այդ օրը ճակատագրական եղաւ ինծի համար, որովհետեւ հետագային, կեանքիս երիտասարդ ու հասուն տարիները ամուր կապեց այդ ժամանակ դեռ 40ամեայ կազմակերպութեան: Սկիզբը Լիբանանի, ապա՝ Միացեալ Նահանգներու մէջ, Հ.Մ.Ը.Մ.ը դարձաւ առօրեայ կեանքիս անբաժան մասը:

Անցնող տարիներուն ընթացքին, առիթը ունեցած եմ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներու հետ աշխատելու, սակայն յատկապէս կ'ուզեմ նշել, որ հանգուցեալ եղբայրներ Վարդգէս Տէր Կարապետեանի եւ Ժիրայր Պոյաճեանի հետ աշխատելու տարիները ինծի համար մեծ դեր ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի մէջ:

Այսօր, հազարաւոր անդամներ ունեցող մեր կազմակերպութիւնը իր 90ամեակը կը նշէ, եւ դիւրին չէ խօսիլ անցած տարիներու իրագործումներուն,

յաջողութիւններուն, ինչպէս նաեւ թերացումներուն մասին:

Արդեօք յաջողա՞ծ է Հ.Մ.Ը.Մ.ը իր գործունէութեան մէջ:

Վճռականօրէն կրնամ ըսել՝ այո՛: Հպարտութեամբ կրնամ ըսել այո՛, քանի որ սեփական անձս Հ.Մ.Ը.Մ.ի յաջողութեան լաւագոյն օրինակներէն է: Հայրենիքէն հեռու, այս կազմակերպութիւնը զիս հայ պահած է՝ հաւատարիմ եկեղեցւոյ, համայնքին, Հայ Դատին: Եւ ինծի նման հարիւրներ, հազարներ: 90 տարիներ շարունակ Հ.Մ.Ը.Մ.ը դաստիարակած ու կրթած է հայրենիքին ու ժողովուրդին նուիրուած, պատասխանատու եւ գիտակից բազմաթիւ սերունդներ:

Կը շնորհաւորեմ բոլորը, մեր հարազատ կազմակերպութեան 90ամեակին առիթով: Եւ վստահ եմ, որ այսուհետեւ եւս, բոլորս մեր ջանքերը կը համախմբենք միասին ծառայելու, ի ինդիր Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարներու եւ նպատակներու իրականացման:



ՊԱՏԱՄԻԱՆՆԵՐ ՓՆՏՈՒՂ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ



Միհրան Շիմշիրեան ՊԵՅՐՈՒԹ

90 տարիներ անցած են Հ.Մ.Լ.Մ-ի հիմնադրու-
թեան թուականէն: 90 տարիներ, որոնց ըն-
թացքին պատահած են քաղաքական եւ ըն-
կերային այնպիսի դէպքեր, ուր մարդկու-
թեան եւ յատկապէս հայութեան ասպրեղակերպը տակնուվը-
րայ եղած է:

Արագ ետդարձով մը վերլիչենք. համաշխարհային Ա.
պատերազմի պայմաններէն օգտուելով՝ Թուրքիա կը գոր-
ծադրէր 20րդ դարու առաջին Յեղասպանութիւնը: Թրքա-
կան եղեռնագործութեան զոհ կ'երթար 1.5 միլիոն հայ: Յե-
ղասպանութենէն հազիւ երեք տարի ետք՝ հայութիւնը
կը վերականգնէր եւ կը հիմնէր անկախ Հայաստան: Վրայ
կը հասնէր համայնավար խորշակը: Հայաստան կը հագնէր
համայնավարութեան պատմութեան, իսկ հայութեան համ-
րանքին կէսը կը դառնար Սփիւռք, ցրուելով աշխարհի
տարբեր կողմերը: Վերականգնումի երկրորդ փորձ մը
դժուար պիտի ըլլար: 1939ին պիտի պայթէր համաշխարհա-
յին Բ. պատերազմը: Պիտի յաջորդէր Արեւելք-Արեւմուտք
«Պաղ Պատերազմը»՝ մինչեւ 1989, երբ Պերլինի պատին քան-
դումով վերջ պիտի տրուէր աշխարհի երկբեւեռ դրութեան:
Պիտի ստեղծուէր միաբեւեռ դրութիւն, յառաջ պիտի գար
արհեստագիտական յեղափոխութիւն, որուն արդիւնքը պի-
տի ըլլար համաշխարհայնացումի ծնունդը:

Այս ժամանակամիջոցին ո՛ր էր Հ.Մ.Լ.Մ-ը: Ի՞նչ կ'ընէր
հայութեան մարմնակրթական մեծագոյն միութիւնը:

Հ.Մ.Լ.Մ-ը հազիւ հիմնուած իր բնօրրանին՝ Պոլսոյ մէջ,
1922ին իր ժողովուրդին հետ կը դառնար գաղթական: Միու-

թիւնը իր աշխատանքները կը փոխադրէր Եւրոպա, Միջին
Արեւելք եւ հոնկէ կը տարածուէր աշխարհի չորս դին: Կարճ
ժամանակի մէջ Հ.Մ.Լ.Մ-ի մասնաճիւղեր կը հիմնուէին
տարբեր գաղութներու մէջ: Այսօր արդէն միութիւնը
կը հաշուէ 100 մասնաճիւղ:

Այս գեղեցիկ եւ վարդագոյն պատկերը մեզի մտածել
կու տայ, որ Հ.Մ.Լ.Մ-ի նման միութիւն մը, որ իր ծիւղերը արձա-
կած է աշխարհի բոլոր ցամաքամասերուն մէջ, այսօրուան
սրնթաց զարգացող աշխարհին մէջ ի՞նչպէս պիտի կարե-
նայ շարունակել իր աշխատանքները: Որքանո՞վ ան պիտի
կարենայ մօտենալ իր առաջադրած նպատակներուն իրա-
կանացման: Եւ դեռ, Հ.Մ.Լ.Մ. արդեօք պէ՞տք է վերատե-
սութեան ենթարկէ աշխատանքի իր ցարդ օգտագործած մի-
ջոցները: Սկստական դաստիարակութիւնը ինչպիսի՞
զարգացումներու պէտք է հետեւի: Մարմնամարզը, սիրո-
ղական դրութեան եւ արհեստավարժութեան միջեւ, ո՞ր
պիտի հասնի:

Հարցումներու շարքը տակաւին երկար է:
Հ.Մ.Լ.Մ. Հայրենիքի մէջ տարածման ու զարգացման
ի՞նչ գործելածեւ պէտք է որդեգրէ: Սփիւռք-Հայրենիք յա-
րաբերութիւնները ի՞նչ ձեւով պէտք է կատարուին: Սփիւռ-
քի մէջ ո՞ր եւ ինչպիսի՞ մասնաճիւղեր պէտք է հիմնուին:

Այս բոլորը միութեան ՅՕամեակին առիթով կատարուած
տեղին հարցումներ են, որոնք պատասխաններ կը փնտռեն:
Հ.Մ.Լ.Մ-ի Յրդ Պատգամաւորական Ժողովը յիշեալ հար-
ցումներուն պատասխանելու համար որոշեց յառաջացնել
ուսումնական ծրագրումի յանձնախումբ մը, որ պիտի
քննէ միութեան յառաջիկայ 10-20 տարիներու զարգացումը
եւ ըստ այնմ ճշդէ անոր դիմադրուած մարտահրաւէրները
եւ զանոնք յաղթահարելու միջոցները:

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության հիմնադրման ինստիտուցիոնալ տարեդարձին առիթով, Երուսաղեմի Առաքելական Սուրբ Աթոռն է մեր բարի մաղթանքները կը յղենք Միության բոլոր անդամներուն:

Յատկանշական է, որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության ռահվիրաները կազմակերպության մտայղացումը ունեցած են 1918ին, Հայկական Ցեղասպանության եւ Եղեռնի դժոխային արարքին հետեւող անմիջական տարիներուն, եւ անկախ Հայաստանի Առաջին Հանրապետության հաստատման համընթաց:

Նախախնամական կարգադրութիւն: Կարծես յաւիտենական կեանքի եւ անմահութեան երաշխիքով եւ հաւատքով գօտեպնդուած, կործանարար մահուան դէմ որպէս վրիժառու մարտակոչ եւ վահան ամբողջական կանգնելու համար:


Եւ արդարեւ, իբրեւ մարզամշակութային միութիւն, անցնող ինը տասնամեակներուն ընթացքին, Հ.Մ.Ը.Մ. ծաւալած է իր գործունեութիւնը Սփիւռքի մէջ: Հայ երիտասարդութիւնը համախմբելով, դաստիարակած է զանոնք Մայր Հայրենիքի եւ մեր ժողովուրդի ազգային նկարագրին եւ ժառանգութեան հանդէպ նախանձախնդրութեան եւ սիրոյ զգացումով: Եւ այսպէս ապահովելով շարայարութիւնը անխորտակելի շղթային:

Մեր սրտագին մաղթանքն է, որ այս յառաջընթացը անդադրում եւ դաշնօրէն ընթանայ Սփիւռքի եւ անկախ Հայրենիքի կանչին եւ ծաղկումին հետ, եւ դառնայ մարտահրաւեր սերունդէ սերունդ փոխանցելու անմեռ ոգին հայ նահատակաց եւ պանծալի յիշատակը հայրենանուէր մարտիկներուն:

Օրհնութեամբ՝

ԹՈՐԳՈՍ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հայ Պատրիարք Երուսաղեմի

ԳՕԱՄԵԱԿ Զ.Մ.Ը.Մ.Ի



**Վահրամ Դանիլեան
ՖԼՈՐԻՏԱ**

⚡ Իմնադրութեան վայր՝ Պոլիս: Թուական՝ Նոյեմբեր 1918:

Նշանաբան՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»:

Նպատակ-:

«ա. Պատրաստել ֆիզիքապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ»:

«բ. Սորվեցնել միութեան անդամներուն ըլլալ չարքաչ եւ արի, ազգասէր եւ հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ»:

«գ. Զարգացնել անոնց մօտ պարտականութեան գիտակցութիւն, պատասխանատուութեան եւ պատուի զգացում, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի»:

«դ. Համակել անոնց միտքն ու սիրտը մարզական ազնուլագոյն ոգիով»:

ՀՊԱՐՏ ԵՐԱՍՏԱՊԱՐՏ

90 տարիներ անդադար Հ.Մ.Ը.Մ. վերոյիշեալ նպատակը իրագործեց երկրագունդի հինգ ցամաքամասերուն վրայ գտնուող հայկական գաղութներէն ներս՝ հիմնելով սկաուտական կամ մարզական խումբեր:

Երբ դէպի ետ հայեացք մը նետենք Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան վրայ, կը տեսնենք հսկայ յառաջդիմութիւն, որուն համար իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական հպարտ պէտք է ըլլայ, միաժամանակ երախտապարտ՝ այն բոլոր ազգանուէր եղբայրներուն եւ քոյրերուն, որոնք իրենց զոհողութիւններով նպաստեցին Հ.Մ.Ը.Մ.ի վերելքին: Յարգանք մեզմէ յաւատարմութեամբ նախկին ղեկավարներուն եւ նուիրեալ անդամներուն յիշատակին:

Այսօր Հ.Մ.Ը.Մ.ի վրայ արեւը միշտ կը շողայ՝ Աւստրալիայէն Եւրոպա, Ամերիկեան ցամաքամասէն Ասիա եւ Ափրիկէ:

Երբ Հ.Մ.Ը.Մ.ի տողանցքներէն մէկուն ներկայ գտնուինք, ականատես կ'ըլլանք հետեւեալ պատկերին. հոն կը տեսնենք երեք սերունդ՝ տարեցներ, երիտասարդներ եւ փոքրիկներ (կահուղ թաթիկներ): Առաջինը կը ներկայացնէ անցեալը եւ իր ներկայութեամբ փաստ մըն է միութեան յառաջդիմութեան: Երկրորդը կը ներկայացնէ ներկան եւ միութեան այսօրուան ուժը: Երրորդը մեր ապագան է. այսօրուան փոքրիկներուն պիտի վստահուի Հ.Մ.Ը.Մ.ի վաղուան ղեկավարութիւնը:

Աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ականներուն համար մեծ բերկրանք էր Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական վերջին երկու ժողովներուն Հայաստանի մէջ գումարումը եւ միութեան 100րդ մասնաճիւղին Մոսկուայի մէջ հիմնադրութիւնը, անցնող Սեպտեմբերին: Հ.Մ.Ը.Մ. կը շարունակէ իր առաքելութիւնը: Այո, միութեան դիմաց միշտ ալ պիտի ըլլան դժուարութիւններ եւ մարտահրաւէրներ, սակայն կասկած չկայ, որ միութիւնը եւ ղեկավարութիւնը անհրաժեշտ կամքն ու ուժը պիտի ունենան յաղթահարելու գանոնք:

Արդ, սիրելի քոյրեր եւ եղբայրներ, միութեան 90ամեակին առթիւ հարկ է միասին աշխատելով բարձրացնենք այս միութիւնը, միշտ նկատի ունենալով իր եւ մեր ժողովուրդին գերագոյն շահերը:

Հ.Մ.Ը.Մ.

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ, ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ

Յարութ Յարութիւնեան ԵՐԵՒԱՆ

ՀՄԸՄ-ին հանդիպեցի բաւականին ուշ՝ 1991ին: Այդ ուշացումը պարտադրուած էր պատմականորէն: Արգելուած պտուղ էր ՀՄԸՄ-ը, իսկ արգելուած պտուղը միշտ աւելի քաղցր է լինում: Ընկերներով լծուեցինք գործի: Ծանր ժամանակներ էին: Մի կողմից Արցախի պատերազմը, միւս կողմից ՍՍՀՄ-ի փլուզումն ու անակնկալ անկախութիւնը տակնուվրայ էին արել երկրի ողջ համակարգը: Յայտնուել էին «էմիսարներ», ովքեր մի հարուածով ապագային էին համարել կրթական ծրագրերը եւ ողջ երկիրը դարձրել էին փորձադաշտ: Այդ տարիների նորաթուխ ղեկավարները դարձան ամենագէտ, ամենաշնորհալի, ամենապետական եւ ամենահամամարդկային: Յամենայնդէպս, այդպէս էին

իրենք ներկայացնում իրենց եւ իրենց գաղափարները... եւ սկսուեց կրթական ցանցի արագընթաց աւերումը: Ինչը իրենցը չէր՝ ուրեմն ապագային էր, ինչի մէջ իրենք չկային՝ ուրեմն ապապետական էր: Իսկ եթէ նաեւ ինչ որ շարժում կամ հասարակական կազմակերպութիւն իրենցից անկախ գործում էր եւ դաւանում էր ազգային գաղափարախօսութիւն, ապա այդ կազմակերպութիւնը որակում էր ազգայնամոլական, եւ ամենավերելի թելադրանքով սկսում էին գործել արհեստական արգելաւանդները: Ամենավերելում նստած աթոռակալը ազգային գաղափարախօսութիւնը որակել էր կեղծ կատեգորիա: Եւ այդ ազգային գաղափարախօսութեան ջատագովներից էր նաեւ ՀՄԸՄ-ը:

ՀՄԸՄ-ը այնքան էր մտահոգել այդ ժամանակների պաշտօնեայ պարոններին, որ իրենց բանն ու գործը թողած՝ նոյնիսկ Ազգային ժողովի բարձր ամպլոնից էին լուտանքներ չպրտում ՀՄԸՄ-ի



Նշանակութենէ եւ գոյութեան իմաստէ կը պարպուի Հ.Մ.Ը.Մ.ը կամ լաւագոյն պարագային կը վերածուի մարզական ընթացիկ միութեան մը, եթէ Հայաստանը կեդրոնական շարժիչ ուժ չմնայ անոր յատկապէս ապագայ գործունեութեան մէջ:

Մինչեւ հիմա, ամբողջ 70 տարի, Հ.Մ.Ը.Մ. ապրած է Հայաստանով եւ Հայաստանին համար: Եւ այս՝ երբ Հայաստան հաւատք էր, ապրում էր, հաւատամք էր ու... երազ էր:

Այժմ, երբ Ան կայ եւ տակաւ կը պայծառանայ, կը բիրտղանայ, կը ժպտի, Հ.Մ.Ը.Մ. իր հարագատ այլ յոգնած մայրը գրկող մաքրարիւն զակին պէս պիտի շարունակէ բանիւ եւ գործով՝ գուրգուրանքը, հաւատարմութիւնը, քաղցր սերը ցուցաբերել, բանիւ եւ գործով, բանիւ եւ գործով:

Այս է պատգամը որ Կեդրոնական Վարչութիւնը պիտի ուզէր փոխանցել իր անդամներուն եւ համակիրներուն ի սփիւռս աշխարհի՝

Հ.Մ.Ը.Մ.-Հայաստան յարաբերութեան ոսկեայ նոր էջի կազմաւորման՝ վայելքի եւ նոր պատասխանատուութիւն ստանձնելու սրբազնագոյն այս պահուն:

Կեցցե՛ Հայաստանը, կեցցե՛ Հ.Մ.Ը.Մ.ը:

(Հ.Մ.Ը.Մ.ի Ե. Պատգամաւորական Ժողովին ընթերցուած՝ Կեդրոնական Վարչութեան տեղեկագրին եզրափակիչ խօսքը, 1991)



Ոգետորիչ եւ նոր տեսլականներով իր երթը շարունակող մարզական, սկաուտական այս մեծ կազմակերպությունը կը գտնուի մարտահրաւերներու դեմ յանդիման: Հայրենիք ունենալով հանդերձ տակաւին Սփիւռք ենք: Հայապահպանման հոգը տակաւին կը ճնշէ մեր ուսերուն վրայ: Երեկի քանի մը տասնեակ մասնաճիւղերու թիւը բարձրացած է 85ի: Երեկի Միջին Արեւելքի մեր կառույցը վերածուած է համահայկականի: Վերակազմակերպման հանգրուանի մէջ եղող Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ը աւելի աճելու, աւելի տարածուելու կարելիութիւններ կը պարզէ: Կայ տակաւին աւելին. վերանկախացող Արցախը, Զաւախքի շրջանը, խորհրդային ներքին Սփիւռքի երկիրները, Արեւելեան Եւրոպան եւ այլ շրջաններ, ուր պէտք է Հ.Մ.Ը.Մ.ը մուտք գործէ: Հայ կեանքի ներկայ պայմաններուն մէջ ոչ մէկ միութիւն, մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ի տարողութիւնը ու խտելիները ունեցող միութիւն, կրնայ իր գործը բաւարար կամ առաւել գո՛ւ՛ աւարտած նկատել, քանի որ բուն գործը ասկէ ետք է որ պիտի սկսի:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ, Կարելի չէ այլեւս գործել ու գոհանալ այն միջոցներով, որոնցմով գործած ենք անցնող 75 տարիներուն ընթացքին: Ժամանակը հասած է գիտական առումով վերատեսուրթեան ենթարկելու մեր գործելակերպը, կատարել մեր մարդուժին գնահատումը եւ ստեղծել տնտեսական ամուր կռուան:

Հայաստանի եւ արտասահմանի համար քաղաքական ու ազգային նորաստեղծ պայմաններու լոյսին տակ, Հ.Մ.Ը.Մ.ի ապագայ գործունէութիւնը կը կարօտի կրկնակ ճիգի, մարդկային եւ նիւթապէս կրկնակ ներդրումի, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՕՐԱՇԱՐԺԻ: Այս պէտք է ըլլայ մեր ձգտումը:

(Հ.Մ.Ը.Մ.ի 2. Պատգամաւորական Ժողովին ընթերցուած՝ Կեդրոնական Վարչութեան տեղեկագրին եզրափակիչ խօսքը, 1995)

Հասցէին: Իսկ այդ օրերի ԱԺ ն ա ի ս ա գ ա հ ը ուղղակի հրահանգել էր Հայաստանի սպորտկոմիտէի նախագահ Ռաֆայէլ Թորոյեանին, ամէն կերպ խանգարել, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայլային թիւը չդառնայ երկրի անդրանիկ առաջնութեան ախոյեան: Հակառակ պետական հրահանգների, անկախ Հայաստանի ֆուլթայլի պատմութեան մէջ արձանագրուեց եւ երկաթազիր տառերով գրուեց Հայաստանի առաջին ախոյեանի անունը՝ Հ.Մ.Ը.Մ.-Երեւան:



նօրէն նշուած «Հայ Սկաուտի Օր», այդ օրը, 1997 թ.ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը պաշտօնապէս ընդունուեց Համաշխարհային Սկաուտական Կազմակերպութեան լիիրաւ

անդամ: Այդ տարիներին նաեւ յաջողութեամբ գործում էին Հ.Մ.Ը.Մ.ի պասքէթի, նետաձգութեան թիմերը, որոնք պարբերաբար յաջողութիւններ էին գրանցում ոչ միայն Հայաստանում, այլեւ նորաստեղծ Ա.Պ.Հ.ի տարածաշրջանային մրցումներում: Աւելի բարձր էր վիճակը սկաուտական գետնի վրայ: Արագ տեմպերով զարգացող սկաուտական շարժման դէմ սկսել էր գործել պետական ողջ ապարատը: Թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան եւ թէ՛ Ա.Մ.Ն. Արեւմտեան շրջանի կողմից տարուող սկաուտական ակտիւ գործունէութիւնը հանդիպում էր հայկական պետութեան չինովնիկների արհամարհանքին եւ աւելի էր դժուարացնում Հ.Մ.Ը.Մ. Հայաստանի մուտքը Համաշխարհային Սկաուտական Կազմակերպութիւն: Սակայն ի պատիւ Հայաստանում աշխատող մի խումբ երիտասարդների եւ այն տարիներին Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Յարութիւն Գեղարդի ճեղքուեց նաեւ այդ պատնէշը եւ զարմանալի զուգահիշութեամբ Ապրիլի 18ին, որ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ յայտնի էր որպէս Հայաստանի Առաջին Հանրապետութեան ժամանակ պետակա-

մա՞ր: Այս հակիրճ նկարագրութեան մէջ հնարաւոր չէ նշել բոլոր այն նուիրեալների անունները, ովքեր իրենց ուսերի վրայ տարան այս յաղթանակը, հնարաւոր չէ մէկ յօդուածում վեր հանել այն բոլոր դժուարութիւններն ու խոչընդոտները, որի միջով անցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանեան կառույցն ու Կենտրոնական Վարչութիւնը, բայց այլ կերպ լինելն էլ կարծես թէ վայել չէ Հ.Մ.Ը.Մ.ին: Հ.Մ.Ը.Մ.ականի ճակատի դիրքն է՝ պայքար, մաքառում եւ յաղթանակ: Իսկ Հ.Մ.Ը.Մ.ականներին յաղթանակը երբեք հեշտ չի տրուել: Հեշտ չի տրուելու նաեւ ապագայում: Հ.Մ.Ը.Մ.ը հայ պետականութեան հետ տարեկից է եւ ինչպէս իր հայրենիքը՝ այնպէս էլ ինքը ամէն ինչի պէտք է հասնի իր յամառութեան, ջանասիրութեան եւ կուռ կամքի շնորհիւ: Քանզի Հ.Մ.Ը.Մ.ը հայութեան երիտասարդութիւնն է եւ հայութեան ապագան: Հոգ չէ, որ այն դեռ միս եւ արիւն չի դարձել իր իսկ հայրենիքում, բայց նաեւ լաւ է որ այդպէս է: Նշանակում է Հ.Մ.Ը.Մ.ը դեռ անեկիք ունի, դեռ երկար ճանապարհ ունի անցնելու եւ դեռ երկար, շատ երկար երիտասարդ է մնալու եւ մաքառելու է իր դադափարական յաղթանակի՝ ԱԶԱՏ, ԱՆԿԱՆ եւ ՄԻԱՅԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ համար: Սերմերը ցանւած են: Մնում է ջրել եւ հիմնաւոր խնամել սերմնացանից ծնուած ծիրը՝ որ աւելի արմատակալի իր մայր հողում: Ծիլ որի անունն է Հ.Մ.Ը.Մ. եւ մայր հող՝ որի անունն է Հայաստան:

ՊԱՏԻՒՄ ԱՐԺԱՆԱԲՈՐԱՅ

Հ.Մ.Ը.Մ.ի պատմությունը յետ-եղեռնեան հայ Սփիւռքի վերապրումի պատմությունն է: Կառոյցով մարմնամարզական, իսկ խորքով եւ էութեամբ հայակերտման միութիւն, հայ ժողովուրդի ճակատագրական օրհասական տարիներուն կեանքի կոչուած Հ.Մ.Ը.Մ.ը, իր հաւատամքով եւ գործունեութեամբ կեանքի մէջ պահեց աշխարհասփիւռ մեր ժողովուրդին նոր սերունդները:

Հ.Մ.Ը.Մ.ի իննսունամեայ բազմերես եւ բազմարդիւն ազգային գործունեութեան մէջ յիշատակութեան արժանի բազմաթիւ արժանիքներէն կ'ընդգրծենք երկուքը.-

ա. Հ.Մ.Ը.Մ.ը երիտասարդացնող միութիւն է: Հ.Մ.Ը.Մ. ներգրաւեց, կազմաւորեց Սփիւռքի օտար ամայի ճամբէքներուն վրայ ուծանալու ենթակայ մեր նոր սերունդները եւ անոնց մէջ երիտասարդական ոգի եւ խանդ փչեց, որուն շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ականը հայութեան կեանքին մէջ ցկեանս երիտասարդ մնաց եւ երիտասարդական եռանդով, կայտառութեամբ գործեց:

Երիտասարդութիւնը ազգի մը կենսունակութեան երաշխիքն է: Հ.Մ.Ը.Մ.ը Սփիւռքի մէջ հայկական գաղութները երիտասարդ պահեց:

բ. Օտար միջավայրերու ազդեցութեան տակ ճնշուած նոր սերունդներուն տուաւ ազգային ինքնութեան եւ պատկանելիութեան գիտակցութիւն: Իսկ ազգային պատկանելիութեան գիտակցութեան հետ նաեւ հայ հոգիներուն մէջ դրոշմեց հայ ըլլալու հպարտութիւնը: Թերթատեցէք Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը եւ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի սխրանքներուն եւ խոյանքներուն խորքը պիտի տեսնէք անոր հոգիին մէջ փողփողացող ազգային բարձրաճակատ հպարտութեան զգացումը: Ազգային հպարտութեան ներշնչարանն է Հ.Մ.Ը.Մ.ը:

Եւ քանի որ պատիւս արժանաւորաց է, Հ.Մ.Ը.Մ.ի իննսունամեայ վաստակին դիմաց յարգանօք կանգնած կ'ըսենք՝

Պատուի ա՛ն:

ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ
Առաջնորդ Լիբանանի Հայոց

ԳՕԱՄԵԱԿ Հ.Մ.Ը.Մ.Ի

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍԻՆ

Հ.Մ.Ը.Մ.

Գիրեր՝ ոսկի տեսիլքով, որոնք կը պայծառափայլին հայ աչքերուն դիմաց հաւատքի, կամքի եւ տեսիլքի ճառագայթներով...

Գիրեր շինք հնչումով, որոնք կ'արձագանգեն հայ գիտակցութեան մէջ վերագարթօսքի, յոյսի եւ յաղթանակի ձայներով...

Տարիներ շարունակ դիտեցինք կուռ շարքերն այս տղոց՝ կարգապահ, միասնական եւ հպարտ, եւ ցնծութեան ու պարծանքի ապրումներով լեցուեցաւ մեր սիրտը: Վերջին, արցունքին եւ արիւնին դառնատեսիլ պատկերները մեր պատմութեան վերջին սեւ թուականին՝ իրենցմով գարնան շունչ ու գոյն ստացաւ:

ԽՈՐԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անոնք որ Հ.Մ.Ը.Մ.ը հիմնեցին, կամեցան երիտասարդ Հայաստանին պարգէտ տանիլ կազմակերպութիւն մը եւ ոգի մը, որուն դրօշին տակ պետք է բոլորուէր ամբողջ հայ պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը, դառնալու համար մարմնով ամողջ եւ կորովի, մտքով՝ պայծառ եւ արթուն, հոգիով՝ մաքուր եւ ամուր, նկարագրով՝ ուղիղ եւ գաղափարապաշտ. ու այսպէս հասակ նետած այդ սերունդը պիտի կոչուէր հայ ազգին ու հայ հայրենիքին խտելներն ծառայելու:

Հ.Մ.Ը.Մ.ը պետք է ապրի նոյն ոգիով, պետք է հաւաքուի նոյն դրօշին տակ, պետք է մարմնով ու հոգիով պատրաստուի, ծառայելու համար նոյն խտելին:

Ահա թէ ինչո՞ւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը եղած է ու կը մնայ ամենուն սիրած Միութիւնը:

ԿԱԶԳԷՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հայ ազգի կեանքին մէջ պատահած հրաշքներէն մէկն է, անտարակոյս, կազմութիւնն ու զարգացումը Հ.Մ.Ը.Մ.ին, որպէս կորթոլ անցեալի փառքին ու գրգիռ՝ ապագայի առաւել փառաւոր գործունեութեան:

Ըստ մեզի, որ այս հրաշալի կազմակերպութեան մեղուաջան աշխատանքին ու յարաճուն վերելքին ականատես վկան ենք մօտ քսան տարիներէ ի վեր, Հ.Մ.Ը.Մ.ը չէր եւ հետագային երբեք պետք չէ ըլլայ հայ պատանիին միայն ֆիզիքական ուժին զարգացումին ազդակը, այլ՝ ամողջ մարմնին մէջ, ամողջ հոգիին հետ պետք է կերտէ անոր նկարագիրը, որուն դրոշմէ նաեւ բիրտդանման եւ անվիճելի հայկականութեան ազգային կնիքը:

Քսաներորդ դարու աշխարհացունց գիւտերու եւ աննախատեսելի վերիվայրումներու շրջանին, Հ.Մ.Ը.Մ.ի գլխաւոր եւ նախախնամական պարտականութիւնը պետք է ըլլայ կերտումը այդ նկարագրին, որպէսզի հայ ազգի կանչին, տազնապի մէջ կամ ուրախութեան առիթով, իր ամբողջ կարելիութեամբ կարենայ պատասխանել՝ «ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ»: Ու յարատեւ բարձրանայ, իրեն հետ բարձրացնելով անոնք, որոնք նիւթեղեն եւ հոգեկան իրենց աչքերը սեւեռած կը մնան Հ.Մ.Ը.Մ.ին ու այս՝ իրաւամբ:

Մենք Հ.Մ.Ը.Մ.ը սիրեցինք նոյնի՛սկ իր պարտութեան մէջ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը մեզի համար դաշտին վրայ երեւցող մարզիկներու խումբը չեղաւ: Այն ինչ որ մեր ժողովուրդին մէջ բարութեան, գեղեցկութեան, արժեքներու, երազներու եւ ձգտումներու համագօր էր, մենք այդ մէկը տեսանք Հ.Մ.Ը.Մ.ի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը հայ դպրոց եղաւ, հայ ակումբ եղաւ, Հայաստան եղաւ, ազատ ու անկախ Եռագոյնով Հայաստան դարձաւ, նոյնի՛սկ եկեղեցի եղաւ որոշ չափով: Այլ խօսքով, Հ.Մ.Ը.Մ.ը մեր ժողովուրդի հոգեմտաւոր արժեքներուն ոչ միայն շտեմարանը դարձաւ, այլեւ՝ եղաւ դպրոց մը:

ԱՐԱՍ Ա.ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Հ.Մ.Ը.Մ.ը կազմակերպութիւն ըլլալէ առաջ ոգի մըն է, մարդկային եւ ազգային առողջ ու հարազատ ապրումներու քուրայ մը, որուն մէջէն անցնող երիտասարդն ու երիտասարդուհին կը զգենուն ճշմարիտ մարդու եւ վաւերական հայու իսկատիպ կերպարը. դպրոց մը առանց դասարանի եւ գրասեղանի, առանց դասագրքի ու գրատախտակի, բայց աճման ու զարգացման կերպարանիչ հնոց մը, ուրկէ անցնող անձը կը բիւրեղանայ, ինչպէս մետաղը որ կ'անցնի կրակէն:

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

1945-1948 փոթորկայոյց տարիներու ընթացքին, երբ շղթայագերծուած էին մեր ժողովուրդէն շատերու ոչ հայեցի զգացումները, Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը կրելն իսկ խէթ նայուածքներու առիթ կը ծառայէր, Հ.Մ.Ը.Մ.ական պատանի մը չկարենալով արգիլել տարիքով իրմէ մեծ, եւ ուժով՝ գերազանց տարրերու կողմէ իր նշանակին խլուիլն ու անարգուիլը, տուն վերադառնալով, իր կուրծքի մորթին վրայ անջնջելի մելանով կը գծէր Հ.Մ.Ը.Մ.ի նոյն այդ նշանակը, նոյն նշանաբանով՝ «ԲԱՐՁՐԱՑԻՐ - ԲԱՐՁՐԱՑՈՒՐ» եւ զոր ցոյց տալով իր ծնողքին, արդար ինքնավստահութեամբ մը կ'ըսէր. «ԱՅՍ ՉԵՆ ԿՐՆԱՐ ԱՅԼԵՄ ԽԼԵԼ ԻՆՁՄԷ»:

Հ.Մ.Ը.Մ.ի քառասնամեակին առիթով, մեր իղձն է որ անոր նշանաբանը դրոշմուի ոչ թէ զգեստի վրայ, որ փոփոխելի է կամ մորթի վրայ, ուրկէ կարելի է ջնջել ի վերջոյ, այլ դրոշմուի իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի հոգիին խորքը, ուր ո՛չ մէկ կործանարար ձեռք կամ ուժ կրնայ թափանցել: Մեր մաղթանքն է նաեւ, որ իրականանան Հ.Մ.Ը.Մ.ի բաղձանքները, ու ան աւելի զարգանայ, ուռճանայ, ըլլալով եւ մնալով հայ ազգի յաւիտենականութեան տեսանելի ու անհերքելի մէկ փաստը:

ՉԱՐԵՅ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Գառնիկ Սկրտիչեան ՊԵՅՐՈՒԹ

Կարելի չէ գրութեան մը նեղ սահմաններուն մէջ տալ գումարը 90ամեայ գոհողութիւններուն, հաշիւը անսակարկ նուիրումին եւ պատկերը միութեան մը բազմերես գործունէութեան, որ ծնաւ հայ ժողովուրդի ծոցէն, հայ ժողովուրդին եւ Հայաստանին ծառայելու անվերջ ուխտով:

Արդարեւ, շնորհիւ հոյլ մը գաղափարապաշտ անձերու, 16 Նոյեմբեր 1918ին, Պոլսոյ մէջ հիմնուեցաւ հրաշագործ այս միութիւնը, որ կոչուեցաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն, կրճատուած չորս տառերով Հ.Մ.Ը.Մ.:

Խորհրդաւոր այս չորս տառերուն մէջ խտացուած է հայ ժողովուրդի վերջին մնացորդացին հայապահպանման անհափեղի պատմութիւնը: Իր սիրագործութիւններով եւ նուաճումներով Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը այսօր մաս կը կազմէ հայոց պատմութեան վերջին մէկ դարու պատմութեան:

Հ.Մ.Ը.Մ. իր սկզբնական շրջանին զբաղեցաւ առաւելաբար որբախնամ գործունէութեամբ, քան՝ մարզական եւ սկստական աշխատանքներով:

Հո՞ս է արդէն Հ.Մ.Ը.Մ.ի մեծութիւնը: Հոս, այս երեւոյթին մէջ կը կայանայ Հ.Մ.Ը.Մ.ի յարատեւման գաղափքը, հաւատոյ հանգանակը, որուն հաւատարիմ մնաց Հ.Մ.Ը.Մ. իր հիմնադրութենէն մինչեւ մեր օրերը:

Կարգալով Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը, մենք մեզի յաճախ հարց տուած ենք, թէ ի՞նչ պիտի ըլլար ապագան ջարդէն հրաշքով փրկուած հազարաւոր այն պատանիներուն, որոնք սկսած էին Պոլիս կեդրոնանալ, եթէ Հ.Մ.Ը.Մ. չհաւաքէր զանոնք որբանոցներու մէջ եւ չզբաղէր անոնց հոգեկան եւ ֆիզիքական կրթութեամբ:

Ի՞նչ պիտի ըլլար ճակատագիրը Ալեքսանդրապոլի աւելի քան 20 հազարի հասնող հայ որբերուն, եթէ Հ.Մ.Ը.Մ. օգնութեան ձեռք չ'երկարէր նորաստեղծ Հայաստանին, առաքելով երեք նուիրեալ եղբայրներ՝ Վահան Չերազ, Տիգրան Խոյեան եւ Օննիկ Եազման:

Վերջապէս, ի՞նչ պիտի ըլլար դիմագիծը Միջին Արեւելքի, Եւրոպայի,

Ամերիկայի եւ Գանատայի մէջ հասակ նետող հայ երիտասարդութեան, եթէ Հ.Մ.Ը.Մ. ամէն տեղ չհիմնէր մասնաճիւղեր:

Վստահ, հայ ժողովուրդին ճակատագիրը ուրիշ ընթացք պիտի ունենար, եթէ Հ.Մ.Ը.Մ. իր մարզական եւ սկստական շքերթներով նոր խանդու կորով չսփռէր շրջապատի հայութեան: Հ.Մ.Ը.Մ. յաղթե՛լ սորվեցուց մեզի, մեր անձնական եւ հաւաքական կեանքին մէջ: Հ.Մ.Ը.Մ. եղաւ մեր հպարտութեան աղբիւրը, ազգային արժէքներու ներչնչարանը: Ահա՛ թէ ինչու Հ.Մ.Ը.Մ.ը կարելի չէ դասել մարզական ակումբներու շարքին, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ. երբեք չեղաւ «քլապ», երբեք չեղաւ սկստական խումբ:

Եթէ մենք այսօր Սփիւռքի տարածքին ունինք մաքուր նկարագրով հայ երիտասարդութիւն, ատիկա մեծապէս կը պարտինք Հ.Մ.Ը.Մ.ին:

Հաւատարմութեան, հայախօսութեան, ծառայութեան, յաղթերգութեան հոմանիչ դարձաւ Հ.Մ.Ը.Մ., ուր



որ գնաց իր հետ տարաւ պտղունց մը Արարատեան դաշտի հողերէն, ափ մը Արաքս գետի ջուրերէն եւ դողանջ մը էջմիածնի Մայր Տաճարէն:

Հ.Մ.Ը.Մ. իրականացուց իր քայլերգին բառերը՝ «Երթանք կոթողել դրօշակն Եռագոյն...»

2002ի ամրան, համա-Հ.Մ.Ը.Մ.ական Պրոբլեմներու Հ.Մ.Ը.Մ.ի սկստուները բարձրացան Արագած լեռ եւ Եռագոյնը հպարտօրէն կոթողեցին լեռան գագաթը՝ հուռաներու տարափին տակ:

Ու այնքան ատեն որ մենք ունինք Հ.Մ.Ը.Մ.ի նման միութիւն, օր մը չէ օր մը, Եռագոյնը կոթողուած կը տեսնենք նաեւ Արարատի գագաթին:

Հ.Մ.Ը.Մ. եղաւ առաջիններէն, չըսելու համար առաջինը, որ Եռագոյն դրօշը պարզեց Դիլիջանի բարձունքներուն, 1989ին, երբ տակաւին Եռագոյնը պաշտօնապէս չէր ծածանած հայոց երկնակամարին վրայ:

Հայութիւնը ուրախացաւ երբ Հ.Մ.Ը.Մ. արձանագրեց յաջողութիւն: Այդ ուրախութիւնը գերագոյն հրճուանքի

վերածուեցաւ, երբ բաց աչքերով տեսաւ իր գաւազներուն հպարտադէմ տողանցքը Աբովեան փողոցի եւ Երեւանի մայր հրապարակին վրայ, «Յառաջ նահատակ» քայլերգին հնչիւններով:

Ազգային բանակի կարօտը իր սրտերուն, սկստուական այդ տողանցքներուն մէջէն մեր ժողովուրդը տեսաւ «Նահատակ ցեղի անմահներ» ուն յաղթական երթը:

1918-2008: 90 տարուան պատմութիւն:

Իսկ ի՞նչ է պատմութիւնը: Ի՞նչ է Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեայ պատմութիւնը, եթէ ոչ անցեալի եւ ներկայի սերունդներու անհատական եւ հաւաքական ապրումներուն, յուշերուն եւ յիշատակներուն ամբողջութիւնը:

Քանի՛-քանի՛ առիթներով միասին տողանցած ենք Հալէպի եւ Պէյրութի դաշտերուն վրայ, Սուրբ Զատիկուան միջ-մասնաճիւղային խաղերուն՝ վերահաստատելով հայօրէն ապրելու մեր կամքը:

Քանի՛-քանի՛ անգամներ միասին տխրած ու լացած ենք, երգելով բաժանումի ցտեսութեան երգը:

Իւրաքանչիւր հանդիպում, բանակում թէ տողանցք իր անջնջելի յիշատակը ձգած է մեզմէ իւրաքանչիւրին հոգիին ու մտքին մէջ:

Պատիւ բոլոր անոնց, որոնք բեռ մը շարկած են Հ.Մ.Ը.Մ.ի վարչական, մարզական եւ սկստուական մարզերուն մէջ:

Պատիւ բոլոր անոնց, որոնք կը հաւատան այս միութեան առաքելութեան եւ կը սատարեն անոր հզօրացման՝ նիւթապէս եւ բարոյապէս:

Այսօր Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակն է: 90ամեակը պարզ թուական մը չէ մեզի համար, այլ առիթ՝ հանրութեան հաշիւ տալու եւ հանրութեան առջեւ ստորագրելու նոր յանձնառութիւն:

Յանձնառութիւն՝ շարունակելու հայապահպանման մեր առաքելութիւնը:

Յանձնառութիւն՝ շարունակելու մեր պայքարը ընդդէմ աւերիչ բոլոր հոսանքներուն:

Յանձնառութիւն՝ մեր գերագոյն նպատակին իրագործման՝ Ամբողջական հայութեան, Ամբողջական Հայաստանի տեսլականով:

90ամեակ է այսօր եւ մենք ազգովին կը գտնուինք ազգային մեր արժէքները կորսնցնելու վտանգին դէմ յանդիման: Համաշխարհայնացումի վտանգը կը սպառնայ մեր գոյութեան: Եթէ ասոր վրայ աւելցնենք ներկայ դարաշրջանի ընկերային յուսի երեւոյթները, դիւրին պիտի ըլլայ տեսնել, թէ ի՞նչ դժուար հանգրուան մը կը բոլորէ հայութիւնը Սփիւռք կոչուած խառնարանին մէջ: Այսօր, Հ.Մ.Ը.Մ.ի վարիչներուն, հայ ծնողներուն գործը շատ աւելի դժուար է, քան ինչ որ էր երէկ, որովհետեւ հայութիւնը երէկ կ'ապրէր համախումբ կեանք, պորտակապով կապուած էր իր ծննդավայրին: Այսօր այդպէս չէ. անցրուած է աշխարհի չորս ծագերը, հե-



2005. Հայկական Յեղասպանութեան 90ամեակին առիթով Հ.Մ.Ը.Մ.ի ուխտաւոր սկստուներ եւ պատասխանատուներ Մարկատի մէջ:



ուացած է իր արժաններէն եւ կ'ապրի օտար բարեբրու ազգեցութեան տակ: Երէկ թշնամին յայտնի էր: Այսօր անյայտ է: Կարմիր ջարդը չէ որ կը սպառնայ մեր գոյութեան, այլ՝ սպիտակ ջարդը:

Հին ժամանակ մարդիկ բարձր բերդեր կը կառուցէին, քաղաքներու շուրջ պարիսպներ կը շինէին՝ պաշտպանութիւն համար թշնամիէն: Այսօր անառիկ այդ բերդերը, ամրակուռ այդ պարիսպները իմաստ չունին, անոնք փոխարինուած են հոգեկան ամրոցներով, Հ.Մ.Ը.Մ. իր հայաբոյր միջոցառումով, իր հայեցի դաստիարակութեամբ եւ հայրենանուէր աշխատանքով այդ հոգեկան ամրոցն է, անմատոյց բերդն է:

Հետեւաբար, պէտք է ըլլալ Հ.Մ.Ը.Մ. ի մէջ, պէտք է բոլորուիլ Հ.Մ.Ը.Մ. շուրջ: Մեր նպատակը երբեք չէ եղած անդամահաւաք, այլ՝ հայահաւաք: Հայը հայ պահել. ա՛յս է մեր կոչին իմաստը, այս է մեր հաւատամքը. ա՛յս է վախճանական մեր նպատակը:

Յառաջիկայ տարի Հ.Մ.Ը.Մ. կը բոլորէ համագաղութային իր կառույցին ստեղծման 35ամեակը: 35 տարի առաջ միութեան մասնաճիւղերուն թիւը 28 էր, այսօր 100 է:

Բանակ մը, կայսրութիւն մը, որ հայ բազմութիւններու հոգին կը լեցնէ արդար հպարտութեամբ:

Ուրիշ ազգեր դժուար թէ յաջողէին գլուխ հանել այսքան տարածուն, այսքան մեծաթիւ միութիւն մը, առանց պետական միջոցներու, առանց նիւթականի, առանց թոշակաւոր անձնակազմի:

Անոնք որոնք եղած են Հ.Մ.Ը.Մ. ի կազմակերպչական աշխատանքներուն մէջ, Միջին Արեւելքի թէ Ամերիկաներու մէջ, անոնք միայն գիտեն, թէ ի՛նչ կը նշանակէ 25 հազար անդամներու ցանց մը պահել տասնեակ տարիներ, հակառակ աշխարհագրական հեռաւորութիւններու, հակառակ քաղաքական եւ ընկերային աննպաստ պայ-


մաններու: Դժուարութիւններ, որոնց առջեւ շատոնց պիտի կըքէին տեսլական շունեցող մարդիկ:

Այս հրաշքը կարելի եղաւ իրագործել անոր համար, որ Հ.Մ.Ը.Մ. ի վարիչներուն եւ անդամներուն հոգին միշտ խայտաց գարնանային շունչով:

Թո՛ղ ոչ ոք ըսէ որ փոխուած են պայմանները: Թո՛ղ ոչ ոք փորձէ արդարացնել ինքզինք, իր համակերպող եւ կրաւորական կեցուածքով: Այս բոլոր կեցուածքները խորթ են մեզի համար: Հ.Մ.Ը.Մ. ի հիմնադրութեան օրերու պայմաններն ալ նպաստաւոր չէին: Մայիս 28ով կերտուած Հայաստանի պայմաններն ալ աննպաստ էին, բայց մարդիկ ի՛նչպէս կարողացան շրջանցել այդ դժուարութիւնները: Ի՞նչպէս կարողացան ոչինչէն նոր Հայաստան ստեղծել: Մէկ պատասխան ունինք. ՀԱՒԱՏՔ:

Անոնցը բարոյական զինուորագրութիւն եղաւ: Բարոյական զինուորագրութիւն պէտք է ըլլայ նաեւ այսօրուան Հ.Մ.Ը.Մ. ականին պարտականութիւնը, եւ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ. ական պիտի ըլլայ վաղուան ամբողջական հայրենիքի հրաշալի սիւներէն մէկը:

1990. Համա-Հ.Մ.Ը.Մ. ական 4րդ բանակումի մասնակիցներ, Աթէնք



Հ.Մ.Ը.Մ.՝ ՄԵՐ ԱՐԴԱՐ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիք,

Հ.Մ.Ը.Մ.ը հայության կեանքին մայր էջին վրայ գոյության, գործունեության եւ առաքելության իրաւունքն ու ներկայութիւնը արդարօրէն շահած 90ամեայ իրականութիւն է: Անոր մարդկայնական թէ հայկական ընտրելագոյն գաղափարները հարիւր ուղղութեամբ սփռուած ցորենահատիկներու նման ծաղկեցան ու արդիւնաւորուեցան հայության նոր սերունդին ու նորոգուած հայրենիքին տեսլականով: Հ.Մ.Ը.Մ.ը այսօրուան հայ կեանքին մէջ, յատկապէս սփիւռքեան ներկայ իրավիճակին մէջ, յառաջադիմութեան ու յարատեւութեան ի խնդիր, «Բարձրացի՛ր» ու մանաւանդ «Բարձրացո՛ւր» ի հաւատամքով կը շարունակէ անշեղօրէն ու հաւատարմօրէն իրագործել հայեցի դաստիարակութեան իրեն վստահուած կարեւոր աշխատանքներ՝ սիրով ու նուիրումով: Հ.Մ.Ը.Մ.ը կը նկատենք եւ կը հռչակենք համայն հայության, նաեւ սուրիահայության ազգային ու հոգեւոր հարստութիւններէն մէկը: Հ.Մ.Ը.Մ.ով մեր համայնական կեանքը կ'աշխուժանայ, կը պայծառանայ եւ կը նորոգուի: Հ.Մ.Ը.Մ.ը մեր արդար հպարտութիւնն է եւ մենք հրաւիրուած ենք «Նահատակ ցեղի անմահներ»ը պատուել եւ մեծարել 90ամեակին առիթով, ինչպէս նաեւ մաղթել որ առաւել կազմակերպ ու ճառագայթող, յաղթական երթ ունենայ դէպի դարադարձային 100ամեայ:

Օրհնութեամբ եւ աղօթիւք՝

ՇԱՀԱՆ ԵՊՍ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
Առաջնորդ Հայոց Բերիոյ Թեմի

90 ԱՄԵԱԿ Հ.Մ.Ը.Մ.Ի



ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ԱՆՑԵԱԼԻՆ, ՃԱՆՉՆԱՆՔ ՆԵՐԿԱՆ, ԾՐԱԳՐԵՆՔ ՄԵՐ ՎԱՂԸ

Վարուժան Սերոբեան ՄՈՆԹՐԷԱԼ

Նարաւային ափրիկեցի, միջազգային անուանի դէմք՝ Նելսոն Մանտելա իր 90ամեակին ըսած է. «Ժամանակն է որ նոր ձեռքեր վերցնեն բեռը» (It is time for new hands to lift the burdens...)

Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեակին, վերոյիշեալ խօսքերը խորհրդածուլթեան առիթ եղան:

Արդարեւ, մտերիմ գրոյցի մը պահուն սրտցաւ Հ.Մ.Ը.Մ-ական մը հարց տուաւ, թէ ի՞նչպէս կարելի է պատկերացնել Հ.Մ.Ը.Մ-ը իր հիմնադրութեան 100ամեակին:

Հաւանաբար շատերու համար հեռու է 2018ը, եւ սակայն եթէ կ'ուզենք նոյնքան աշխոյժ ու կազմակերպ ձեւով դիմաւորել հարիւրամեակը, անհրաժեշտ է այսօրուընէ իսկ գործի լծուիլ:

Երբ անկեղծ հայեացքով մը նայինք մեր միութենական ներկային, անպայման կ'անդրադառնանք, որ Հ.Մ.Ը.Մ-ը կը դիմագրաւէ տարբեր մարտահրաւէրներ:

Մեր շրջապատը, աշխարհը ամբողջ, արդիական հաղորդակցութեան զարգացած միջոցներով, համակարգիչի ընծայած ամէնօրեայ նորութիւններով,

արագընթաց կը փոխուի, յարաբերաբար տնտեսական աւելի լաւ պայմաններով:

Անցնող քանի մը տասնամեակներու միութենական կեանքին ծանօթ ըլլալով, կրնանք հաստատել, որ տարբեր երկիրներու տակ, տարբեր տարողութիւններով, մենք եւս իբրեւ հաւաքականութիւն կ'ազդուինք, ազդուած ենք արդէն:

Կարգ մը շրջաններու մէջ՝ աւելի քան ուրիշներ, բարոյական հասկացողութիւնները, անձնակերտն բարքերը, նորօրեայ կենցաղները, ժխտական անդրադարձ կ'ունենան ծառայասիրութեան եւ նուիրաբերումի արժէքներուն վրայ:

Այս նոր պայմաններով, առաջին հերթին, միութենական պատկանելիութեան գիտակցութիւնը սկսած է տկարանալ մեր երիտասարդ անդամներուն մօտ: Բացառութիւններ բնական է կան, պարտաճանաչ մարզիչներ ու խմբապետ-խմբապետուհիներ միշտ պիտի ըլլան: Բայց ե՞րբ եւ ի՞նչպէս պիտի փոխանցուի պատկանելիութեան հոգեկան ապրումը մեր սերունդին: Իրերայաջորդ սերունդներն են որ կը փոխանցեն այս գիտակցութիւնը, ներշնչուելով տիպարներու օրինակէն: Անցեալէն ներկայ ու ներկայէն դէպի ապագայ:

Լուծումներու մասին պիտի չանդրադառնամ, այլ պիտի անցնիմ մէկ

տարբեր մտահոգութեան:

Եթէ միութենական մեր կեանքի մարզական փորձերուն կամ սկաուտական արշաւներուն մասնակցող պատանիներուն թիւերը քաջալերական են կամ գոհացուցիչ, միւս կողմէ սակայն, մեր ժողովական կեանքէն երիտասարդներու բացակայութիւնը մտահոգիչ է մեզի համար: Դրական լուծում չենք գտած տակաւին այս իրավիճակին:

Մէկէ աւելի պատճառներու կարելի է վերագրել այս կացութիւնը:

Տարեց ու երիտասարդ սերունդներու միջեւ բաց մը նկատած ենք: Սերունդ մը որ կառչած է անցեալի մտածելակերպին ու գործելաձեւին, եւ ընդհանրապէս ոչ մէկ ճկունութիւն կը ցուցաբերէ լսելու կամ հասկնալու նոր սերունդը:

Արեւմտեան աշխարհի տարածքին, առաւելաբար Ամերիկաներու մէջ, հիմնական արգելք է նաեւ լեզուական դժուարութիւնը:

Նման արգելքներով, անդամական ժողովներուն, այս ափերուն վրայ հասած երիտասարդութեան ներկայութիւնը եւ մասնակցութիւնը հասկնալիօրէն անբաւարար է: Երբեմն արդարօրէն անոնք մեր ժողովները կը նկատեն դանդաղ ու անգործնական: Քանի եւ քանի անգամներ պարզապէս հայերէն ատենազրուութիւն պահելու համար միջակութիւններով բաւարարուած ենք:



Այս իրականութեան սրտցաւ ծանօթանալով կրնանք հաստատել մէկ լուրջ մարտահրաւէր: Հին ու նոր մտածելակերպերը մօտեցնելու, բարեկարգելու, ինչո՞ւ չէ պարզացնելու մեր ժողովները եւ ապահովելու երիտասարդներու գործօն մասնակցութիւնը:

Մէկ ուրիշ երեւոյթ. Գանատայի տարողութեամբ ուսումնասիրութենէ մը ի յայտ եկած է, որ անցնող տասնամեակին, պատանիներու մասնակցութիւնը խմբային մարզախաղերու նշմարելի համեմատութեամբ նուազած է: Տեղական չափանիշով այս երեւոյթը իրականութիւն է նաեւ մեր մօտ: Արդեօք պատանիներու նստակեաց հետաքրքրութիւններո՞ւն պէտք է վերագրել այս իրավիճակը: Կարժէ մօտէն հետաքրքրուիլ, վերանայիլ մեր յայտագիրները:

Մէկ ուրիշ մարտահրաւէր. մեր միութեան գերագոյն ժողովներն են: Կանոնադրային տրամադրութիւններով ճշդուած պատգամաւորներու թիւերով, այսօր կարծէք մեր ժողովական հասկացողութիւնը վերածուած է համագումարի:

Հիմնական տարբերութիւն մը կայ ու պարզաբանեմ պատկերացումը: Ժողովներուն, կարծիքներու փոխանակումով, բացատրելով եւ բացատրւելով, լուծումներ եւ ծրագիրներ կ'որոշուին: Համագումարներուն ընդ-

հանրապէս գործադիր մարմնի ներկայացուցած ծրագիրները կ'որդեգրուին:

Կը յիշենք, 35 տարի առաջ, երբ Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կառոյցով օժտուեցաւ, Սփիւռքի տարածքին կային 56 մասնաճիւղեր, այսօր, պատկառելի 100 մասնաճիւղերով նախանձելի իրականութիւն ենք:

Կը յիշենք նաեւ, 1991ի Ե. Պատգամաւորական ժողովին, երբ առաջարկուեցաւ վերանայիլ պատգամաւորներու ճշդուած համեմատական թիւերը, վերապահներ կառչած մնացին կանոնագրի տրամադրութիւններուն, չբաժնեցին այս մօտեցումը: Այսօր նոյնքան այժմէական է կարեւորութիւնը իրատես քննելու ներկան եւ ծրագրելու աւելի գործնական ապագան:

Հ.Մ.Ը.Մ.ի 100ամեակին հասնելու համար կան նաեւ ուրիշ մարտահրաւէրներ, ինչպէս՝ համա- Հ.Մ.Ը.Մ.ական մարզական հաւաքները եւ յարաբերաբար նոր՝ համահայկական մարզախաղերը:

Փորձենք անաչառ մօտենալ այս նիւթին: Անկախ հայրենիքի համահայկական մարզախաղերու շարքը զուգահեռ կրկնութիւն մը չէ՞ արդեօք: Կը խորհիմ քառամեայ մեր հաւաքները արժանի են վերադասաւորման:

Բոլորովին տարբեր տեսանկիւնէ նայինք նաեւ սկստական շարքերու քառամեայ ընդհանուր բանակումներուն.

անոնց ստեղծած դրական հետաքրքրութիւնը եւ մասնակցողներու շարունակական աճը ինքնին ուշադրութեան եւ քննութեան առարկայ պէտք է ըլլայ: Դրական այս ընթացքը շարունակել եւ նոյն ժամանակ մակարդակ պահել մէկ ուրիշ մարտահրաւէր է:

Վերջապէս, ասոնք քանդակուած ձեռնարկներ չեն: Անպայման մենք կրնանք տարբերակներ որոնել, նորեր ծրագրել, նորեր կազմակերպել, նորերով կամրջել մեր աշխարհացրիւ շրջանները:

Նշեցինք տարբեր մարտահրաւէրներ, ոմանք մեր երիտասարդներու բերնով:

Անպայման կան ուրիշներ: Բնական է առաջնահերթութիւնները կրնան տարբերիլ, զանազան լուծումներ կրնան ըլլալ, անկախաբար սակայն, հաստատ համոզուած ենք, որ ի յայտ պիտի գան, ինչպէս անցեալին տարբեր հանգրուաններու եղան, պիտի ըլլան միութեանական հաւատաւորներ, լուսամիտ, յանդուգն եւ հեռատես սրտցաւ երէցներ ու գիտակից երիտասարդներ, որոնք փոխադարձ յարգանքով պիտի տազնապին, ու մենք՝ Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեակը պիտի կարողանանք ողջունել վերանորոգուած, միութեան առաքելութիւնը անխաթար:



Հ.Մ.Ը.Մ.Ի 90 ԱՄԵԱԿ

Աբրահամ Ահարոնեան ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ

Իննսուն տարուան կեանք: Շատ տարիներ մարդ արարածի համար: Քիչ՝ կազմակերպութեան մը համար:

Երբ մարդ հասած է իր իննսունամեակին, առանց տարակոյսի կրնանք ըսել, թէ մօտ է իր կեանքի վերջաւորութեան: Նոյնը կրնանք ըսել, երբ խօսքը վերաբերի կազմակերպութեան մը: Այո՛: Երբ կազմակերպութիւն մը կը հեռանայ իր հիմնական գաղափարներէն, իր սովորութիւններէն եւ աւանդութիւններէն, երբ չի յարգեր իր ծրագիրը եւ կանոնագիրը, առանց տարակոյսի կը գտնուի իր վախճանման ճամբուն վրայ: Իր նպատակները կը դադրին յարմար յենարաններ ըլլալէ, իր հիմերը կը վտանգուին եւ ան կ'ողողուի դէպի վախճան: Շատ են օրինակները այս գծով:

Նոյնը չէ պարագան Հ.Մ.Ը.Մ.ի, որ իր հիմնադրութեան 90ամեակին կը շարունակէ բարձր պահել իր գաղափարախօսներուն եւ հիմնադիրներուն սկզբունքները:

Իննսուն տարի է որ Հ.Մ.Ը.Մ.ը ծնաւ մոխիրներէն հայ ժողովուրդի, որ զոհ դարձաւ 20րդ դարու Առաջին Յեղասպանութեան, կազմակերպուած եւ գործադրուած թուրք պետութեան կողմէ, միջազգային քաղաքականութեան մեղսակից եւ կեղծաւոր նախածքին առջեւ, 1915-1923 տարիներուն:

Շաւարշ Քրիսեան, Հ.Մ.Ը.Մ.ի առաջնորդ եւ գաղափարախօս, կը ցանկար մէկ դրօշի տակ միացնել Պոլսոյ հայկա-

կան թաղերուն մէջ գործող մարզական միութիւնները: Իր երազը չկարողացաւ իրականացնել, որովհետեւ ինք եղաւ առաջիններէն, որ զոհ դարձաւ թրքական բարբարոսութեան: Շաւարշ Քրիսեան հարիւրաւոր հայ մտաւորականներու հետ ձեռքակալուեցաւ 23 Ապրիլ 1915ի ողբերգական գիշերուան ընթացքին եւ յետոյ սպաննուեցաւ:

Հայ ժողովուրդի Յեղասպանութենէն հազիւ երեք տարի անց, 16 Նոյեմբեր 1918ին, Շաւարշ Քրիսեանի խումբ մը ընկերներ, Գրիգոր Յակոբեանի գլխաւորութեամբ, հիմը դրին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան -Հ.Մ.Ը.Մ.-նպատակ ունենալով Ֆիզիքական եւ բարոյական օգնութիւն տրամադրել Յեղասպանութենէն ազատած փոքրիկներուն եւ պատանիներուն, մարզանքի եւ սկստական գիտելիքներու ուսուցման ճամբով:

Բայց անողոք իրականութիւնը ստիպեց մէկ կողմ ձգել մարզանքն ու սկստութիւնը, եւ կազմակերպութեան դեկավարները ամենայն պատասխանատուութեամբ լծուեցան տասնեակ հազարաւոր որբերու բժշկական օգնութիւն, սնունդ եւ հոգեկան ապաւէն տրամադրելու աշխատանքին:

Յեղին կանչն էր: Հասկցան եւ ընդունեցին մարտահրաւէրը: Իրենց դերը սերտօրէն կապուած էր հայ ազգի եւ պետութեան ճակատագրին: Հոս է որ պէտք է փնտռենք Հ.Մ.Ը.Մ.ի հիմնական նպատակները: Հոս է յենարանը, ուր սերունդէ սերունդ, կազմակերպական ամրութիւնը եւ կայունութիւնը պահպանուած են ժամանակի ընթացքին:

Կանոնագիր մը կազմակերպութիւն մը չէ: Ակումբ մը կազմակերպութիւն մը չէ: Խումբ մը անդամներ կազմա-

կերպով լինում էր: Վարչական մարմին մը կազմակերպություն մը չէ: Կանոնադրություն մը, ակումբ մը, անդամները եւ վարչական մարմին մը, հիմնական նպատակներով առաջնորդուած, կը կազմեն կազմակերպություն մը, երաշխաւորելով անոր յարատեւումը:

Կազմակերպութեան մը սկզբունքները եւ հիմնական նպատակները արդիւնքը չեն կանոնադրային պարզ տրամադրութեանց, այլ կը բխին եւ կը ներշնչուին իր հիմնադիրներու գաղափարախօսութենէն եւ իմաստասիրութենէն, կազմելով բաղկացուցիչը իր խթանող ուժին: Ա՛յս է Հ.Մ.Ը.Մ.ի պարագան:

Մարդ անհատին յեղաշրջումը կ'ենթադրէ նաեւ մնայուն յեղաշրջումը իր հետապնդած նպատակներուն եւ անոնց իրականացման համար ի գործ դրուած միջոցներուն:

Նպատակները պէտք է յարմարեցնել նոր իրականութեանց, առանց մոռնալով հիմնական գաղափարները: Այս է Հ.Մ.Ը.Մ.ի յաջողութեան բնորոշումը: Սերունդները, տասնամեակներու թաւալումով, միութենական պատմական անցեալով ներշնչուած, կերտած են փառաւոր ներկայ մը, եւ անկասկած պիտի կերտեն փայլուն ապագայ մը:

Հ.Մ.Ը.Մ.ը պատմութիւն է, ներկայ է եւ մասնաւորապէս ապագայ է:

Հ.Մ.Ը.Մ.ը հայ ժողովուրդի պատմութեան անքակտելի մէկ մասն է: Հ.Մ.Ը.Մ.ը ծնունդ առաւ հայ ժողովուրդին ծառայելու համար, ազգային ինքնութիւնը պահպանելու համար մարզանքի եւ սկստութեան միջոցով:

Հ.Մ.Ը.Մ.ի կանոնադրին առաջին յօդուածը պէտք է այսպէս շարադրուած ըլլար. «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան - Հ.Մ.Ը.Մ.- հիմնական նպատակը հայ ժողովուրդի ինքնութեան պահպանումն է...», եւ թէեւ որեւէ կանոնադրութեան մէջ այդպէս գրուած չէ, սակայն ան մաս կը կազմէ այն անգիր կանոններուն, որոնց էությունը եւ գաղափարախօսութիւնը հիմն է Հ.Մ.Ը.Մ.ի: Այս նպատակները անսասան, անփոփոխելի եւ անսակարկելի են:

Իննսուն տարի անցեր է իր հիմնադրութենէն, եւ

Հ.Մ.Ը.Մ. տակաւին երիտասարդ է եւ փայլուն՝ ապագայով: Ապագայ, որ կը հիմնուի իր ղեկավարներու յանձն առած պատասխանատուութեան եւ պարտաւորութեան վրայ, կազմակերպական նպատակներու ծառայելու համար: Ղեկավարութիւնը պէտք է իրազեկ ըլլայ թէ իսկական նպատակը Ֆուլթայլը չէ, թենիսը չէ, սկստութիւնը չէ, եւ այլն, որ ասոնք միայն միջոցներ են հասնելու համար ազգային նպատակներու: Այդ մնայուն նպատակները երբեք ժամանակավրէպ չեն ըլլար, որովհետեւ իրենց էությունը յենարանը ցեղն է, ազգութիւնն է, հայ ժողովուրդի հազարամեայ պատմութիւնն է:

Ասոնք են Հ.Մ.Ը.Մ.ի նպատակները եւ անոնց է որ խոստացած ենք հաւատարմութիւն: Մեր նպատակները չեն նմանիր լեռնագնացի մը նպատակին, որ իբրեւ նպատակէտ ունի հասնիլ լեռան գագաթը: Իրեն համար նպատակը կ'իրականանայ երբ կը հասնի գագաթը, եւ կրնայ պատահիլ, որ լեռնագնացութիւնը լքէ, որովհետեւ ինքզինքը բաւարարուած զգայ նպատակին իրականացման հետ: Նոյնը չէ հարցը, երբ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ականներու մասին կը խօսինք: Մեզի համար հիմնական նպատակները անվերջ ճամբայ մըն են, ուրկէ պիտի քալենք մինչեւ մեր կեանքին վերջին օրը:

Տասնեակ տարիներու ընթացքին երազեցինք եւ պայքարեցանք օր մը ազատ եւ անկախ հայրենիք տեսնելու համար: Երազեցինք երգել մեր ազգային օրհներգ «Մեր Հայրենիք»ը եւ պարգել մեր Եռագոյն դրօշը մայր հայրենիքի հողին վրայ:

Եւ երազը դարձաւ իրականութիւն: Դժբախտաբար, շատեր կարծեցին թէ հասած էին նպատակներու իրականացման եւ թէ՛ իրենց յանձնառութիւնը կրնային վերջացած նկատել: Ցաւալի սխալ: Ընդհակառակը: Անկախութենէն ետք, մեր ստանձնած պարտականութիւնը պէտք էր ամրացընել: Սկսաւ նոր ժամանակաշրջան մը, պահպանելու համար ձեռք ձգուած ազատութիւնը եւ անկախութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ը այսպէս ըմբռնեց իրականութիւնները իր հիմնադրութենէն մինչեւ մեր օրերը:

Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակը պէտք է դառնայ պարզ ժամադրութիւն տօնակատարութեան մը համար: Ան առիթ մը պէտք է ըլլայ նորոգելու մեր հաւատարմութեան խոստումը՝ ծառայելու Աստուծոյ եւ Ազգին: Առիթ մը, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի իւրաքանչիւր անդամ, մարզիկ, սկստ, վերջնական անդամ, ուսումնասիրենք եւ եզրակացնենք, թէ ի՞նչ եղած է մեր նպաստը

1992. Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի յաջորդական Շրջանային Վարչութիւններու անդամներ:



ազգային ինքնութեան պահպանման հսկայական գործին, եւ ի՞նչ պիտի ըլլայ մեր պարտականութիւնը պահպանելու եւ ամրացնելու համար մեր ազգային անկախութիւնը:

Յոմեակը առիթ մըն է կրկնապատկելու մեր ջանքերը՝ զարգացնելու համար մարզական, սկստական եւ ղեկավարման մարզերը, շրջանային եւ համաշխարհային մակարդակներով, մեր բարոյական արժէքներու եւ կանոնադրային կառոյցներու խոր ճանաչման եւ յարգանքին միջոցով:

Կառոյցներու եւ նուիրապետութեանց յարգանքի մէջ կը կայանայ մեր կազմակերպութեան ամրութիւնը: Յարգանքը պէտք է ըլլայ անձերուն եւ իրենց գրաւած դիրքերուն: Ստորագաս մարմինները եւ շրջանակները պէտք է յարգեն գերադասները, եւ ասոնք իրենց կարգին պէտք է յարգեն ստորագասները, խուսափելու համար անտեղի միջամտութիւններէ, հպարտ կամ ամբարտաւան կեցուածքներէ, որոնք կը տանին կազմակերպական կառոյցներու անողոք կործանման:

Հ.Մ.Ը.Մ.ականը ամէն բանէ վեր օրինակելի է: Բարոյականութիւնը եւ օրինակելի ընթացքը պիտի երաշխաւորեն Հ.Մ.Ը.Մ.ի ապագան:

Պէտք չէ վատնենք ուրիշներու կողմէ մեզի համար կատարուած գործերը, մեր պարտականութիւնը ըլլալով շարունակել զանոնք՝ ի շահ մեր յաջորդ սերունդներուն:

Բարոյականութիւնը եւ օրինակելիութիւնը Հ.Մ.Ը.Մ.ականին առաքինութիւններն են: Այսպէս կ'արտայայտուի Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կանոնադրութիւնը իր նպատակներուն մէջ:

Բարոյականութիւնը եւ օրինակելիութիւնը սպառելի առաքինութիւններն են: Երբ անձը զանոնք կը կորսնցնէ, անկարելի է վերատիրանալ անոնց: Անոնք վաճառելի ինչքեր չեն: Մարդ կը ծնի, կ'ապրի եւ կը մեռնի անոնց հետ:

Այն անձը, որ կը վաճառէ իր բարոյականութիւնը եւ օրինակելիութիւնը, ձեռք ձգելու համար անձնական շահեր՝ ի վնաս իր նմաններուն, երբեք պիտի չկարենայ զանոնք նորէն ձեռք ձգել:

Անձը բարոյական եւ օրինակելի է իր կեանքի բոլոր ասպարէզներուն մէջ, ըլլայ անձնական կամ հանրային, ընտանեկան, կազմակերպական, աշխատանքային եւ այլն:

Անձը չի կրնար քիչ մը բարոյական եւ քիչ մը օրինակելի ըլլալ, ըստ պարագայի: Այս հարցին մէջ գոյութիւն չունին միջին եզրեր: Հ.Մ.Ը.Մ.ի ապագան կը հիմնուի հետեւեալ կէտերուն վրայ.-

- Ծանօթութիւն եւ յարգանք միութեան հիմնական նպատակներուն:
- Ծանօթութիւն եւ յարգանք միութեան կազմակերպական կառոյցին եւ կանոնադրային տրամադրութիւններուն:
- Ընդունիլ որ միութեան համար մարզականը եւ սկստ-



տութիւնը միջոցներ են եւ ոչ՝ նպատակներ:
- Ծառայել Աստուծոյ եւ ազգին:

Ապագան տեւական ձեւով մեր առջեւ կը դնէ պայքարի հրաւերներ: Եւ որպէսզի կարենանք դիմադրել անոնց եւ մենք մեզ գերազանցել, մարդկային մեր միջոցները պէտք է կատարելագործենք եւ գերազանցելու կամք ցոյց տանք: Մեր պարտականութիւնն է ցոյց տալ, թէ արժանի ժառանգորդներն ենք հազարամեայ ցեղի մը, թէ չենք մոռնար գոհողութիւնը Շաւարշ Գրիսեանի, Գրիգոր Յակոբեանի, Տիգրան Խոյեանի, Յովհաննէս Հինդլեանի, Պետրոս Ատրուսիի, Վահան Չերազի եւ շատ ուրիշներու, իննսուն տարուան ընթացքին:

Այս է պահը ստանձնելու պատասխանատուութիւններ, առանց ձգձգումներու եւ տատանումներու, մէկ կողմ ձգելով մարդ արարածին յատուկ եսասէր կեցուածքները:

Դիրքերը գորս կարողութիւն չունինք գրաւելու, կրնան գրաւուիլ անոնց կողմէ, որոնք պատրաստակամութիւն ունին վաճառելու մեր հիմնական արժէքները: Ատոր համար, պէտք չէ բաւարարուինք ծափահարելով եւ ոգեւորուելով Յոմեակի տօնակատարութեամբ, այլ՝ միանանք երազողներու փաղանգին, զոր հիմնեց Շաւարշ Գրիսեան իննսուն տարի առաջ եւ որ պիտի շարունակէ երազել բոլորին բարոյական եւ նիւթական ներդրումով:

Այս պատճառով ալ, անգամ մը եւս կրնանք հաստատել, թէ երբ կ'ըսենք Հ.Մ.Ը.Մ., կ'ըսենք Հայրենիք, Ժողովուրդ, Ազգ, Յեղասպանութեան ճանաչում, Հայաստան:

Թող Աստուած իր լոյսերուն մէջ պահէ մեր նուիրեալ հիմնադիրներուն հոգիները եւ լուսաւորէ մեր շարունակելիք ճամբան, ապահովելու համար մեր արժէքները, մեր աւանդութիւնները, մեր մշակոյթը, մեր ազգային ինքնութիւնը: Այս բոլորը կարելի է Հ.Մ.Ը.Մ.ի միջոցով:

Հ.Մ.Ը.Մ.Ի 90 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Հրաչ Տեր Սարգիսեան
ՄՈՆԹԻՒԼ

Այսօր, իր հիմնադրութենէն 90 տարիներ ետք, Հ.Մ.Ը.Մ. անշեղ պահելով իր հիմնադիրներուն գաղափարական վեհ կարգախօսները, հայ պատանին ու երիտասարդը կ'առաջնորդէ դէպի լաւագոյնը, բարին ու վսեմը, պատիւ բերելով հայ ազգին: Հ.Մ.Ը.Մ. կ'ամրացնէ նոր սերունդին Ֆիզիքական, հոգեկան, բարոյական, ազգային ու հասարակական արժէքներն ու խօշակները:

Բոլորը ծանօթ են Հ.Մ.Ը.Մ.ի 90 տարիներու ազգանուէր անցեալին, զոհողութիւնը, յարատեւութիւնը եւ փոխադարձ յարգանքը ունենալով իբրեւ իր դաստիարակութեան մեկնակէտ: Իբրեւ ոչ-արհեստավարժ կազմակերպութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի առաջնահերթ նպատակը բարոյագիտութեան կերտումն է, պատանիին ու երիտասարդին տալով պայքարելու եւ նորանոր բարձունքներ ու յաղթանակներ նուաճելու կամք:

Որքան պատիւի եւ յարգանքի արժանի է Հ.Մ.Ը.Մ. համաշխարհային գետնի վրայ, հայ թէ օտար մարմնակրթական կառույցներու կողմէ իր 100 մասնաճիւղերով եւ աւելի քան քսանհինգ հազար անդամներով: Արդարեւ, ան միակն է, որ նոյն յարկին տակ կը համախմբէ մարմնակրթանքն ու սկաուտութիւնը, իր երկսեռ բաժիններով, պատրաստելու համար Ֆիզիքայէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ:

Հ.Մ.Ը.Մ. հակառակ Ձերդ դարու մեծ մարտահրաւէրներուն, դժուարին պայմաններուն եւ երիտասարդներու նորանոր պահանջներուն, հաստատօրէն կը շարունակէ իր երթը՝ ծառայելու եւ իրագործելու հայութեան առաջնահերթ նպատակները:

Հ.Մ.Ը.Մ. այս տարի կը տօնէ իր հիմնադրութեան 90րդ տարեդարձը: Սրտի անհուն բերկրութեամբ կ'ողջունեմ եւ կը շնորհաւորեմ միութեան 90ամեայ վաստակը եւ կը մաղթեմ առաւել ուժ, կորով՝ ի սպաս նոր ամեակներու եւ նոր յաղթանակներու, ի խնդիր հայ երիտասարդներու դաստիարակութեան:

Բիւր յարգանք ու պատիւ Հ.Մ.Ը.Մ.ին եւ անոր շուքին ներքեւ ծառայող «Կամաւոր բանակ»ին:





ՀԱՅՕՐԷՆ ԱՊՐԵԼՈՒ ԵՒ ԳՈՐԾԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Պետիկ Սապուցճեան Պէյրուք

90

ամեակ: 90 երկար տարիներ անցած են Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութենէն այսօր: Շատ մեղան հոսած է եւ դեռ պիտի հոսի կարենալ ներկայացնելու համար Հ.Մ.Ը.Մ.ի 90 տարիներու բեղուն գործունէութիւնը:

Հաւանաբար ճիշդ պիտի չըլլայ գործունէութիւն բառով բնորոշել Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեայ սխրագործութիւնը, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ. կեանք եղաւ մահուան դէմ, հայապահպանում եղաւ օտարացումի դէմ: Հ.Մ.Ը.Մ. իր մէջ խտացուց ազնուութեան, քաջութեան, ինքնավստահութեան, վեհութեան եւ մարդասիրութեան սկզբունքները: Իսկ կարեւորագոյնը՝ ան հայ մարդը զինեց ազգային գիտակցութեամբ: Անոր տուաւ ազգային արժէքները բարձր պահելու եւ հայը հայ պահելու խորհուրդը, իր կարգախօսը դարձնելով «Միշտ պատրաստ» ազգին համար:

Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեայ պատմութիւնը ներկայացնող յուշերով, յօդուածներով, ճառերով եւ գիրքերով ամբողջ դարադարան մը կարելի է լեցնել: Հ.Մ.Ը.Մ.ականներ իրենց գործունէութեամբ կեանք տուած են ազգին: Մանօթ թէ անծանօթ հազարաւոր միութենականներ իրենց վարչական, մարզական թէ սկստական աշխատանքներով պատիւ բերած են հայութեան, Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով Սփիւռքի հայկական դիմադիծը պահելով եւ ազգային գիտակցութեամբ ապրելու եւ գործելու հրաշքը կատարելով:

Հազար փառք ու պատիւ այդ սերունդին:

Այսօր, հայօրէն ապրելու եւ գործելու հրամայականը նոյնքան անհրաժեշտութեամբ կը ներկայանայ մեզի, որքան Հ.Մ.Ը.Մ.ի ստեղծումի օրերուն: Այսօր, ամբողջ սերունդ մը կը հեռանայ մեր ազգային արժէքներէն՝ բռնած օտարացումի եւ համաշխարհայնացումի ճամբան: Այսօր

ծնողքը կորսնցուցած որբեր չկան այլեւս, սակայն կան գիտակցաբար կամ անգիտակցաբար ճերմակ ջարդով որբանալու ճամբան բռնած նոր սերունդի տղաք ու աղջիկներ, որոնք հետզհետէ կը պարպուին ազգային գիտակցութենէ եւ կը դառնան պարզապէս հայկական մականուն կրող անձեր:

Մենք պիտի չանդրադառնանք գաղութ առ գաղութ հայութեան վիճակին եւ Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութեան, սա-

կայն պիտի արտայայտուինք երկու օրինակով: Առաջինը՝ մայր հայրենիք Հայաստանի օրինակը, իսկ երկրորդը՝ Սփիւռքի գլխաւոր գաղութներէն Լիբանանի պարագան:

Հայաստան 17 տարիէ անկախացած է, սակայն Հ.Մ.Ը.Մ. տակաւին խոր արմատներ նետած չէ Հայաստանի մէջ: Շատեր կ'ըսեն թէ Հայաստանի քաղաքացին հայ է, ինչ պէտք ունի Հ.Մ.Ը.Մ.ին:

Հարցումը տեղին է, իսկ պատասխանը նոյնքան կարեւոր: Հ.Մ.Ը.Մ. հայակերտում ըլլալէ առաջ մարդակերտում է: Ան ազնուութեան, աշխատասիրութեան, քաջութեան, մարդասիրութեան, հայրենասիրութեան եւ վեհանձնութեան արժէքները կը փոխանցէ իրեն դիմողներուն եւ մարդ, հայ մարդը մանաւանդ, այսօր, բոլոր ժամանակներէ աւելի, կարիքը ունի այդ բոլորին: Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.ի դերն ու առաքելութիւնը մեծ է Հայաստանի մէջ:

Լիբանանի պարագային շատ բան փոխուած է ազգային իրականութեան մէջ: Կը բաւէ նշել, որ այսօր գաղութին աշակերտութեան գրեթէ կէսը կը յաճախէ օտար վարժարաններ եւ անոնց մեծամասնութիւնը հեռու է Հ.Մ.Ը.Մ.ական դաստիարակութենէ: Շատեր նոյնիսկ հեռու են հայ իրականութենէ: Այս իսկ պատճառով Հ.Մ.Ը.Մ. մեծ մարտահրաւէրներու դիմաց կանգնած է: Առ այդ, Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուները պարտաւորուած են վերցնելու իրենց նետուած ձեռնոցը եւ մեծ կորովով ու զոհաբերութեամբ նորահաս սերունդները առաջնորդելու նորանոր 90ամեակներ:

Ստեղծուած կացութեան պատասխանատուներ փնտռելը ճիշդ չէ: Եթէ յանցաւոր մը կայ՝ բոլորս յանցաւոր ենք:

Հետեւաբար, 90ամեակը բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն կը թելադրէ հոգով-սրտով աշխատանքի լծուիլ, որովհետեւ ընելիք շատ բան կայ: Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը պատիւ չէ, փառք չէ, աթոռ չէ: Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալ կը նշանակէ տալ եւ միայն տալ: Տալ ժամանակէդ, հանգիստէդ, փորձառութենէդ, գիտութենէդ, լուծակէդ եւ անձէդ:

Համլէթ Չրախձեան ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ



ԵՐԿԱՐ, ԱՐԴԻԻՆԱԲԵՐ ԵՒ ԱՆՍԱՍԱՆ ԵՐԹ

Դժուար է քանի մը տողերու մէջ արտայայտուիլ եւ լիարժէք գնահատական տալ Հ.Մ.Ը.Մ-ի նման աշխարհածաւալ եւ գերգործունեայ միութեան մը մասին: Կարելի է անվարան հաստատել սակայն, թէ եզակի են Հ.Մ.Ը.Մ-ի նման մշտանորոգ եւ միշտ երիտասարդ կազմակերպութիւնները: Հ.Մ.Ը.Մ-ը իր գործունէութեան ընթացքին անցաւ պատմական իրարմէ աւելի դժուար եւ մարտահրաւէրներով լեցուն քանի մը պահերէ, սակայն միշտ ալ վերագտաւ ինքզինք եւ ամէն անգամ աւելի համոզիչ դարձուց այն իրողութիւնը, որ ան կենսական նշանակութիւն եւ կարեւորութիւն ունի մեր ժողովուրդի կեանքին մէջ:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ-ը ծնունդ առաւ 1918ին, երբ տակաւին Եղեռնի արհաւիրքը, տարողութիւնը եւ հետեւանքները նոր հասկնալի կը դառնային շատերուն, գործեց 1918-1920 տարիներու անկախ Հայաստանի մէջ, վերապրեցաւ 1920ի խորհրդայնացումը, դարձաւ սփիւռքեան կազմակերպութիւն, գոյատեւեց Սփիւռքի մէջ մինչեւ 1989 թուականը եւ

ն -
րանկախ Հայաստանի իրականութեան փաստին առջեւ՝ վերադարձաւ Հայաստան:

Անձնական փորձառութեամբ տեսած ենք շատ քիչ կազմակերպութիւններ, որոնք յաճախ առանց նիւթական բաւարար միջոցներու, ընդհանրապէս հիմնուելով իրենց անդամներու նուիրումի, զոհաբերութեան ոգիին վրայ եւ, ամէնէն կարեւորը, կամաւոր աշխատելու եւ նուիրաբերելու յատկութիւններով, կարողութիւնը ունին այսքան յաջող ձեւով ընդլայնելու իրենց գործունէութիւնը:

Հ.Մ.Ը.Մ-ը այն միութիւնն է, որ իր գործով իսկ կը սատարէ եւ հաստատէ այն, որ միայն առողջ գործի շուրջ եւ հաւատքի առկայութեամբ կարելի է ի մի բերել մեր ժողովուրդի բոլոր զաւակները, ուր որ ալ ապրին անոնք, աշխարհաքաղաքական կամ տնտեսական ինչ պայմաններու մէջ ալ գտնուին անոնք:

Բարի երթ կը մաղթեմ Հ.Մ.Ը.Մ-ին. երթ մը որ վստահաբար պիտի ըլլայ երկար, արդիւնաբեր եւ անսասան:



1987. Հ.Մ.Ը.Մ-ի Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղի շէփորախումբը:



90ԱՄԵԱԿ Հ.Մ.Ը.Մ.Ի

Մանուէլ Գալլաճեան ԹՈՐՈՆԹՕ

Որքան ժամանակը կ'անցնի, այնքան աւելի կը բերեղանայ եւ կը վսեմանայ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան նպատակը, որ երէկ եւ այսօր սիրանքն է մայր Հայաստանի եւ Սփիւռքի:

90 տարիներ կ'ըսենք շատ դիւրին, բայց անգամ մը մտածենք թէ ի՞նչպէս տոկաց ու միշտ խրոխտ քալեց Հ.Մ.Ը.Մ.ը՝ պայքարելով բոլոր տեսակի բռնութեանց ու բռնապետութեանց դէմ, Սփիւռքի թէ մայր հայրենիքի մէջ:

Այո՛, որքան տարիները կը թաւա-

լին, հայ ժողովուրդը, իր բոլոր խաւերով ու հոսանքներով, այնքան աւելի խորապէս կը գիտակցի Հ.Մ.Ը.Մ.ի ուրոյն արժէքին ու դերին, իբրեւ իր գոյատեւման ու անկաշկանդ յառաջխաղացքի անփոխարինելի կազմակերպութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ը կ'ապրի ու կը զարգանայ դարուն շունչով, վերանորոգութեամբ եւ ժամանակի պահանջներուն համապատասխան վարքագիծ կիրարկելու շնորհը ունենալով: Ան ունի նաեւ անհրաժեշտ կենսունակութիւնն ու ստեղծագործ աւիւնը՝ սեփական ուղի ճշդելու, ինքնուրոյն կամք կերտելու եւ իր ինքնութիւնը պարտադրելու շրջանակին:

Իրաւամբ, Հ.Մ.Ը.Մ.ի հզօրութեան գաղտնիքը, մեծութեան չափանիշը

անցեալին մէջ չէ այնքան, որքան ապագային մէջ: Անցեալի մեծագործութեանց յիշատակներով սնանելուն մէջ չէ միայն, այլ մանաւանդ՝ նոր երազներով ապրելուն եւ մեծ իտէալներով ներշնչուելուն մէջ, սեփական արեան ձայնին եւ ժամանակի ոգիին հաւատարիմ մնալուն մէջ առանձնապէս:

Ահա այս մեկնակէտով է, որ այժօր կը տօնենք մեր գոյատեւման 90ամեակը, ոչ միայն թաւալող 90 տարիներուն փառքը, այլեւ՝ մեր գործունէութեան գլխաւոր նշանակէտը եղող Պետրոս Ատրուսիի նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»ը:

Այս ուղիով, միութենական ու ընկերային այս իտէալին կենսագործման միջոցով է միայն, որ կարելի եղաւ կեր-



տել լիիրաւ Հ.Մ.Ը.Մ.ական հայր, իր սեփական անկախ հայրենիքին մէջ ու ամբողջ Սփիւռքի մէջ, ուր մինչեւ օրս ունեցաւ 100 ծաղիլուն ու փայլուն մասնաճիւղեր, որոնք փառքն ու պատիւն են հայ ազգին:

Ահա թէ ինչո՛ւ Հ.Մ.Ը.Մ.ը իր պայծառամիտ ու լայնախոհ ոգիով, ընկերային առողջ գաղափարաբանութեան հրամայականին գուգահեռ, հայրենիքի եւ ազգի գաղափարը ներառեց մարմնակրթանքի եւ «Առողջ միտքը՝ առողջ մարմնի մէջ» հիմնական տեսաբանութեան մէջ:

Շրջանէ շրջան եւ գաղութէ գաղութ համահայկական մտահոգութիւններով եւ հաւաքական ձեռնարկներով նորահաս սերունդը հաղորդակից պիտի դարձնենք նախ իրարու,

ապա մեր ազգային ընդհանրական ժառանգութեան՝ հայրենիքի իրականութեան եւ հայ ժողովուրդի քաղաքական ճակատագրի վերափոխման հրամայականներուն: Ազգային առողջ դաստիարակութեան ճամբով միայն կարելի է նոր սերունդին փոխանցել անհրաժեշտ յատկութիւններն ու յատկանիշները մեր անմահ հիմնադիրներուն ու մեր նախնի նուիրեալ պատասխանատուներուն:

Արդ, Հ.Մ.Ը.Մ. Հայաստանի անկախացման հետ սկսաւ իր կեանքը, Հայաստանին հետ ալ մեծցաւ ու բարգաւաճեցաւ տեւաբար, դարձաւ անոր ազգային, ընկերային, մարմնակրթական ու գաղափարական ապրումներուն, իղձերուն, հոգերուն ու տագնապներուն հարազատ հայելին, ցոլա-

րանը անոր հոգեկան ու իմացական տեղատուութիւններուն ու մակընթացութիւններուն, ապրելու եւ տոկալու կամքին: Սակայն, միաժամանակ, անոր օրինակը վարակեց բովանդակ Սփիւռքը, իբրեւ աննահանջ դրօշակիրը հայ ազգին ու հայ երիտասարդ սերունդին:

Ամբողջ դարոց մըն է Հ.Մ.Ը.Մ.ը իր բեղուն ու բազմակողմանի գործունէութեամբ, հաւատաւոր նուիրեալներու եւ անձնդիր պատանիներու իրերայաջորդ հոյերով: Դարոց մը, իրաւամբ, որուն հայրենաշունչ մթնոլորտին եւ գաղափարական շունչին տակ դաստիարակուեցան յաջորդական սերունդներ, թրծուեցան հոգեպէս եւ մարմնապէս, եւ իրենց հերթին նուիրուեցան հայրենական արժէքներու եւ իտէալներու սպասարկումին:

Այս տեսակէտէն եւս մեծ, բացառիկ դեր վերապահուած է, ինչպէս անցեալի 90 տարիներու նուիրեալներուն, նաեւ ներկայի եւ ապագայի բոլոր անդամներուն: Իբրեւ մեծ աւանդութեան տէր, մարմնակրթական եւ ազգային օրրան, նոյնքան մեծ պատասխանատուութիւն կը ծանրանայ մեր ուսերուն, սփիւռքահայ կեանքի ղեկավարման, մեր նոր սերունդի արժեւորման, նոր ոգիի ու աւիւնի ներշնչման նուիրական առաքելութեամբ:

Եթէ երբեք անցեալը իբրեւ գրաւական կրնայ ծառայել ապագայի հաշւին, Հ.Մ.Ը.Մ.ի բազմաբեղուն անցեալը ամէնէն ամուր կ'երաշխիքը կը կազմէ ապագայի անոր նորանոր նուաճումներուն:

Պատիւ արժանաւորին, փա՛ռք Հ.Մ.Ը.Մ.ի անցեալին եւ յուսադրիչ ապագայի ծրագրումին:

Կեցցէ հայ ազգը ու անոր մարմնակրթարանը՝ Հ.Մ.Ը.Մ.ը պանծալի:

Նկարը՝ Զատկուան աւանդական տողանցք Յալէպի մէջ, 1955:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍԻՆ

Եթե մարմնամարզը կը ծառայե միայն մարմնի առողջացումին, առանց նոյն ճիգը սպառելու հոգիի առողջացումին վրայ, այդ՝ առողջ ու հոգեզուրկ մարմինները ոչ թե բարիք, այլ ճշմարիտ չարիք մը կը դառնան որեւէ ժողովուրդի համար:

Իսկ հոգին ողջ կը մնայ մարմիններուն մէջ, եթէ կա՛յ ու կը մնայ, եթէ բոլորին մէջ կ'ապրի՝ ու կը ստեղծագործէ այն «անտեսանելի»ն, մեր գոյութեան ու յարատեւումի այն հզօր կռուանը, ցեղային այն անյաղթ Ոգին, որ կու գայ հեռաւոր հազարամեակներու խորերէն:

ՎԱՀԱՆ ՆԱԻՍՍԱՐԴԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի գաղափարականը միայն մարզական չէ, սկաուտական չէ, այլ ԱՄԵՆ ԻՆՉ Է, հայութեան ամբողջութիւնը, հայութեան իտեալները, հայութեան ազատութեան հետ կապուած ամբողջ յոյսերը, հայութեան պայքարի ամբողջ իմաստը: Արտասահմանի մէջ այն բոլոր պատանիներն ու երիտասարդները, որոնք հետագային քաղաքական յանձնառութիւններու տակ կը մտնեն, Հ.Մ.Ը.Մ.Ի շարքերուն մէջ Է, որ կը ստանան իրենց ազգային հիմնական դաստիարակութիւնը:

ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒԽԵԱՆ

... Մարմնացեալ խանդավառութիւն եւ կարգապահութիւն: Ինչո՞ւ չըսել վերածնունդ, միշտ յիշելով երեկը:

Հայկական յետին համրանքը իր բաժինն ունի երիտասարդական այս աննման կազմակերպութեան մէջ, հեռաւոր դաշտի մը վրան նետուած ըլլան անոնք թէ լերան մը ստորոտը, անխորտակելի հաւատք կը կաթի այս երիտասարդութեան աչքերէն: Աշխատանքի, չարքաշութեան, յարատեւութեան աւիշն է որ կը յորդի իրենց երակներէն...:

Ուրիշներ, աւելի՛ բախտաւորներ, դժուար թէ յաջողեին գլուխ հանել այսքան կուռ եւ ծաւալուն կազմակերպութիւն մը, առանց պետական միջոցներու:

Անոնք որ նուիրուած են Հ.Մ.Ը.Մ.Ի գարգացման աշխատանքին, անոնք միայն գիտեն թէ ինչ կը նշանակէ հազարաւոր անդամներու ցանց մը կազմակերպել ու պահել տարիներով: Հակառակ անհնարին դժուարութեանց, որոնց առջեւ շատոնց յուսահատած պիտի ըլլային վեհերոտ եւ նեղմիտ մարդիկ:

Այս հրաշքը կարելի եղած է գործել անոր համար, որ Հ.Մ.Ը.Մ.Ի վարիչներուն եւ անդամներուն հոգին միշտ կը խայտայ գարնանային շունչով մը:

ՇԱԽԱՐԾ ՄԻՍԱԲԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ը հայ իրականության մեջ ամենամեծ կազմակերպությունն է: Իսկ Ամենամեծ կազմակերպությունը ունի ամենամեծ պատասխանատվությունը: Եթե արտերկրում ունեք ձեր կազմակերպութունը պահելու, ձեր կազմակերպությունը իբրև Հ.Մ.Ը.Մ. իր եութամբ, գաղափարախօսութամբ, բարոյախօսութամբ համակուած պահելու առաքելութիւն, որպէսզի այն ոչ մի անգամ չպարպուի իր բովանդակութիւնից, ապա Հայաստանում ունեք այս կազմակերպութիւնը տարածելու, կայացնելու, նրա միջոցով անկախ Հայաստանի քաղաքացի դաստիարակելու, մեր դաւանած արժեքները տարածելու, քաղաքացիական հասարակութիւն ստեղծելու, մթնոլորտը աւելի բարոյականացնելու առաքելութիւն:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ականն ու հայ սկաուտը իրե՛նցը պետք է ընեն ապրումները հայութեան, գործեն անոր բարօրութեան եւ ազգային-քաղաքական արդար իրաւունքներու իրականացման համար, սկաուտական իրականութեան ազնուացնող ապրումները կիրարկեն անոր ծառայութեան գծով, ու միշտ հաւատարիմ իրենց նշանաբանին, շանան տեւաբար **ԲԱՐՁՐԱՆԱԼ**, բայց **ԲԱՐՁՐԱՅՆԵ՛Լ** մանաւանդ:

Ծանր է այս կրկնակ կոչումը թերեւս, բայց հպարտառիթ: Ծանր է հայութեան եւ անոր ծառայելո՛ւ կոչումը ինքնին, բայց շքեղօրէն գեղեցիկ:

ՀՐԱԶ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդի օրուան պայմանները նպաստաւոր չէին իր զարգացումին, այլ՝ զինք հիմնադրողներուն վճռականութիւնը եւ սեփական ժողովուրդին տեսլականը, որ Չաւեն Պատրիարքի խօսքերուն մէջ կը ձեւաւորուէր յստակութամբ: «Բարոյական զինուորագրութիւն» մը պետք է ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ ծառայողներուն հիմնական նպատակը, մտասուեռո՛ւմը:

Եւ թող ամեն մէկ Հ.Մ.Ը.Մ.ական չմոռնայ, թէ անհրաժեշտ է, որ ինք «Կազմակերպուի, ազնուանայ, որքան որ կրնայ լեցնել իր սիրտն ու միտքը, որովհետեւ ինք պիտի ըլլայ վաղուան սրբազան հայրենիքին հրաշակերտ տաճարին սիւներէն մէկը»:

ԲԱԲԳԵՆ ՓՈՓՈԶԵԱՆ

90 ՏԱՐԵԿԱՆ, ԲԱՅՑ ՄԻ՛ՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ Հ.Մ.Ը.Մ.Ը



Սարգիս Մահտրեճեան ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Եթէ անձ մը, այդ թէ կին, տօնէ 90րդ տարեդարձը, կը նկատուի բախտաւոր, իսկ կեանքի այդ հանգրուանը առհասարակ կը բնորոշուի իբրեւ «խոր ծերութիւն»:

Միութեան մը պարագային, նման տարիքի բնորոշում տարբեր է. 90 տարի ապրող միութիւն մը կամ որեւէ հաւաքական միաւոր նոյնքան եւ աւելի բախտաւոր է, որովհետեւ կը նշանակէ, թէ ան իր դրօշին, նշանակին տակ կարողացած է տասնամեակներ շարունակ ի մի բերել իրերայաջորդ սերունդներ, իր ծննդեան օրը ճշդուած նպատակները շարունակած է կենսագործել այդ տարիներուն, ու բացայայտ դարձուցած է, որ երթը պիտի շարունակուի՝ այնքան ատեն որ նոր սերունդներ կը ժամադրուին իր դրօշին ներքեւ:

Միութիւններու պարագային, «խոր ծերութեան» խօսք չի կրնար ըլլալ, մանաւանդ եթէ տուեալ միութիւնը կը մնայ կորովի, կը գործէ երիտասարդական խանդով ու նուիրուածութեամբ: Իսկ եթէ մեր խօսքը մասնաւորենք Հ.Մ.Ը.Մ.ին, անվարան կրնանք ըսել, թէ Հ.Մ.Ը.Մ.ը ո՛չ միայն երիտասարդ է միշտ, շնորհիւ տարուէ տարի իր շարքերուն միացող պատանիներուն ու երիտասարդներուն, այլ նաեւ երիտասարդ կը պահէ իր բոլոր անդամները, ի՛նչ տարիքի ալ որ հասած ըլլան անոնք: Փաստօրէն, երէց ու տարեց Հ.Մ.Ը.Մ.ականը հոգիով, սիրտով ու կորովով մի՛շտ երիտասարդ է, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի գործի մթնոլորտը այդպէ՛ս կը պահէ զինք, որովհետեւ տարեց խմբապետը կամ վարչականը յարատեւօրէն գործ ունի պատանիին ու երիտասարդին հետ, անոր կու տայ իր փորձառութեան, անկէ կը ներշնչուի երիտասարդական կամքով, խանդով, ազնիւ արկածախնդրի ոգիով, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը շատ մը բաներէ առաջ ԳՈՐԾ է, իսկ գործողը կը մնայ եռանդուն, անժանդ ու երիտասարդ:

Պերճախօս օրինակ մը տալու համար, հոս փակագիծ մը բանանք եւ յիշողութեան նաւակով վերադառնանք մեր մանկութեան ու պատանութեան օրերը: Նախակրթարանի աշակերտ էինք (Հայէպ) ու մարզանքի ուսուցիչ ունէինք նշանաւոր սկաուտապետ Լեւոն Աբգարեանը: Շաբաթը քանի մը օր, կանուխ առաւօտուն, դասարան մտնելէ առաջ, պէտք էր գոնէ կէս ժամ մարզանք ընէինք դպրոցին բակին մէջ: Պարոն Լեւոն դպրոց կու գար սկաուտական կարճ տաբատով ու կարճ թեւ տարագով (հագուարդէպօրէն զինք տեսած ենք սկաուտական երկար ու լայն տա-

բատով, որուն վարի մասը կ'ամփոփէր երկարածիտ սկաուտական կօշիկին մէջ), հոգ չէ թէ ցուրտ ձմրան սառեցնող առաւօտները ըլլային. ան մանուկներէս-պատանիներէս աւելի մեծ եռանդով կը կատարէր մարզական շարժումները, ու մենք, իրեն հետեւելով, ջերմութիւն կը զգայինք մեր մարմիններուն ու հոգիներուն մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը կը զարդարէր իր կուրծքը. տարիքը բաւական յառաջացած էր, հաւանաբար 70ի դուռները կը բախէր, եւ սակայն իսկական երիտասարդ էր, որովհետեւ... Հ.Մ.Ը.Մ.ական էր վերը նշուած բանաձեւումով: Փակագիծը փակենք:

Անհատի համար Ֆիզիքական ու նկարագրային կազմաւորումի դպրոց ըլլալով հանդերձ, Հ.Մ.Ը.Մ.ը սոսկական մարզական միութիւն չէ եղած ու պիտի չըլլայ երբեք: Ծիշդ է. ան կը կոչուի ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ, այսինքն՝ մարմնակրթանքի ասպարէզներ կ'ընծայէ ցանկացող բոլոր հայ երիտասարդներուն, ո՛ւր որ ալ գտնուին անոնք, սակայն անոր անուան առաջին բառը՝ ՀԱՅը զինք ի բնէ կը զատորոշէ մարզական այլ միութիւններէ ու անոր կու տայ առաքելութիւն մը, որ խորքին մէջ անմիջականօրէն կապ ունի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին հետ: Եթէ մտաբերենք, որ Հ.Մ.Ը.Մ.ը հիմնադրուած է այն օրերուն, երբ հայութիւնը կ'ապրէր Յեղասպանութեան վերջին փուլը, երբ Հայաստանի Հանրապետութեան ծնունդը նոր հորիզոններ կը բանար ճղակոտոր մեր ազգին դիմաց, արդէն բաւական բան ըսած կ'ըլլանք այն առաքելութեան մասին, զոր իբրեւ դրօշ յանձն առաւ Հ.Մ.Ը.Մ.ը՝ 90 տարիներ առաջ:





Հ.Մ.Լ.Մ.ականը պիտի բարձրանար մեր ժողովուրդին վիճակուած անդունդէն վեր ու իրեն հետ պիտի բարձրացնէր իր դրօշին սեւեռող հայու աչքերը:

Հ.Մ.Լ.Մ.ականը պիտի կերտէր մարզական նուաճումներ, որպէսզի վերականգնէր ու նոր թուիչք առնէր հայուն գոյատեւելու կամքը:

Հ.Մ.Լ.Մ.ի միջ-մասնաճիւղային մրցումներն ու Նաւասարդեան խաղերը, անոնց ընկերացող տողանցքները ազգային հպարտանքի ու սաւառնումի մէկ-մէկ տօնահանդէսներ պիտի ըլլային ու նոր սերունդները պիտի կամրջէին նախորդներուն, հին-հին դարերու նախնիներու Նաւասարդեան նուաճումներուն:

Հ.Մ.Լ.Մ.ական Փութպուրի խումբերուն նշանակած իւրաքանչիւր կողը, շահած իւրաքանչիւր բաժակը ողջ հայութեան համար պիտի ըլլային յաղթանակ ու հպարտանքի առիթ: Նոյնը նաեւ՝ Հ.Մ.Լ.Մ.ի շապիկը կրող պասքէթպոլիստին, հեծերանւորդին, գունդ ու սկաւառակ արձակողին, բարձրութեան կամ երկարութեան ոստում կատարողին, փինկ-փոնկի խխոյանին ու դեռ՝ միջ-դպրոցական մրցումներուն Հ.Մ.Լ.Մ.ի դրօշին տակ արձանագրուած մրցանիշներուն ու բարձրացուցած բաժակներուն պարագային:

Մէկ խօսքով, տասնամեակներ շարունակ, Հ.Մ.Լ.Մ.ը եղաւ ու կը մնայ հայուն արժանապատուութեան մէկ խորդանիշը, զայն մարմնաւորողը, հոգ չէ թէ «արհեստավարժութեան հարկադրանքները» այսօր Հ.Մ.Լ.Մ.ի դրօշն ու նշանակը տարածած են նաեւ ոչ-հայ մարզիկներու վրայ (այս կէտը արձանագրելով, չենք ուզեր թողուլ ազգայնամոլի տպաւորութիւն, ոչ ալ կ'արհամարհենք հայկական մարզական այլ միութիւններու բարերար դերակատարութիւնը, այլ կ'ուզենք յիշեցնել, թէ Հ.Մ.Լ.Մ.ի անուան մէջ ՀԱՅՐ ունի անժամանցելի իմաստ ու պատգամ, 90ամեայ այս միութիւնը կը դարձնէ իւրայատուկ, զայն կը գատորոչէ հայկական ու ոչ-հայկական մարզական միութիւններէ):

Այս յատկանիշը մեզ ի վերջոյ կը հասցնէ այն հաստատումին (խորքին մէջ կը վերահաստատենք պարզ ճշմարտութիւն մը), թէ Հ.Մ.Լ.Մ.ի առաքելութեան մէջ հիմնական

տեղ ունի ՀԱՅ ՍԵՐՈՒՆԴԵՐՈՒ ԿԵՐՏՈՒՄԸ: «Յառաջ, նահատակ ցեղի անմահներ» քայլերգին առաջին տողն ու շարունակութիւնը սեղմ պատգամ մըն է Հ.Մ.Լ.Մ.ականին, ան ըլլայ նորափթիթ մանուկ, հասակ առնող պատանի թէ վաստակաւոր վարչական, սկառտապետ ու նուիրեալ մարզիչ: այդ պատգամին մէջ կայ Եռագոյն դրօշը հայրենի ամէնէն հեռաւոր լեռներուն, նաեւ Արարատի դազաթին կոթողելու իղձն ու հրամանը: Այդ պատգամը չի կրնար կատարելապէս իրականանալ, եթէ Հ.Մ.Լ.Մ.ականը չունի մեր պատմութեան, մեր դարաւոր արժէքներուն ու ազգային ժառանգութեանց գիտելիքը, գիտակցութիւնը, զանոնք չէ իւրացուցած իր անուան պէս: Եւ ճիշդ հո՞ս է Հ.Մ.Լ.Մ.ի գոյութեան իմաստը, առաքելութեան վերնադիրը, անվախճան երթին մղում տուող աննիւթակա վառելանիւթը:

Ինչ տասնամեակներու վաստակ կերտած Հ.Մ.Լ.Մ.ը անշուշտ որ ապրած է պաղ ու տաք օրեր, որովհետեւ անոր կեանքը միաճուլուած է հայութեան, առաւելաբար սփիւռքեան գաղութներուն ապրած էլեւէջներուն հետ, սակայն ան յաջողած է հայութեան դրօշը բարձրացնել ու բարձր պահել: Վերջին մէկ ու կէս տասնամեակին, Հայաստանի անկախութեան վերահաստատումը անոր առաքելութեան մէջ վերականգնած է այն գիծը, որ ներշնչում առած էր ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի տեսլականով: Հ.Մ.Լ.Մ.ը հիմա վերստին կը գործէ մայր հայրենիքի հողին վրայ, իր ներդրումը խոստանալով ու կենսագործելով նաեւ հայրենի նոր սերունդներու կեանքին մէջ:

...90ամեակին առիթով, Հ.Մ.Լ.Մ.ը անպայման որ պէտք ունի մաղթանքներու: Մեր մաղթանքն է, որ Հ.Մ.Լ.Մ.ը 90ամեայ երթը շարունակէ անշեղ կամքով, իսկ ընկրկումի պահերուն վերաքաղ մը ընէ այն տեսլականներուն ու առաջադրանքներուն, որոնք եղան իր հիմնադիրներուն մտասեւեռումը, նոյնինքն Հ.Մ.Լ.Մ.ի հիմնադրութեան նախաձեռնութիւնը:

ՅԱՂԹ-ԱՆԱԿԻ ԴՐՕՇԸ

Հոգեկան ցնծությամբ ու բերկրանքով կ'ողջու- նենք Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած ընտանիքը՝ Կեդ- րոնական Վարչությունը, տարբեր օճախներու Շրջա- նային Վարչություններն ու անոնց հովանիին տակ գործող իւրաքանչիւր միաւորն ու անդամը, մարզա- կան մեծ միութեան հիմնադրութեան 90րդ տարեդար- ձին առիթով, մաղթելով աննահանջ երթ, ապա նաեւ մարզական կեանքի ու հայակերտումի առաքելու- թեան մէջ նորանոր իրագործումներ:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները տեսլականով օժտուած նուիրեալներ էին: Անոնք Հ.Մ.Ը.Մ.ի հիմը դրին այն օրերուն, երբ մեր հայրենի հողերուն մէկ բաժինին վրայ, Տեղասպանութենէն ու բռնազաղթէն ետք, նոր ծնունդ առած էր Հայաստանի Հանրապետութիւնը, իբրեւ արդիւնք՝ երկարաշունչ պայքարներու եւ ան- հաշիւ զոհողութիւններու:

Պատահական չէ, որ Շաւարշ Զրիսեանի, Գրիգոր Յակոբեանի ու Յովհաննէս Հինդլեանի անուններուն կողքին, հիմնադիր սերունդը արձանագրած է նաեւ Արժ. Տ. Տիգրան Զինյ. Խոյեանի անունը: Տեղասպա- նութենէն ու ահաւոր հալածանքներէն վերականգնող հայութեան, յատկապէս բիւրաւոր հայ որբերուն հա- մար, անյետաձգելի հրամայական էր ֆիզիքական ու հոգեկան վերապրումը, ազգային ու մշակութային արժէքներու վերընձիւղումը: Եւ ահա, Հ.Մ.Ը.Մ.ի հիմ- նադիրները եղան այն ասպետները, որոնք ընդառաջ եկան մեր ժողովուրդի պահանջին, տեսան, թէ անոր վերականգնումն ու գոյատեւումը պայմանաւորուած են պատանիին ու երիտասարդին առողջ դաստիարակութեամբ, կազմաւորումով: Անոնք հաւատացին, որ «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» նշանախօսքը հայ պատանիին ու երիտասարդին համար կը նշա- նակէ մարմնակրթանքի կողքին՝ անբասիր կենցաղ, այսինքն՝ հաւատարմութիւն հոգեմտաւոր արժէքնե- րու եւ ազգային-եկեղեցական ժառանգութիւններու:

Պոլսոյ մէջ ծնունդ առնող Հ.Մ.Ը.Մ.ը շուտով դար- ձաւ համայն հայութեան կամքը մարմնաւորող ծաւա- լուն կազմակերպութիւն: Անոր Եռագոյն դրօշին տակ ծաւալեցան մարզական ու սկաուտական միաւոր- ներ: Հ.Մ.Ը.Մ.ը ինք դարձաւ յաղթանակի դրօշ մէն մի հայու համար, որ Հ.Մ.Ը.Մ.ի ու Հ.Մ.Ը.Մ.ականներու

յաղթանակներուն մէջ տեսաւ հայութեան յաղթանա- կը, ամբողջ ժողովուրդի մը նուաճումները: Այդ պատ- ճառով ալ, մեր ժողովուրդը սիրեց Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթ- պոլի կամ ֆութպոլի խումբերը, հեծելարշաւի ու վազքի Հ.Մ.Ը.Մ.ական ախոյեանը:

Ահա այս է եղած Հ.Մ.Ը.Մ.ի ազնիւ առաքելութիւնը՝ 90 տարիներէ ի վեր: Այս հպարտութեամբ է որ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը անելի քան տասնամեակ մը առաջ վերստին ծածանեցաւ հայրենի հողին վրայ, Հայաս- տանի անկախութեան վերահաստատումէն ետք: Հ.Մ.Ը.Մ.ի նուաճումները կազմեցին իրերայաջորդ յաղթանակներ, ինչպէս որ նորանոր յաղթանակներու արտայայտութիւն են Նաւասարդեան խաղերն ու ճա- կատաբաց տողանցքները:

Այս կամքով, ա՛յս հաւատարմութեամբ է որ Հ.Մ.Ը.Մ.ականներու երթը պիտի շարունակուի, մինչեւ որ իրականանայ անոր քայլերգին մէջ արձանագրու- ած երազը՝ հայրենի Եռագոյնը կոթողելու հայրենի լեռներու, Արարատի՝ կատարներուն:

Թող օրինեալ ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը բարձր պա- հող բոլոր վարչականները, մարզիկներն ու սկաուտ- ները: Թող հիմնադիր սերունդի տեսլականը վառ մնայ իրերայաջորդ սերունդներու միտքերուն ու հո- գիներուն մէջ ու մարզական այս մեծ միութեան երթը շարունակուի աննահանջ, մինչեւ մեր հայրենական ու ազգային բոլոր տենչերուն կենսագործումը:

Յոբելեանական այս պատմական տարուան առի- թով, յանուն Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան մեր Թեմի հոգեւորականաց դասուն, Ազգային իշխանու- թեան ու անձնապէս, կը շնորհաւորենք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, Միացեալ Նահանգներու Արեւմտեան գօտիի Շրջանային Վարչութիւնն ու Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ գործող բոլոր միաւորները, մաղթելով նորանոր բարձունքներու նուաճում:

Սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթարար՝
ՄՈՒՇԵՂ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
Առաջնորդ Ա. Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի

90 ԱՄԵԱԿ Հ.Մ.Ը.Մ.Ի

ՄԻՇՏ ԱՖԵԼԻ ԲԱՐՁՐ

Վրժ-Արմէն ՄՈՆԹՐԷԱԼ

«Բարձրացի՛ր-բարձրացուր»...

Ահա կարգախօս մը, որ Հ.Մ.Ը.Մ.ինն է ու Հ.Մ.Ը.Մ.ն իսկ է:

Կարելի է զայն ընդունիլ տարբեր առումներով, եւ ի՛նչ առումով ալ ըլլայ՝ անդրադառնալ, որ ինչ իմաստուն խօսք է, որ ասենին իբր նշանաբան որդեգրուած է Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ:

«Բարձրացի՛ր-բարձրացուր»...

Առաջին հերթին սա մարդկային մեծ առաքինութեան մը արտայայտութիւնն է, որ կարելի է եւ շրջել ու կարգալ՝ «Բարձրացո՛ւր-բարձրացի՛ր», այսինքն քու բարձրանալովդ՝ ուրիշներն ալ բարձրացուցած կ'ըլլաս հետդ, կամ՝ ուրիշները բարձրացնելով, դուն ալ բարձրացած կ'ըլլաս անոնց հետ:

Որքա՛ն խոր իմաստ կայ ասոր մէջ, ու դատապարտում՝ ինքզինք բարձրացած տեսնելու համար ուրիշները նսեմացընելու մարդկային տկարութեան, որ այնքա՛ն տարածուած է դժբախտաբար: Սա մարդական ոգիին հիմքն է, բայց ոչ միայն մարդական: Է՛ նաեւ նախանձի, դաւադրութեան, անհաւատարմութեան եւ բազմաթիւ այլ մեղքերու դէմ բարոյական գորաւոր կեցուածք մը...

Երկրորդ առումը, անշուշտ, սերտօրէն կապուած առաջինին՝ սեփական որակի բարձրացման հասկացողութիւնն է, այսինքն ինքզինք նորոգելու, զարգացնելու, բարելաւելու ձգտումը, որ Հ.Մ.Ը.Մ.ը պիտի ներշնչէ իր իւրաքանչիւր անդամին:

Նախ, իր բնոյթովն իսկ, Հ.Մ.Ը.Մ.ը մարմնակրթանքի մարզէն ներս է, որ բարձրագոյնին հասնելու տենչը պիտի

սերմանէ, մղելով իր անդամները ինքզինք զերազանցելու՝ իրենց մարդական արդիւնքներուն մէջ:

Սակայն, կարելի չէ սահմանափակուիլ մարմնակրթանքով, քանի որ ատիկա ինքնանպատակ չէ: Ժողովրդական իմաստութիւնը կ'ըսէ. «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ»: Ատիկէ՝ եզրակացընել, որ լաւագոյնին ձգտումը նաեւ մտաւոր իմաստ ունի, շատ դժուար չէ: Արդարեւ, որակին բարձրացումը նաեւ այդ առումով հասկնալու է, եւ այդ պարագային ահա Հ.Մ.Ը.Մ.ը կը դառնայ ամբողջական մարդու կերտման կարեւոր հնոց մը:

Իսկ Հ.Մ.Ը.Մ.ը առաջին հերթին հայկական կազմակերպութիւն ըլլալով՝ իր առաքելութիւնը կ'ըլլայ հայ մարդու կերտումը:

Ասիկա ակնյայտ է, քանի որ մարդկային առաքինութիւններու սերմանումը հետապնդելու առաքելութիւնը ստանձնած է Հ.Մ.Ը.Մ.ը հայութեան ծիրէն ներս: Եւ այս պատճառով ալ մենք կը տեսնենք ինչպէս Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն անցած յաջորդական սերունդներ կը շարունակեն ծառայել իրենց համայնքին ու ժողովուրդին, հասնելով մինչեւ ղեկավարութեան պաշտօններ:

Ուրեմն, իր շարքերուն հայեցի դիմագիծին պահպանումն ու ամրապնդումը Հ.Մ.Ը.Մ.ի համար պիտի մնայ կարեւոր յանձնառութիւն՝ միշտ «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին ներքոյ:

Երրորդ առումը նոյն իմաստուն խօսքին, միշտ առնչուած առաջինին եւ երկրորդին, ունի ազգային, համազգային իմաստ:

Բարձրացի՛ր ու ազգդ հէտդ բարձրացուր:

Սա շատ կարեւոր պատասխանատուութիւն է, որ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական պիտի զգայ՝ մաս կազմելով այս միութեան, իսկ միութիւնը պիտի ներշնչէ իր անդամին իր անդամակցութեան առաջին պահէն:

Սա ազգային գիտակցութիւն է, ո՛չ ազգայնամոլական:

Սեփական ազգին վարկը բարձրացնելը ազգային հպարտութեան նախանձախնդրութիւն է, ոչ ազգային սնապարծութեան կամ յոխորտանքի, ինչպէս ատենին ըսած է Պարոյր Սեւակ:

Հ.Մ.Ը.Մ.ականը մարզիկ ըլլայ կամ ոչ, մրցումի դաշտին վրայ թէ կեանքի, պիտի ապրի ու գործէ այնպէս, որ իրմով բարձրացնէ իր պատկանած խումբին, համայնքին, ազգին ու երկրին անունը: Այդ երկիրը կրնայ Հայաստանը ըլլալ կամ ոչ, եւ նոյնիսկ այդ երկրորդ պարագային, ըսենք Լիբանանը, Շուէտը կամ Գանատան՝ հայու մը անունով բարձրանալը նաեւ պատիւ է հայութեան համար:

Իսկ եթէ վաղը ընդհանրանայ նաեւ երկբաղա-


քացիութեան որդեգրումը Սփիւռքի մեր հայրենակիցներուն կողմէ, ապա հայ մարզիկը, արուեստագէտը կամ գիտնականը, որեւէ՛ երկրի կողմէ ալ ներկայանայ՝ կը ներկայանայ նաեւ՝ Հայաստանի՛ կողմէ:

Ի հարկէ, Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է սատարէ, որ իր շարքերէն ալ ծայր տայ զանգուածային հայրենադարձութիւնը, ու հայու անունը հայութեան ու Հայաստանի՛ պարծանքը ըլլայ ամէնէն առաջ:

Այս գետնի վրայ ալ Հ.Մ.Ը.Մ.ի կարեւոր առաքելութիւնն է պատրաստել ապագայ հայ ախոյեանները, համահայկական խաղերէն մինչեւ միջազգային խաղեր, եւ մինչեւ ողիմպիական խաղեր, ուր հայոց Եռագոյնին բարձրացումը միշտ նշան պիտի ըլլայ մեր ներկայութեան, մեր կենդանութեան ու մեր կենսունակութեան:

Ահա ուրեմն, աւելի քան այժմէական իր նշանաբանով, Հ.Մ.Ը.Մ. կը թեւակոխէ իր առաջին հարիւրամեակին վերջին տասնամեակը:

Բարի երթ ու վե՛հ բարձրացում Հ.Մ.Ը.Մ.ին:





ԱՄՐԱԿՈՒՌ ԲԱՆԱԿԸ՝ Հ.Մ.Ը.Մ.

*Մեր ժազ Չուխատարեան
Լիբանանի պետական նախկին նախարար եւ երեսփոխան
ՊԷՅՐՈՒԹ*

Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակին առիթով կը փոխանցեմ իմ շերմ բարեմաղթութիւններս:

Հ.Մ.Ը.Մ.ը անցնող 90 տարիներուն դարձաւ հայ պատանիի ու երիտասարդի կազմաւորման մեծ դպրոց՝ իր փոխանցած հայեցի դաստարակութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով մենք առիթը ունեցանք ամէն օր քիչ մը աւելի հայօրէն հպարտանալու: Սփիւռքի մէջ երկար տարիներ երբ բացակայ էր հայկական բանակը, Հ.Մ.Ը.Մ. իր յաղթարշաւներով դարձաւ ամրակուռ բանակ եւ պաշտպանեց հայկական արժէքներն ու ժառանգութիւնը: Եռագոյն դրօշի հովանիին տակ քալեց հպարտ, համոզուած որ օր մը նոյն Եռագոյնը եւ նոյն քայլերգը պիտի վերագտնեն իրենց հարազատ տեղն ու նշանակութիւնը:

Լիբանանի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական տարազաւոր սկաւտները եւ մարզիկները իրենց նուիրումով ու մարզական պայքարով պանծալի էջեր նուիրեցին լիբանանահայ գաղութի պատմութեան, արժանանալով նաեւ լիբանանցի ժողովուրդին բարձր գնահատանքին: Հ.Մ.Ը.Մ. Լիբանանին նաեւ նուիրեց մեծ յաղթանակներ, խլեց արաբական եւ միջազգային ախոյեանութիւններ ու արժանացաւ բոլորին անկեղծ ծափահարութեան:

Այսօր Հ.Մ.Ը.Մ. իր երթը կը շարունակէ նոյն կորովով եւ կամքով: Թող յաւետապարի Հ.Մ.Ը.Մ.ը ու անպակաս ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ական շունչը մեր բոլորին մէջ:

Յաջողութիւն:

ՄԻՇՏ ԾԱՌԱՅԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏ

Յակոբ Հաւաթեան ՊԵՅՐՈՒԹ

ՀՄԼՄ-ի 90ամեակին նշումը բազմախորհուրդ պատգամներով ու պանծալի հաշուեկշիռով կը ներկայանայ մեր դիմաց: ՀՄԼՄ-ի 90ամեայ երթը հայ կեանքին մէջ ունեցաւ իր եզակի դրոշմը: Համահայկական այս կառոյցը իրաւամբ դարձաւ հայկականութիւնը բարձրացընող, հայութեան պահանջատիրական երթին դիմաց միշտ պատրաստ եւ լաւագոյնին ձգտող ամրակուռ հնոց: «Նահատակ ցեղի անմահներ»ու մեծ բանակը իր գաղափարական ու Ֆիզիքական դաստիարակութեամբ պատրաստեց սերունդներ, նուաճեց բարձունքներ ու արժանապատիւ կերպով դարձաւ հայութեան սիրելի ու ժողովրդական միութիւնը: ՀՄԼՄ-ի շարքերը հարստացան համակիրներով եւ արդէն այսօր միութենականին ու համակիրին միջեւ չկայ որեւէ տարբերութիւն, սակայն գոյութիւն ունին հաւասար պարտաւորութիւններ:

ՀՄԼՄ-ի սկաուտական շարքերը իրենց ստեղծած մըթնոլորտով համակեցին սերունդները: ՀՄԼՄ-ական մարզիկները իրենց ձեռքբերած նուաճումներով ու խլած ախոյեանութիւններով վառ պահեցին հայութեան մէջ յաղթանակի ոգին ու աննահանջ պայքարի վճռակամութիւնը: ՀՄԼՄ- ստանձնեց նաեւ այլասերման հոսանքին դէմ պայքարելու յստակ յանձնառութիւն: Օտար ափերու վրայ, մեծ թիւով երկիրներու մէջ հասակ առած սերունդներ, որոնք յարգելի պատճառներով գրկուած էին ու կը շարունակեն գրկուած մնալ հայ դպրոցէն ու կը թուլանան, ՀՄԼՄ-ի շարքերուն մէջ կ'արտասանեն իրենց առաջին հայերէն բառերը ու ՀՄԼՄ-ական հպարտութեամբ իրենց մէջ ամուր կը պահեն հայկական պատկանելիութեան քաղցր ու կենսական զգացումը:

Հայաստանի անկախութիւնը՝ 28 Մայիսը դարձաւ պարծանքը ՀՄԼՄ-ին: Եօթնասուն տարիներ ան Եռագոյնի առաջնորդութեամբ տողանցեց հայ կեանքին մէջ, դառնալով արթուն յուշարարը հայ ժողովուրդի անկախութեան ու ազատութեան անկորնչելի իրաւունքին ու ձգտումին: Հայաստանի վերանկախացումէն ետք, ՀՄԼՄ- Եռագոյնը բարձր բռնած վերադարձաւ հայրենիք ու այդ վերադարձով ամրագրեց իր երկար տարիներու առաքելութեան արգասիքը:

Այսօր փոխուած են ժամանակներն ու կացութիւնները:



Հայ կեանքին մէջ միութենական ծառայութիւնը եւ յանձնառութիւնը սկսած են նահանջել ամէնուրեք եւ այս երեւոյթը սոսկ հայկական չէ: Նուիրական գործը, անշահախնդիր աշխատանքը, հաւաքական շահի գերադասումը կարեւոր համեմատութեամբ իրենց տեղը զիջած են մակերեսայնութեան, շահադիտական մօտեցումի եւ շուկայական համոզումներու դրսեւորման: Այս բոլորին մէջ ՀՄԼՄ- կը շարունակէ թիավարել հոսանքն ի վեր, ու Միշտ Ծառայելու Պատրաստ այս միութիւնը կը փորձէ մեր մէջ վառ պահել միութենական ազնիւ առաքելութեան ու գործի լիիրաւ ըմբռնումը:

Բոլոր տուեալները ցոյց կու տան որ աշխարհատարած այս կազմակերպութիւնը դէպի 100ամեակ կ'ընթանայ հաստատ քայլերով ու արդէն իսկ բազմատարած ու բազմաճիւղ գործունէութիւնը ընդլայնելու վճռակամութեամբ:



ՊԱՀԱԿԸ

3. Չորեցի Պէյրուք

Հ.Մ.Ը.Մ.:

Գերագոյն պատիւ ու յարգանք, սիրոյ հազար խոնարհուած ձեռքերն՝ այս մեծ կազմակերպութեան:

Յաղթանակներու բիւր մաղթանք իր լուսաշող ապագային: Նախ ծաղկեպսակներու ամէնէն չնաշխարհիկը դնենք այս պատկառելի միութեան վսեմ հիմնադիրներու յիշատակի շիրմաքարին վրայ, նորոգենք հա՛յ երիտասարդ մեր վսեմ ուխտը եւ ապա խօսելու իրաւունք ունենանք իր գործունէութեան մասին:

Տասնամեակներէ ի վեր պանծալի Հ.Մ.Ը.Մ.ը հայկական արտերկրի մոլթ երկնքին տակ, աննպաստ պայմաններու մէջ իսկ՝ հօր եւ, եթէ կարելի է այսպէս ըսել՝ գերմիութեանական գործունէութեամբ խանդավառօրէն կը պահէ իր իսկապէս ազգօգուտ գոյութիւնը:

Տարիներէ ի վեր այս ազգաշէն միութիւնը կը կրթէ գաղութահայ անհամար պատանիներ եւ երիտասարդներ. կը կրթէ ոչ միայն ֆիզիքապէս, այլ նաեւ, այլ մանաւանդ հոգեպէս:

Ով կրնայ չհաստատել մեր խօսքը, եթէ ըսենք թէ այս առողջ կազմակերպութիւնը՝ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ըլլալով մէկտեղ, նաեւ եղաւ եւ է՝ ՀԱՅ ՀՈԳԵԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ մը, այսինքն՝ զօրացնող մկաններու եւ հոգիի:

Այսպէս եղաւ Հ.Մ.Ը.Մ.ը իր հիմնադրութեան օրէն իսկ, այսպէս է արդեւ եւ այսպէս պիտի մնայ, որովհետեւ իր մեծահոգի ղեկավարները ունեցան այն շինիչ գիտակցութիւնը, թէ Սփիւռքի մէջ, ուր այսպէս կոչուած սպիտակ ջարդի դամոկլեան սեւ սուրը կը սաւառնի մեր վերեւ, չի բաւեր միայն հայ պատանին ու երիտասարդը պահել մարմնական առողջութեան, զօրութեան պատուանդանին վրայ: Կայ ուրիշ անհրաժեշտութիւն մըն ալ.՝ յանուն ազգային անմահութեան՝ ցեղային առողջ ինքնագիտակցութիւն եւ ուժեղ անհատականութիւն ալ պէտք է բոցավառել հայ երիտասարդի էութեան մէջ:

Եւ Հ.Մ.Ը.Մ.ը մոլեռանդօրէն հաւատարիմ իր սրբազան նշանաբանին՝ վահագնօրէն ԲԱՐՁՐԱՑԱԻ ու իր հետ ԲԱՐՁՐԱՑՈՒՅ գաղութահայ սերունդները եւ ֆիզիքապէս եւ իմացականօրէն:

Մտածենք պահ մը: Ի՞նչ պիտի ըլլար, ի՞նչ դիմադիծ պիտի ունենար արտերկրի հայ երիտասարդութիւնը, եթէ գո-

յութիւն ունեցած չըլլար Հ.Մ.Ը.Մ.ը: Մեր հոգեկան հայրենիքը ինչէ՛ր պիտի կորսնցնէր իր ներկայ ճոխութենէն: Որքա՛ն պիտի ամայանար գաղութահայ ազգային կեանքը, եթէ «պատիւն հայուն միշտ վեր բռնող, մարմին ու կամք կերտող» այս մեծ միութիւնը չհիմնադրուէր:

Պատասխանը տխուր է, սե՛ւ: Եթէ Սփիւռքը չունենար իր բարձրացող եւ բարձրացնող Հ.Մ.Ը.Մ.ը, արտասահմանի հայ երիտասարդութիւնը պիտի ունենար, այսպէս ըսենք անկենդան դիմադիծ մը, պիտի չըլլար ոգի ու հաւատք: Տակաւին, հոգեկան հայրենիքն ալ պիտի չունենար ազգային եսականութեան տէր երիտասարդ քաղաքացիներ:

Այսօր, երախտագէտ ըլլանք Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ. հայ երիտասարդութիւնը դժբախտ չէ: Շնորհիւ մարմնի եւ հոգիի այս մեծ կրթարանին, հայ պատանին ու երիտասարդը ունի ֆիզիքական, հոգեկան եւ մտային առողջութիւն: Ունի ազգային տաք ինքնագիտակցութիւն, ինչպէս նաեւ ցեղային լման հայագե՛ղ արժանիքներ:

Նոյն այս մեծ կրթարանէն շրջանաւարտ հայ երիտասարդը, որ մեր հոգեկան հայրենիքին իրա՛ւ քաղաքացին ըլլալու պատիւն ունի, ամբողջ ուժ է, կամք, հաւատք, խոյանք է եւ սրբազան իտէալներու փառապանծ դրօշը վեր պահելէ չի դադրիր:

Հ.Մ.Ը.Մ.: Այս չորս գիրերը հատորներ լեցնող պատմութիւն են, գաղութահայ երիտասարդութեան, որ անցեալէն աւելի ներկայ է ան, ներկայէն աւելի ապագա՛յ:

Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդութիւնը այսօր արժանի ժառանգորդ է, վաղը իր կարգին, կասկածի չուքն իսկ չունինք, ժառանգ պիտի ձգէ իր գործերով, յաջորդ սերունդներուն, աւելի ճոխացուցած, աւելի մեծցուցած եւ գեղեցկացուցած ինչ որ ստացած է իր վեհ նախորդներէն:

Ողբացեալ Պատրիարքը՝ Զաւէն Արքեպիսկոպոս կը հաւատար այս բոլորին եւ կը պատգամէր այսպէս.

- Բարձրացէ՛ք, Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդներ, հասէ՛ք ազնիւ բարձունքներու, զօրացէ՛ք, լեցուցէ՛ք ձեր միտքն ու հոգին մեր պապերու սուրբ խորհուրդով, որովհետեւ դո՛ւք պիտի ըլլաք արժանի ջահակիրները մեր վաղուան լուսաշող հայրենիքին:

Մեծ Պատրիարքին հաւատքը կայ բոլոր իրաւ հայերու հոգիին մէջ. հաւատքը հանդէպ Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդութեան ապագայի երջանիկ ջահակրութեան, որովհետեւ կը տեսնենք արդէն բարձրացած երիտասարդութիւնը Սփիւռքի մեր իրականութեան մէջ, կեցած է պատնէշին վրայ՝ գրագէտ Գ. Թագլորեանի սահմանած պահակին հպարտ պաշտօնով:



2002 ՅՄԸՄ-ականներ Չայաստանի եւ ՀԱԸՄ դրօշները կը ծածանեն Արագածի կատարին:

ԲԱՐՁՐԱՆԱԼՈՒ ԵՒ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

**Ջաւէն Թորիկեան
ՊՈՍԹԸՆ**

«Հսկայ նուիրման
Տորմի՛ղ հրաթել,
Կամաւո՛ր բանակ»

ԳԵՈՐԳ ԿԱՌՎԱՐԵՆՑ



Ահա ինչնսուն տարիէ ՀՄԸՄ-ը կը շարունակէ իր երթը, մերթ լայնատարած, ողորկ մայրուղիներէ, մերթ նեղլիկ ու բարակ արահետներէ, սակայն միշտ ինքնավստահ կամքով եւ անխորտակ բերկրանքով:

Դարձեալ պատնէշի վրայ է ՀՄԸՄ-ը:

Յառաջիկայ ամեակներուն ալ, կառչած իր «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը պիտի շարունակէ սերունդներ պատրաստել եւ դաստիարակել: Այդ ալ շնորհիւ ժողովուրդին՝ համակիրներուն տածած գուրգուրանքին եւ հետեւողական ու աննահանջ քաջալերանքին:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ ՀՄԸՄ-ը իր հիմնադրութենէն ի վեր յամառօրէն կը պայքարի կերտելու համար տիպար ու մաքրամաքուր մարդը, հայը, մարզիկն ու սկաուտը:

Որքան օրերը կը թաւալին, այդքան կը դժուարանայ այս պարտականութիւնը:

Սրընթաց թափով յեղաշրջուող նոր ժամանակներու ընկալչութիւնը պիտի պահանջէ աւելի զոհողութիւն եւ նուիրում: Բնականաբար անփոփոխ պիտի մնայ յանձնառութեան ուժը:

Մեղուի ժրջանութեամբ ՀՄԸՄ-ականը գաղութներէ ներս պիտի լծուի աշխատանքի եւ պիտի ստեղծէ հաւաքական ուժ:

Պատի՛ւ այդ նշանաբանին...

Յարգա՛նք այդ պանծալի դրօշին...

ՀՄԸՄ-ը եղաւ ականատեսը հայութեան ազգապահպանման...

ՀՄԸՄ-ը եղաւ տնակը պանդուխտ հայորդիին...

Անուան խորհուրդին հարազատ, ՀՄԸՄ-ը եղաւ արժանագոյնին արձագանգը:

Անկասկած, որ դժուար է երեւակայել սփիւռքահայութիւնը առանց ՀՄԸՄ-ի:

Աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ ապրող հայորդիներու միջեւ մարմնակրթական այս միութիւնը իւրապատուկ կապ մըն է:

Ան ոսկի շղթան է համագաղութային նպատակներու արմատացման եւ ամրացման:

Ահա այս երեւոյթին մէջ պէտք է փնտուել բարձրանալու եւ բարձրացնելու հրամայականը:

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԲԻԲԶԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆՆԵՐ

ՀՄԸՄ-ի 90ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԿԸ ՇՆՈՐՀԱԲՈՐԵՆ

ՀՄԸՄ-ի ՀԱՄԱՅՆ ԸՆՏԱՆԻՔԸ

ՅԱՐԱՏԵԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՄԻՆ ՄԱՂԹԵԼՈՎ ՄԻՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴԱԿԵՐՏՄԱՆ ԵՒ ՀԱՅԱԿԵՐՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԴՐՕՇԻՆ ՏԱԿ

Տոթթ. Սուրեն Պայրամեան ԳԱՅԻՐԷ

Ամբողջ 90ամեակ մը Հ.Մ.Ը.Մ.Ի դրօշին տակ տողանցեցին տասնեակ հազարաւոր զինուորեալները այն սերունդին, որուն հաւատաւոր երախտաւորները Հայ զանգուածներուն ապրելու եւ գոյատեւելու հիմերը զօրացուցին եւ նորահաս սերունդները հոգեմտաւոր ու ֆիզիքական առողջ կառուցելով օժտելու հաւատքը մշակեցին:

Հաւատք մը, որ Ապրիլեան Եղեռնի յաջորդող տարիներուն, իր ամրակուռ տեսիլքով աշխարհասփիւռ Հայ դաշուկներու կազմակերպումը ամրագրեց եւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ, Մեսրոպատառ կրթական յարկերու եւ մամուլի հաստատութիւններու կողքին, երիտասարդ Հայ սերունդները ուժեղ ֆիզիքականով դարբնելու հիմնարկներ բարձրացուց:

Հայ մարմնակրթական շարժման ռահվիրաներու անձնուրաց երազանքին կնիքը Պոլսոյ մէջ ստացած, իր ժամանակի նորահաստատ Հայ պետականութեան հրաւերին ընդառաջ՝ հայրենիքի մէջ իր նախաքայլերը առած եւ հուսկ՝ քաղաքական պայմաններու պարտադրանքով Սփիւռքի

տարածքին հողմացրիւ, սակայն ատոք սերմեր ցանած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, իր հիմնադիրներուն հաւատքով զրահուած՝ գործեց, արմատաւորուեցաւ, ուժեղացաւ, Միջին Արեւելեան երկիրներէն Եւրոպա եւ մինչեւ գոյգ Ամերիկաներ, ուր հայու բեկորներուն վստահութեան արժանանալով, անսայթաք կերպով գործեց, իր առաքելութիւնը առաւելագոյնս արգասաւորելով:

Եւ ահա, իր հիմնադրութեան 90ամեակի այս օրերուն, աշխարհացրիւ հարիւր մասնաճիւղերով եւ քսանհինգ հազար անդամներով ան կու գայ մեզի ներկայանալ փառապարտապարտ ճակատին, հաւատարիմ՝ իր ազգանուէր «Բարձրացիր-բարձրացուր» կարգախօսին:

Այո, Հ.Մ.Ը.Մ.Ի «բարձրացաւ» Եղեռնի եւ սպանդի մոխիրներէն, իբրեւ փիւնիկ յառնելով, մահը արհամարհելով, անընկճելի կամք դրսեւորելով եւ ինքնավստահ քայլերով հայու անունն ու պատիւը իր հետ «բարձրացուց» ներագալին եւ միջազգային ճակատներու վրայ:

Հ.Մ.Ը.Մ.Ի անզուսպ յաղթարշաւի 90ամեակին առիթով, մեր մաղթանքն է, որ ան շարունակէ «բարձրանալ», եւ իր դրօշին կողքին շարունակէ «բարձրացնել» հայ ժողովուրդի երազանքներուն անշէջ ջահը:

ՅԱՌԱՉ ԴԷՊԻ ՅԱՂԹԱՆԱԿ

Ժառանգորդներ՝ Դայկեան Յեղի,

Սրտագին ողջոյն 90ամեայ հուժկու, կենսունակ եւ հայ կեանքին մեջ մշտապէս երիտասարդ Դ.Ս.Ը.Ս.ին:

Ժառանգորդներն էք այս կազմակերպութեան, որ Յեղասպանութեան արեան ու մահուան մեջէն փրկելի պէս յառնեցաւ եւ 1918ին նետեց առաջին իր քայլերը, առաջին իսկ վայրկեանէն յաղթական, աչքերը յառած լուսաւոր արեւածագին եւ կրակիտեայ Արարատին:

Դ.Ս.Ը.Ս.ը ապացուցեց որ ապրելու կոչուած ժողովուրդ ենք:

Դ.Ս.Ը.Ս.ը իր երիտասարդ շարքերով բարձրադաղակ կը գոչէ թուրքին երեսին, թէ դո՛ւն պարտուած ես:

Դ.Ս.Ը.Ս.ը կը շեփորէ աշխարհին, յայտնելով իր վճռակամութիւնը արդար դատի հետապնդումին:

Դ.Ս.Ը.Ս.ը 90ամեակի առիթով առաւել կը կռանէ իր հիմերը, ամրապնդուած մեր պատմութեան, նահատակութեան, հերոսներու եւ պայքարի ապանաժեայ խարիսխին վրայ:

Սիրելի՛ Դ.Ս.Ը.Ս.ականներ,

Դ.Ս.Ը.Ս.ի հիմնադրութեան 90ամեակին առիթով թող ողիմպիական խաղերը հանդիսանան աղաղակը մեր պահանջատիրութեան: Ազգութեան ձեր նուիրումին մեջ մի՛ ընկրկիք ու տկարանաք: Յաղթանակի հաւատքին մեջ մի՛ երկմտիք ու տարակուսիք: Պայքարին մեջ երբեք ու երբեք մի՛ նահանջեք:

Դայաստանը մեզ կը կանչէ: Դերոսներուդ արիւնը թող եռա՛յ երակներուդ մեջ:

Յառա՛ջ: Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ: Յառա՛ջ դէպի յաղթանակ: Մնամք սիրոյ ողջունիւ եւ օրինութեամբ:

Աղօթարար՝

ՕՇԱԿԱՆ ԱՐՔ. ԶՈԼՈՅԵԱՆ

Առաջնորդ Ա. Ս. Նահանգներու Արեւելեան Թեմի

90 ԱՄԵԱԿ Զ.Ս.Ը.Ս.Ի



Հ.Մ.Ը.Մ. 90 ՏԱՐԵԿԱՆ

Կարպիս Գոյուժեան ԱԹԵՆՔ

Սփիւռքահայ կեանքէն ներս եղած են միութիւններ, եւ կազմակերպութիւններ, որոնք գաղափարական կայուն հիմերու եւ մանաւա՛նդ ազգամուտէր նպատակներու հետամուտ չըլլալով, յոգնած, ծերացած եւ կազմալուծուած են:

Եղած են նաեւ ուրիշներ, որոնք տարուէ տարի աւելի աշխուժացած եւ յաւելեալ գիտակցութեամբ տարած են ազգային պարտականութիւնները ու բազմապատկելով իրենց ճիգերը՝ ջանացած են բան մը աւելի տալ իրենց ժողովուրդին:

Յաւէտ երիտասարդ կազմակերպութիւններու շարքին Հ.Մ.Ը.Մ. ունի իր կարեւոր տեղը:

Սփիւռքի տարածքին, բազմաթիւ եւ բազմազան միութեանց շարքին, մարզական մեծագոյն կազմակերպութիւնն է Հ.Մ.Ը.Մ., որ տարիներու յամառ պայքարով գոյատեւման անկորնչելի իրաւունք ձեռք բերած է հայ ժողովուրդի ծոցին մէջ:

Ազգերու կեանքէն ներս յաճախ ականատես դարձած ենք կազմութեանը մարզական միութիւններու, որոնց մեծ մասը միամեայ կեանք ունեցող բոյսերու կամ անպտուղ ծառերու ճակատագիրը ունեցած է: Ապրած են միայն այն միութիւնները, որոնք իրենց աւելջ ստացած են զիրենք ծնող ժողովուրդէն եւ իրենց բովանդակ ուժականութիւնը ի սպաս դրած են անոր բարօրութեան եւ կենսունակութեան:

Յանուն ընդհանրական գաղափարի, Հ.Մ.Ը.Մ. իր գոյու-

թեան նախապայմանները արդարացնող բեղուն գործունէութիւն ունեցած է: Հազուագիւտ են այն մարզական միութիւնները, որոնք 90 տարիներ շարունակ ընթացած ըլլան իրենց հիմնադրման առաջադրանքներով: Ընդհանրապէս մանաւանդ մեր օրերուն, երբ մարզական միութիւնները մասամբ վերածուած են արհեստավարժ ակումբներու, իսկ մարզիկները՝ վարձատրուող պաշտօնեաներու:

Մեզի նման փոքր ժողովուրդի մը համար հրաշքի համագոր բան եղաւ 90 տարի շարունակ, առանց շեղելու հիմնադիրներու հիմնական նպատակէն, առաջադրանքներու պատուանդանին վրայ պահել մարզական միութիւն մը, ինչպէս է Հ.Մ.Ը.Մ.ը:

Գոյութեան այս գաղտնիքը, ոչ մէկ կասկած, պահուած է անոր հիմնադիրներուն գաղափարական համոզումներուն մէջ:

Կ'ըսէին, թէ Հ.Մ.Ը.Մ.ը առաւելաբար մարմնակրթական միութիւն մըն է: Այս բոլորին մէջ, սակայն, մարմինը պարզ միջոց մըն է, որպէսզի ստեղծուի կամքերու միացում ու համադրում: Համադրում, որ իր կարգին միջոց մըն է, որպէսզի հայ ժողովուրդը քայլ իր ճակատագրին արահետներէն: Անցնող 90 տարիներուն, բազմաթիւ այլ միութիւններ ծնան, ապրիլ փորձեցին, բայց կորուսեցան: Հ.Մ.Ը.Մ.ը սակայն յարատեւեց իր ժողովուրդին հետ:

Մարզանքը, մարմնամարզը եւ սկստուտիզմը ազգի մը առողջ զաւակներ ունենալու անհրաժեշտ նախապայմաններն են:

Ամէն գոհողութիւն յանձն առնելով Հ.Մ.Ը.Մ. կը ջանայ հասնիլ իր նպատակին: Ազգապահպանման պայքարին մէջ



Հ.Մ.Ը.Մ. կը հանդիսանայ մեր կարեւորագոյն ազգակներէն մէկը: Կը կերտէ առողջ մարմինով ու տոկուն նկարագիրով հայը: Բոլոր գաղութներէ ներս Հ.Մ.Ը.Մ. ամրակուռ ու հայ անունին պատիւ բերող կազմակերպութիւն մըն է:

Այսօր պետութիւններ մարմնակրթանքը ազգայնացուցած են եւ նիւթական լայն միջոցներ յատկացուցած են անոր:

Հ.Մ.Ը.Մ. ազգապահպանման համար անհրաժեշտ կազմակերպութիւն մըն է: Տարիներ շարունակ ան իր բոլոր ճիւղաւորումներով հայ իրականութեան մէջ գործած է ու կը գործէ արդիւնաւէտ կերպով՝ մանաւանդ ցեղի Փիզիքական առողջութեան ի խնդիր:

Հ.Մ.Ը.Մ. կարողացած է յաճախ խիւլ փառքի ու յաղթանակի դափնեպսակներ, արժանաբար հայ ցեղը փառաւորելով օտարներուն առջեւ:

Նման կազմակերպութիւն մը բնականաբար արժանի է համազգային սիրոյ գուրգուրանքին:

Իր «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը կը պահանջէ բարձրանալ միշտ՝ աննահանջ, յարատեւ ճիգերով ու անշահահինդիր գոհողութեամբ նուաճել բարձունքներ, առանց ընկրկումի, անխախտ կամքով ու անսասան հաւատքով, մանաւանդ հիւրընկալ ժողովուրդներուն ճանչցնել հայութիւնը, մարզադաշտերուն վրայ շահած փայլուն յաղթա-



նակներով, բարձրանալ ու բարձրացնել հայութեան պատիւը:

Այսօր, երբ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 90ամեակը կը յիշատակենք, ակամայ մեր մտածումները կ'երթան դէպի անոր մեծ հիմնադիրները, որոնք մռայլ ու մթին երկնակամարի մը տակ, ճնշուած ժողովուրդի մը ծոցին մէջ, քաջութիւնը ունեցան ծրագրելու եւ իբրեւ

ազգային գործ կեանքի կոչելու հայկական այս կազմակերպութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի նմանը չկայ որեւէ ժողովուրդի պատմութեան մէջ:

Գաղափարական անհրաժեշտ դրոշմը դրուեցաւ անոր ճակտին՝ «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով: Իսկ միութեան ուղղութիւնը յստակօրէն գրուեցաւ նախատեսուած երդումին մէջ, որ իւրաքանչիւր անդամի համար յատուկ կարեւորութիւն ունի:

«- Ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ծառայել ազգիս ու հայրենիքիս:

«- Միշտ օգնել ուրիշին ու գործել իբրեւ պարտականութեան գիտակից, արի ու վեհանձն մարդ»:

Պատիւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն եւ ողջոյն բոլոր անոնց, որոնք բեռ մը շարկած ու դեր մը ստանձնած են Հ.Մ.Ը.Մ.ի գեղեցիկ առաջադրանքներու իրականացման ի խնդիր:



ԴԷՊԻ 100ԱՄԵԱԿ

Եղբ. Մանուկ Քեօշկերեան ՀԱԼԷՊ

Համաշխարհային առաջին պատերազմի տարիները եւ յատկապէս 1915 թուականը ճակատագրական եղան հայ ժողովուրդի պատմութեան համար: Եղբերական իրադարձութիւնները պատճառ դարձան Սփիւռքի ստեղծման: Նոր իրավիճակը պարտադրեց նոր դրսեւորումներ եւ փոփոխութիւններ հայ իրականութեան մէջ. այդ օրերու հրամայականն էր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութիւնը:

Քսաներորդ դարու հայոց պատմութեան մէջ կան թուականներ, որոնք ժամանակին հետ աւելի կ'արմատաւորուին ու կը դառնան մեկնակէտը կենարար գործի մը: Անոնցմէ է 1918 թուականը, երբ Հայաստանի Հանրապետութեան հետ ծնունդ կ'առնէր Հ.Մ.Ը.Մ-ը:

Հաւատարիմ ու խնկարկու «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին ու անոր խորհուրդին՝ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութենէն սկսեալ լիովին ստանձնած է իրեն վստահ-լաճ պարտականութիւնը, միշտ ձգած է կատարեալին՝ մարմնին մէջ ազնուացնելով հոգին եւ մտքին մէջ զարգացընելով ազգային խոհերը, կերտելու համար ազնիւ նկարագրի տէր հայ երիտասարդը, այսպէսով ստեղծելով իրերայաջորդ Հ.Մ.Ը.Մ-ականներու ամբողջ բանակ մը:

Գաղթաշխարհի մէջ Հ.Մ.Ը.Մ-ը կերտեց իր պատմութիւնը, ստացաւ համա-Հ.Մ.Ը.Մ-ական դիմագիծ, իր գոր-

ծունէութիւնը ընդլայնելով իր ծննդավայր Պոլիսէն մինչեւ Արեւելք, Եւրոպա, Ամերիկեան ցամաքամասեր, Աւստրալիա, անկախ հայրենիք՝ Հայաստան ու Զաւախք:

Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտական շարժումով, մարզական յաղթանակներով, շքերթներով, փառատօներով ու համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումներով հայ ժողովուրդի սերունդներուն ներարկեց ազգային պատկանելիութեան գիտակցութիւն, Հայրենիքի եւ Եկեղեցւոյ ծառայութեան սէր ու ոգի, կոփեց ու կռանեց մարդկօրէն ու հայօրէն բարձրանալու եւ բարձրացնելու կամք:

90 տարի Հ.Մ.Ը.Մ-ը իր Ծրագիր-Կանոնագրով, իր հայադրոշմ գիտելիքներով նպատակադրեց ու պատրաստեց նկարագրով ուժեղ մարդը, ապրումներով հարազատ եւ աւանդապաշտ հայը, օրինապահ եւ ազնիւ քաղաքացին:

90 տարի Հ.Մ.Ը.Մ-ը սկառուտին ու մարզիկին տուաւ հայու այն անխախտ ոգին, թէ ինք զազափարականի տէր, իր ժողովուրդի ծառայութեան լծուած եւ անոր արդար դատին նուիրեալ վաղուան զինուորն է:

Թող մեր միութեան հիմնադիրներուն հոգիները խայտան, տեսնելով թէ ի՞նչպէս իրենց հիմնած միութիւնը 100 մասնաճիւղերով եւ աւելի քան 25 հազար անդամներով դարձած է կաղնի:

Այսօր Հ.Մ.Ը.Մ-ը հասած է փառաւոր հանգրուանի մը եւ զօրացած իր 90ամեայ փորձառութեամբ, հաստատ քայլերով կը յառաջանայ դէպի լուսաշող ապագայ. դէպի 100ամեակ:

90ԱՄԵԱՅ ԴՊՐՈՑԸ՝ Հ.Մ.Ը.Մ.

Ալին ՊԵՏԵԱՆ ԱՍՄԱՆ

ուսանալի յիշատակներ եւ հարազատներ աշխարհի շուրջ, ինչ որ որեւէ այլ միութիւն չէր կրնար տալ:

քայլերով կարենանք շարունակել Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը:

Անձնապէս, Հ.Մ.Ը.Մ-էն ներս ամէնէն յիշատակելի պահս... կակող թաթիկէն մինչեւ մասնաճիւղի խմբապետուհի - կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ-ի խմբապետական Գ. Համազումարը, Սիտնի, 1996ին: Յուսամ այն



Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեակը պահ մըն է նոր սերունդին պարզելու, թէ որքան հարուստ միութեան մը կը պատկանին:

Հ.Մ.Ը.Մ-ը եղաւ դեկավարներ պատրաստող դպրոց մը, Սիբուրի մէջ դարբնելով բազմաթիւ արժանիքներու տէր սերունդներ, որոնք ունին ազգային գիտակցութիւն, ոգի եւ խոչալի համար զոհողութեան պատրաստակամութիւն:

Հ.Մ.Ը.Մ-ը իր շարքերուն մէջ մեծցած քոյր-եղբայրներուն տուաւ անմո-

Սակայն, ամեակներ տօնելու կողքին, բոլորս չմոռնանք արժեւորել անցեալի գործունէութիւնը, ընդունինք քննադատութիւն եւ սորվինք փորձառութիւններէն, որպէսզի հաստատ

դեկավարները, որոնք մասնակցեցան համազումարին, նոյն շունչով նոր դեկավարներ պատրաստելու աշխատանքը կը շարունակեն, որպէսզի ունենանք Սիտնիի «Սիրունիկ»ներու նոր փաղանգ մը... մինչեւ Հ.Մ.Ը.Մ-ի 100ամեակ:

ԻՆՉՈՒՒ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՆՔ

Պետիկ Գասպարեան ՊՈՒՐԾ ԶԱՍՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ-ական պատասխանատուներ չենք հանգիստ կեանքի, լաւ թոշակի, մեր ծնողներուն գոհացում տալու, իշխանութեան կամ հանգամանքի համար:

Հ.Մ.Ը.Մ-ական պատասխանատուներ ենք, որովհետեւ աշխարհը կ'ուզենք մեր զաւակներուն համար: Կ'ուզենք աշխարհ մը, ուր անոնք կարենան բաժնեկցիլ եւ օգնել զայն կերտելու: սիրոյ եւ ուրախութեան աշխարհ մը:

Կ'ուզենք, որ անոնք նային աստղերուն, արեւածագին, արեւամարին, մարդոց աշխատանքներուն ու աշխարհին, եւ իրենց ինքնութեան մէջ զգան անոնց գեղեցկութիւնը:

Կ'ուզենք օգնել անոնց, որպէսզի անոնք սորվին իրենց սկսած գործերը աւարտել եւ աշխատանքը լաւապէս կատարել: Կ'ուզենք զանոնք առաջնորդել, որպէսզի ինքնաճանաչողութեամբ աւելի լաւ գիտնան իրենց արժէքը:

Կ'ուզենք կերտել չափահասներ, որոնք ունենան տուրք նկարագիր եւ զգալուն ըլլան ուրիշներու կարիքներուն նկատմամբ:

Կ'ուզենք, որ անոնք իրենց կարողութեան սահմաններուն մէջ ըլլան լաւագոյնը:

Մենք կու տանք մեր անձէն եւ ժամանակէն: Մեր տուածէն աւելի վարձատրութիւն կը քաղենք: մեր զաւակներուն, ձեր զաւակներուն եւ ապագայի զաւակներուն համար կը ցանկանք աւելի լաւ աշխարհ մը:

Հարց կու տանք, թէ ի՞նչ վճարում կը ստանանք մենք: Մեր թոշակը կը բաղկանայ ժպիտներէ եւ խնդուքներէ, մեծցող երեխայի մը ինքնավստահութեան ականատես ըլլալէ եւ ուրիշներու ակնկալութենէն աւելին իրագործած երեխայի մը յաղթական արտայայտութենէն:

Խոր երախտագիտութիւն ունինք հանդէպ անոնց, որոնք կրնան մեզի սորվեցնել կամ ցոյց տալ այս գործը աւելի լաւ ձեւով կատարելու միջոցները: Շնորհակալութիւն անոնց, որոնք իրենց ժամանակը կը տրամադրեն օգնելու համար մեզի, որպէսզի միութեան 90ամեակին աւելի լաւ պատասխանատուներ ըլլանք:



Լիրանանցեան հեծելարշաւի աստղերէն եղբ. Վարդգէս Ծատուրեան:

Սաթենիկ Գրիգորեան ԵՐԵՒԱՆ

Լիրանանի մէջ, ուր տրոփում էր հայ ժողովրդի երկրորդ սիրտը՝ 1940 թ-ից մինչեւ 1965 թ-ը, հայու-թիւնն ապրում էր զարթօնքի բացառիկ շրջան, հայ մարդն իր ընդունակութեամբ առաջնահերթ մարդ էր այդ ժամանակահատուածում: 1915 թ-ին Յեղասպանութիւն տեսած որբ ու բոպիկ հայը դարձել էր վարպետ, արհեստաւոր, կարծես թէ բոլոր արհեստաւորների բանալին հայի ձեռքի մէջն էր: Ոտաբոպիկ հայը դարձել էր շինարար, որը տուն կառուցեց, դպրոց, ճեմարան ու եկեղեցիներ...

Հետեւաբար, լիրանանեան քաղաքացիական պատերազմի օրերին, 1980 թ-ին, «Մարգրիկ» ամսագրի ծնունդը պատահական եւ ինքնանպատակ չէր: Այս լրագիրն ունէր ասելիք, ունէր խօսք, որ անհետեանք լինել չէր կարող: «Մարգրիկ»ի անուան հետ տարիների վաստակ է կապուած: Այս ամսագրի լոյս ընծայումը նման էր հրաշամանուկի ծնունդի:

«Մարգրիկ»ն ունէր նախանշուած նուիրական առաքելութիւն, որի իրականացումը կենսականօրէն կարեւոր էր, իսկ այդ ամէնն իրականութիւն դարձաւ եղբայրներ Վարդգէս Տէր Կարապետեանի եւ Երուանդ Տէմիրճեանի նախաձեռնութեամբ ու յամառ ջանքերի շնորհիւ: Տարիների աշխատանք, համապատասխան հող ու միջավայր է պատրաստուել «Մարգրիկ»ին ծնունդ տարու համար:

«Մարգրիկ» պաշտօնաթերթի առաջին համարը լոյս է տեսել 1980 թ-ի Փետրուարի 22ին, գլխաւոր խմբագիրն էր՝ Վարդգէս Տէր Կարապետեանը մինչեւ 1983 թ-ը, այնուհետեւ 1983ից մինչեւ 1991 թ-ը՝ Երուանդ Տէմիրճեանը, 1991ից 1994 թթ-ը՝ Վարուժան Մուրատեանը, 1994ից 1995 թթ-ը՝ Զաւէն Թորիկեանը եւ 1995 թ-ից մինչ այսօր շարունակում է ամսագրի բարի անունը բարձր ու անսասան պահել Վիգէն Աւագեանը:

Գաղթօճախներում հրատարակչական լաւագոյն աւանդոյթները պահ-

90ԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՀՏՕՆԱԹԵՐԹԸ

«Մ Ա Ր Զ Ի Կ»

պանուում ու գոյատևում են նուիրեալ անհատականութիւնների ջանքերով եւ ինչ ուղղուածութիւն էլ այն ունենայ՝ քաղաքական, մշակութային թէ մարզական, միայն մէկ նպատակ է հետապնդում՝ **ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒՄ**: Դրա լաւագոյն օրինակը «Մարզիկ»ի արդէն 28ամեայ գործունէութիւնն է, որը հրապարակ իջաւ երկար ապրելու, յարատեւելու բաւարար գրաւականով: Այն Սփիւռքում գոյատևող միակ մարզական թերթն է: Սա թէ՛ մտահոգութիւն եւ թէ՛ կրկնակի պատիւ է «Մարզիկ»ի հրատարակիչների համար:

Սկզբնական շրջանում «Մարզիկ»ի աշխատակիցները մեծ մասամբ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի անդամներն ու բարեկամներն էին, ովքեր հետեւում էին մի խոր համոզմունքի. «Թէ ՈՎ ԸՆԴՈՒՆԱԿ ԶԷ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ, ՄԵՌԵԱՆ ԱՍՐՐ Է ՀԱՆՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՐԾԻ ՄԷՋ: ՄԱՐԴԻԿ ԿԸ ԴԱՌՆԱՆ ՆԻԻԹ ԵՒ ՀԱՇԻԻ, ԵՐԲ ՈԳԻՆ ԿԸ ԲԱՅԱԿԱՅԻ ԻՐԵՆՑ ՄԷՋ»:

Տպարանը գտնուում էր Արեւմտեան Պէյրութում, իսկ Արեւելեան Պէյրութում՝ խմբագրական կազմը, որն էլ թերթը հրատարակեց խմբագրականներով, յօդուածներով եւ զանազան թղթակցութիւններով:

Աշխատակազմին նոյնիսկ չյուսահատեցրեցին Լիբանանում այդ տարիներին տիրող ներքաղաքական կռիւները, երբ շուրջը միայն մահ ու սարսափ էր տիրում: «Մարզիկ»ը շարունակում էր լոյս տեսնել, երբ նոյնիսկ շրջաններից յօդուածներ չէին ստանցւում, երբ երկրի ներքին կացութեան բերումով թղթատարը չէր գործում եւ առաքումը ժամանակին չէր կատարւում:

«Մարզիկ»ի յօդուածները միաժամանակ ե՛ւ իմացաբանական, ե՛ւ տեղեկատուական բնոյթի են, եւ ոչ միայն, նաեւ ունեն ղաստիարակչական,

սկառուական եւ մանկապատանեկան բաժիններ:

Թերթը միշտ բարձր պահանջատուութեամբ է մօտենում գեղարուեստական որեւէ գործի, յօդուածի: Մերժում է որեւէ գիշում կատարել քաղաքական կացութեան, քննադատում, ուղղում նկատած ամենափոքր թերութիւնն անգամ: Թերթն իր էջերում պարբերաբար ծաւալուն յօդուածներ է գետեղում հայ ժողովրդի անցեալի եւ ներկայի մասին: Ոճական լուծումները, կիրառուած արտայայտչամիջոցները, որքան պատկերաւոր ու տպաւորիչ են, նոյնքան էլ օժտուած են առանձնակի մատեմատիկական ճշգրտութեամբ:

«Մարզիկ»ն այսօր էլ շարունակում է կանոնաւոր լոյս տեսնել՝ տարուան մէջ 12 համարով եւ 40 էջերի հարուստ բովանդակութեամբ:

Թերթն իր խմբագրականներով եղաւ «Հայրենիքէն դուրս, հայրենիքին

համար» ազգային գաղափարական նշանաբանի մշտաբարբառ պատգամախօսը: Սրան գուգահեռ առաջնորդւում էր նաեւ մէկ այլ նշանաբանով. «Բարձրացի՛ր-բարձրացրո՛ւ», այն նուիրական խոր սէրն է՝ աղամանդեայ բիւրեղը, որ որքան կը բաժանուի, մէկ էլ կը գումարի այնքան:

«Բարձրացի՛ր-բարձրացրո՛ւ» կարգախօսով է առաջնորդւում նաեւ մեր օրերի հայրենիքում լոյս տեսնող մէկ այլ մարզական շաբաթաթերթ՝ «Մարզաշխարհ»ը:

«Մարզիկ»ի բեղմնաւոր աշխատանքի շնորհիւ 2005 թ-ին Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը մեծ շուքով տօնեց թերթի 25ամեակը, եւ հրատարակեց թուով 279րդ յոբելեանական համարը: Այդ առիթով պատրաստուեց նաեւ «Մարզիկ»ի 25ամեայ երթը ներկայացնող տեսասկաւառակը (Տի.Վի.Տի.ն), որը ծանօթացնում է թերթի ստեղծման օրերից մինչեւ 25 երկար ու ձիգ տարիների կատարած աշխատանքը:

Գաղտնիք չէ, որ թերթն իր գոյութեան պահպանման համար կարիք ունի ընթերցողի, որով եւ պայմանաւորւած է թերթի պիտանեկութիւնն ու գոյութեան աստիճանը:

Մամուլը հասարակական մի իւրօրինակ ինստիտուտ է, որն ի գօրու է արտացոլել հասարակութեան բոլոր կողմերը՝ աստիճանը, զարգացումը, հասարակական բազմաբովանդակ խնդիրներն ու հասարակական շահը:

Ամենայն իրաւամբ կարող ենք ասել, որ «Մարզիկ»ն իր ճոխ բովանդակութեամբ ու գունեղ հրատարակութեամբ կարող է մրցել մարզական որեւէ հրատարակութեան հետ:

Ահա այս սպասումներով, այսօր 90ամեայ յոբելեար միութեան պաշտօնաթերթին մաղթում ենք նորանոր յաջողութիւններ եւ յարատեւ վերելք:



ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՄՏԱԲՈՐԱԿԱՆՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍԻՆ

Մեծ է դերը Հ.Մ.Ը.Մ.ին: Այդ դերը լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է ազգային բարձր գիտակցութիւն, այսինքն մեր ուժերուն, մեր արժեքին, մեր ընթացքին եւ նպատակին պայծառ ըմբռնում: Յարգանք, պատկառանք եւ տեղը այս աշխարհի մէջ՝ ուժով կը ստացուի, կը պարտադրուի եւ կը ներշնչուի: Իսկ ուժեղ եւ առոյգը, առողջն ու կորովին:

Կը հետեւի թէ Հ.Մ.Ը.Մ. ազգային հիմնարկութիւն է, եւ այս կցորդ գաղափարներէն ազգայինն է հիմնականը, հանրութեան համակրութիւնը ատով է պայմանաւոր եւ ատոր մէջ է հանրային արժեքը:

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ը իր հիմնադրութեան օրէն ի վեր մեր մարզական եւ սկաուտական շարժումները ազգայնացուց, եւ այդ պատճառով հայ ազգը ինքզինքը հարազատ կը զգայ այս միութեան:

Տղաք, Հ.Մ.Ը.Մ.ը երբ հազարներով կը տողանցէ, հայ ժողովուրդը ձեր մէջ կը տեսնէ հայկական բանակը, անկախութիւնը եւ զայն խորհրդանշող Եռագոյնը: Անոնք ձեր մարզական մրցանիշներով եւ յաղթանակներով շատ ալ չեն հետաքրքրուիր, այլ անոնք ձեզ կը տեսնեն ուխտաւորները այն բանակին, որ զինուորն է հայոց պայքարին, որուն նպատակն է հայ մնալ եւ հետապնդել Ազատ, Անկախ Հայաստան ստեղծելու իտեալը:

ՄՈՒՇԵՂ ԻԾԵԱՆ

Համեմատաբար կարճ ժամանակամիջոցի մը մէջ անօրինակ յաջողութիւն ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ը: Ոչ միայն սերունդ դաստիարակեց ու հայրենիքի սեր ներշնչեց, ո՛չ միայն «Առողջ միտք, առողջ մարմնի մէջ»ը տիրական դարձուց, այլեւ՝ ազգին անդամներուն մէջ եղբայրական կապ հաստատեց. կը բաւէ որ մէկը ըսէ թէ ժամանակին Հ.Մ.Ը.Մ.ական եղած է, անոր հանդէպ սեր ու վստահութիւն կը տածեն իր հեռաւոր ու մօտաւոր ընկերները: Ու այս բանը փոքր յաղթանակ մը չէ:

ԱՐԱՍ ՀԱՅԿԱԶ

Հ.Մ.Ը.Մ. իր սկաուտութեամբ հայակերտիչ ու մարդակերտիչ միութիւն է: Ներկա՛յ ու ներկայութիւն: Նորոգուող ու վերանորոգուող: Հայ ժողովուրդը շատ բան կը պարտի անոր հրաթել բանակին: Թող ապրի՛ ու ապրեցնէ՛: Թող բարձրանա՛յ ու բարձրացնէ՛:

Կարծեք հայ մկրտուեցայ հայ ժողովուրդի եւ պատմութեան դարերուն մէջ, կնքահայրութեամբ Եռագոյնին:

Պարզապէս, հա՛յ եղայ: Այսինքն՝ գիտակցեցայ հայութեանս:

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. միայն իր գիտութեալներու եութեան մէջ չէ, այլ՝ մեր ապրող ժողովուրդի յաւիտենապէս երիտասարդ՝ չափահաս ու ալելոր սերունդներուն մէջն է, զինք ծնող ու ապրեցնող ոգիով, հաւատքով, անսահման նուիրումի պատրաստակամութեամբ: Համազգային տրոփումով հանրային մեր կեանքը ակօսող բոլոր՝ կազմակերպութիւնները միջոց եւ օժանդակ կը դառնան ապրեցնելու մեր անհատական արժեքները, դարձնելով զանոնք ընդհանրական ճիգ ու վաստակ: Հ.Մ.Ը.Մ., բազմաճիւղ ու բազմագոյն այդ միութիւններուն մէջ հանդիսացաւ թերեւս գաղափարական այն միա՛կ հաստատութիւնը, որուն արմատները ամենէն աւելի խոր թաղուեցան ու տարածուեցան հայ հոգիին մէջ:

ՄԻՆԱՍ ԹԵՕԼԵԼԵԱՆ

Այսպէս կը ճառագայթէ սերունդ մը, որուն հոգիին մէջ հաւատքի շահեր կան, այսպէս յաղթաքայլ ու հպարտ կ'անցնի երիտասարդութիւն մը, որուն սիրտը կը տրոփէ ցեղին համար ու ցեղին ուժով: Մենք շատ ենք, մենք ուժեղ ենք, մենք բարձր ենք: Մենք գաղափարապաշտ ենք. հայրենասեր ենք, մենք յաղթական ենք, մեր դրօշին ծալքերուն հետ կը ծփայ մեր ոգին, մեր թոքերուն ընդերքներէն կշռոյթ կ'ամռն գաղափարի մեր երգը, մեր աչքերուն մէջ կը ծփայ յաւիտենական հայրենիքին անոյշ պատկերը: Մեր հայրենիքին, իրական հայրենիքին, որուն հարազատները մենք ենք, ու կը մնանք, նոյնիսկ այս օտար հողին վրայ: Ահա թէ ինչու մեր տղաքն ու աղջիկները կ'անցնին անտառներու խռովքով ու ծովերու փոթորիկով: Կ'անցնին յաղթական ու դրդագնելով հողը իրենց ոտքերուն տակ, կը գոչեն.

- ճամբա՛յ բացեք, Մենք ենք ահա...:

Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ



Մարտ 1973. Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան 20րդ Պատգամաւորական Ժողով Պէյրութի մէջ:

Յրաչ Սիսեռեան ՓԱՐԻՉ

90 տարիներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ը ունեցած է բազմաթիւ ղեկավարներ, որոնք առաջնորդած են այս միութիւնը եւ զայն հասցուցած են իր այսօրուան բարձրութեան: Անոնք յաղթահարած են զանազան դժուարութիւններ եւ կատարած են մեծ նուաճումներ, որոնք հպարտութիւն կը պատճառեն ամէն հայու:

Հ.Մ.Ը.Մ.ականի կեանքէս կ'ուզեմ յիշել այն ղեկավարները, որոնք տպաւորած են զիս:

Անկասկած, սկառտական տարիներս եղած են յուշերով եւ տպաւորութիւններով լեցուն ամէնէն ուրախ տարիներս: Եւ ինչո՞ւ չըլլային, երբ բախտը ունէի խմբապետներ ունենալու եղբայրներ Ճանիկի (Ճանիկ Ոսկերիչեան) եւ Փանիկի (Ստեփան Չաքմաքճեան) նման ղէմքեր, որոնք իրենց խստութեամբ եւ անկողմնակալութեամբ մէջս ամրապնդած են միութեան սկառտութեան հանդէպ հաւատքն ու սէրը:

Այնուհետեւ, իբրեւ մարզիկ, պասքեթպոլիստ, բախտը ունեցած եմ գործակցելու այսպիսի մարզիչներու հետ, որոնք կարծես մէկական հոգեբաններ ըլլային, որոնք շատ լաւ կը հասկնային իւրաքանչիւր մարզիկի կացութիւնը: Այդ մարզիչներէն կ'արժէ յիշել եղբայրներ Կարօ Գազանճեանը, Գօգօ Եագուպեանը, Ճորճիկ Պաղտոյեանը, Համբարձում Արապեանը (Սաայիտ) եւ Ժագ Պոյաճեանը:

Վարչական գետնի վրայ գրեթէ ամէն օր կը յիշեմ եղբ. Սուրէն Մուրատեանը, որուն հետ մօտէն գործակցած եմ հինգ տարիներ եւ անկէ սորված եմ

շատ բան՝ միութենական հարցերը լուծելու, բարոյական արժէքները պահպանելու եւ զանոնք նորերուն փոխանցելու իմաստով: Աւելի կանուխ, երիտասարդութեանս շրջանին մեծապէս տպաւորած եմ ներկայութիւն, վարկ ու հանգամանք ունեցող շարք մը Հ.Մ.Ը.Մ.ականներէ, ինչպէս օրինակ՝ Յովհաննէս Շահինեան, Կրէկուար Մղճաւետիքեան, Վարուժան Մուրատեան, Ժագ Արահայտոյեան, որոնցմէ շատերը թերեւս զիս չեն ճանչցած, բայց ես բախտն ու պատիւը ունեցած եմ զանոնք իբրեւ առաջնորդներ ունենալու:

Աւելի հասուն տարիքիս, մօտէն ճանչցած եմ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանը եւ մտերմութիւն ունեցած եմ հետը: Եղբ. Վարդգէսը կրնայ նկարագրուիլ մէկ նախադասութեամբ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի դպրոց: Միութենական հասկացողութեան դպրոց մըն էր ինք, որմէ շատ բան սորվելու առիթը ունեցած եմ:

Չեմ կրնար մոռնալ նաեւ վերջին տարիներու գործակից եղբայրներս, որոնք յաճախ եղած են միութենական ուսուցիչներս, ինչպէս՝ եղբ. տղթ. Միսաք Արզումանեանը, եղբայրներ Վարուժան Սերոբեանը, Երուանդ Տէմիրճեանը, Միհրան Շիմշիրեանը, Կարօ Թիւթիւնճեանը եւ Պատրիկ Կիւլպէնկեանը:

Այո, ես բախտը ունեցած եմ մեծնալու այս բոլոր մեծերու ներկայութեամբ, անոնց շուքը ունենալով կողքիս, ինչ որ մեծ բախտաւորութիւն է ինծի համար: Յիշելները եղած են Հ.Մ.Ը.Մ.ի 90 տարիներու պատմութենէն յիշատակելի ղէմքեր եւ կը մնան օրինակներ ու խորհրդանիշներ, որոնց կը ձգտին նմանիլ նոր սերունդները՝ միութիւնը առաջնորդելու համար ղէպի նոր 90 տարիներ:

ԱՌԱՋԻՆ ԴՊՐՈՅԸ՝ Հ.Մ.Ը.Մ.

Հայրական սիրով եւ հոգեբան բերկրալից ցնծութեամբ իմացանք, որ ընթացիկ տարուան միջոցին պիտի կշէք Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 90ամեակը: Մեզի համար ծառայական բարձրագոյն աստիճանի գիտակցութիւն ունեցող եւ գիտակցութիւնը մեր ազգի ժողովուրդին ճամբով հաւաքական առաքելութեան վերածող ընտանիք մըն է Հ.Մ.Ը.Մ.ը, անոր համար ալ հայրական սիրով կ'ողջունենք 90ամեայ Հ.Մ.Ը.Մ.ի անցեալի եւ ներկայի բոլոր նուիրեալ հերոսները:

Արդարեւ, անցնող 90 տարիներուն, Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհի չորս ծագերուն, հոն ուր հայութեամբ եռուն հաւաքականութիւններ կային, եղաւ այդ հաւաքականութեանց ազգային ինքնուրոյնութիւն փոխանցող այն ամբողջ, որուն ոչ մէկ ձեռք մօտեցաւ խանգարելու համար:

Անցնող 90 տարիներու ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ը իր կոչումին հաւատարիմ մնաց ու շարունակեց պահել այն սրբազան աւանդը, որ 1918 Մայիս 28եան ազատատենչ պայքարի խորհուրդով առինքնուած էր:

90ամեակի այս հանգրուանին, մենք կը վերահաստատենք հայ հոգեւորականին կապուածութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը այն ազգային դպրոցն է, որ անցնող 90 տարիներուն բռնագրաւուած մեր հայրենիքին բուրմունքը բերաւ մեզի, իսկ այսօր կը շարունակէ հայրենիքը տանիլ ու ապրեցնել հոն, ուր հայ պատանին եւ երիտասարդը ծարաւը ունին հայութեամբ ոգեւորուելու եւ լիցքաւորուելու:

Ճշմարիտ է, որ Հ.Մ.Ը.Մ.ը անցնող 90 տարիներուն ընթացքին հայ ժողովուրդի խղճի ձայնին արձագանգը եղաւ իր արի-արեւոյշներով, գայլիկներով ու մրջնիկներով, կակուղ թաթիկներով ու նուիրեալ առաջնորդներով:

Հ.Մ.Ը.Մ.ը անցնող 90 տարիներուն եղաւ այն երաժշտանոց մշակութարանը, ուր հայ մանուկն ու պատանին հայ երգը հայօրէն երգելու, հայօրէն պարելու եւ հայու արժանապատուութեամբ ապրելու գիտութեան տիրացան:

Անցնող 90 տարիներուն, Հ.Մ.Ը.Մ.ը հանդիսացաւ սփիւռքացած մեր ժողովուրդի հայկական կամաւոր բանակը, որ շքերթներով ու տողանցքներով դրոշացուց այն գետինը, որուն վրայ հայ հոգի կար:

Անցնող 90 տարիներուն, Հ.Մ.Ը.Մ.ը գործեց, ծառայեց եւ իր սիրով հայկական կեանքը ոգեղիսացուց, չոր եւ ամայի օտար երկինքներու տակ:

Այս առիթով, յանուն Գանատայի Հայոց Թեմի Ազգային Վարչութեանց, երեսփոխաններուն, հովիւներուն եւ հոգաբարձութեանց, կը շնորհաւորենք օրինալից երթը 90ամեայ Հ.Մ.Ը.Մ.ին եւ կը մաղթենք, որ օրինաբեր ըլլան գալիք տարիները, ծառայութեան նոյն ճանապարհէն քալելով եւ հայրենիքին, ազգին, եւ քրիստոնէական հաւատքին հանդէպ ունեցած գերագոյն աստիճանի բժախնդրութեամբ:

Առ այդ, ողջ լերուք ի Տէր գօրացեալք Շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւետ օրինեալ ի մէջ:

Հայրական սիրով եւ օրհնութեամբ՝

Աղօթարար
ԽԱԺԱԿ ԱՐԸ. ՅԱԿՈԲԵԱՆ
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

90 ԱՄԵԱԿ Հ.Մ.Ը.Մ.Ի

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԵՐ

Արմէն Կետիկեան ԹՈՐՈՆԹՕ

Բ

եռնատար կարգի մը մէջ խոնոտած, գայլիկի տարազ հագուած թերեւս 20-25 երեխաներ, որոնց մեծամասնութիւնը բարձրաձայն կու լայ եւ որոնց մէջ եմ նաեւ ես՝ հաւանաբար երեք տարեկան հասակիս:

Կը պատմեն, թէ մեզ կը տանէին Հ.Մ.Ը.Մ-ի միջ-մասնա-ճիւղային աւանդական տողանցքին, որ տեղի կ'ունենար ամէն տարուան Զատիկուան Երկուշաբթին՝ Մեռելոցի օրը:

Այդ պատկերը այսօրուան պէս կը յիշեմ, եւ այս առաջին յիշատակս է Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիք մուտքէս: Աւելի խելահաս տարիքիս կը յիշեմ, թէ ինչպէս ամէն տարի, Զատիկուան միջ-մասնաճիւղային աւանդական տողանցքին ընտանիքով կը պատրաստուէինք: Փոքրերս կը հագուէինք սկստակական տարազներ: Մեծերը կը պատրաստէին աւանդական գառնուկի ոտքով պատրաստուած ճաշը, եւ ուտելէ ետք աճապարանքով կը մեկնէինք Հալէպի քաղաքապետարանի դաշտ՝ մասնակցելու համար տողանցքին:

Եթէ պատահէր, որ օդը անձրեւոտ ըլլար, բոլորին դէմքը մտահոգ երեւոյթ մը կը ստանար, որ չըլլայ թէ տողանցքը ջնջուէր աննպաստ օդին պատճառով: Տարի մը միայն, կը յիշեմ, որ դաշտի թրիպիւնին տակ երկար սպասումէ մը վերջ, ճարահատ տուն վերադարձանք, որովհետեւ անձրեւը չդադրեցաւ եւ, հետեւաբար, տողանցքը ջնջուեցաւ:

Հաւանաբար ինծի նման շատեր այս կամ այն ձեւով կը յիշեն իրենց առաջին փորձառութիւնը, որուն պատճառով անդամագրուեցան Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին:

Հաւանաբար կը յիշեն նաեւ իրենց գայլիկական կամ սկստակական հաւաքոյթները, արշաւները, բանակումներն ու ընկերային բազմաթիւ խրախճանքները: Կը յիշեն իրենց մարզական խումբի ընկերները, այս կամ այն մարզաձեւի լաւագոյն մարզիկները կամ խումբերու տարած յաղթանակներն ու պարտութիւնները:

Կը յիշեն իրենց խմբապետը կամ մարզիչը, թէ ինչպիսի՛ խստութեամբ, որուն զուգահեռ՝ ինչպիսի՛ հոգածութեամբ եւ գուրգուրանքով վարուած են իր կամ ընկերոջը հետ եւ որուն շնորհիւ այսօր աւելի լաւ Մարդ եւ Հայ դարձած են իրենք:

Հ.Մ.Ը.Մ-ի 90 տարիներու պատմականը վստահ եմ որ շատեր պիտի կատարեն եւ գովաբանեն: Այդ պատմութեան էջերէն յստակ կերպով պիտի արտացոլան անոր առաքելութեան ճամբուն վրայ ձգուած փայլուն հետքերը: արձանագրուած պիտի ըլլան սերունդներու մասին՝ բոլոր այն գաղութներու մէջ, ուր ան արմատներ նետեց եւ ինչպիսի՛ իրագործումներ եւ նուաճումներ կատարեց:

Հ.Մ.Ը.Մ-ի ծնունդը, իր հիմնադրութեան օրերուն, Եղեռնէն ճողոպրած մեր հայորդիներուն համար օրհնութիւն մը եղաւ եւ Սփիւռքի մեր գաղթօճախներուն համար եղաւ փրկութեան լաստ մը, ուր մեր մատղաշ սերունդները ապաստան գտան: Մեր մարզական եւ սկստակական խումբերու շէնչող եւ կարգապահ շարքերը հպարտութիւն եւ յոյս ներշնչեցին հայ ժողովուրդի բոլոր գաւակներու հոգիներուն: «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանը Հ.Մ.Ը.Մ-ականներուն համար միայն խօսք չեղաւ, այլ՝ եղաւ ամէնօրեայ գործունէութիւն եւ ապրում:

Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեակին առիթով կը յիշենք մեր բոլոր «խոնարհ հերոսները», որոնց յաճախ հանդիպեցանք եւ ծանօթացանք մեր գործունէութեան ընդմէջէն կամ «ՄԱՐ-ԶԻԿ»ի էջերէն:

Կը յիշեմ խմբապետներս, եղբայրներ Վահէն, Տիգրանը, Անդրանիկները: սկստակական խումբի ընկերներս՝ Կարօ Թիւթիւնճեանը, որուն հետ երկար տարիներու գործակցութիւն ունեցանք, մինչեւ իր վաղաժամ մահը: Զարեհը, Սիմոնը եւ շատ մը ուրիշներ: Աւելի ուշ, գանատական ափերուն, եղբայրներ Լուսերը, Դանիէլը, Անդրանիկն ու Վարուժանը ու տակաւին Տիգրանը, Գօգօն, Գէորգը, Լեւոնն ու շատ-շատեր, որոնց հետ աշխատելու եւ գործակցելու առիթը եւ բախտաւորութիւնը ունեցայ:

Ամենայն վստահութեամբ կրնամ հաստատել, որ այսօր, Հ.Մ.Ը.Մ-ը Սփիւռքի ամենակարեւոր կազմակերպութիւններէն մէկն է: Հայ մանուկը ազգային կեանքի իր առաջին քայլերը կ'առնէ Հ.Մ.Ը.Մ-ի մէջ, երբ ծնողքը զինք կ'արձանագրէ իբրեւ Մոկի կամ Կակուղ Թաթիկ:

Անցնող 90 տարիներուն, Հ.Մ.Ը.Մ-ը գոյատեւեց, մեծցաւ եւ զօրացաւ զոհողութեամբ պարտականութեան գիտակից եւ անձնուէր հայորդիներու, որոնք հաւատացին անոր վեհ առաքելութեան եւ մեզի սորվեցուցին ըլլալ հաւատարիմ Աստուծոյ, ծառայել հայրենիքին եւ միշտ օգնել ուրիշին:

Անցնող 90 տարիներուն, Հ.Մ.Ը.Մ-ը առանց վճատելու եւ ընկրկելու դիմագրաւեց բոլոր տեսակի դժուարութիւններ, մեր բոլորին սորվեցուց ըլլալ չարքա՛շ, արի՛, ազգասէ՛ր, հայրենասէ՛ր, օրինապահ՛ եւ կարգապահ՛, մեր մէջ զարգացը ներով պարտականութեան եւ պատասխանատուութեան գիտակցութիւն:

Յարգա՛նք Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներուն, մեր ծնողներուն, մեր խմբապետներուն, մեր մարզիչներուն եւ բոլոր անոնց, որոնք մեզի սնուցին հաւատարիմ մնալու մեր կոչման՝ «ԲԱՐՁՐԱՆԱԼՈՎ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ» եւ «ՄԻՇՏ ՊԱՏ-ՐԱՍՏ» ըլլալ ձեռք երկարելու բոլորին:

Թող մեր երթը ըլլայ միշտ դէպի՝ «Կատարն հայրենի լեռանց հեռագոյն»:

1947



1947. «Ի.Ս.Ը.Ս.ի Օր»ուան տոնակատարումին Հալեպի մեջ:

ՅՈՒՇ ԱՆՑԵԱԼԵՆ

Ժիրայր Սարգիսեան ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈ



1964ի ամրան եզակի շեղում մը տեղի ունեցաւ սկաուտական մեր կեանքէն ներս, որովհետեւ որոշում տրուեցաւ մ ա ս ն ա կ ց ե ռ ւ ս կաուտական միջազգային տասնմէկերորդ ձէմպորիին, Յունաստան:

Հեռաւոր վայրի մը մէջ բանակելու հրապոյրէն բացի, երկու բառեր՝ «Միջազգային» եւ «ձէմպորի» յատուկ գրաւչութեամբ մը սկսան շրջիլ մեր երեւակայութեան մէջ:

Վերջապէս, մեր ընթացիկ առօրեայէն դուրս գալով առիթը պիտի ունենայինք համաշխարհային ձեռնարկի մը մասնակցելու: Ամիսներու վրայ երկարող նախապատրաստական աշխատանքներէ ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի կազմէն 21 սկաուտներ, ետանդամ խմբապետական կազմով մը, եղբայրներ Սուրէն Մուրատեանի, Հայկ Պէյլէրեանի եւ Ճանիկ Ոսկերիչեանի գլխաւորութեամբ, հասանք բանակավայր, որ 86 երկիրներէ աւելի քան 13 հազար սկաուտներու ժամադրավայրը դարձած էր:

Մենք կը ներկայացնէինք Լիբանանի սկաուտութիւնը, Հ.Մ.Ը.Մ-ի յատկացուած առանձին բանակավայրով:

Նախապէս տեղեակ էինք, թէ Ֆրանսայի Հայ Արիւներու կազմակերպութիւնը եւս ձէմպորիին պիտի մասնակցի հայկական Շուաքոյն դրօշակով:

Մարաթոնի շրջանը վերածուած էր անծայրածիր բանակավայրի մը, անհրաժեշտ իր բոլոր յարմարութիւններով: Մենք նման տարողութեամբ համախմբումի մը չէինք մասնակցած եւ առաջին անգամ ըլլալով զգացինք համաշխարհային ուժը, հրապոյրը եւ հմայքը սկաուտական շարժումին, որուն մաս կը կազմէինք նաեւ մենք՝ Հ.Մ.Ը.Մ. ականներս:

Բանակումին յայտագիրը անընդհատ շարժում եւ տօնախմբութիւն էր, առօրեայ հաւաքներով եւ փոխադարձ այցելութիւններով լեցուն:

Մեր բանակավայրի այցելուներուն համար անակնկալ էր գովացած Ջուրի հիւրասիրութիւնը, որով հնարամիտ սկաուտներ խորունկ փոս մը բորելով՝ փոսին մէջ շիշերով Ջուր կ'ամբարէին եւ անհրաժեշտ պարագային ալ ցեխերու մէջ թաթխուած նախամարդու կերպարանքով շիշերը դուրս կը բերէին հիւրասիրութեան համար:



Տասնօրեայ բանակումին ընթացքին, այլ ազգի բանակողներու հետ յարաբերելով կը փորձէինք առաւելագոյն չափով ծանօթանալ եւ մեր ազգային ինքնութիւնը ծանօթացնել այլոց:

Փնտռեցինք ու գտանք այլ երկիրներէ բանակումին մասնակցող հայ սկաուտներ եւ մեր թիւը հասաւ եօթանասունի:

Յունահայ գաղութը շրջապատած էր բոլորս եւ հայասիւիւս միջնորդող ամբողջացաւ Կիրակի օր, Ս. պատարագ մատուցանելով բանակավայրէն ներս:

Բանակումին ամբողջ տեւողութեան, սկաուտական շարժումին շնորհիւ, ազգերու այս համախմբումին կեդրոնական հրապարակներուն վրայ համահաւասար բարձրութեան վրայ կը ծածանէր այդ օրերուն տարագիր մեր Շուաքոյն դրօշակը, եւ այդ երեւոյթը յուզումի եւ հպարտութեան ապրումներ կը շուայէր բոլորիս:

Ի՞նչպէս մոռնալ բազմահազար սկաուտներու մասնակցութեամբ Աթէնքի մարզադաշտին մէջ տեղի ունեցած տողանցքը, ուր Հայ Արիւներու ցուցատախտակին վրայ «Armenian Scouts» կը կարդացուէր:

Այո՛, ասոնք հազուադիւս երեւոյթներ էին անցեալին եւ մեզի շնորհուած էր այդ հազուադիւս պահերը ապրելու, անոնցմով ներշնչուելու եւ մեր ուխտը վերանորոգելու առիթը:

Այսօր, ազատ ազգերու մեծ ընտանիքին մաս կազմելով, Հայաստանը եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը ամբողջական իրաւասութեամբ կը հրաւիրուին մասնակցելու միջազգային նման ձէմպորիներու, իրենց թիկունքին ունենալով 90ամեայ Հ.Մ.Ը.Մ-ի համաշխարհային կառուցը:

Պատիւ այդ կառուցին, փա՛ռք Հ.Մ.Ը.Մ-ին:

«ԴԵՂԻՆ ՄԱՏԱՆԱՆԵՐԸ»

Վեթերան մը
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Յ իշողութեանս մէջ տակաւին թարմ է. Լիբանանի Ֆութպոլի ախոյեանութեան 1968-1969ի տարեշրջանն էր: Երիտասարդ տղաք էինք՝ 16-17 տարեկան, Ֆութպոլի սիրահարներ, այն աստիճան, որ մեր խօսակցութեան նիւթերը, յուշերը եւ երազները այդ մասին էին, մէկ խօսքով՝ Ֆութպոլը ամէն բան էր մեզի համար: Ընկերներով անդամագրուած էինք Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդական խումբերուն, եւ ամէն Կիրակի առաւօտ կ'ունենայինք մեր խաղերը, որոնք կարծես մեր Փիզիքական եւ երեւակայական կեանքի սնունդն էին, իսկ կէսօրէ վերջ, զինուորի մը հաւատարմութեամբ եւ կարգապահութեամբ կը հետեւէինք Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբի մրցումներուն: Լիբանանի մէջ Ֆութպոլի համակիր ըլլալը դժուար բան էր, եւ շատ անգամ գէշ հետեւանքներ կ'ունենար: Նկատի ունենալով երկրին համայնքային կառոյցը եւ համայնքային համոզումներու տարբերութիւնները, անբընական չէր, որ մարզական խումբերու հանդիպումները շատ անգամ համեմուտէին կռիւներով: Բնական է, որ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներն (նոյնիսկ մարզիկները) ալ համոտեսէին այդ կռիւները, որոնք արդիւնքը կ'ըլլային յաղթանակի մը, զոր հակառակորդ խումբի համակիրները հաշտ աչքով չէին ընդուներ:

Անկեղծ ըլլալու համար պէտք է խոստովանիմ, որ մենք ալ, այդ տարիներու տաքարիւն տղաքը եւ Հ.Մ.Ը.Մ.ի խումբին երկրպագուները, այդ կռիւներու մէջ քարեր չպրտած ենք դէպի հակառակորդ խումբի համակիրները, պաշտպանելու համար մենք մեզ եւ մասնաւորապէս՝ պաշտպանելու համար Հ.Մ.Ը.Մ.ի նուիրեալ մարզիկները, որոնք յաճախ թիրախն էին քարերու տարափին: Այս միջնորդութիւնն եւ պայմաններուն մէջ, իւրաքանչիւր մարզիկ որ մաս կը կազմէր ներկայացուցչական խումբին եւ կը հազնէր եռագոյն տարագր, տարբեր էակ մը կը դառնար, խիզախ զինուոր մը, երեւակայական ասպետ մը, եւ մասնաւորապէս Հ.Մ.Ը.Մ.ի սուրբ նշանաբանին՝ «Բարձրացիր-բարձրացուր»ին հաւատացող եւ այդ նպատակին ծառայող նուիրեալ տղաներ, որոնք ոչինչ խնայեցին իրենց լաւագոյնը տալու եւ բարձր պահելու Հ.Մ.Ը.Մ.ի մարզական եւ բարոյական պատիւը:

Ախոյեանական խաղերու վերջին շաբաթն է. սուր պայքար է: «Մեր տղաքը» ուրիշ խումբերու հետ կը գտնուին առաջին դիրքի վրայ, հաւասար կէտերով: Ախոյեանութեան



Այժմ Մ. Նահանգներ ապրող Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի վեթերաններ:

հետաքրքրութիւնը հասած է իր գագաթնակէտին, որովհետեւ վերջին շաբաթուան խաղերը պիտի որոշէին ախոյեանը: Հ.Մ.Ը.Մ.ի խումբը յաղթեց իր վերջին խաղը եւ դարձաւ Լիբանանի ախոյեան, անսահման ուրախութիւն յառաջացնելով հազարաւոր համակիրներու մօտ: Յաջորդ օրն է: Շատ կանուխ սկսած եմ օրաթերթերը հաւաքել, անոնց մարզական յօդուածներուն մէջէն վերապրելու եւ վայելելու համար Հ.Մ.Ը.Մ.ի դեղին շապիկաւորներու յաղթանակը: Տեղական Ֆրանսատառ «L'orient Le Jour» թերթին առաջին էջին վրայ կը կարգամ. «Դեղին Սատանաները» Լիբանանի ախոյեան՝ խոշոր վերնագիրը: Սատանան, որ առհասարակ վատին, չարին եւ գէշին խորհրդանշանն է, իսկոյն կերպարանափոխուեցաւ, եւ երեւակայութեանս մէջ Հ.Մ.Ը.Մ.ի դեղին շապիկը հագնելով, մարմնաւորուեցաւ մեր մարզիկներով, որոնք հրէշտականման սատանաներ էին:

Հ.Մ.Ը.Մ.ի խումբի տղաքն էին «Դեղին Սատանաները», գաղափարի համեստ այդ նուիրեալները, որոնց միակ սատանայութիւնը մարզադաշտերու վրայ էր, գեղեցիկ փոխանցումներ, սրտի տրոփ յառաջացնող գրոհներ, բարձրորակ խաղարկութիւն եւ անմոռանալի կոլեր, ամբողջացնելու համար իրենց յաղթանակներու շարանը, զոր անմոռանալի է անոնց բազմահազար համակիրներուն համար, որոնք կուռքերու նման պաշտեցին այդ մարզիկները:

Ժամանակի դասաւորումով թէ բախտով, եւ հաւանաբար քիչ մըն ալ մեր խաղարկութեան մակարդակի հեռանկարով, այդ տարիներու մեր երիտասարդ սերունդէն, Ֆութպոլի սիրահար եւ Հ.Մ.Ը.Մ.ին նուիրուածներէն ոմանց առիթը տրուեցաւ հպարտօրէն հագնելու դեղին շապիկը, ըլլալու համար մեր ժամանակուան «Դեղին Սատանաները»:

ՅՈՒՇ ԱՆՅԵԱԼԵՆ

Վարուժան Սերոբեան ՄՈՆԹԵՒԼ

Տասնամեակներ անցան եւ դրդապատճառ մը անհրաժեշտ է արթնցնելու յիշատակները: Այսպէս, մեր տղոց խնդրանքին ընդառաջելով, անցեալի թուղթերուս փնտրտուքին մէջ ձեռքս անցաւ «Հայրենիք» օրաթերթի 28 Յունուար 1972ի թիւով լոյս տեսած յօդուած մը՝ «Գիսաւոր»ի ստորագրութեամբ (Յօդուածը տեսնել վարը): Նիւթը՝ Հ.Մ.Ը.Մ.- «Կամք»ի օրացոյցն է, որ կը շարունակէ հրատարակուիլ ամէն տարի:

Յետադարձ ակնարկով մը ետ կ'երթամ երեսունհինգ տարիներ, երբ չկային համակարգիչի ընծայած դիւրութիւնները, այդ ժամանակ Մոնթրէալի մէջ չունէինք հայ տպագրական գիրերով օժտուած տպարան: Գրամեքենայ ալ չունէինք, օրաթերթ կամ շաբաթաթերթ ալ չկար: Զեռնարկներու շրջա-

բերականները ձեռքով կը գրէինք ու կը բազմագրէինք: Վստահ եմ, անհասկնալի է շատերուն եւ դժուար է պատկերացնել այս իրողութիւնը:

Այս պայմաններով, Հ.Մ.Ը.Մ.-ական երկու «Խենթեր» (Պ. Ա. եւ Վ. Ս.) ամէն տարի, Նոյեմբեր ամսուան գիշերները, երկար ժամեր, միասին ու միատեղ, համբերութեամբ եւ յարատեւութեամբ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի օրացոյցի էջերը կը դասաւորէին, հայ թերթերէ կտրուած բառեր կամ գիրեր փակցնելով: Նպատակը՝ խնայողական միջոցներով ներկայանալի օրացոյց մը հրատարակել էր եւ կողիկ գումար մը ապահովել մասնաձիւղին:

1972ին Չատիկ. «Գիսաւոր»ի գրութեան տարին: Մոնթրէալի պասքեթպոլի տղոց խումբը կը մասնակցի Պէյրուէի մէջ կայացած Հ.Մ.Ը.Մ.-ի միջմասնաձիւղային խաղերուն: Կը յիշեմ, խումբը չէր կարողացած լրիւ կազմով

ճամբորդել: Առաջին անգամն էր որ մասնաձիւղին մարզական մէկ խումբը երկար ճամբորդութեան մը կը նախաձեռնէր, կամուրջ ստեղծելու՝ հեռաւոր ու ովկիանոսներ անդին Հ.Մ.Ը.Մ.-ի բազմանդամ շրջաններուն հետ եւ Հ.Մ.Ը.Մ.-ի ճամբով հայու պատկանելիութիւնը գորացնելու:

Խումբին պատասխանատուներուն վստահուած էր նաեւ մէկ ուրիշ պարտականութիւն. հայերէն տպագրական կապարէ գիրերու կազմած մը բերել Պէյրուէէն:

Գիտէ՞ք որքան ծանր են կապարէ գիրերը... «առաքելութիւնը» յաջողութեամբ իրականացաւ, քանի մը հոգիի վերադարձի պայուսակներուն մէջ բաժնուած գիրերը հասան Մոնթրէալ: Ու երկար տարիներ օգտագործուեցան միութենական տպագրական բազմազան գործերու:

Հայ ընտանիքի մը մէջ, կը խօսուէր ազգային տօներու մասին, երբ մէկը հարցուց.

- Մեր Չատիկը ե՞րբ կու գայ այս տարի...
- Չեմ գիտեր, սակայն օրացոյցը նայիմ անգամ մը, ըսելով, ընտանիքին տէրը խոհանոց գնաց: Քիչ ետք, վերադարձաւ:
- Ես ալ տարօրինակ մարդ եմ. ամերիկեան օրացոյցին մէջ մեր Չատիկը կը փնտռէի կոր...
- Է՛, հայկական օրացոյց չունի՞ք - հարցուց մէկը:

Շատ կարեւոր է:
- Չունինք. իսկ դուք ունի՞ք:
- Մենք ալ չունինք, կարծեմ: Անպատճառ հայկական օրացոյցի մը պէտք ունինք, տեսնենք, տեղէ մը գտնելու է:
Ներկայ մը միջամտեց.

- Հոգ մի՛ ընէք, ես ձեզի լաւ օրացոյցի մը հասցէն տամ: Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ը եւ Հայ Սկաուտները սքանչելի օրացոյց մը հրատարակած են, այս տարի ալ, մաքուր, գեղեցիկ տպագրութիւն մը: Վրան նայիս, սիրտդ կը բացուի: Է՛ն վրան ալ եռագոյնի մէջ Հ.Մ.Ը.Մ.-ի խորհրդանիշը դրած են:
Ազգային օրացոյցերն ալ մեր քաջալերութեան արժանի հրատարակութիւններէն են: Յուշարարները՝ մեր տօներուն, որոնք ամբողջ տարուան ընթացքին, անցնող օրերուն հետ, մեր պատմութեան նուի-

րական օրերու յիշատակները կը թելադրեն մեզի, լուռ պատգամներով.

- Յիշէ՛ եւ տօնէ՛ Վարդանանց տարեդարձը:
 - Յիշէ՛ եւ տօնէ՛ Հայաստանի Անկախութեան՝ 1918 Մայիս 28ի տարեդարձը:
 - Յիշէ՛, բայց... մի՛ տօներ Դեկտեմբեր 2ի, Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը:
 - Յիշէ՛ Հայոց Չատիկն ու Ծնունդը, եւ Քրիստոսի յայտնութեան ու յարութեան տօները յարգէ՛, պայերուդ հայեցի շունչով եւ յիշատակներով:
- Ազգային օրացոյցը սովորական օրացոյց մը չէ, պէտք է գուրգուրանքով եւ մասնաւոր հետաքրքրութեամբ թերթել անոր էջերը, ջերմ աչքերով նայիլ հայոց տօներուն վրայ, եւ հաւատաւոր սիրով, ըսել անոր.
- Պիտի պահէ՛նք ու յարգենք մեր տօները, որոնք մեր անմոռանալի անցեալը կը յիշեցնեն մեզի, եւ կը ներշնչեն նոր ու աւելի փայլուն թուականներու հեռանկարներ...

Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.ը այս տարի կնքահայրն է մեր ուխտին, եւ արժանի՝ շնորհակալութեան, որովհետեւ ա՛լ պիտի չհարցնենք իրարու, շուարած:
- Մեր Չատիկը ե՞րբ կու գայ...

ԳԻՍԱՒՈՐ

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Շուտով կը լրանայ Հ.Մ.Ը.Մ.Ի 90ամեակը եւ կարելոր այս թուականին ու իրադարձութեան առիթով, կ'ուզենք բերել նաեւ մեր խօսքն ու օրհնութիւնը իբրեւ Առաջնորդ Արժանթիւի եւ Չիլիի հայոց:

90ամեակ, որ կը նշանակէ իննսուն տարիներ եւ այդ ալ սփիւռքեան մեր պայմաններուն մէջ: Ծերացած ու մաշած անհատի մը մասին չէ խօսքը, այլ իննսուն տարեկան երիտասարդի մը, որ տարիներուն հետ աւելի աշխուժացած է եւ դարձած աշխարհի չորս ծագերուն գոյութիւն ունեցող եւ իր սկաուտական եւ երիտասարդական խումբերով օժտուած մարմնամարզական կազմակերպութիւն:

Օրհնութեան այս գիրով նախ կ'ուզենք յարգել յիշատակը հիմնադիրներուն եւ բոլոր անոնց, որոնք ունեցան հիմնական մէկ գաղափար՝ «Առողջ մարմին, առողջ միտք». եւ կոտորակուած ու իր գոյութեան պայքարը մղող հայորդիները պէտք ունեին առողջ մարմնի եւ մտքի, ապահովելու համար նաեւ հոգեկանն ու ազգային ոգին եւ գիտակցութիւնը: Եւ, «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» երկրորդ նշանաբանով, Հ.Մ.Ը.Մ. կու գար յիշեցնելու, թէ կեանքը վերելք մըն է եւ ամէն բարձունքէ ետք գոյութիւն ունին նաեւ ուրիշներ, որոնք եւս պէտք է սուաճել, սակայն ո՛չ անհատապէս միայն, այլ հաւաքաբար, մանաւանդ մեր ժողովուրդի պարագային, որ բանաստեղծին բառերով պէտք ունէր գտնելու իր «փրկութիւնը իր հաւաքական ուժին մէջ»:

Առողջ մարմին եւ միտք, բարձրանալ ու բարձրացնել եւ հաւաքական ուժ եւ փրկութիւն... Հայ ժողովուրդի դարաւոր երազը. ֆիզիքական գոյութիւն, զարգացում եւ միասնական, մէկ հայրենիքի ու ժողովուրդի ապահովութիւն:

Թող օրհնեալ ըլլայ յիշատակը բոլոր հիմնադիրներուն, եւ Տիրոջ աջն ու աչքը անպակաս մնան իննսունամեայ այս մարմնամարզական միութեան վրայէն, որպէսզի շարունակէ իր գործունէութիւնը, պատրաստելով առողջ մարմնով, հոգիով եւ ազգային գիտակցութեամբ ապագայ սերունդներ:

Հայրական սիրով եւ օրհնութեամբ՝

ԳԻՍԱԿ ԱՐՔ. ՄՈՒՐԱՏԵԱՆ
Առաջնորդ Արժանթիւի եւ Չիլիի Հայութեան

90ԱՄԵԱԿ Հ.Մ.Ը.Մ.Ի

ՅՈՒՇԵՐ, ՅԻՇԱՏԱԿՆԵՐ ՀԱՒԷՊԷՆ



7 Ապրիլ 1958. Յ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային խաղերու աւանդական տողանցքի պահուն, Յալէպի քաղաքապետարանի դաշտին վրայ: Չախէն առաջինը՝ եղբ. Արմէն Կէտիկեան, իսկ երկրորդը՝ եղբ. Չարեհ Տէրվիշեան:

Չարեհ Տէրվիշեան ԹՈՐՈՆԹՕ



Կար ժամանակ, երբ Հալէպի Հ.Մ.Ը.Մ-ը ունէր իր «Նաւասարդ» դաշտը, հիմնուած՝ 1947ին:

Նոր Գիւղի հայահոծ թաղամասերու մէջ գտնուող թիթեղապատ «Նաւասարդ» դաշտը հաւաքավայրն էր Հ.Մ.Ը.Մ-ի Նոր Գիւղի սկստատական կազմերուն, Փոլիթպոլի դաշտը՝ Հ.Մ.Ը.Մ-ի երկրորդական խումբերուն, մարզադաշտը՝ Նաւասարդեան խաղերուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի աւանդական միջ-մասնաճիւղային մրցումներուն:

Հոն էր, որ պատմական օր մը, 1948ին, Դրօ իր պատգամը կը փոխանցէր Հ.Մ.Ը.Մ-ի սկստուներուն եւ մարզիկներուն:

Կը յիշեմ, երբ դեռ փոքր, անհամբեր կը սպասէինք Կիրակի օրուան, որպէսզի երթալինք «Նաւասարդ» դաշտը եւ սկստուտական մեր խումբի աշխատանքներուն մասնակցէինք: Հոն կ'ըլլային գայլիկներն ու կակուղ թաթիկները, սկստուտական խումբերը «Առիւծ», «Կաքաւ», «Կռունկ», «Մեղու», «Զի», «Աքլոր» եւ Երէցներ: «Արծիւ», «Նապաստակ», «Մեղու», «Եղնիկ» եւ «Վազր» խումբերը կը հաւաքուէին քաղաքի Հ.Մ.Ը.Մ-ի դաշտը: Չեմ գիտեր ինչո՞ւ բոլոր խումբերն ալ կենդանիներու անուններ կը կրէին:

Դրօշակի արարողութենէն ետք, խումբերը կը ցրուէին դաշտին գանազան կողմերը եւ կը սկսէին չափական մարզանքի, որմէ ետք տեղի կ'ունենային սկստուտական խաղերն ու արշաւները:

Հ.Մ.Ը.Մ-ի միջ-մասնաճիւղային մրցումներու նախօրեակին, սկստուտական բոլոր խումբերը, ամէն Կիրակի առաւօտ, կը սկսէին տողանց-

քի փորձերուն, որպէսզի աւանդական փակման հանդիսութեան, բազմահազար հանդիսականներու ծափողջոյններու որոտին հետ, համաչափ քայլերով տողանցեն հպարտօրէն, առաջնորդութեամբը Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի նշանաւոր շեփորախումբին:

Մեր տունը ունէր բակ մը, ուր կ'ապրէին նաեւ հօրեղբօրս ու հօրաքրոջս ընտանիքները: Զատկուան շրջանին տարօրինակ եւ հաճելի եռուզեռ մը կ'ըլլար այդ բակին մէջ: Մեր տուններուն մէջ կ'ընդունէինք Պէյրութէն, Դամասկոսէն, Գահիրէէն եւ այլ շրջաններէ ժամանած սկստուտներ եւ արենոյշներ, ու երբ խմբովին՝ տասէ աւելի սկստուտական տարագներով հպարտօրէն դուրս կ'ելլէինք մեր բակէն՝ երթալու համար «Նաւասարդ» դաշտը կամ քաղաքապետարանի դաշտ՝ տողանցքի, շատերուն նախանձը կը շարժէինք: Փոքր բանակ մըն էինք կարծես:

Մեր օրերուն, Հ.Մ.Ը.Մ-ի սկստուտ ըլլալը բացառիկ առանձնաշնորհում մըն էր: Մեր խմբապետները խիստ էին մեր կենցաղին, մեր խօսակցութեան, մեր վարուելակերպին



27 Յուլիս 1958. «Նաւասարդ» դաշտը Յ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 29րդ խաղերուն: 200 մեթր վազքի առաջնութիւնը կը խլէ եղբ. Չարեհ Տէրվիշեան:

հանդէպ: Մեզի արտօնուած չէր նարտ խաղալ, ճամբան ձեռքերը գրպանը դրած քալել, սինեմա երթալ, հայհոյել եւ կամ ճամբան քալած ատէն կուտ ուտել, ինչ որ հալչպցիներուն սովորութիւնն էր այդ օրերուն: Ճամբան երբ հանդիպէինք մեր խմբապետին, անպայման սկսուտական բարեւոյ պէտք էր բարեւէինք զինք եւ ստանայինք իր փոխադարձ սկսուտական բարեւոյ:

Հալչպի Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտական կազմերը ունէին նաեւ հաւաքական իրենց ֆուլթայլի երեք խումբերը: Քաղաքը ունէր «Անդրանիկ» խումբը, իսկ Նոր Գիւղը՝ «Նաւասարդ» եւ «Սկսուտական Պատուոյ Առաջին» խումբերը:

«Սկսուտական Պատուոյ Առաջին» խումբը տարիներ շարունակ եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդական խումբերու ախոյեան, շնորհիւ խաղացողներու միջեւ տիրող փոխադարձ յարգանքին եւ խումբին պարտադրած կարգ ու կանոնին եւ կարգապահութեան:

«Սկսուտական Պատուոյ Առաջին» խումբը, որուն կրտսերագոյն խաղացողն էի եւ միակ ուսանողը, իր փորձերը կը կատարէր «Նաւասարդ» դաշտին վրայ, ամէն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին: Այդ օրերուն Հալչպի ելեկտրական ընկերութեան փողը կը գարնէր նոյնպէս ժամը 6ին եւ եթէ պատահէր, որ խաղացող մը փողին գարկէն վերջ դաշտ մուտք գործէր, կ'ենթարկուէր մէկ սուրիական ոսկի տուգանքի: Կ'ունենայինք նաեւ հերթական մեր ժողովները, ամէն Ուրբաթ երեկոյեան, Չաւարեան վարժարանի դասարաններէն մէկուն մէջ: Հոս եւս երբ խմբապետը ըսէր, «Ժողովը բաց է» եւ յանկարծ խաղացող մը ներս մտնէր, դարձեալ կ'ենթարկուէր տուգանքի, բայց այս անգամ՝ կէս սուրիական ոսկի: Մրցումէն առաջ բոլորիս պարտադրուած էր դաշտ ներկայանալ մաքուր եւ արդուկուած ֆուլթայլի տարագով, առաւել՝ մեր կօշիկները պէտք է ըլլային ներկուած, այլապէս մեզի կ'արգելուէր մրցումին մասնակցիլ: Տուգանքներէ հաւաքուած գումարը կը ծախսուէր խումբին պէտքերուն:

Մրցումէն առաջ դաշտ մուտք գործելով, բոլորս միասին վագելով կ'երթայինք դէպի դաշտին մէջ ձողին վրայ պարզուած Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը եւ սկսուտական «Պատուի առ»էն ետք իւրաքանչիւրս կը գրաւէինք մեր տեղերը եւ մրցումը կը սկսէր:

Մեր խումբի տղաքը իրարու հանդէպ միշտ յարգալից էին: Խաղի ընթացքին իրարու վրայ չէին պոռար, չէին համարձակել պոռալ, որովհետեւ խումբին մաս կը կազմէին խմբապետներ, Վարիչ Առաջնորդներ, Առաջնորդներ, Փոխ առաջնորդներ եւ ոչ աստիճանաւոր սկսուտներ: Հետաքրքրական էր տեսնել մեր խումբին խաղացողները երբ մեզմէ մէկը կոլ մը նշանակէր: Մենք մեր ուրախութիւնը չէինք ար-

«Սկսուտական Պատուոյ Առաջին» խումբը 1 Ապրիլ 1959ին, «Նաւասարդ» դաշտին վրայ, Հ.Մ.Ը.Մ.ի վարչական եւ սկսուտական պատասխանատուներով:



Այդ օր «Սկսուտական Պատուոյ Առաջին» խումբը խումբը 4-2 արդիւնքով կը յաղթէ Հ.Մ.Ը.Մ.ի Ա. խումբին: Չախէն առաջինը՝ եղբ. Չարեհ Տերվիշեան: Ոսքի, աջէն 5րդը՝ եղբ. Գեորգ Կարապետեան:

տալապտեր ողջագուրումով եւ այլ բացականչութիւններով, այլ՝ սկսուտական ձախ ձեռքով կը ձեռնուէինք կոլ նշանակած եղբօր հետ, բացալապտելով մեր ուրախութիւնը:

«Սկսուտական Պատուոյ Առաջին» խումբին մաս կը կազմէին Նոր Գիւղի եւ քաղաքի սկսուտներու լաւագոյն ֆուլթայլիստները, որոնցմէ լաւագոյնները հետագային պատիւն ու փառքը կ'ունենային մաս կազմելու Հ.Մ.Ը.Մ.ի առաջին խումբին եւ թիւը այդ խաղացողներուն տասնեակներով էր եւ միշտ կ'աւելնար:

«Նաւասարդ» դաշտը խոտ չունէր: Մեր փորձերը կը կատարէինք քարքարոտ դաշտին վրայ, իսկ Կիրակի կէսօրէ ետք երբ մրցում մը կամ մրցումներ պիտի կայանային, սկսուտները առաւօտուն կը հաւաքէին դաշտին մէջ դուրս ցցուած քարերը:

Բնականաբար, Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդական բոլոր խումբերն ալ, ինչպէս «Չաւարեան», «Վրէժ», «Համագասպ», «Աւարայր», «Փոթորիկ», եւ այլն, յաճախ թաղային խումբեր ըլլալով, ունէին իրենց համակիրները, իսկ «Անդրանիկ», «Նաւասարդ» եւ «Սկսուտական Պատուոյ Առաջին» խումբերը՝ բոլոր սկսուտները: Մրցումները կը կազմակերպէր ֆուլթայլի յանձնախումբը:

Այդ օրերուն, տարբեր էր խանդավառութիւնը, զոհողութիւնը, կարգ ու կանոնը, պատասխանատուներուն հանդէպ յարգանքն ու ակնածանքը: Մեզմէ շատեր միայն նախակրթարան աւարտած Հ.Մ.Ը.Մ.ականներ էին, որոնց մէջ վառ էր հայու անխոնջ ոգին, ապրելու կամքը ու յաղթելու վճռակամութիւնը: Հ.Մ.Ը.Մ.ը դարձած էր իրենց դպրոցը, սորված էր հայերէն եւ ապրած՝ հայօրէն:

Կար ժամանակ երբ Հալչպ ունէր իր «Նաւասարդ» դաշտը: Այսօր այդ սերունդէն շատեր մեկնած են անդարձ եւ կամ կ'ապրին այլ գաղութներ, «Նաւասարդ» դաշտի յիշատակներով:

ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՄՏԱԲՈՐԱԿԱՆՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍԻՆ

... Շատ մը ուրիշ միութիւններէ աւելի նուիրական է Հ.Մ.Ը.Մ.Ի կոչումը եւ կարելոր՝ անոր կատարելիք դերը: Անկէկա նորահաս հայ սերունդին կազմակերպութիւնն է: Միակը իր տեսակին մէջ, որ կը ձգտի վաղուան հայը պատրաստել այսօրուան հայկականներն: Որ կ'աշխատի անոնց ջամբել հայրենասիրականին միացած ֆիզիքական, բարոյական ու հոգեկան առողջ դաստիարակութիւն մը: Եւ որ կը հանդիսանայ անոնց ուղեցոյցը դպրոցէն դուրս, կեանքի մէջ, ուր այնքան առատ են խայծերն ու փորձութիւնները եւ այնքան այլասերող, այնպէ՛ս սպաննիչ:

ԿԱՐՕ ԳԵՈՐԳԵԱՆ

Մեր այբուբենին մէջ ամենէն աւելի սիրեցի Հ. գիրը, որով կը սկսեին Հայը, Հայկը, Հայրենիքը, Հայաստանը, Համագասպը, որմէ պիտի ծնէր Հ.Մ.Ը.Մ.ը Հալեպի մէջ: Վերջինն ալ Հ-ով կը սկսէր: Հպարտութիւնը ինքն ալ կը սկսէր գիւնք բնորոշող տառով:

Իրաւունք ունէր բանաստեղծը (Վահան Թէքէեան) ըսելու որ մենք հացի, օդի ու ջուրի չափ պէտք ունինք Հպարտութեան:

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

Մարզանք, մրցում, մրցանակ, խլուած բաժակներ, բանակում՝ երկրէ երկիր, ոգելորութիւն՝ հոգիէ հոգի, իր ներկայութեան, իր անցքէն ետք՝ միշտ երիտասարդութիւն: Այդ ամենուն մշտանորոգ աղբիւրն է, այդ ամէ՛նքն է այս միութիւնը եւ հայ միութիւն մը ըլլալուն՝ աւելին է այդ ամէնքէն: Պարզ արձանագրութեամբ անդամ չեն ըլլար անոնք, ուխտը պայման է եւ ուխտագրին առաջին յօդուածը կազմուած է մեզի համար վիճական ամրութիւն ունեցող «Ազգիս ու հայրենիքիս» վրայ:

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

«Հ.Մ.Ը.Մ.ականությունը» տիտղոս մըն է, պատուաբեր տիտղոս մը, համալսարանական տիտղոսի մը չափ արժեքաւոր: Ինչ որ հայ պատանին կը սորվի Հ.Մ.Ը.Մ.ի մէջ, չի՛ կրնար սորվիլ ուրիշ որեւէ տեղ: Վեհանձնութիւն, ընկերասիրութիւն, հայու նախանձնախնդրութիւն եւ մարդկային ու ընկերային այլ արժեքներ: Այս արժեքները կը դառնան հայ երիտասարդին վահանը կեանքի յոռի ազդեցութիւններուն դէմ, եւ երբ ան չափահաս դառնայ, պատրաստ կ'ըլլայ կեանքը դիմագրաւելու եւ զայն վարելու ամենայն պարկեշտութեամբ եւ ձեռնհասութեամբ:

ՌԻԹԱ ՈՐԲԵՐԵԱՆ

«Բարձրացի՛ր - բարձրացուր» ազնուագոյն սկզբունքով ճամբայ ելած Հ.Մ.Ը.Մ.ը միայն պատկեր մը չէ, գունաւոր շապիկ, գուլպայ, փողկապ կամ սուլիչ չէ, դաշտերուն վրայ մարդ խանդավառող դերասան չէ, գօրաւոր մկանով մարզիկը չէ ան միայն, որովհետեւ այդ բոլորը ուրիշ ժողովուրդներ ալ ունին, աւելի կազմակերպուած՝ անշուշտ, աւելի հրապուրիչ գոյներով եւ միջոցներով: Հայերուս համար սակայն, Հ.Մ.Ը.Մ.ը Հայաստան է: Հայ ժողովուրդը իր բոլոր խաւերով: Գաղթաշխարհի հայութիւնը արթուն պահող ուժն է Հ.Մ.Ը.Մ.ը: Գաղութե-գաղութ կամուրջ կապած ՀԱՅՈՒ ՀՈԳԻՆ Է Հ.Մ.Ը.Մ.ը:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

Հ.Մ.Ը.Մ.ը ոչ թէ առաքելութիւն ունի, այլ առաքելութիւն է, հայաձնունդ մանուկներուն եւ երիտասարդներուն փոխանցելու համար ազգային միութեան ապրում մը, ոչ թէ խօսքով, այլ մարզական դաշտի վրայ, սկաուտական խումբի մէջ, օրերով միասին ապրուած բանակումի ընթացքին: Յուշերը կը պատկանին մեզի, բայց անոնք իրաւունք չեն երբ պետք է գործել: Գործն է, երբ կը բացուի ապագային վրայ, երբ լուծումներ կը գտնէ ներկային մէջ, որ ձնունդ կու տայ իրաւունքին: Հ.Մ.Ը.Մ.ի յուշ-յիշատակը անպայման պետք է պահել, սակայն այդ ընելու լաւագոյն եղանակը դեղնած թուղթերու թերթատումը չէ, այլ կենդանի մարզական կեանքը, տեւաբար աճող ու հայութեամբ բաբախող սկաուտական կեանքը:

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ը ԻՐ ԿԵԱՆՔԻՆ ԻՄԱՍՏԻՆ ՎԵՐԱԾԱԾ ԵՂԲՕՐ ՄԸ ԽՕՍՔԸ՝ 90 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ



28 Յունիս 2002, Սոֆիա:

Ցաւ ի սիրտ, Հ.Մ.Ը.Մ.Ը Պուրկարիոյ մէջ կը յաջողի գործել մինչեւ 1944, երբ, համայնավար բռնատէր վարչակարգի կարգադրութեամբ կ'արգելուին բոլոր կազմակերպութիւնները: Անոնց ղեկավարներէն շատերը կ'աքսորուին Սիպերիա:

Պուրկարիոյ Հ.Մ.Ը.Մ.Ը նոր օրերու իր վերածնունդը դիմաւորեց 1991ին: Վերականգնեց իր ուխտը՝ ծառայելու Հայաստանին: Այսպէս, 27 Մարտ 1991ին վերականգնեցաւ Սոֆիայի մասնաճիւղը, 15 Սեպտեմբերին՝ Փլովտիվի մասնաճիւղը, 21 Դեկտեմբերին՝ Ռուսէի մասնաճիւղը, իսկ 1992ի դարնան՝ Վառնայի մասնաճիւղը:

Յետոյ, 31 Մայիս 1997ին՝ Շուտի մասնաճիւղը, 9 Յունուար 1999ին՝ Պուրկասի մասնաճիւղը: Նոյն տարին նաեւ՝ Տոպրիչը:

Վերադառնալով 77 տարիներ ետ, ես ինծի հարց կու տամ, թէ ի՞նչ է մասնակցութիւնս Հ.Մ.Ը.Մ.Ը-ի անցած 90 տարիներուն:

Հ.Մ.Ը.Մ.Ը-ին անդամագրուած եմ իբրեւ գայլիկ, 1931ին, 9 տարեկանիս: Ինծի համար Հ.Մ.Ը.Մ.Ը անձանօթ կազմակերպութիւն մը եղած չէ, որովհետեւ երէց եղբայրս՝ Նորայրը Փլովտիվի մասնաճիւղի վարչական անդամ էր: Այդ տարիներուն Գարեգին Նժդեհը մեզ կը հաւաքէր Հ.Յ.Դ.Ի «Պետո Սերէմեան» ընթերցարանին վերի յարկի պատիկ սենեակը եւ կը դասախօսէր ազգային, յեղափոխական նիւթերու մասին: Նոյնը կ'ընէին Ներսէս Աստ-Յլածատուրեանը (Շրջանային Վար-

Խորէն Քիրազեան ՍՈՅԻԱ

Ինչու տարիներ առաջ, 16 Նոյեմբեր 1918ին, Պոլիս, երկար նախապատրաստութիւններէ ետք, Գրիգոր Յակոբեանի գրառենեակին մէջ հրաւիրուած խորհրդակցութեան մը ընթացքին ծնունդ կ'առնէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը: Նպատակը կը ճշդուի՝ պատրաստել ֆիզիքայէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ: Սորվեցնել՝ ըլլալ չարքաչ եւ արի, ազգասէր եւ հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ: Իբրեւ նշանաբան կ'որդեգրուի «Բարձրացիր-բարձրացուր»:

Պոլիսէն դուրս, Հ.Մ.Ը.Մ.Ը-ի առաջին

մասնաճիւղին հիմնադրութիւնը կը կատարուի Պուրկարիոյ Վառնա քաղաքին մէջ, զուգընթաց Փարիզի մասնաճիւղին, որ կը հիմնուի 1920ի ամրան: Շատ չանցած, իրարու ետեւէ կը հիմնուին Փլովտիվի եւ Ռուսէի մասնաճիւղերը 1921ին, Սոֆիա՝ 1922ին, Սլիվէն՝ 1923ին, Փազարճիք, Պուրկաս եւ Սթարա Ջակոբա՝ 1924ին, Խասըովօ եւ Շումիէն՝ 1925ին, Այթոսի եւ Պորիսովկրատի մասնաճիւղերը՝ 1930ին: Մասնաճիւղեր կը ստեղծուին նաեւ Տոպրիչ եւ Սիլիսթրա քաղաքներու մէջ, որոնք այդ տարիներուն եղած են Ռուսմանիոյ սահմաններուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ.Ը Պուրկարիոյ Շրջանային Վարչութեան անդրանիկ ժողովը տեղի կ'ունենայ 26 Հոկտեմբեր 1924ին: Մինչեւ 1936 Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ 10 ողիմպիական խաղեր, 7ը՝ Փլովտիվ, 2ը Սոֆիա եւ մէկը՝ Վառնա:

չուլթեան ատենապետ), Օննիկ Բանիկեան- Չարմունին (ուսուցիչ, բանաստեղծ), փրիստոփայ Հայկ Ասատուրեանը, Կարո Ղազարոսեանը (Կարո Մեհեան), Նշան Դաւիթեանը եւ ուրիշներ: Այնպէս որ կրնամ ըսել թէ մեծցած եմ անոնց շունչին տակ:

Առաջին բանակումէն, որուն մասնակցած եմ Պոյքովօ, 1934ին, եւ անկէ ետք տարեկան բոլոր բանակումներէն չեմ կրնար մոռնալ միջ-մասնաճիւղային երեք բանակումներ՝ Առաջինը 1935ին, Սոֆիայի մօտակայ Վիտոշ լեռան լանջին, Վլատայա գիւղին մօտ: Բանակումը, որ կազմակերպուած էր Քրիստափոր Միքայէլեանի նահատակութեան 30ամեակին առթիւ, յատկանշուեցաւ պուլկար նշանաւոր բանաստեղծ եւ հայերու բարեկամ Եւաթորովի յուշարձանին բացումով, զոր արժանավայել կերպով կատարեց Գարեգին Նժդեհ:

Երկրորդը՝ 1939ի ճորդ ընդհանուր բանակումը, Փլովտիվի մօտակայ Տետեւօ գիւղին Սվեթիվլաս վայրը: Բանակումին մասնակցեցան Փլովտիվէն, Սլիվէնէն, Փազարձիքէն, Ռուսէէն եւ Պուրկասէն սկստուներ: Ցաւօք սրտի այս բանակումը եղաւ Պուլկարիոյ շրջանին վերջին բանակումը, որովհետեւ անոր փակումէն միայն երեք օր

ետք սկսաւ երկրորդ համաշխարհային պատերազմը:

Երրորդը, իբրեւ ատենապետ իմ կազմակերպած բանակումներուս վերջինը, տեղի ունեցաւ 1999ին, Ռիլա լեռան Շումնաթիցա կոչուած վայրը, 250 մասնակիցներով: Փակման հանդիսութեան ներկայ էին մասնակից քաղաքներէն 200 հոգիէ աւելի հիւրեր, որոնք չափազանց գոհ մնացին այս առթիւ բծախնդրօրէն պատրաստուած ու ներկայացուած յայտագիրէն: Պարծանքով կ'եզրակացնեմ, որ Պուլկարիոյ մէջ միայն Հ.Մ.Ը.Մ.ը կրցաւ «Լեռան կատարը» հաւաքել աւելի քան 450 հայեր:

Տասը տարի շարունակ ատենապետն էի Հ.Մ.Ը.Մ.ի Սոֆիայի մասնաճիւղին եւ միեւնոյն ժամանակ, Շրջանային Վարչութեան չգոյութեան, կը համադրէի Պուլկարիոյ 7 մասնաճիւղերու գործունէութիւնը եւ կապը կը պահէի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հետ:

Կը գնահատեմ, որ կեանքս ապարդիւն չէ անցած, որովհետեւ պատիւ ունեցած եմ մասնակցելու Պատգամաւորական երկու Ընդհանուր ժողովներու՝ 1995ին եւ 1999ին, ինչպէս նաեւ միջ-դիւրանական երկու խորհրդաժողովներու՝ 1997 եւ 2001:

Յուցաբերած օգտակար եւ արդիւ-



նաւոր գործունէութեանս համար, Հ.Մ.Ը.Մ.ի 75ամեակին արժանացայ «Ծառայութեան» շքանշանի, իսկ 1999ի Պատգամաւորական ժողովին, Կեդրոնական Վարչութեան որոշումով պարգեւատրուեցայ «Արտակարգ պատանշան»ով:

Յենելով անցուցած կեանքիս փորձառութեան վրայ, կը թելադրեմ մեր կազմակերպութիւններուն զարկ տալ բազմապիսի շրջագայութիւններու: Այդ տեսակ պտոյտները առիթ կ'ըլլան հրճուելու, ի տես բնութեան հրաշալիքներուն՝ լեռներ ու ծովեր, դաշտ ու ծաղիկ, անտառ ու գետակ, գազաթներ ու քարայրներ, միջատ ու կենդանի, վայրի ու ընտանի: Իսկական հանգիստ եւ առողջաբեր օդափոխութիւն:

Միբելի ու թանկագին միութեանս կը մաղթեմ յաջողութիւն իր ազգօգուտ գործունէութեան, որուն ամեակները պիտի սատարեն հայապահպանման եւ հայ ժողովուրդի սքանչելի վերելքին:



ՓՇՐԱՆՔՆԵՐ ՀԱՎԷՊԻ «ԱՌԱՋԻՆ ՏՂՈՑ» ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Գրեթե ամեն ինչ ըսուած ու գրուած է Հ.Ս.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի ծննդոցին մասին: Դժուար թէ կարելի ըլլայ մեծ բան աւելցնել ըսուածներուն ու գրուածներուն վրայ: Սակայն, կարգ մը մանրամասնութիւններ, փշրանքներ նկատուած տեղեկութիւններ կրնան կարգ մը նորութիւններ բերել, որոշ դէմքեր կամ դէպքեր յաւելեալ լուսարձակի տակ առնել:

Ստորեւ տրուած գրութիւնը յուշերու նման փշրանք մըն է, որ կը պատկանի հալէպահայ վաստակաւոր Հ.Ս.Ը.Մ.ական եղբ. Յարութիւն Տէրվիշեանի (1913- 1994): Գրութիւնը, ձեռագիր անտիպ վիճակով, «Մարզիկ»-ին տրամադրուած է եղբայր Տէրվիշեանի զակիմ թորոնթորցակ եղբ. Չարեհ Տէրվիշեանի կողմէ:


Եղբ. Տէրվիշեան իր հօրը ձեռագիրին կցած է հետեւեալ ծանօթութիւնը.-

«Քանի մը օր առաջ պատահմամբ գտայ ողբացեալ հօրս՝ Յարութիւն Տէրվիշեանի երկու էջ-նոց մէկ ձեռագիրը: Կենթադրեմ, որ ան Հ.Ս.Ը.Մ.ի Հալէպի պատմութեան ընդմէջէն կը փորձէր իր կենսագրականը գրել:

«Օրին նկատած էի, որ ան կը փորձէր գրել իրենց՝ Հալէպի «առաջին տղոց» պատմութիւնը, սակայն 1984ին, ուղեղային կաթուած մը անշարժացուց զինք: Աւա՛ղ, շատ բաներ կրնար գրել Հ.Ս.Ը.Մ.ի Հալէպի կեանքէն, բայց ծակատագիրը չարտօնեց իրեն...»

«Հայրս նախակրթարանի երկրորդ դասարանը աւարտելէ ետք, նետուած է գործի ասպարէզ. Հ.Ս.Ը.Մ.ը եղած է դպրոցը, ուր սորված է հայերէն գրել եւ խօսիլ: Ծնողքը՝ մեծ հայրս ու մեծ մայրս թրքախօս էին եւ, բացի շարականներէ, հայերէն բառ մը իսկ չէին գիտեր...»

«Յարութիւն Տէրվիշեան եղած է Արեւիլա: Իր գայլիկներէն շատեր մինչեւ օրս կը յիշեն զինք»:



ալէպի Հ.Ս.Ը.Մ.ը հիմնուեցաւ 17 Նոյեմբեր 1925ին, Հայկազեան մանկապարտէզի սրահին մէջ, ներկայութեամբ 48 անդամներու: Առաջին վարչականները եղան հետեւեալ եղբայրները.- Տիգրան Աշճեան, Լեւոն Աբգարեան, Միհրան Կարապետեան, Լուստեր Մասպանաճեան, Սահակ Խաչատուրեան, Լեւոն Պապիկեան եւ Շաւարշ Պէքեարեան: Ես ներկայ էի այդ ժողովին:

Առաջին մրցում. Հ.Ս.Ը.Մ. Պէյրուսթ եւ Հալէպ, Հալէպի «Պաղտատ» կայարանի դաշտին վրայ, 1927: Իրաւարար՝ Գեղամ Աբիլեան:

Առաջին մարզական դաշտը եղաւ Սիւլէմանիէ, «Տօ Րէ Մի»-ին քովի դաշտը, 1928ին: Հոն, ես եւ ընկերներս մարզանքի կ'երթայինք: Մարզանքի պատասխանատուն էր խմբապետ Լեւոն Աբգարեան փոխ խմբապետներ՝ Եզեկէլ Մինասեան եւ Բարբէն Վահրամեան:

Ես սկսուտ եղայ երաշխաւորութեամբ Տիգրան Աշճեանի եւ Սահակ Խաչատուրեանի: Մեր դասախօսները եղան Լուստեր Մասպանաճեան, ղեղադործ Սարգիս Սէլեան եւ Կոպեռնիկ Մանսուրեան:

Հ.Ս.Ը.Մ.ի երդուեալ առաջին սկսուածները եղան հետեւեալները.-

Նշան Թիւսիւղեան, Տոքթ. Գասպար Գասպարեան, Յակոբ Զրճեան, Ալիշան Աճէմեան, Յակոբ Աճէմեան, Յարութիւն Տէրվիշեան, Անդրանիկ Սթամպուլեան, Յովհաննէս Առաքելեան, Թաղէոս Թիւթէլեան, Ներսէս Թօփալեան,

Սարգիս Խարարճեան եւ Օննիկ Մելիքսէթեան:

Մեր առաջին երդումը կատարեցինք Հայկազեան սրահին մէջ, հովանաւորութեամբ՝ Առաջնորդ Արտաւազդ Սըրբազանին: Ան օրհնեց նորակազմ սկսուածներու դրօշակը: Մեր խումբին խմբապետն էր Լուստեր Մասպանաճեան, փոխ խմբապետ՝ Նշան Թիւսիւղեան:

Մեր առաջին բանակումը դէպի Պիթիաս 1928ին, երկրորդը՝ 1929ին:

Ես ֆոխ Առաջնորդ եղայ 1929ին, Առաջնորդ՝ 1932ին, Շրջանային խմբապետ՝ Սիմոն Թերճանեանի ձեռքով, Վարիչ՝ միութեան ատենապետ Լուստեր Մասպանաճեանի ձեռքով: Դաշտի վրայ եղայ պատասխանատու երէջ խումբերու ու յետոյ Սկսուտ Խորհուրդի գանձապահ՝ մինչեւ 1959: Միշտ գանձապահի պաշտօններ ստանձնեցի միջ-մասնաճիւղային մրցումներու՝ 1957-58-59 տարիներուն:

Չարեհ եւ Խորէն Եպիսկոպոսներու Կաթողիկոս օժման, իբր պատգամաւոր մասնակցեցայ երէջ խումբին կողմէ:

Այլ տեղ Յարութիւն Տէրվիշեան կը գրէ հետեւեալը, զոր կ'ամբողջացնէ առաջին խումբին պատմութիւնը. -

Մեր խումբը նախ 9 հոգի էր, յետոյ՝ 12, ապա խումբին թիւը բարձրացաւ մինչեւ 30: Մեր փոխ խմբապետները եղան 1926էն մինչեւ 1928՝ Բարբէն Վահրամեան եւ Եզեկէլ Մինասեան, իսկ խմբապետ՝ Լեւոն Աբգարեան: 1928էն մինչեւ 1933 փոխ խմբապետներ՝ Նշան Թիւսիւղեան եւ Թաղէոս Թիւթէլեան, խմբապետ՝ Լուստեր Մասպանաճեան:

ՄՐՏԻ ԽՕՍՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿՆԵՐՈՒ ԼՈՒԹՆԵՐՈՎ

Ընդառաջելով Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ի 3/78 թուահամար եւ 27 Մայիս 2008 թուակիր դիմումին, այսուկ'արձանագրենք մեր սրտի խօսքը Հայաստանի անկախութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 90ամեակի բարեբաստ կրկնակ առիթներով:

Ըսաներորդ դարու երկրորդ տասնամեակին հայ ժողովուրդը ապրեցաւ համատարած բնաջնջումը իւր արեւմտահայ հատուածին, ողբերգական իրադարձութիւններով առջցուն, որուն զոհ զացին մէկուկէ միլիոն հայու զաւակունք, ինչպէս նաեւ հիմնայատակ կործանեցան մեր շէն ու շէնդող քաղաքներն ու գիւղերը եւ անոնց հետ մեր եկեղեցիները, դպրոցները, արհեստանոցները, ճարտարապետական կոթողները-սքանչելի դարբնոցներ մեր մշակութային արժէքներուն ու սրբութիւններուն:

Պատմութեան մէկ տխուր ու դժոխային պահուն կը թուէր թէ անհորիզոն էր մեր ժողովուրդին ճակատագիրը: Սակայն, քրիստոնէայ ժողովուրդները կը հաւատան հրաշագործութեան՝ հետեւելով իրենց հրաշագործ երկնաւոր վարդապետին, որն ընդմիշտ յոյս ներշնչեց եւ անվախութիւն քարոզեց: Ահա թէ ինչու, որպէս առաջին քրիստոնէայ ժողովուրդներէն մենք մեր հասարակական կեանքը բնորոշեցինք յոյսով, որն «... ոչ երբեք ամաչեցուցանէ» (Հռոմ. Ե. 5) ու քաջալեր եղանք ապաւինելով մեր Տիրոջ խոստումին, թէ ինք արդէն յաղթած է աշխարհին (տե՛ս Յովհ. Ժգ. 33):

Ու պատահեցաւ հրաշքը սպասելի:

Այսպէս է որ հայ ժողովուրդը արձանագրեց զանազան խիզախումներ՝ հիմը դնելով վերածննդեան նոր շրջանի մը, որն ինքզինք դրսեւորեց արդի Հայաստանի պետականութեան հաստատումով 1918ի Մայիսին, եւ ի սփիւռս աշխարհի ցան ու ցրիւ հայկական գաղութներու կազմաւորումով՝ եկեղեցական, ազգային եւ մշակութային բազմաճիւղ բնագաւառներու մէջ:

Հայոցս ծոցէն ծնած սփիւռքեան արժէքներէն մին հանդիսացաւ նաեւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը-Հ.Մ.Ը.Մ.ը, որն այս տարի կ'ամբողջացնէ իր կազմաւորման 90ամեակը:

Այդ խաւարամած օրերուն վստահաբար մխիթա-

րական եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայութիւնը մեր վիրաւոր ժողովուրդին եւ յատկապէս հայ երիտասարդ սերունդին համար: Հ.Մ.Ը.Մ.ի փրկարար ձեռքերուն մէջ հայ երիտասարդն ու երիտասարդուհին, եւ ինչու ոչ զանազան տարիքներ ունեցող անձինք, դաստիարակեցան եւ առողջ նկարագիր մշակեցին, որպէս պիտանի հայու զաւակունք, միշտ հաւատարիմ իրենց նախնեաց ժառանգութեան, միշտ ջերմեռանդ իրենց արդար գալիքին:

Իննսուն տարիներու ազգապահ վաստակի փորձառութեամբ տոգորուն, Հ.Մ.Ը.Մ.ը այսօր իր հայեացքը սեւեռած է ապագայ ազգօգուտ իրագործումներով իւր հայրենանուէր գործունէութիւնը շարունակելու վճռակամութեամբ, նոր լաւատեսութեամբ եւ նորանոր ոգեշնչումով, ի խնդիր հայ ժողովուրդի գոյատեւման եւ իրաւունքներու ձեռք բերման պայքարի՝ մերազն երիտասարդութեան ճանապարհով եւս:

Հ.Մ.Ը.Մ.ի անունը արժանաւորութեամբ արձանագրուած է մեր ժողովուրդի պատմութեան գրքին մէջ:

Մաղթելով Հ.Մ.Ը.Մ.ին 90ամեակներու անվերջ շարան մը, վիրաւոր Պաղտատէն կ'աղօթենք առ Աստուած, որ իր հովանիին ներքոյ պահէ ու պահպանէ անխտիր ազգային մեր բոլոր հաստատութիւնները, որոնք նուիրուած են մեր ժողովուրդի սպասաւորութեան ազնիւ նկարագրով ու շինարար միջոցառումներով:

Թող հազար շեփոր հնչեցնեն գովքը 1918ի Հայաստանի Առաջին Հանրապետութեան, որն իր օրերուն եղաւ մեր յաւիտենական հայրենիքի դրսեւորումներէն մին: Խունկ եւ աղօթք ազատ ու անկախ Հայաստանի կերտիչներու անմեռ յիշատակին:

Տիրաւանդ օրհնութիւն մեր օրերու հայրենիքին ու հայ ժողովուրդին ամենուր, ամէն պահ:

Լաւատես դէպի մեր ժողովուրդի վաղուան օրը եւ արեւի լուսագարդ ապագան, կը մնամք

Աղօթարար՝

ԱՐԱԳ ԱՐԸ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ
Առաջնորդ Իրացի Հայոց

90 ԱՄԵԱԿ Հ.Մ.Ը.Մ.Ի




Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Հ.Մ.Ը.Մ.ի առաջին Ծրագիր - Կանոնագիրեն (1919) էջ մը:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ս Բ Ա ՈՒ Դ Ն Ե Ր ՈՒ

Յ Ա Յ Մ Ա Գ Ի Ր - Ժ Ր Ա Գ Ի Ր



Ա. Ն Պ Ա Տ Ա Կ

1. ՀԱՅ ՍԲԱՈՒԴՆԵՐՈՒ ձեռնարկին նպատակն է պզտիկ հայորդիներուն ֆիզիքական, խնացական եւ բարոյական կարողութիւնները զարգացնել, հոգեբանական պահանջներու համաձայն՝ եւ ներդաշնակօրէն :

Սքառուղական հրահանգները կը յարդարեն տղուն մարմինը եւ նկարագիրը, եւ զայն կը պատրաստեն կասարեղու իր բոլոր պարսականութիւնները :

Բ. Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Թ Ի Ւ Ն

2. Ա. ՍԲԱՈՒԴՆԵՐՈՒ ՇԱՐԲԵՐԸ, զոր կը կազմեն.

1. Սֆառուղներ .

2. Սֆառուղական խմբակներ .

3. Սֆառուղական խումբեր :

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԷԶԵՐԸ

Վ. Աւագեան
ՊԷՅՐՈՒԹ

20րդ դարը կը բացուի մարզանքի եւ սկաուտական շարժումի հանդէպ հայ ժողովրդական խաւերու մեծ խանդավառութեամբ:

19րդ դարու հայ քաղաքական մտքի եւ մշակոյթի զարթօնքը մէկ կողմէ եւ 1908ի Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը միւս կողմէ՝ հայութեան արեւմտահայ զանգուածին համար մեծ կարելիութիւններ կը ստեղծեն ազատօրէն գործելու: Այս մէկը լայն հորիզոններ կը բանայ նոր սերունդի հայաճուղի դաստիարակներուն համար, որոնք եւրոպական համալսարաններէ վկայուած եւ միջազգային սկաուտական նորաստեղծ շարժումով խանդավառուած, կը վերադառնան Պոլիս, նուիրուելու համար հայ երիտասարդութեան զարգացման գործին:

Այդ սերունդին փայլուն ներկայացուցիչները կը հանդիսանան Շաւարշ Բրիսեան, Յովհաննէս Յինդիեան, Գրիգոր Յակոբեան, Վահան Չերազ, Գրիգոր Մերճանոֆ, Եգնիկ Քաջունի եւ ուրիշներ:

20րդ դարու այս առաջին տասը տարիներուն, Պոլսոյ եւ շրջակայքին մէջ կը գործեն բազմատասնեակ մարզական ակումբներ, շարժումներ եւ դպրոցներ, որոնց ցոյց տուած հետաքրքրութիւնը դէպի մարզանքը՝ յաջորդող տարիներուն իր բարոյական ուժը կը ստանայ Շաւարշ Բրիսեանի «Մարմնամարզ» ամսաթերթէն:

1910-1920

Թերթի մը ծնունդը, ժողովուրդի մը նահատակութիւնը եւ միութեան մը ստեղծումը՝ «Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար», 20րդ դարու երկրորդ տասնամեակին կու տան պատմական եւ անկլինադարձային տարիներու բնորոշումը:

Տասնամեակին սկիզբը, Փետրուար 1911ին, ծանօթ մարզիկ եւ մարզիչ Շաւարշ Քրիսեան կը հիմնէ իր «Մարմնամարզ» ամսաթերթը, որուն էջերէն ան ջատագովը կը հանդիսանայ հայկական ողիմպիական խաղեր կազմակերպելու եւ մարզական բոլոր ակումբներն ու խումբերը մէկ ընդհանուր դրօշի տակ համախմբելու իր վաղեմի երազին:

Ողիմպիական խաղերը իրականութիւն կը դառնան անմիջապէս, սակայն հայ մարզական բոլոր ակումբներն ու խումբերը մէկ ընդհանուր դրօշի տակ համախմբելու անոր երազը ձեւ ու մարմին կը ստանայ 1918ին միայն, իր եղբրական նահատակութենէն երեք տարի ետք:

1 Մայիս 1911ին տեղի կ'ունենան հայկական առաջին ողիմպիական խաղերը: Երկրորդը՝ 20 Մայիս 1912ին: Երրորդը՝ 16 Յունիս 1913ին, նախագահութեամբ հայ երգի անմահ վարպետ՝ Կոմիտաս Վարդապետի, որ կը կատարէ նաեւ խաղերուն մրցանակաբաշխումը: Չորրորդ ողիմպիականը՝ Օգոստոս 1914ին, կանգ կ'առնէ Առաջին Աշխարհամարտին պատճառով:

Վրայ կը հասնի հայկական Եղեռնը եւ Պոլսոյ հայ ընտրանիին շարքին Շաւարշ Քրիսեան եւս 23 Ապրիլ 1915ի գիշերը կ'առաջնորդուի Այաշի բանտը:

Եղեռնի ցաւէն ու տառապանքէն կը ծնի մանուկ մը: Զայն կը մկրտեն ջարդին արիւնով եւ կը կոչեն Հ.Մ.Լ.Մ.: Իսկ անոր պարտականութիւն կու տան ծառայել հայ ժողովուրդին:

Հ.Մ.Լ.Մ. կը հիմնուի Նոյեմբեր 1918ին, մարմնակրթական եւ բարոյական դաստիարակութեամբ Եղեռնի խլեակներէն առողջ ու ամուր նկարագրիրով ապագայ հայ մարդը պատրաստելու նպատակով:

Հ.Մ.Լ.Մ. իր մասնակցութիւնը կը բերէ Հայաստանի անկախութեան ամրապնդման աշխատանքներուն: Կը ստանձնէ որբախնամի պարտականութիւն, կ'օժանդակէ սովահար ու ցրտահար տարագիրներու, կը մասնակցի ազգային նուիրահաւաքի եւ թեւ ու թիկունք կը կանգնի հայկական բանակին: 1919ին մաս կը կազմէ Պոլսոյ մէջ հիմնուած Հայրենիքի Օգնութեան Մարմինին (ՀՕՄ):

18 Ապրիլ 1920ին, առաջին անգամ ըլլալով, Հ.Մ.Լ.Մ. անկախ Հայաստանի մէջ կը նշէ «Հայ Սկսուտի Օր»ը:

Պոլսոյ մէջ կը վերակենդանանան ողիմպիական խաղերը: Հինգերորդ խաղերը տեղի կ'ունենան 31 Օգոստոս 1919ին, հովանաւորութեամբ՝ Զաւէն Պատրիարքին: Վեցերորդը՝ 5 Սեպտեմբեր 1920ին, նախագահութեամբ՝ անկախ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ՝ Թահթաճեանի: Եօթներորդ եւ վերջին ողիմպիական խաղերը կը կատարուին 2 Նոյեմբեր 1921ին:

Պոլիսէն եւ Երեւանէն հեռու, Նեղոսի չքնաղ ափին, Շաւարշ Քրիսեանի քաջալերանքով, 1912ի ամրան, Աղեքսանդրիոյ մէջ կը հիմնուի «Կամք» մարզական ակումբը, որ

Հ.Մ.Լ.Մ.ի համագաղութային կառույցի կազմութենէն ետք, իբր մեկուսի շրջան մաս կը կազմէ միութեան: «Կամք»ին հետեւողութեամբ, 1914ին Գահիրէի մէջ կը հիմնուի «Արարատ Մարմնամարզական Ակումբ»ը, ներկայի Հ.Մ.Լ.Մ. «Արարատ»ը:

1920-1930

Հ.Մ.Լ.Մ. կը լուծուի Թուրքիոյ մէջ, Հ.Մ.Լ.Մ. կը վերածընդ Սփիւռքի մէջ:

1918էն մինչեւ 1922 Հ.Մ.Լ.Մ. կը գործէ Պոլսոյ եւ գաւառներու մէջ միայն: 16 Սեպտեմբեր 1922ին, օրուան Կեդրոնական Վարչութիւնը քաղաքական ծանօթ պայմաններու բերումով պաշտօնապէս լուծուած կը յայտարարէ Հ.Մ.Լ.Մ.ը Թուրքիոյ մէջ: Ու եթէ Հ.Մ.Լ.Մ. տեղ մը կը լուծուի, այլուր ան կը վերածնի բազմապատկուելով:

1920-1930 տասնամեակը ականատես կը դառնայ Հ.Մ.Լ.Մ.ի գաղափարական խօսքին ու գործին հրաշալի տարածման՝ Միջին Արեւելքէն Եւրոպա, Հիւսիսային, Կեդրոնական եւ Հարաւային Ամերիկաներ: Հ.Մ.Լ.Մ.ական շարժումը վարակիչ կը դառնայ գաղութէ գաղութ: Իրարու ետեւէ կը ստեղծուին աւելի քան 50 մասնաճիւղեր, որոնցմէ շատեր կը գոյատեւեն մինչեւ օրս, մինչ ուրիշներ գաղութային թէ շրջանային զանազան պայմաններու բերումով՝ կար-



Հայկ Թիգմէճեան եւ Տիգրան Խոյեան, Պոլիս:



Թիֆլիսի մէջ կը զնդակահարուի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին սերունդի նուիրեալներէն Վահան Չերազ:

1930-1940

Տեղատուութիւն՝ Ամերիկայի մէջ, մակընթացութիւն՝ Միջին Արեւելքի մէջ.

Մինչ Ամերիկան հարուածող տնտեսական սուր տագնապը կ'անդամալուծէ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղերը, Միջին Արեւելքի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի Պատգամաւորական առաջին երկու ժողովները (Պէյրուսթ - 1929, 1931) նոր թափ եւ մղում կու տան միութեան Միջին Արեւելեան գործունէութեան:

Պէյրուսթի, Զահլէի, Հալէպի եւ Դամասկոսի մասնաճիւղերուն ստեղծած խանդավառութիւնը կ'ոգեւորէ բոլորը: Լիբանանի, Սուրիոյ, Յորդանանի եւ Պաղեստինի բազմաթիւ քաղաքներէն խնդրանքներ կը հասնին իրենց շրջաններուն մէջ եւս Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր յառաջացնելու:

Հայրենագուրկ երիտասարդութեան ցեղապահպանումի բնագոյն թելադրուած այդ կոչերը անարձագանգ չեն մնար: Միայն Սուրիոյ մէջ կը ստեղծուին 11 նոր մասնաճիւղեր: Հ.Մ.Ը.Մ. իր արմատները կը ծլարձակէ նաեւ Պաղեստինի եւ Յորդանանի մէջ:

Մասնաճիւղերու հիմնադրման աշխարհագրական պատ-

ճատեւ շրջան մը գործելէ ետք կը դադրին, քանի մը տասնամեակ ետք դարձեալ վերականգնելու համար:

Մասնաճիւղերու հիմնադրման աշխարհագրական պատկերը այս տասնամեակին կը ներկայանայ հետեւեալ ձեւով: Լիբանան-Պէյրուսթ (24), Զահլէ (27), Թրիփոլի (29), Պալպէք (30).

Սուրիա-Հալէպ (25), Դամասկոս (25), Լաթաքիա (26), Հոմս (30).

Կիպրոս-Լառնաքա (27).

Յունաստան - Ֆիքս, Սինկրու, Գոքինիա, Լիփագոմ (24), Միտիլի, Տէտէ Աղաճ (27), Սելանիկ (28), Գաւալ (29).

Պուլկարիա - Փլովտիւ, Ռուսճուք (21), Սոֆիա (22), Սլիվէն (23), Թաթար Պազարճըք, Սթարա Զակորա, Պուրկաս (24), Շումէն, Խասքուօ (25), Այթոս 30).

Ռումանիա-Պուրէշ, Սիլիստրէ, Գոսթանցա, Պազարճըք (22), Կալաց Սթրուկա, Կեռլա, Քիշնեւ (25).

Կեդրոնական Եւրոպա-Փարիզ (20), Լիոն, Մարսէյ եւ իրենց շրջակայքը (24), Վարանս, Պրիւքսէլ, Վիեննա (25).

Ամերիկաներ-Նիւ Եորք (21), Ֆիլատելֆիա (22), Պոսթըն (22), Փրովիտընս (23), Մեքսիքո (25), Պուէնտո Ալբէս, Մոնթէվիտէօ (27):

Հ.Մ.Ը.Մ.ական գործին կ'ընկերանայ Հ.Մ.Ը.Մ.ական խօսքին տարածումը: Կը ծաղկի միութենական մամուլը: Ճրանասայի մէջ՝ «Հայ Սկսուտ» եւ «Հայ Արի», Պուրէշի մէջ՝ «Արի», Սոֆիա՝ «Մարգիկ» եւ «Հայ Սկսուտ», Յունաստան՝ «Նոր Սերունդ», Եգիպտոս՝ «Կաթակ»:

«Երկաթէ Վարագոյր»էն ներս, 1927ին,



1946. Յ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսթի պատրէպիլի աղջկանց խումբը:

կերը այս տասնամեակին կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Սուրիա-Գամիշլի (31), Թէլ Ապիատ (32), Հասիչէ, Ճարապլուս, Ազէզ (34), Արաբ Բունար (35), Տէրպէսիէ (36), Այն Տիուար, Տէր Զօր, Ռաս Իւլ Այն (37), Տէրիք (38).

Լիբանան-Պուրճ Համուտ, Ռայաք (35).
Պաղեստին-Երուսաղէմ (35), Հայֆա, Եաֆա (37).

Յորդանան-Ամման (37).
Յունաստան-Ամարուս, Թամպուրիա, Իրաքլիոնի (31).

Տասնամեակին կարեւորագոյն երեւոյթը ամէն Ջատկին Հալէպի մէջ կազմակերպուող միջ-մասնաճիւղային հանդիպումներն են, որոնք վայելքի բացառիկ պահեր կը շնորհեն Հալէպէն անցնող ամէն հայու: 1927ին, քանի մը հարիւր հանդիսականներու ներկայութեան, Հալէպ-Պէյրուսի ֆուլթայոյի հանդիպումով մը սկսած այդ խաղերը տարիներու ընթացքին կը վերածուին մարզական փառատօններու, որոնց ամէն անգամ ներկայ կ'ըլլան շուրջ քառասուն հազար հայեր եւ հիւրաբար քաղաքը այցելող մտաւորականներ ու հանրային գործիչներ, ինչպէս՝ Յակոբ Օշական, Շաւարշ Միսաքեան, Սիմոն Վրացեան եւ Դրօ:

Մարզական այդ շքեղ հանդիսութիւններուն յառաջացուցած անչափելի խանդավառութիւնը կը դառնայ վարակիչ, կը տարածուի Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի սահմաններէն անդին, հասնելու համար Յունաստանի, Կիպրոսի, Եգիպտոսի եւ մինչեւ հեռաւոր Պարսկաստանի քոյր կազմակերպութեան տղոց հոգիները, որոնք չեն ուզեր անհաղորդ մնալ այս շրջանի իրենց եղբայրներու ապրումներուն եւ ի գին նիւթական մեծ գոհողութիւններու՝ ֆուլթայոյի եւ պասքեթպոյի իրենց խումբերով կու գան տօնակատարութիւններուն փայլքը աւելցնելու:

Երեսուներկու տարիներ կազմակերպուած միջ-մասնաճիւղային եռօրեայ հանդիպումները, բացի երկու անգամէ, տեւաբար տեղի կ'ունենան Հալէպի մէջ, Ջատկուան Շաբաթ, Կիրակի եւ Երկուշաբթի օրերը:

Այդ հանդիպումներէն 35րդը եւ վերջինը տեղի կ'ունենայ 1972ին, Պէյրուսի մէջ, լիբանանեան պետական ակադեմիին ներկայութեամբ:

Մինչ այդ, Հերակլէսի երկրին մէջ, առ ի գնահատանք յունական մարզաշխարհին իր մատուցած ծառայութիւններուն, եղբւրք Արամ Առաքելեան յոյն մարզական շրջանակներուն որոշումով, 1936ին կը փոխադրէ Պերլինի միջազգային ողիմպիականներուն ջահը, այդ ջահը փոխադրող միակ հայը հանդիսանալով պատմութեան մէջ:



Ամերիկայի մասնաճիւղերը, համայնավարութեան գործը թափը կը հարուածէ Արեւելեան Եւրոպայի մասնաճիւղերը, իսկ ներգաղթի շարժումը կը ցնցէ Միջին Արեւելքի մասնաճիւղերը:

Հ.Մ.Ը.Մ. իր հիմնադրութեան 25ամեակը կը տօնէ աշխարհաքանդ պատերազմի մէջ: Քաղաքական ու տնտեսական ահաւոր պայմանները հիմնովին կը տկարացնեն եւ կ'անշքացնեն Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Եւրոպայի եւ Ամերիկայի մասնաճիւղերը:

Արեւելեան Եւրոպայի տարածքին, Ռումանիոյ եւ Պուլկարիոյ մէջ յատկապէս, Ստալինեան համայնավարութեան տեղույն վարիչները անհաշտ պայքար կը շղթայագրեմ են ոչ-համայնավար շարժումներու եւ միութիւններու դէմ: Կը հալածուին եւ կ'աքսորուին հայ ազգային երեւելի դէմքեր, որոնց շարքին՝ Հ.Մ.Ը.Մ.ականներ: Կը փակուին Հ.Մ.Ը.Մ.ի Ռումանիոյ եւ Պուլկարիոյ 18 մասնաճիւղերը:

Պայքարի եւ տագնապի ընդհանուր միջոցառումներու ընթացքում կ'ամբողջանայ Միջին Արեւելքի տիտուր պատկերին ներկայացումով: Սուրիա, Լիբանան, Յունաստան 1940ականներու երկրորդ կիսուն կը փոթորկին ներգաղթի ծանօթ շարժումով: «Հրաժարական»ներու, մեկնումներու եւ ներազգային սուր պառակտումներու պատճառով Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր կ'ենթարկուին որոշ ցնցումներու, որոնց յաղթահարումով՝ շուտով անոնք կը վերագտնեն իրենց երբեմնի աշխոյժ գործունէութիւնն ու փառքի օրերը:

Այս տասնամեակը կը նշէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական ֆուլթայոյի տիրապետութիւնը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի եւ Պէյրուսի ֆուլթայոյի խումբերը յաճախ կը տիրանան իրենց երկրի ֆուլթայոյի ախոյեանութիւններուն, մարզական իրագործումներու գեղեցիկ նախընթացներ ստեղծելով: Հալէպի մէջ, 1947ին, Դրոյի ներկայութեամբ պաշտօնական բացումը կը կատարուի Հ.Մ.Ը.Մ.ի նշանաւոր «Նաւասարդ» դաշտին:

Մինչ այդ, մասնաճիւղերու աշխատանքները կը շարունակուին պայմաններու համեմատ: Կազմալոյժ մասնաճիւղերու տեղ կը հիմնուին նորեր, առաւելաբար՝ Միջին Արեւելքի մէջ:

1940-1950 Տագնապալի, տխուր տասնամեակ մը Հ.Մ.Ը.Մ.ի բովանդակ ընտանիքին համար: Բ. Աշխարհամարտը կը ջլատէ Արեւմտեան Եւրոպայի եւ



Հ.Մ.Ը.Մ.ական ֆուտպոլի ոսկեայ տարիներու աստղեր:

Մասնաճիւղերու հիմնադրման աշխարհագրական պատկերը այս տասնամեակին կը ներկայանայ հետեւեալ ձեւով: Սուրիա- Թէլ Պրաք (45), Այն Արուս (47), Քեսապ (48), Ռաքքա (50).

Լիբանան- Շիբորա (41), Այնճար (48), Հատէթ (49), Ճիւնի (50).

Իրաք- Պաղտատ (49).

Յունաստան- Նէա Չմիուսի, Աթէնք, Գարէա-Քեսարիա-նի (50):

1950-1960

Աշխարհ կը փակէ Բ. Աշխարհամարտի իր մռայլ էջը, իսկ Հ.Մ.Ը.Մ. կը բանայ իր պատմութեան լուսաւոր էջը:

Միջին Արեւելքէն մինչեւ Ամերիկաներ, Գանատա եւ Ֆրանսա, Հ.Մ.Ը.Մ. կը բոլորէ կազմակերպական վերականգնումի եւ վերանորոգումի աշխոյժ տասնամեակ մը: Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան ղեկավարութեամբ, գործունէութեան բեղուն շրջան մը կ'ունենան յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի մասնաճիւղերը:

50ական տարիները կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղին ոսկեայ տասնամեակը Լիբանանի մարզական կեանքին մէջ:

Մասնաճիւղին ֆուտպոլի խումբը կը տիրանայ Լիբանանի ախոյեանութեան (51, 55) եւ բաժակին (52): Պաքեթպոլի տղոց խումբը կը հանդիսանայ առաջին (50), իսկ աղջիկները իրենց բացարձակ տիրապետութիւնը կը հաստատեն յաջորդական 6 տարիներ (51-56): Իրենց փառքի օրերը կ'ապրին նաեւ մասնաճիւղին հեծելարշաւի եւ փինկ-փոնկի խումբերը: Նալչայեան եւ Ծատուրեան եղբայրներ Լիբանանի հեծելարշաւի ախոյեանութիւնը կը խլեն 50ին, 55ին եւ 58ին: Նոյն տարիներուն, Վահագն Մեսրոպեան եւ Նազիկ Յովաննէսեան բազմիցս իրենց անունները կ'արձանագրեն Լիբանանի փինկ-փոնկի ախոյեանութիւններու ոսկեմատեանին մէջ:


Միջին Արեւելքէն դուրս, առաջին լուրջ փորձերը կը կատարուին Հ.Մ.Ը.Մ.ի Ամերիկայի մասնաճիւղերու վերընձիւղման: 1951ին, Քերոբ Առաքելեանի նախաձեռնութեամբ կը հիմնուի «Հայ Մարմնակրթասիրաց Միութիւն»ը, որուն գլխաւոր առաջադրանքը կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի ծանօթացումը Ամերիկայի հայաշատ քաղաքներուն մէջ:

1955ին, միութիւնը 2000 ամերիկեան տոլարով կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի ակումբին եւ դաշտին գնման ծախսերուն:

Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան շուրջ ստեղծուած խանդավառութիւնը կը համակէ նաեւ Գանատայի նորակազմ հայ գաղութը, որ 1958ին Մոնթրէալի մէջ կը հիմնէ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղը:

Նոյն շրջանին, բազմաթիւ ճիւղեր ի գործ կը դրուին վերականգնելու համար նախապատերազմեան Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ի 43 մասնաճիւղերը: Դժբախտաբար, իրենց բնականոն գործունէութեան կը վերսկսին փոքր թիւով մասնաճիւղեր միայն: Ստուար թիւ մը կ'ունենայ անուանական գոյութիւն, իսկ կարեւոր թիւ մըն ալ կը վերանուանուի այլ անուններով, առանց իրարու կամ կեղերոնին հետ կապ ունենալու:

Այս տասնամեակը կը նշէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Պարսկաստանի մասնաճիւղերուն (Թեհրան, Թաւրիզ, Ռաշտ) վերջնական դադրեցումը 1950ին: Դադրեցման քայլը կը յաջորդէ կրթական նախարարութեան կողմէ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան արտօնագիրը չվերանորոգելու որոշումին: Հետագային,



Հ.Մ.Ը.Մ.ական Շահատակ Սահակ Նալչայան (1889-1961):

արտոնագիրը ձեռք կը ձգուի Հայ Մշակութային Արարատ Կազմակերպության (Հ.Մ.-Ա.Կ.) անունով:

Հ.Մ.Ա.Կ. տասնամեակներ շարունակ բարոյական իր կապը կը պահէ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան հետ, իբրեւ գաղափարակից կազմակերպութիւն: Միութեան մարզական խումբերը իրենց մասնակցութիւնը կը բերեն համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն, իսկ սկաուտները ներկայ կը գտնուին համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներուն եւ խմբապետական համագումարներուն:



Փետրուար 1967. Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան 17րդ Պատգամաւորական Ժողով Պէյրութի մէջ:

1960-1970 Յ.Մ.Ը.Մ. կը ծլարձակի Աւստրալիոյ մէջ, կը վերընծիւղուի Ամերիկայի մէջ եւ կ'արմատանայ Գանատայի մէջ:

Արաբական աշխարհի 60ական տարիներու ծանօթ իրադարձութիւնները մեծաթիւ հայեր կը մղեն Միջին Արեւելքէն գաղթելու Ամերիկա, Աւստրալիա եւ Գանատա: Հետեւաբար, նոր միջավայրերու մէջ կը ստեղծուին նոր մասնաճիւղեր:

1965ին, Միջին Արեւելքէն գաղթած 40 Հ.Մ.Ը.Մ.ականներ կը հիմնեն Հ.Մ.Ը.Մ.ի Միտնիի մասնաճիւղը: Տարի մը ետք կը հիմնուի Մելբուռնի մասնաճիւղը: Զոյգ մասնաճիւղերը 1968ին կը ձեռնարկեն Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ միջ-մասնաճիւղային Նաւասարդեան խաղերուն: Այնուհետեւ այդ խաղերը մեծ խանդավառութեամբ տեղի կ'ունենան իւրաքանչիւր տարուան Դեկտեմբերին:

Աւստրալիոյ օրինակով, Ամերիկայի մէջ եւս, առաւելաբար Միջին Արեւելքէն գաղթած հայերու ջանքերով կը վերընծիւղուին 30ական տարիներէն ի վեր գործունէութենէ դադրած Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը: 1968ին կը հիմնուի Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու նորագոյն շրջանի առաջին մասնաճիւղը Լոս Անճելըսի մէջ:

Գանատայի մէջ, ուր Հ.Մ.Ը.Մ. կը գործէր 1958էն ի վեր, 1969ին կը ստեղծուին երկու նոր մասնաճիւղեր, Համիլթընի եւ Թորոնթոյի մէջ: Մինչ այդ գործող Մոնթրէլի մասնաճիւղը կը միանայ տեղւոյն «Կամք» մարզական միութեան եւ կը կոչուի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»:

Կազմակերպական բազմաթիւ նուաճումներու կողքին, այս տասնամեակը ականատես կ'ըլլայ նաեւ յատկանշական այլ իրագործումի մը: 1967ին Պէյրութի մէջ կը սկսին Լիբանանահայ Երկրորդական Վարժարաններու Աշակերտական Մարզախաղերը (ԼԵՎԱՄ), որոնք կը նպատակադրեն զարկ տալ Հայկական վարժարաններէ ներս մարզանքի եւ մարզախաղերու զարգացման եւ մրցաշարքերու ճամբով իրարու մօտեցնել վարժարաններու աշակերտութիւնը: Հ.Մ.Ը.Մ.ի

Պէյրութի մասնաճիւղին նախաձեռնութեամբ սկսած այդ մարզախաղերը 1969էն ետք կը կազմակերպուին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կողմէ:

ԼԵՎԱՄի ֆութպոլի, պասքեթպոլի, փինկ-փոնկի եւ աթլետիկայի խաղերուն տարեկան կը մասնակցին հազարաւոր աշակերտներ: Անոնցմէ խոստմնայիցները հետագային մաս կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ներկայացուցչական խումբերուն:

1970-1980 Յ.Մ.Ը.Մ. կը վերածուի համազարգացման կազմակերպութեան, կ'օժտուի Կեդրոնական Վարչութեամբ եւ կ'ապրի պատմական կարեւոր անկիւնադարձ:

Կառուցային վերակազմութեան կը յաջորդէ աշխատանքներու ընդհանուր վերակազմակերպումը: Կը գումարուին Պատգամաւորական երկու ժողովներ եւ տեղի կ'ունենան համա-Հ.Մ.Ը.Մ.ական երկու բանակումներ: Միութիւնը կ'օժտուի «Մարզիկ» պաշտօնաթերթով, իսկ շրջանները՝ Շրջանային Վարչութիւններով:

Փետրուար 1973ին, Պէյրութի մէջ գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի 20րդ Շրջանային Ժողովը իր տեսակին մէջ վերջինը կ'ըլլայ: Այդ ժողովին ներկայ 60 պատգամաւորները կարեւորութեամբ կը քննեն նոր օրակարգ մը - Կեդրոնական Վարչութիւն:

Ժողովը լսելէ ետք ընթացաւարտ Շրջանային Վարչութեան զեկուցումը, կ'իւրացնէ Կեդրոնական Վարչութեան վերածուելու անոր առաջարկը եւ առ այդ՝ նախապատրաստական աշխատանքներու համար կը յառաջացնէ եռանդամ մարմին մը: Վերջին անգամ ըլլալով կ'ընտրուի Մերձաւոր Արեւելքի Շրջանային նոր Վարչութիւն, որուն հիմնական պարտականութիւնը կ'ըլլայ, եռանդամ մարմինին հետ, պատրաստել Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը, ընտրելու համար Կեդրոնական Վարչութիւն՝ փոխան Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան:

Տարի մը ետք, Դեկտեմբեր 1974ին, Պէյրութի մէջ կը գու-



Օգոստոս 1978. Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեան «Արժանեաց» շքանշանով կը պարգևատրէ Տիգրան Քինյ. Խոյեանը:

մարուի Միութեան Ա. Ընդհանուր Ժողովը, մասնակցութեամբ՝ 28 մասնաճիւղերու ներկայացուցիչներու: Կը բացուի Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան նորագոյն էջը:

Հինգ տարի ետք, Նիկոսիոյ մէջ տեղի կ'ունենայ Բ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը, այս անգամ՝ մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի 46 մասնաճիւղերու ներկայացուցիչներու:

Նորընտիր առաջին երկու Կեդրոնական Վարչութիւնները կը կազմակերպեն համա-Հ.Մ.Ը.Մ.ական երկու բանակումներ, առաջինը՝ Օգոստոս 1978ին, Քալամոս (Յունաստան), իսկ երկրորդը՝ Օգոստոս 1980ին, Քլամար (Ֆրանսա): Բանակումներուն կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի 12 շրջաններէն յաջորդաբար 226 եւ 291 բանակողներ:

1980ին, Պէյրութի մէջ կը սկսի լոյս տեսնել Կեդրոնական Վարչութեան հրատարակութիւն՝ «Մարգրիկ» ամսաթերթը:

Համազաղուծային մակարդակի այս ընդհանուր զօրաշարժը զգալիօրէն կը վարակէ շրջանները: Կը ստեղծուին Հ.Մ.Ը.Մ.ի 21 նոր մասնաճիւղեր, որոնցմէ 14ը՝ Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ: Ի տես մասնաճիւղերու արագ աճին, կառուցային վերակազմութիւններու կենթարկուին նաեւ շրջանները: Կը յառաջանան չորս նոր Շրջանային Վարչութիւններ. Աւստրալիա (73), Արեւմտեան Միացեալ Նահանգներ (74), Գանատա (75) եւ Արեւելեան Միացեալ Նահանգներ (77):

Միւս կողմէ, 70ականներու երկրորդ կիսուն ճամբայ կ'ելլեն երկու կարեւոր նախաձեռնութիւններ. Նաւասարդեան մարզախաղերը Լոս Անճելըսի մէջ (75) եւ Մայիսեան փառատօնները Լիբանանի մէջ (78): Երկուքն ալ Հ.Մ.Ը.Մ.ական վերանորոգ ուժի եւ

կենսունակութեան արտայայտութիւններ:

Այս տասնամեակին, մասնաճիւղերու հիմնադրման աշխարհագրական պատկերը կը ներկայանայ հետեւեալ ձեւով. -

Արեւմտեան Միացեալ Նահանգներ- Սան Ֆրանսիսքօ (70), Ֆրեզնօ (73), Մոնթէպելլօ (74), Փասատինա (77), Կլէնտէյլ (78), Օրէնճ Քաունթի, Սան Ֆեռնանտօ Հովիտ (79).

Արեւելեան Միացեալ Նահանգներ- Ուաշինկթըն (71), Պոսթըն (73), Նիւ Եորք, Նիւ Ճըրզի, Շիքաօ (75), Տիթթոյթ (76), Ֆիլատելֆիա (78).

Աւստրալիա- Արեւմտեան Սիտնի (73).

Գանատա- Քէմպրիճ (77).

Արժանթին- Գորտոպա (79).

Անգլիա- Լոնտոն (79).

Քուէյթ- Քուէյթ (78).

Լիբանան- Անթիլիաս (70), Ժրտէյտէ (74):

Ասոնց կողքին, կը վերականգնի Հ.Մ.Ը.Մ.ի Փարիզի մասնաճիւղը (77) եւ միութեան համազաղուծային կառոյցին կը միանան Ադեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.- «Կամք»ը եւ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.- «Արարատ» (74):

1980-1990

Հ.Մ.Ը.Մ.ական մը Մոսկուայի ողիմպիականին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի 4 մասնաճիւղ՝ Խորհրդային Հայաստանի մէջ: Երկու բնորոշ իրադարձութիւն տասնամեակի սկիզբէն (80) եւ աւարտէն (90), իրարու կապուած՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բեղուն ձեռնարկներու 10 տարիներով:

Ուշագրաւ այս տասնամեակը կը բացուի մարզական միջազգային մեծագոյն իրադարձութեան Հ.Մ.Ը.Մ.ականի մը մասնակցութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ական հեծելանւորը Այսար



1990. Նաւասարդեան 15րդ մարզախաղերու պատուոյ նախագահներ տէր եւ տիկ. Ատոմ եւ Սելլա Թնճուկեաններ եւ Առաջնորդ Տաթև Եպս. Սարգիսեան մուտք կը գործեն դաշտ:

Սալլում 1980ին Լիբանանը կը ներկայացնէ Մոսկուայի 22րդ ողիմպիականին: Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ականներու մասնակցութիւնը Ողիմպիականներուն կը դառնայ յաճախակի երեւոյթ. Լոս Անճելըսի (84), Սէուլի (88) եւ Պարսելոնայի (92) Ողիմպիականներուն Լիբանանը կը ներկայացնեն Հ.Մ.Ը.Մ.ական հեծելանւորներ Սերոբ Արսլանեան, Հրաչ Ծատուրեան, Ժորժ Հընէյն, Վաչէ Ծատուրեան եւ Արմէն Ասլանեան:

Այս միջոցին, Հ.Մ.Ը.Մ.ական կեանքը կ'եռայ գաղութէ գաղութ կազմակերպուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական

ձեռնարկներով.- Պատգամաւորական 2 Ընդհանուր Ժողով, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 2 բանակում, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 3 մարզախաղեր եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 2 համագումարներ: Կը ստեղծուին 10 նոր մասնաճիւղեր եւ կը վերականգնին երկու ուրիշներ Եւրոպայի եւ Ամերիկեան ցամաքամասի մէջ:

Կազմակերպական ուժաւորման եւ հզօրացման լաւագոյն պատկերները կու տան միութեան Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներուն մասնաճիւղերու ներկայութեան թիւերը: 1983ի Գ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, Աթէնք, կը մասնակցին 55 մասնաճիւղերու ներկայացուցիչներ, իսկ 1987ի Դ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, դարձեալ Աթէնք, կը մասնակցին 57 մասնաճիւղերու ներկայացուցիչներ:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու մասնակցութեան թիւերը խօսուն են իրենց կարգին. 1986ի Գ. Ընդհանուր Բանակումին (Անգլիա) կը մասնակցին 11 չրջաններէ 269 բանակողներ, իսկ 1990ի Դ. Ընդհանուր Բանակումին (Յունաստան) ներկայ կ'ըլլան 14 չրջաններէ 484 բանակողներ:

Սկստական աշխատանքները նոր թափ եւ մղում կը ստանան յատկապէս համա-Հ.Մ.Ը.Մ.ական երկու համագումարներէ ետք: Առաջինը՝ 1982ին, Աթէնք, իսկ երկրորդը՝ 1988ին, Քալիֆորնիա:

Մարզական կեանքը եւս կ'ապրի մեծ աշխուժութիւն: Կը կազմակերպուին համա-Հ.Մ.Ը.Մ.ական 3 մրցաշարքեր՝ 1981ին (Փանատա), 1985ին (Լոս Անճելըս) եւ 1990ին (Վալանս), որոնց իրենց մասնակցութիւնը կը բերեն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին պասքէթպոլի, վոլիպոլի եւ ֆուլթպոլի լաւագոյն խումբերը:

Շրջանային մակարդակի վրայ, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը իր առջեւ կը բանայ աշխատանքի նոր հորիզոններ, երբ կը ձեռնարկէ ՔԱՀԱՄի՝ Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարզախաղերու (84) եւ Համահայկական Խաղերու (88) կազմա-



1996. համա-Յ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Գ. համագումարի մասնակիցներ, Սիտնի:

կերպման: ՔԱՀԱՄը եւ Համահայկական Խաղերը տարեկան դրութեամբ տեղի կ'ունենան մինչեւ օրս: Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու կողքին, Համահայկական Խաղերուն կը մասնակցին չրջանի Հ.Բ.Ը.Մ.ի, Հ.Մ.Մ.ի եւ երիտասարդական այլ կազմակերպութիւններու մարզական խումբերը:

Արեւմտեան չրջանին խանդավառութիւնը կը վարակէ նաեւ Արեւելեանը: 1990ին, Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը կը ձեռնարկէ միջ-մասնաճիւղային իր խաղերուն, որոնք տարեկան կանոնաւորութեամբ տեղի կ'ունենան մինչեւ օրս, ամէն տարի մասնաճիւղի մը հիւրընկալութեամբ:

Հպարտառիթ յաջողութիւններու ոգեւորիչ այս ընդհանուր միջնորոտին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը ծանր հարուած մը կը ստանայ, երբ կը կորսնցնէ իր յաջորդական Կեդրոնական Վարչութիւններու ատենապետ՝ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանը: Յունուար 1986ին, եղբ. Վարդգէս գաղարափակից երկու այլ եղբայրներու՝ Լեւոն Պէրպէրեանի եւ Ներսէս Խիւտափերտեանի հետ կը սպաննուի հայութեան անարգ թշնամիներու կողմէ:

Եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանի նահատակութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը ցնցող միակ դէպքը չ'ըլլար սակայն: Տասնամեակի աւարտին, համայն հայութեան հետ, Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ մասնաճիւղերը կը ցնցուին Արցախի պահանջատիրութեամբ եւ Հայաստանի երկրաշարժով: Աշխարհի չորս ծագերէն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր օգնութեան կը փութան աղէտահար իրենց հայրենակիցներուն:

Հայաստան կը ծանօթանայ Հ.Մ.Ը.Մ.ին, իր իսկական դիմագիծով, հայանուէր ծառայութեամբ: Գրկաբաց կ'ընդունի զայն համայնավար վարչակարգի վերջալոյսի օրերուն: Հ.Մ.Ը.Մ. պանծալի Եռագոյնով մուտք կը գործէ Հայաստան եւ իր առաջին մասնաճիւղը կը հիմնէ մայրաքաղաք Երեւանի մէջ, 2 Դեկտեմբեր 1989ին: Այնուհետեւ կը հիմնուին 3 նոր մասնաճիւղեր՝ Չարնցաւանի, Արովեանի եւ Սիւխանի մէջ:

Այս տասնամեակին, մասնաճիւղերու հիմնադրման աշխարհագրական պատկերը կը ներկայանայ հետեւեալ ձեւով:-

Արեւելեան Միացեալ Նահանգներ- Փրովիտընս, Ֆլորիտա (81), Ալյաբնի (86),

Արեւմտեան Միացեալ Նահանգներ- Սան Տիէկօ (83). Գանատա- Սէնթ Գաթրինգ (86).

Իտալիա- Միլանօ (83).

Աւստրիա- Վիեննա (85).

Աւստրալիա- Արեւելեան Սիտնի (81), «Արարատ» (89).

Լիբանան- ՊաթրուՆ (87 - հետագային կազմալուծ).

Հայաստան- Երեւան (89),

Զարենցաւան, Աբովեան, Սիսիան (90).

Ասոնց կողքին կը վերականգնին Հ.Մ.Ը.Մ.ի Վալանսի (83) եւ Մոնթէվիտոյի (87) մասնաճիւղերը:



1999. Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Պատգամաւորական ժողովի կազմ:

1999-2000

Հ.Մ.Ը.Մ. անկախ Հայաստանի մէջ, Հ.Մ.Ը.Մ.- Հ.Մ.Ս.Կ.

Համաշխարհային Սկաուտական Շարժումին մէջ:

20րդ դարու վերջին տասնամեակը Հ.Մ.Ը.Մ.ի արդի պատմութեան ամէնէն բախտորոշ հանգրուանը կը կազմէ անկասկած: 90ական տարիներուն, տասնամեակներու եւ սերունդներու երազներ կիրականան Հ.Մ.Ը.Մ.ի հայրենի բնօրրան վերադարձով եւ Համաշխարհային Սկաուտական Շարժումին անդամակցութեամբ: Անկախ Հայաստանի մէջ տեղի կ'ունենայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական երկու բանակում: Կը կազմակերպուի Հ.Մ.Ը.Մ.ի 80ամեակի փառաշուք տօնակատարութիւն՝ Երեւանի մէջ, ներկայութեամբ հայ պետական աւագանիին:

Հ.Մ.Ը.Մ. Հայաստանի մէջ կը գործէ 10 մասնաճիւղերով: Կ'ունենայ Արցախեան պայքարի իր նահատակը, յանձին Կեղրոնական Վարչութեան անդամ՝ եղբ. Վարդան Բախշեանի, որ կը գոհուի Հասանապատի ազատագրութեան կռիւներուն, Դեկտեմբեր 1991ին:

1995ին, միութեան Զ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին որոշումով, Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի սկաուտութիւնը կը կոչուի Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւն (Հ.Մ.Ս.Կ.): Յաջորդ տարի, կազմակերպութիւնը Ֆրանսայի «Հայր Արիներ»էն կը ստանձնէ համաշխարհային սկաուտութեան մօտ հայ սկաուտութեան ներկայացուցչութեան ջանք, իսկ 17 Ապրիլ 1997ին պաշտօնապէս մաս կը կազմէ Համաշխարհային Սկաուտական Շարժումին: Աւելի ուշ, Ապրիլ 1998ին, կազմակերպութիւնը կը հանդիսանայ սկաուտական Եւրօ-ասիական բաժանմունքի հիմնադիրներէն: Կազմակերպութեան ատենապետը կ'ընտրուի բաժանմունքի նախագահ:

Հայրենիքէն դուրս, տասնամեակը բեղուն կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի նորանոր իրագործումներով: Կը հիմնուին 17 նոր մասնաճիւղեր, որոնց 7ը՝ Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ: Կը վերականգնի Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ շրջանը, 6 մասնաճիւղերով եւ 500 անդամներով:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկները կը շարունակուին նախորդ տասնամեակներու թափով: Տեղի կ'ունենան համա-Հ.Մ.Ը.Մ.ական երկու մարզախաղեր, 1993ին՝ Գանատա եւ 1997ին՝ Արեւելեան Միացեալ Նահանգներ: Կը կազմակերպուի համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտական Գ. համագումարը, 1996ին՝ Սիտնի:

Այս միջոցին մեծ աճ կ'արձանագրեն մասնաճիւղերու եւ անոնց անդամական շարքերուն թիւերը: Յաջորդական Պատգամաւորական Ընդհանուր Ժողովները եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները այս մէկուն լաւագոյն ապացոյցները կու տան:

1991ի Ե. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, Աթէնք, կը մասնակցին 62 մասնաճիւղերու ներկայացուցիչներ: 1995ին, Զ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, Պէյրութ, մասնաճիւղերուն թիւը 83 է, իսկ չորս տարի ետք, Ի. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին ներկայ կը գտնուին 87 մասնաճիւղեր:

Խրախուսիչ նոյն պատկերը կը կրկնուի նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներուն: 1994ի Ե. ընդհանուր բանակումին, Բիւրական, ներկայ կը գտնուին 14 շրջաններէ 432 բանակողներ: 1998ին, Զ. ընդհանուր բանակումին, Աղաւեսաձոր, 18 շրջաններէ կը մասնակցին 740 բանակողներ:

Շրջանային մակարդակի վրայ, յատկանշական նորութիւններ կ'արձանագրուին Եգիպտոսի եւ Հարաւային Ամերիկայի մէջ:

1994ին կը սկսին եգիպտահայ պասքէթպոլի մրցաշարքերը, որոնց մեծ խանդավառութեամբ կը մասնակցին Աղեք-

սանդերիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամ-ք»ը եւ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ը: Արժանթիւնի մէջ, 1996ին կը վերսկսին երկար ժամանակէ ի վեր ընդհատուած Նաւասարդեան խաղերը, որոնք այնուհետեւ կը վերածուին տարեկան աւանդուիթեան:

Այնուհետեւ, տասնամեակն ու դարը կը փակուին ոչ-Հ.Մ.Ը.Մ.ական նախաձեռնութեամբ մը. համահայկական առաջին մարզախաղերով, որոնք իբրեւ Սփիւռք-Հայրենիք միասնականութեան կամուրջ, նոր էջ մը կը բանան հայ մարզական կեանքի պատմութեան մէջ:

Երկու տարուան նախապատրաստական աշխատանքներուն իր ամբողջական մասնակցութիւնը բերելէ ետք, Հ.Մ.Ը.Մ. մարզախաղերուն կը մասնակցի 250 մարզիկ-մարզիկուհիներով: Խաղերը տեղի կ'ունենան Երեւանի մէջ, 28 Օգոստոսէն 5 Սեպտեմբեր 1999, մասնակցութեամբ՝ աշխարհի 62 քաղաքներէ 1141 մարզիկ-մարզիկուհիներու:

Այս տասնամեակին, Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղերու հիմնադրման աշխարհագրական պատկերը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Հայաստան- Հրազդան, Էջմիածին, «Վարդան Բախշեան», Արարատ-Վետի, Ախթալա, Լոռի (91).

Արցախ- Արարատ (98).

Շուէտ- Սթոքհոլմ (91)

Հոլանտա- Ալմեյո (96).

Արեւմտեան Միացեալ Նահագներ - Սանթա Քլարա, Սոլթ Լէյք (91), Սաութ Պէյ (92), Քրեսենթա Հոլիտ (93), Պըրպէյք (95), Լաս Վեկաս (96), Ֆինիքս (98), Ուոլ նաթ Քրիք (99)

Լիբանան- Պաուչըրիէ (98).

Ասոնց կողքին կը վերականգնին Սուրիոյ Քեսապի մասնաճիւղը (94) եւ Պուկարիոյ 7 մասնաճիւղերը Փլովտիւ, Սոֆիա, Վառնա, Ռուսէ (91), Շուսէն (97), Պուրկաս եւ Տոպրիչ (99)

2000-2008

100 մասնաճիւղերով եւ 26 հազար անդամներով Զ.Մ.Ը.Մ. մեծ յաջողութիւններով ու մարտահրաւերներով կը ներկայանայ իր հիմնադրութեան 90ամեակին:

Յաջողութիւնները կապուած են կազմակերպական իր կառոյցին ընդարձակման եւ շրջանային ձեռնարկներով ամրապնդման: Մարտահրաւերները կը վերաբերին համաշխարհայինացած ընկերութեան մը դիմագրաւած դժուարութիւններուն. կեանքի սրընթաց զարգացում, խելայեղ նիւթապաշտութիւն, ազգային արժէքներէ հեռացում, ինքնութեան կորուստ:



Արաբական աշխարհի ախոյեան Զ.Մ.Ը.Մ.ի փինկ-փոնկի Պէյրուսի աղջկանց խումբը:

Հ.Մ.Ը.Մ. գինաթափ չէ սակայն, կը հիմնէ 6 նոր մասնաճիւղեր: Կը հասնի մինչեւ Զաւախք, Հունգարիա եւ Մոսկուա: Կը վերականգնէ Շուէտի կազմալոյծ մասնաճիւղը եւ իր մեծ ընտանիքին կը վերամիացնէ պայմաններու բերումով միութենէն հեռու մնացած չորս մասնաճիւղեր. Պաղտատ, Մուսուլ, Նիկոսիա եւ Մարսէյ:

Այսպէս, 2000էն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղերու պատկերը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Զաւախք- Ախալքալաք (2001), Ախալցխա (2002).

Հայաստան- Արամուս (2002).

Արեւմտեան Մ. Նահանգներ- Քոլորադո (2002).

Հունգարիա- Պուտափէշտ (2005).

Ռուսիա- Մոսկուա (2008).

Միւս կողմէ, 10 տարուան կազմալոյծ վիճակէ ետք կը վերականգնի Սթոքհոլմի մասնաճիւղը (2005), իսկ միութեան մեծ ընտանիքին կը վերամիանան Պաղտատի (2003), Մուսուլի (2003), Նիկոսիոյ (2003) եւ Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ» մասնաճիւղերը (2007):

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական նախաձեռնութիւնները կը շարունակուին նախկին թափով: Տեղի կ'ունենան համա-Հ.Մ.Ը.Մ.ական երկու մարզախաղեր, 2001ին՝ Լիբանանի մէջ եւ 2005ին՝ Յունաստանի մէջ: Մարզախաղերուն կը հետեւին միջ-դիւնական հանդիպումներ՝ Պէյրութի եւ Աթէնքի մէջ: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մնացեալ նախաձեռնութիւնները կը կատարուին հայրենի հողին վրայ. համա-Հ.Մ.Ը.Մ.ական գոյգ բանակումներ՝ Բիւրականի մէջ (2003, 2007) եւ խմբապետական գոյգ համագումարներ՝ Ծաղկաձորի մէջ (2004, 2008): Հայաստան կը հիւրընկալէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լ. եւ Թ. Պատգամաւորական ժողովները, որոնց յաջորդաբար կը մասնակցին 90 եւ 99 մասնաճիւղեր:

Այս տարիներու նորութիւնը շրջանային նախաձեռնութիւններն են: Եւրոպայի մէջ, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս տարեկան իր մարզական մրցաշարքերը կը վերածէ Եւրոպայի մակարդակով միջ-մասնաճիւղային խաղերու: Լոնտոնի մասնա-



ծրվող կը կազմակերպէ Եւրոպայի մասնաճիւղերու բանակում: Կը յաջորդեն Եւրոպայի մասնաճիւղերու միջ-դիւանական հանդիպումները: Ամերիկեան ցամաքամասին մէջ, Արեւմտեան, Արեւելեան Մ. Նահանգներու եւ Գանատայի Շրջանային Վարչութիւններուն կողմէ առնուած նմանօրինակ քայլերը կը գտնեն մեծ յաջողութիւն: Միջին Արեւելքի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ տեղի կ'ունենան երեք կարեւոր ձեռնարկներ: Միջին Արեւելքի մասնաճիւղերու միջ-դիւանական խորհրդաժողով (Ամման, Սեպտ. 2006), Ֆուլթայոյի եւ պասքեթպոլի միջ-մասնաճիւղային խաղեր (Նիկոսիա, Ապրիլ 2007) եւ խմբապետական Ա. համագումար (Պէյրութ, Նոյեմբեր 2007):

Նոյն տարիներուն, կազմակերպական հզօրացման նպատակով կարեւոր իրագործումներ կ'ըլլան Հ.Մ.Ը.Մ.ական նոր կեդրոններու բացումները: Աւստրալիոյ մէջ, «Անդրանիկ» մասնաճիւղը կ'ունենայ սկաուտական նոր հաւաքավայր՝ Սիտնիի մէջ: Շուէտի մասնաճիւղը բացումը կը կատարէ իր երկրորդ ակումբին՝ Սոֆտերթեթիոյ մէջ, իսկ Կլէնտէյի «Արարատ» մասնաճիւղը կ'օժտուի արդիական իր երկրորդ շէնքով:

Այս միջոցին կը շարունակուին Հ.Մ.Ը.Մ.ական բանակավայրերու եւ մարզադաշտերու կառուցումները, իբրեւ հայակերտման միջնորդող ու միջավայր ստեղծող օժանդակներ: 2000ի ամրան, հայրենի պետութիւնը Հ.Մ.Ը.Մ.ին կը յատկացնէ հողաշերտ մը Բիւրականի մէջ, որուն վրայ միութիւնը կը կառուցէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական իր բանակավայրը: Ութ տարի ետք, Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը կ'ունենայ իր սեփական բանակավայրը (Թեքոյա): Մարզական գետնի վրայ, Լիբանանի շրջանը 2000ին կ'օժտուի «Պօղոս Արիս» Ֆուլթայոյի դաշտով եւ «Ատոմ եւ Սեյլաթնոսկեան» պասքեթպոլի դաշտով: 2004ին, Թորոնթոյի մէջ բացումը կը կատարուի Հ.Մ.Ը.Մ.ի «Երուանդ եւ Նայի-

րի Շահինեան» մարզադաշտին, իսկ 2007ին՝ Սուրիոյ շրջանը կը ձեռնարկէ արդիական մարզաւանի մը կառուցումն:

Գարձեալ Սուրիոյ մէջ, պետական արտօնութեամբ սկաուտական շարժումը կը վերահաստատուի, կը վերակազմակերպուի եւ 16 տարուան ընդմիջումէ ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ ընտանիքը 2007ին կը կատարէ իր առաջին հանդիսաւոր սողանցքը: Տողանցքին փայլքը կը հանդիսանայ վերջին տարիներուն Սուրիոյ ախոյեանութեան առաջնակարգ դիրքերը գրաւող՝ աղջկանց պասքեթպոլի խումբը, որ 2008ին կը տիրանայ երկրի փոխ ախոյեանի տիտղոսին եւ արեւմտեան Ասիոյ ակումբներու ախոյեանութեան մասնակցելով՝ կը հանդիսանայ երրորդ:

Նոյն շրջանին, Լիբանանի մէջ եւս ակներեւ են Հ.Մ.Ը.Մ.ական աղջկանց յաջողութիւնները: Փինկ-փոնկի Պէյրութի աղջկանց խումբը չորս անգամ կը տիրանայ արաբական ակումբներու ախոյեանութեան (1999, 2002, 2004, 2007): Քնարիկ Մուրատեան իր կարգին չորս անգամ կը խլէ արաբական աշխարհի ճատրակի ախոյեանութեան տիտղոսը (2002, 2004, 2006, 2007):

Հայրենիքի մէջ, Հ.Մ.Ը.Մ. կը շարունակէ իր աշխատանքները տանիլ սկաուտական միաւորներով: Կը գործեն 13 միաւորներ 13 քաղաքներու մէջ: Միութեան 7րդ Պատգամաւորական Ժողովին որոշումով կը ստեղծուի քոյր մասնաճիւղերու դրութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սփիւռքի մասնաճիւղերուն եւ Հայաստանի միաւորներուն միջեւ: Վերջինները կ'ունենան դաստիարակչական իրենց առաջին հրատարակութիւնները՝ «Ես գայիկ եմ» (2003), «Ես սկաուտ եմ» (2004):

Հրատարակչական բերքը հարուստ կ'ըլլայ յատկապէս Պէյրութի մէջ, ուր միութեան պաշտօնավթերթ «Մարզիկ» ամսաթերթի կողքին՝ յաջորդաբար լոյս կը տեսնեն Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական դասագիրքերը («Միասող», «Երկասող», «Բ. կարգ», «Ա. կարգ»), Բիւզանդ Թորիկեանի Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան Գ. եւ Գ. հատրոնները, «Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակչական ուղեցոյց»ը, «Հ.Մ.Ը.Մ.ական կենցաղագիտութեան եւ փրոթոքոլային հասկացողութեան ուղեցոյց»ը եւ «Մարզիկ»ի խմբագրականներու Բ. հատրոնը:

Հ.Մ.Ը.Մ.ական ուշագրաւ այլ նախաձեռնութիւններու շարքին պէտք է յիշել Հայկական Յեղասպանութեան 90ամեակին առիթով կազմակերպուած սկաուտական ուխտագնացութիւնը՝ Տէր Զօր եւ Մարկատէ, Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագրումի յանձնախումբին ստեղծումը՝ Պատգամաւորական Զրդ Ժողովին որոշումով եւ, վերջապէս, միութեան 90ամեակին առիթով, Շաւարշ Քրիսեան լսարանի բացումը եւ գիտաժողովը, Երեւանի մէջ, Սեպտեմբեր 2008ին:

90ամեակի հանգրուանն է այսօր: Երթը կը շարունակուի: Պիտի՛ շարունակուի, մինչեւ որ Եռագոյն դրօշը կոթողենք «Կատարն հայրենի լեռանց հեռագոյն»: Մարզիկը իր դնդերով, սկաուտը իր խայտանքով, բարերարը իր նիւթականով, անդամներն ու համակիրները իրենց ուժերուն առաւելագոյն չափով մասնակից պիտի դառնան այդ երթին, որուն պատմութիւնը պիտի գրուի միասնաբար, ամէնուն շունչով, բոլորին համար:

90ԱՄԵԱՅ ԾԱՌ-ԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌ-ԱՔԵԼՈՒԹԻՒՆ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունը ինը տասնամեակներ է վեր հանդիսացաւ մարդակերտումի եւ հայակերտումի այն հնոցը, որուն քուրային մէջ, մեր նորահաս եւ իրերայաջորդ սերունդները, իբրեւ սկաուտ, արի կամ մարզիկ, թրծուեցան «Առողջ մարմին առողջ միտք» կենսաոճով, հայրենական հողի կարօտով ու պահանջատիրութեամբ, ապա եկան միանալու մեր ազգային առօրեային՝ անսակարկ նուիրումով ծառայելու մեր ժողովուրդին, հայրենիքին եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Արդարեւ, երբ տակաւին կեանքի ու մահուան ճիրաններուն մէջ կը տուայտեր մեր ժողովուրդին մնացորդացը, ծնունդ առաւ Բ.Ս.Ը.Ս.ը, իբրե՛ւ հայահաւաք-բալասան, իբրե՛ւ կրթող մարզիչ որբացած պարման-պարմանուհիներու ֆիզիքական-բարոյական ուժերուն եւ մանաւանդ իբրե՛ւ զսպանակող ուժ անոնց ազգային գաղափարական ապրումներուն ու իտեալներուն:

Հետագային Բ.Ս.Ը.Ս. իր յատուկ դրոշմը դրաւ եւ իր յանձնառու կեցուածքը ունեցաւ ի նպաստ հայահաւաքի եւ ազգապահպանման մեր ընդհանուր ճիգին, եւ նուիրումի անվերապահ ուխտով նպաստեց Սփիւռքի հոգեմտաւոր հայրենիքի կերտման աշխատանքներուն, գործակցութեամբ՝ իրեն ուղեկից եւ գաղափարակից Հայ Օգնութեան Միութեան եւ Համազգայինին:

Այսօր, աւելի քան երբեւիցէ, արդար են Բ.Ս.Ը.Ս.ի հպարտութեան շարժառիթները, երբ սկաուտ-մարզիկ երկթեւ գործունեութեամբ, Բ.Ս.Ը.Ս.ի 100ի հասնող մասնաճիւղերը իրենց անսպառ ճիգերով կու գան Բ.Ս.Ը.Ս.ի հիմնադիրներուն գործը շարունակելու ոչ միայն Սփիւռքի տարածքին, այլ նաեւ հայրենիքի մէջ:

90ամեակի առիթով, ջերմօրէն կը շնորհաւորենք Բ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիքը: Կը շնորհաւորենք կակուղ թաթիկ գայլիկէն մինչեւ Կեդրոնական Վարչութիւն համախումբ եւ նպատակասլաց գործունեութիւնը, որուն ի տես կը համակուրիք ազգային հպարտութեամբ:

Բ.Ս.Ը.Ս.ին կը մաղթենք մշտանորոգ ոյժ արդի հայ երիտասարդը առաջնորդելու, ուղղորդելու դէպի հայկականութեան զուլալ ակունքները:

Վարձքը կատար բոլոր երախտարժան Բ.Ս.Ը.Ս.ականներուն:

Փառք ու պատիւ Բ.Ս.Ը.Սի 90 տարիներու բոլորանուէր գործունեութեան:

ՀԱՍԱԶԳԱՅԻՆԻ
ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

90ԱՄԵԱԿ Հ.Ս.Ը.Ս.Ի

ՀԻՄՆԱԴԻՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԱՆԴՊՄՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍԻՆ

Հոգեկան ստորոգելիներով զինուած, Հ.Մ.Ը.Մ. դիրին հարթեց իր ճամբուն վրայ ցցուած խոչընդոտները, իր քայլերը ուղղեց դէպի լաւը, բարին ու լոյսը, բռնեց վաղուան հայերը կազմող սերունդին ձեռքէն, յոյս ու ինքնավստահութիւն ներշնչեց կեանքին իմաստը նոր հասկնալ փորձող եւ խարխափումի մէջ եղող սերունդին, իր մականին տակ կոփեց ու կռեց զայն իր որդեգրած իտեալին ու առաջադրութիւններուն համաձայն, քիչ ժամանակէն ազգին ընծայ տալու համար մարմնով առողջ ու հոգիով ազնուացած նոր էակներ:

ԳՐԻԳՈՐ ՃՈՆՈՆԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ական դաստիարակութեան նպատակն է անհատին մէջ յառաջ բերել ձգտում մը դէպի կատարելութիւն, որ անոր խառնուածքին եւ ուժերուն թափած շնչերուն ուժգնութեան ու յարատեւութեան չափով իրեն մատչելի ըլլայ:

Այս դաստիարակութեամբ սնած, կատարելութեան որոշ աստիճանի հասած անհատին է որ Հ.Մ.Ը.Մ. կը հրամայէ իր կարգին նմաններուն ուսուցանել իր սորվածը, իր ստացածէն բան մը տալ ուրիշին:

Բարձրանալ ու բարձրացնել կամ տարբեր բացատրութեամբ ստանալ ու տալ, ահա՛ ամենապարզ ձեւի տակ արտայայտութիւնը Հ.Մ.Ը.Մ.ական ոգիին:

Ս. ՏԱՍԼԱՄԱՅԵԱՆ

ՍԻՐԵԼԻ ՍԿԱՌՏՆԵՐՍ

Մարդու մը համար ամենակարեւոր տեղը կը բռնէ բարձր նկարագիրը. աննկարագիր մէկը ոչ մէկէն կը սիրուի:

Յիշէ որ էութիւնդ ծնողքիդ կը պարտիս. անոնք քեզի համար ամէն դժուարութիւն սիրով տարած են, ամենամեծ ապերախտութիւնը պիտի ըլլայ եթէ, իբր պարտաճանաչ զաւակ, չկարենաս փոխարինել զիրենք:

Յարգէ եւ պաշտպանէ, առանց բացառութեան եւ դասակարգի խտրութեան, կիներն ու աղջիկները եւ վարուէ ու խօսէ անոնց հետ այնպէս, ինչպէս պիտի ուզէիր ուրիշները վարուի մօրդ կամ քրոջդ հետ:

Յարգէ նաեւ ծերերը եւ տարիքոտ մարդիկը, իրաւ է թէ անոնք քեզի չափ նորութիւններու ծանօթ չեն եւ չեն հետեւիր, բայց իրենց տարիքին փորձառութիւնը ունին:

Ինչքան / յատկանշական է երկու բառով այս նշանաբանը: Մեկը՝ բարձրանա՛լ-ցեղին տարերային անցեալը: Միւսը՝ տենչը, անզո՛ւսպ ձգտումը, ապագային ի խնդիր:

«Բարձրացի՛ր» ի հարկէ: Բարձրացե՛ք եւ դուք, տղաք: Բարձրացե՛ք, որովհետեւ դուք ամենէն բեղմնաւոր ժառանգորդներն էք ժողովուրդի մը, որ ելլել ու նետուիլ միայն գիտցաւ: Բարձրացե՛ք, որովհետեւ դուք անտրտունք, բայց անվնաս զաւակներն էք այն դարաւոր սերունդներուն, որոնց բովանդակ կեանքը բարձրացումը միայն եղաւ: Բարձրացե՛ք, որովհետեւ ձեր ցեղը,- հայ ցեղը - երբեք իջնել չփորձեց, բայց խոյանալ երազեց:

... Ու բարձրացուցե՛ք, տղաք: Բարձրացուցեք, մեր այս զգեստումի օրերուն, սերո՛ւնդը, որ պիտի գայ յեղակարծ ամայութիւն մը լրացնել: Բարձրացուցե՛ք հոգին, ձե՛ր հոգին, որ հարազատ արտայայտութիւնն է ըլլալու մեզմէ առաջ նետուող կամ ինկողներուն, եւ բարձրացուցե՛ք մեր արիւնտտ, բզքտուն, բայց նաշխուն դրօշը, որուն անունով որպիսի՛ գոհաբերութիւններ արձանագրուեցան...

ԿԱՐՕ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Խաղը ինքը մինակը բան մը չէ, ոգին է ամեն բան: Մարզական կեանքը այն բնական եւ ընտիր առիթն է, ուր կարելի է ազդել պատանիի նկարագրին: Ուրեմն, որքա՛ն ուրախ ենք որ անշահախնդիր երիտասարդներ, հարազատ սիրով իրենց պատանի եղբայրներուն հանդէս, հիմնած են Հ.Մ.Ը.Մ.ը, մատակարարելու ազգին փոքրերուն... Իտեալ: Վասզի, երբ պատանիին հարցնես, թէ ի՞նչ կը հասկնայ մարզական կեանքով, չի կրնար որոշ բացատրութիւն տալ, բայց մենք գիտենք, թէ կը հասկնայ իր պաշտամունքին ու գուրգուրանքին առարկան, բարին միացած հաճելիին, այսինքն... Իտեալը:

Տակաւ պիտի սորվի վերջը անշուշտ խորհիլ ու զգալ աւելի խոր ու վսեմ, կեանքի բուն, մերկ հարցերուն մասին - բո՛ւն իտեալին մասին, բայց խորհելու իր մարզանքը կատարած պիտի ըլլայ, մանաւանդ «ոգին» ճաշակած պիտի ըլլայ, աննենգութեան, անկեղծութեան, քաջութեան, լրջութեան, որ պիտի բանայ բուն իտեալին դռները:


ԲԻԶԱՆԴ ԿԵՕԶԻՊԵՕՅԻԲԵԱՆ

Ո՛չ միայն խաղերու եւ մարզանքի մէջ, այլ՝ ամեն գործի մէջ, ինչ որ կ'ըսեն, օրէնքները յարգէ, գիտցիր որ օրէնքը բռնաբարելով շահուած խաղ մը կամ մարզանք մը շահուած չէ, այլ՝ գողցուած է: Մի վախնար եւ մի քաշուիր ճշմարտութիւնը ըսելու, եթէ մինչեւ իսկ քեզի աննպաստ ըլլայ: Ինքզինքիդ մեծ հովեր տալ այնքան ծիծաղելի պիտի ըլլար, որքան եթէ պարծենայիր թէ երկու մեթր հասակ ունիս:

Մի վախնար պաշտպանելու բարեկամ մը, զոր դուն կը ճանչնաս իբր ուղղամիտ եւ լաւ մարդ, մինչեւ իսկ եթէ բոլորը իրեն հակառակ ըլլան: Ապերախտութիւնը ամենամեծ յանցանքներէն մէկն է: Ընելիքիդ վրայ մի պարծենար, կրնայ ըլլայ որ ցաշողիս եւ ծիծաղելի դառնաս, մինչեւ իսկ ըրածիդ մի պարծենար, պարծենկոտը վստահութիւն չի ներշնչեր ուրիշներուն:

Յոյսդ բնաւ ուրիշին վրայ մի դներ, վստահե՛ կարողութեանդ, ամենանեղ վայրկեաններուդ իսկ պետք չէ յուսահատիս, համբերութիւն, կամք, աշխատասիրութիւն եւ յարատեւութիւն միշտ յաղթող եղած են: Եթէ ձեռնարկած գործդ անյաջող ընթանայ, մի թուլնար, լաւ խորհէ եւ այնպէս մը պատրաստուէ, որ առիթը ներկայանալուն օգտուիս, այսպէսով է որ միշտ պիտի կարենաս յաջողիլ:

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՄԻՆԸ ԻՐ ԲՆՕՐՐԱՆԻՆ ՄԷՋ

(11 ՆՈՅԵՄԲԵՐ 1918 - 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1922)

Հ.Մ.Ը.Մ.ի սկզբնական տարիներու գործունեութեան վրայ կարելոր լոյս կը սփռէ ստորեւ տրուած ժամանակագրական ակնարկը, որ «Խուզարկու» ստորագրութեամբ լոյս տեսած է 1926ին, Հ.Մ.Ը.Մ.ի Ռուսմանիոյ «Արի» ամսաթերթին մէջ:

16 ՆՈՅԵՄԲԵՐ 1918.- Գրիգոր Յակոբեանի հրաւերով խորհրդակցութիւն մը տեղի կ'ունենայ Պոլիս, Խորասանճեան Խան, Յակոբեան եղբայրներու գրասենեակին մէջ, հիմը դնելու համար մարզական կազմակերպութեան մը: Ներկայ են Գրիգոր եւ Լեւոն Յակոբեաններ, Տիգրան Խոյեան, Հայկ Ճիգմէճեան, Գարլօ Շահինեան եւ Սիրուհի: Այս խորհրդակցութեան մէջ կազմուած կը հռչակուի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը (Հ.Մ.Ը.Մ.), եւ անմիջապէս գործի լծուելու համար կը ստեղծուի առժամեայ Կեդրոնական Վարչութիւն՝ մեծ մասամբ ներկաներէն եւ անոնց վրայ աւելցուելով նաեւ Ժիրայր Խորասանճեան, Յովհաննէս Հինդլեան, Գրիգոր Մերձանոֆ եւ Վահրամ Փափազեան:

ՆՈՅԵՄԲԵՐ 1918.- Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ արձագանգ կը գտնէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կոչը: Ամէնուրեք հայ երիտասարդութիւնը եւ պատանեկութիւնը կը փութայ համախմբուելի Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ: Ամէն թաղի մէջ մարզական հին ակումբներու մնացորդ տարրերն են որ առաջին կորիզը կ'ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն: Կը կազմուին սկստական խումբեր, գլխաւորաբար հայ դպրոցներու աշակերտներէն:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1918.- Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովը կը վաւերացնէ Հ.Մ.Ը.Մ.ի Մրազիրը: Հանրային գուրգուրանքի առարկայ կը սկսի դառնալ Հ.Մ.Ը.Մ.ը:

ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ 1919.- Գաղթականները կը սկսին Պոլիս լեցուիլ իրենց քառամեայ տարագրութենէն դառնալով: Ամէն մարմին ու անհատ գործի լծուած է

ապաստան, սնունդ, սփոփանք հայթայթելու անոնց: Ասպարէզ կ'իջնէ նորակազմ Հ.Մ.Ը.Մ.ը եւ Ղալաթիոյ եկեղեցւոյ շրջափակին ու Սկիւտարի մէջ կը հիմնէ առաջին ճիւղերը եւ շարժուն հիւանդանոցը, սկստութիւնը կը յատկացնէ այդ գործին համար, եւ ամբողջ երկու ամսուան ընթացքին կը խնամէ 1500ի մօտ գաղթական ու կարօտեալ հիւանդներ, որոնցմէ երկուքը միայն զոհ կու տայ՝ պարզ այն պատճառով, որ հիւանդները իր ձեռքը կը հասնին մահամերձ վիճակի մէջ: Հ. Կ. Խաչի կազմութեամբ Հ.Մ.Ը.Մ.ը աւարտած կը համարէ այս դերը:

ՁՄԵՌ 1919.- Հ.Մ.Ը.Մ.ը թէեւ դեռ նոր կազմուած, չի զլանար իր ուժերը տրամադրել հանրային կարիքներու: Սկիւտարի մէջ սկստութիւնը կալուածատիրոջ թոյլտուութեամբ չորցած ծառեր կը կտրեն ու կը բերեն տարագրեալներու կայանին իբր վառելիք, կ'օգնեն որբերու հաւաքման ու տեղաւորման: Գուրուչէշմէի եւ այլ տեղերու հրդեհները մարելու կ'օգնեն, հանրային հանդէսներու ատեն կը հսկեն կարգապահութեան եւ այլն:

14 ՅՈՒԼԻՍ 1919.- Ֆրանսայի ազգային տօնի հանդիսութեանց մասնակցելու համար Հ.Մ.Ը.Մ.ը ջահագնացութիւն մը կը կազմակերպէ 200ի մօտ հայ սկստութիւնով, ընկերակցութեամբ «Քնար» շեփորախումբին: Շքերթը, զոր կ'առաջնորդեն Գրիգոր Յակոբեան եւ Հայկ Ճիգմէճեան, երեկոյեան ժամը իննուկէսին Բերայի մարզարանէն ճամբայ կ'ելլէ՝ ամենազգի բազմութեան մը խանդավառ արտայայտութիւններուն մէջ: Թափօրը Բերայի ճամբէն անցնելով կը հասնի Ֆրանսական դեսպանատուն եւ բարձր քոմիտէրին կը ներկայացնէ ծաղկեփունջ մը՝ շնորհաւորական վերտառութիւն մը կցուած: Թափօրը ուշ ատեն կը վերադառ-

ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ

Վերջերս լուր առի Հայաստանի սկաուտներեն Ալեքսանդրապոլի մէջ, Կազաչի Փոստ ըստած վայրեն, 6 խումբեր կան, ամեն մէկ խումբ 40 հոգիէ բաղկացած:

Գրեթէ տարի մը առաջ այս տղաքը անկիրթ, աղտոտ արարածներ էին. այսօր կ'ըսեն թէ ազնիւ, մաքուր ու բարեծէւ երիտասարդ տղաներ եղած են եւ արժանաւոր կերպով պահպանութիւնը կ'ընեն իրենց գտնուած միջավայրին:

Կռփամարտի եւ ֆութպոլի մեծ փափաք ունին եւ այս երկու խաղերն ալ անգլիական օրէնքներով կը խաղան. ամէն տղայ ունի անհատական տետրակ մը, ուր գրուած է իր եւ ծնողքին անունը, տարիքը, սկաուտական աստիճաններու եւ վարձատրութեանց թուականը. մասնաւոր երկու էջեր կան. մին ոսկի էջ, ուր կ'արձանագրուին տղուն գործած ազնիւ արարքը, եւ սեւ էջ մը, ուր պիտի արձանագրուի գործուած անպատուաբեր արարքը:

Ցանկ մը կայ, ուր արձանագրուած են իրեն տրուած բոլոր գոյքերը: Սկաուտները կը պահեն մասնաւոր արձանագրութեան տետր մը՝ նշանակելով իրենց առօրեայ բոլոր գործունէութիւնը:

Հայ սկաուտներու նշանաբանն է՝ «Բարձրացի՛ր՝ բարձրացուր», որ կը նշանակէ ինքզինքդ կատարելագործ էլ յետոյ բարձրացուր ուրիշները, ճշմարտի հետեւելիք լաւ նշանաբան մը որեւէ երկրի սկաուտի համար:

Անոնց համար ամենախիստ պատիժն է սկաուտական գաւազանին գործածութեան արգիլումը որոշ թուականի մը համար:

Ես կը տեսնեմ թէ հայ սկաուտները սկաուտական ոգի ունին որքան ատեն որ ճշմարտիտ հպարտութեամբ մը կը կրեն իրենց սկաուտական գաւազանները:

ՊԵՅՏԸՆ ՓԱՌԸԼ

«Տը Սկաուտ», թիւ 744, 1922:



նայ մարզարան, ուր կը գիշերէ նախապէս պատրաստուած վրաններու տակ: Սկաուտներու այս փառաշուք զնացքին առթած խանդավառութեան տակ, զանազան ազգայիններու կողմէ բազմաթիւ նուիրատուութիւններ կ'ըլլան Հ.Մ.Ը.Մ.ին:

28 ՅՈՒԼԻՍ 1919.- Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութիւնը օրհնութեան գիր մը կը ստանայ Զաւէն Պատրիարքէն, որ կ'ըսէ. «Կազմակերպուեցէք, ազնուացէք, բարձրացէք որքան կրնաք, լեցուցէք ձեր սիրտն ու միտքը, վասնզի դուք պիտի ըլլաք վաղուան սրբազան հայրենիքին հրաշակերտ տաճարին սիւները»:

31 ՕԳՈՍՏՈՍ 1919.- Տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպած առաջին ողիմպիականը՝ Գատը գիւղ, Իւնիոն Քլիւպի մարզադաշտին վրայ, Զաւէն Պատրիարքի նախագահութեամբ: Ներկայ է անգլիական զօրքերու նորընտիր հրամանատար զօր-Քրոքըր: Կը մասնակցի «Քնար» շեփորախումբը: Օրուան ախոյեան՝ Ա. Աբէլեան (Գատը գիւղ), որ շահած է երեք առաջին մրցանակ: Ախոյեան մասնաճիւղ՝ Բերա, որուն պատկանող մարզիկները շահած են 9 առաջին, 5 երկրորդ եւ 1 երրորդ մրցանակ:

14 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1919.- Հ.Մ.Ը.Մ.ը հող կը գտնէ մօտաւոր գաւառներու մէջ ալ, ինչպէս՝ Ատափագար, Ռոտոսթօ, Պրուսա, Պարտիզակ, Իզմիթ եւ այլն: Ատափագարի մասնաճիւղը նոյնիսկ կը կազմակերպէ իր անդրանիկ մրցահանդէսը՝ տեղական ուժերով:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1919.- Հ.Մ.Ը.Մ.ը Պոլսոյ գրեթէ բոլոր թաղերուն եւ շրջակայ մէկ քանի գաւառներուն մէջ ունի 25 մասնաճիւղեր, որոնցմէ 10ն արդէն ունին իրենց սեփական մարզարանները:

7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1919.- Բերա, սկաուտներու կեդրոնական կայանին մէջ տեղի կ'ունենայ սկաուտական միջազգային ժողով մը՝ անգլիացի, ամերիկացի, Ֆրանսացի, ռուս, յոյն եւ հայ ներկայացուցիչներով: Հ.Մ.Ը.Մ.ը կը ներկայացնեն Արտ. Գաւանոզեան, Ժիրայր Խորասանճեան եւ Գրիգոր Յակոբեան: Ժողովին նպատակն է ներդաշնակ եւ համախոհ գործելու մասին միջոցներ տնօրինել:

25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1919.- Լոյս կը տեսնէ «Հայ Սկաուտ», իբր կիսամեայ օրկան Հ.Մ.Ը.Մ.ի, խմբագրութեամբ Կարօ Ուշագլեանի եւ սկաուտական ու մարզական բաժիններով: «Հայ Սկաուտ» կը տեւէ մինչեւ 1922ի ամառը:

9 ՆՈՅՏԵՄԲԵՐ 1919.- Հ.Մ.Ը.Մ.ի 10րդ մասնա-

ճիւղը (Պալթալիման, Վոսփոր) հայ սկաուտներու երգման անդրանիկ արարողութիւն կը կատարէ:

16 ՆՈՅՆՄԱՐԵՐ 1919.- Տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան առաջին ընդհանուր ժողովը: Կ'որոշուի նոր նիստ մը գումարել առաւելագոյնը մէկուկէս ամիսէն՝ մասնաճիւղերու վարչութիւններէն ընտրուած երկու խմբապետներու եւ մասնաճիւղային ընդհանուր ժողովներէն ընտրուած երկու պատգամաւորներու մասնակցութեամբ:

11 ԱՊՐԻԼ 1920.- Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ տեղի կ'ունենայ որբերու սկաուտական հանդերձանքին ի նպաստ քոքարտի բաշխում՝ Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ կազմակերպուած: Կը գոյանայ մօտ 4000 թրք. ոսկի:

9 ՄԱՅԻՍ 1920.- Եսայեան վարժարանին մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական ժողովը: Ներկայ են Պոլսոյ գրեթէ բոլոր մասնաճիւղերու պատուիրակները:



«ՄԱՐԶԻԿ» 90ԱՄԵԱԿԻ ԲԱՅՄՈՒԿ

Նոր Կեդրոնական Վարչութեան անդամ կ'ընտրուին Արշակ Յակոբեան, Գրիգոր Մերձանոֆ, Գրիգոր Յակոբեան, Ժիրայր Խորասանճեան, տղթ. Կ. Մուլթաֆեան, Յովհաննէս Թ. Հինդլեան եւ Պօղոս Շապոյեան:

11 ՅՈՒՆԻՍ 1920.- Քեղըտհանէի մէջ «պաշարողական գործողութեան» փորձ մը կը կատարեն Բերայի, Պէշիկթաշի եւ Խասգիւղի սկաուտները՝ Արտ. Ալաֆերտիի ղեկավարութեամբ:

20 ՅՈՒՆԻՍ 1920.- Տեղի կ'ունենայ միջազգային սկաուտական ընդհանուր տողանցք մը, որուն կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները, ի ներկայութեան գօր. Ուլիսընի եւ սկաուտական միջազգային կազմակերպութեան նախագահ գնդ. Մաքսուէլի: Հայ սկաուտները իրենց կարգապահութեամբ, կարգ ու սարքով եւ ճկունութեամբ կ'արժանանան բացառիկ գնահատանքի:

26 ՅՈՒԼԻՍ 1920.- Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ Վահան Զերազ, Օննիկ Եազմաճեան եւ Տիգրան Խոյեան Հայաստան կը մեկնին՝ հայրենիքին մէջ կազմակերպելու համար մարմնակրթական եւ սկաուտական շարժումը:

5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1920.- Տեղի կ'ունենայ հայկական ընդհանուր ողիմպիական, Գատրգիւղ, Իւնիոն Քլիւպի մէջ, Զաւէն Պատրիարքին նախագահութեամբ: Օրուան ախոյեան կը հռչակուի Նուպար Ճելալեան (Սկիւտարի հայ մարմնամարզարանէն):

3 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1920.- Արծաթ բաժակի միջազգային մրցումներուն Հ.Մ.Ը.Մ.ի խառն խումբը կը շահի բաժակը՝ 1-0 արդիւնքով յաղթելով իրլանտական գինուորական խումբին:

1 - 25 ՆՈՅՆՄԱՐԵՐ 1920.- Այս քսանչորս օրերը հռչակուած ըլլալով «Սկաուտը հայրենիքին համար» օրեր, Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր մասնաճիւղերը տուններէն դրամ եւ հագուստ կը հաւաքեն Հայաստանի սկաուտներուն համար:

20 ՄԱՐՏ 1921.- Շիշլիի Գարակէօզեան որբանոցին մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր ժողով, 16 մասնաճիւղերէ զրկուած 46 պատգամաւորներով: Կեդրոնական Վարչութեան անդամ կ'ընտրուին Ժիրայր Խորասանճեան, Հայկ Ճիգմէճեան, Պօղոս Շապոյեան, Գրիգոր Յակոբեան, Գարլօ Շահինեան, Վահրամ Փափագեան: Հրաժարող Գրիգոր Յակոբեանի եւ Հայկ Ճիգմէճեանի տեղ կ'ընտրուին Արարատ Քրիսեան եւ Հրաչեայ Տէր Ներսէսեան:

ՄԱՐՏ 1921.- Սկաուտները բոլոր թաղերու մէջ Հայաստանի սկաուտներուն համար կը հաւաքեն 24 հակ հագուստ եւ մօտ 2500 ոսկի:

12 ԱՊՐԻԼ 1921.- «Ռոյլ ձորձ» անգլիական տրէտնօթի հրամանատար Մ. Թէսիկըր աչքէ կ'անցընէ Բերա-Շիշլի մասնաճիւղի մարզարանին հայ սկառտները:

1 ՄԱՅԻՍ 1921.- Քոքարտաբաշխում սկառտներու հագուստի եւ գոյքի համար: Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով կը գոյանայ 2525 ոսկի:

29 ՄԱՅԻՍ 1921.- Մ. Թէսիկըր կ'այցելէ Գուլէլիի Կեդրոնական Որբանոցը, այդ առթիւ աչքէ անցընելով որբանոցին սկառտները, ընկերակցութեամբ Կեդրոնական Վարչութեան անդամ Ժիրայր Խորասանճեանի եւ Կեդրոնական Որբանոցի մարզիչ Գրիգոր ձորլեանի:

12 ՄԱՅԻՍ 1921.- Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը դիմում կը կատարէ բոլոր կուսակցութիւններուն՝ խնդրելով որ 18 տարեկանէն վար պատանիներ չարձանագրեն իրենց կուսակցական շարքերուն մէջ:

13 ՄԱՅԻՍ 1921.- Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Կ. Պոլսոյ շրջանի գործադիր մարմինը նպաստաւոր պատասխան կու տայ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնի դիմումին:

18 ՄԱՅԻՍ 1921.- Նպաստաւոր պատասխան կը դրկէ Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէն եւս:

24 ՄԱՅԻՍ 1921.- Նոյնիմաստ պատասխան Ազատական Կուսակցութեան Պոլսոյ նահանգային վարչութեանէն:

29 ՄԱՅԻՍ 1921.- Նպաստաւոր պատասխան կը ստացուի նաեւ Հայ Ռամկավար Կուսակցութեան Պոլսոյ Շրջանային Վարչութեանէն:

8 ՅՈՒՆԻՍ 1921.- Սկառտութեան հիմնադիր եւ գերագոյն պետ զօր. Պէյտըն Փաուըլ հետեւեալ նամակը կ'ուղղէ Հ.Մ.Ը.Մ.ին

Պոյ սկառտներու Ընկերակցութիւն
25 Պաքինկհամ Փէլէյս Ռոտ
Լոնտոն, 8 Յունիս

Սիրելի Պ. Խորասանճեան,
Քէփթըն Թէսիկըր ձեր սկառտներուն տուած մէկ այցելութեան մասին ինծի տեղեկագիր մը զրկած է եւ այնչափ նպաստաւոր կերպով կը գրէ, որ պարտաւորուած կը զգամ շնորհաւորութիւններս յայտնել Ձեր տղոց կրթութեան մէջ սկառտական գաղափարներուն աջակցի յաջող կիրարկման համար: Մասնաւորաբար ինծի հաճոյք պատճառեց լսելը թէ ձեր սկառտները լաւ զգացումներ կը տածեն իրենց անգլիացի եղբայրներուն եւ իմ անձիս հանդէպ եւ կը յուսամ որ յանձն պիտի առնէք իրենց տեղեկացնելու, թէ որքան կը հետաքրքրուիմ անոնց յառաջդիմութիւններովը եւ թէ որքան ուրախ եմ լսելով որ բաղաւորաբար կարճ ժամանակուան մէջ այնքան լաւ գործ կատարած են:
Վերջերս Պաղեստինէն, Եգիպտոսէն եւ Հնդկաստանէն



վերադարձայ եւ շատ կը փափաքէի որ ժամանակ ունենայի Պոլիսն ալ այցելել: Պաղեստինի մէջ իբր «լրատար» հայ սկառտ մը ունենալու բախտաւորութիւնը ունեցայ եւ եթէ ան ձեր տղոց տիպարը կը ներկայացնէր, այն ատեն ձեր տղաքը շատ բարձր կարգի սկառտներ ըլլալու են - եւ նոյն ատեն գուարթերես- որովհետեւ այդ տղան միշտ եռանդով կ'աշխատէր եւ միշտ կը ժպտէր ու աւելին ընելու պատրաստ էր, հակառակ որ պատերազմի միջոցին իր պարագաներուն կորուստը գինքը բաւական տառապեցուցած էր եւ ինքն ալ իր հարեւաններու խումբի մը կողմէ հրացանագարկ ըլլալու սարսափէն հազիւ ազատած էր, բայց բարեբախտաբար վիրաւորուելէ վերջ մեռած կարծուած:
Հաճեցէք ձեր սկառտներուն հաղորդել կաթողին իղձերս:

Մնամ Ձերդ՝
ՊէՅՏԸՆ ՓԱՌԻԼԼ



30 ՅՈՒՆԻՍ 1921.- Հ.Մ.Լ.Մ.ի կեդրոնը շնորհակալութիւն կը յայտնէ վերոյիշեալ համակրական տողերուն համար եւ զօրավարին կը ղրկէ սկառուտական արպում մը եւ «Հայ Սկառուտ» թերթէն օրինակներ:

10 ՅՈՒԼԻՍ 1921.- Միջ-որբանոցային ողիմպիական մրցումներ տեղի կ'ունենան Գուլէյի մէջ, նախագահութեամբ Զաւէն Պատրիարքի: Օրուան ախոյեան Անդրանիկ Քէօթէնճեան (Եսայեան որբանոց): Ախոյեան որբանոց՝ Գուլէյի (49 կէտ): Փոքրերէն՝ Սուրէն Պարոնաւագեան (Գուլէյի):

2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1921.- Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ ընդհանուր ողիմպիական մրցումներ տեղի կ'ունենան Գատըգիւղ, Իւնիոն Քիւլպի դաշտը: Օրուան յաղթական՝ Հրաչեայ Գալֆայեան (Վոսփոյ):

ՆՈՅՏԵՄԲԵՐ 1921.- Հ.Մ.Լ.Մ.ի Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը Կեդրոնական Վարչութեան անդամ կ'ընտրէ Զարեհ Խորասանճեան, Խաչիկ Ալեանաք, Արամ Կեսալեան, տղթ. Սալբի, Թ. Մեծատուրեան, Հայկ Ճիզմէճեան, Լեւոն Յակոբեան, որդիք Քէմհանճեան եւ Քրիս Յէնէրճեան:

9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1921.- Իզմիրի Հայ Պոյ Սկառուտներու Միութիւնը մաս կը կազմէ Հ.Մ.Լ.Մ.ին՝ հռչակուելով Հ.Մ.Լ.Մ.ի Իզմիրի շրջան:

22 ՄԱՐՏ 1922.- Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը հրապարակաւ կը պախարակէ արհեստավարժութիւնը՝ ազդուած հայ կուսամարտիկ Բագարատի եղբրական մահէն:

28 ՄԱՅԻՍ - 5 ՅՈՒՆԻՍ 1922.- Սկառուտական ցուցահան-

դէս Պրիւքսէյի մէջ: Ցուցահանդէսին կը մասնակցի Հ.Մ.Լ.Մ.ը՝ Պոլսէն ղրկուած գոյքերով:

2-4 ՅՈՒՆԻՍ 1922.- Միջազգային աթլետիկ մրցումներ Բերա Սթատիոմի մարզադաշտին վրայ, Ե. Ք. Լ.եան նախաձեռնութեամբ: Կը մասնակցին հայ մարզիկներ ար: Իրաւարարներէն մէկուն անարդար մէկ վճիռը պատճառ կը դառնայ որ հայ մարզիկները խմբովին քաշուին մարզադաշտէն: Մինչ այդ հայ մարզիկներուն կը պատկանէր կէտերու առաւելութիւնը:

2 ԱՊՐԻԼ 1922.- Դաշտահանդէս Թաքսիմի պարտէզին մէջ, անգլիական բանակի կուրցած զինուորներու ի նըպաստ, հայ սկառուտներու մասնակցութեամբ: Այս առիթով Հ.Մ.Լ.Մ. կը ստանայ հետեւեալ գիրը.-

Պարոններ, Մեծ Պատերազմին կուրցած անգլիացի հերոսներուն, տեղույս բրիտանական ուժերու տասնապետներուն, ինչպէս նաեւ մեր կողմէ անհատապէս կը փութանք շնորհակալութիւն յայտնել Ձեզի այն պատրաստակամութեան համար, զոր ցոյց տուին ձեր սկառուտները՝ մասնակցելով անգլիացի զինուորներու ի նպաստ տրուած դաշտահանդէսին: Կը փափաքինք յայտնել ձեզ, որ իրենց բերած անմիջական օգնութիւնը ապացոյց մը եղաւ, որ հայ սկառուտները սկառուտական ամենաբարձր արժանիքներ ձեռք բերած են: Անոնք «պատրաստ» են ամէն վայրկեան: Հանդէսին մէջ անոնց աշխուժութիւնը եւ ընդհանուր տողանցքը հիանալի էին, մասնաւորաբար կ'ուզենք յիշել խմբապետներուն ծառայութիւնները, մասնաւոր իրիկւան սկառուտական հետաքրքրաշարժ պարերը:

Ներկաները գոհ մնացած էին իրենցմէ:
Երախտապարտ Ձերդ՝

Ռ. ՊԱՏՐԻ ՏՈՅԼ
(նախագահ)
ՄԱՔՍՈՒԷԼ
(փոխ նախագահ)
ԱԼՖՐԷՏ ՏԸ ՊԷՐՐԻ
(B. P. սկառուտներու Թուրքիոյ ներկայացուցիչ)

ՅՈՒՆԻՍ 1922.- Տարեկան ողիմպիական Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ:

11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1922.- Պէյքոզ, Աբրահամ Փաշայի փարքին մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Լ.Մ.ի սկառուտական ձեռագին աշխատանքներուն առաջին ընդհանուր ցուցահանդէսը եւ միեւնոյն ատեն ընդհանուր բանակումը, որ կը գտնէ մեծ ընդունելութիւն եւ որուն սակայն վերջ կը տրուի հապճեպով՝ վերահաս քաղաքական դէպքերու պատճառով:

16 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1922.- Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գումարէ իր վերջին նիստը եւ լուծուած կը հռչակէ Հ.Մ.Լ.Մ.ը Թուրքիոյ սահմաններուն մէջ, քաղաքական դէպքերը անհնար դարձուցած ըլլալով հայկական հանրային որեւէ գործունէութիւն:

ՊԻՏԻ ՄԱՐՄՆԱԿՐԹԵՆՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Մենք քիչ ենք, իսկ գործը՝ հսկայ, այդ պետք է լաւ գիտնաք, այստեղ Հայաստան է, մեծ է արդէն ու պիտի մեծնայ, կարելի չէ գործել մանաւանդ չորս հոգիով, ան ալ իրարմէ հեռու:

Չորս հոգի ենք եւ պիտի մարմնակրթենք Հայաստանը: Պիտի կազմենք սկաուտական խումբեր, պիտի հայացնենք լեզուն, հրամանները, խառնուածքները, ոգին: Պիտի մտնենք որբանոցները, ուր հազարներու զանգուած մը կայ. անանուն, անգոյն, անժպիտ եւ սակայն անգին: Պիտի հսկենք դպրոցներուն, պիտի զբաղինք մամուլով - Կարս արդէն թերթ կը հրատարակէ՝ ՀԱՅ ԱՐԻ: Պիտի վարենք կեդրոնի գործ, կապ պահելով թէ՛ ձեզ, թէ՛ նախարարութիւններուն եւ թէ մենք մեր միջեւ: Արշաւանքներ, քննական պտոյտներ պետք է կատարենք: Նիւթ, գոյք, զգեստեղէն պետք է ճարենք երկրի մը մէջ, ուր ոչինչ կայ:

Ձեր դրկած մի քանի կտոր գիրքերը, թերթերը, գոյքերը, նամակները մեզի համար կ'ունենան բարոյական խիստ մեծ նշանակութիւն: Նոր շրջաններ ալ պիտի կազմակերպենք, սակայն դրօշակներու, սկաուտական դրօշակներու համար ձեր դրկած կտաւները չափազանց անբաւական են: Կանաչ, դեղին, սրճագոյն, նարնջագոյն բնաւ չկան. շատ նեղն ենք... իսկ փողկապի, հագուստի, գլխարկի մասին խորհած իսկ չունինք: Հայաստանի սկաուտները սեւ հագուած են Եղիշէին տրամադրած կտաւով: Ձեր յառաջիկայ քրքարտաբաշխումը յատկացուցէք Հայաստանի սկաուտներուն:

Տղա՛ք, ինչպէս կը տեսնէք, գործը ինքնին մեծ ու դժուար ըլլալէ զատ ամէն օր յարուցուած նոր դժուարութիւններով կը բարդանայ: Այս բոլորը գրեցի ո՛չ թէ որեւէ յուսահատութիւն արդարացնեմ կամ մօտակայ ձախողութիւն մը բացատրեմ, ո՛չ: Մենք ոչ պիտի յուսահատինք եւ ո՛չ ալ պիտի ձախողինք, գրեցի որպէսզի գաղափար մը կազմէք մեր գործին մասին եւ ըստ այնմ չափենք մեր ակնկալութիւնները եւ յոյսերը:

Ներեցէք որ գրեմ տակաւին:

Անցեալ օր էջմիածին գացինք: Զալելով գացինք, քալելով եկանք իբր ճշմարիտ սկաուտներ: Ինձ հետ էին Եզնիկը, Տիգրանը եւ Պոլսէն Արմաշի աշակերտներու հետ եկած գիւղատնտեսներու խումբ մը. Կոպեռնիկ Թանտրճեան, Փարթամ, Արըճեան եւ այլն: Այնտեղ սկաուտական գործով ալ զբաղեցանք:

Գիտե՛ք Հ.Ս.Ը.Ս.ը մենք այստեղ կը կարդանք սապէս՝ Հայաստանի Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն: Սօտ ատենէն պիտի այցելենք նաեւ Սարիղամըշ, Ղարաքիլիսէ, Ջալալ Օղլու եւ Դիլիշան:

ՎԱՀԱՆ ՉԵՐԱՉ

(Հատուած՝ 17 Սեպտեմբեր 1920ին Երեւանէն
Հ.Ս.Ը.Ս.ի կեդրոն ուղղած նամակէն)

90ԱՄԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՐԲԻՆՆԵՐԸ

(Հ.Ս.Ը.Ս.Ի «ԱՐԺԱՆԵԱՅ» ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐԸ)



3 Հ.Ս.Ը.Ս.Ի 90ամեայ պատմության դարբիններուն ծանօթանալու համար կը բաւէ արագ աչք մը նետել միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին արժանացած անուններու ցանկին վրայ, երեւան հանելու համար անոնք, որոնք կեանք մը ամբողջ սպառեցին միութեանական ծառայութեան ճամբով հայ ժողովուրդի մատղաշ սերունդներու առողջ դաստիարակութեան ի խնդիր: Մարդիկ, Գաղափարի նուիրեալներ, որոնք տիւ ու գիշեր չխնայեցին, զոհաբերեցին իրենց հանգիստը, ժամանակը, ընտանիքը եւ մինչեւ իսկ առողջութիւնը՝ ի սէր իրենց պաշտելի միութեան ազգային առաքելութեան կենսագործման:

Միութիւնը երախտամոռ չգտնուեցաւ նմաններուն հանդէպ եւ Պատգամաւորական իր Առաջին ժողովին իսկ թելադրանքով (Դեկտեմբեր, 1974) եւ իր անդրանիկ Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ (22 Փետրուար 1976) հաստատեց «Արժանեաց» շքանշանի դրութիւն, «ոսկի» եւ «արծաթ» տարբերակներով:

1995ին, Հ.Ս.Ը.Ս.Ի 2. Պատգամաւորական ժողովին որոշումով, երկու տարբերակները միացուեցան եւ ճանչցուեցան պարզապէս իբրեւ «Արժանեաց» շքանշան, որուն կրնայ արժանանալ՝ «Երախտապարտ Հ.Ս.Ը.Ս.ական մը, որ միութենէն ներս ունեցած է երկարամեայ ծառայութիւն, սատարած է միութեան ամրապնդման, զարգացման կամ իր սկաուտական, մարզական եւ կազմակերպչական բեղուն գործունէութեան ընթացքին հանդիսացած է տիպար եւ օրինակելի» («Արժանեաց» շքանշանի կանոնագրութիւն, յօդուած թիւ 4):

90ամեակը լաւագոյն առիթն է յարգանքի մեր տուրքը մատուցելու յիշեալներուն, «Մարգիկ»ի բացառիկ այս թիւին մէջ նշելով անունները «Արժանեաց» բոլոր շքանշանակիրներուն, իբրեւ միութեանական օրինակելի տիպարներ եւ ներշնչման աղբիւրներ ներկայ եւ գալիք սերունդներուն:

ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ	ՇՐՋԱՆ	ՏՈՒՉՈՒԹԵԱՆ ԹՈՒՎԱԿԱՆ
Լուսեր Մասպանաճեան Թորոս Խաչատուրեան Յովհաննէս Շահինեան Լեւոն Գայեան Գէորգ Յաբէթեան Խաչիկ Բարթեմեան Տիգրան Ա. Քինյ. Խոյեան Վահան Գաւուրճեան	Հալէպ-Թորոնթօ Գահիրէ Պէյրութ Աթէնք Աթէնք Սելանիկ Ուաշինկթըն Աղեքսանդրիա	Յետ մահու, 30 Յունուար 1977 6 Սեպտեմբեր 1977 13 Նոյեմբեր 1977 25 Յուլիս 1978 25 Յուլիս 1978 7 Օգոստոս 1978 13 Օգոստոս 1978 10 Փետրուար 1979



ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ

Դանիել Դանիելեան
 Ալպեր Յակոբեան
 Քերոբ Առաքելեան
 Հրանդ Սուրատեան
 Գարեգին Շամլեան
 Տիգրան Ոսկերիչեան
 Սարգիս Պապիկեան
 Պետրոս Կարապետեան
 Շաւարշ Ա. Քինյ. Մեհրապեան
 Պարգեւ Միսիրեան
 Գործ Տաքէսեան
 Յովհաննէս Սթամպուլեան
 Տոքթ. Ժոզէֆ Մելիքեան
 Զաւէն Սապունճեան
 Սուրէն Նազարեան
 Եղիշէ Մանուկեան
 Յովհաննէս Պայթարեան
 Վարուժան Գազանճեան
 Յարութիւն Բարսեղեան
 Գործ Տաղլեան
 Պարգեւ Պարսամեան
 Վարդգէս Ալահայտոյեան
 Սեւակ Սագինեան
 Կարպիս Գույումճեան
 Ատոմ Թնճուկեան
 Գրիգոր Մղձաւետիքեան
 Տոքթ. Յարութիւն Գազանճեան
 Երուանդ Տէմիրճեան
 Յովհաննէս Տէր Յարութիւնեան
 Սամուէլ Մկրտիչեան
 Վարուժան Սերոբեան
 Ժիրայր Խաչատուրեան
 Տոքթ. Միսաք Արզումանեան
 Արշակ Գուլըստըն
 Պերճ Գրիգորեան
 Պօղոս Պօղոսեան
 Յարութիւն Թազուրեան
 Օննիկ Շանկայեան
 Երուանդ Շահինեան
 Բիւզանդ Թորիկեան
 Ժիրայր Սարգիսեան
 Գօգօ Պալեան
 Վահէ Չոքկարեան
 Կարօ Թիւթիւնճեան
 Պետրոս Շենմեսեան
 Յովհաննէս Մարտոյեան
 Զաւէն Բրուտեան
 Մանուէլ Հալլաճեան
 Միհրան Շիմշիրեան
 Զոհրապ Պոսնոյեան
 Վարդգէս Տէր Կարապետեան
 Պատրիկ Կիւլպէնկեան

ՇՐՁԱՆ

Աթէնք-Մոնթրէալ
 Պէյրուս
 Լոս Անճելըս
 Պէյրուս
 Գահիրէ - Նիւ Երրզի
 Դամասկոս
 Դամասկոս
 Պոսթըն
 Պուէնոս Այրէս
 Հալէպ
 Ամման
 Նիւ Երրզի
 Ֆիլատելֆիա
 Հալէպ
 Հալէպ
 Պէյրուս - Լոս Անճելըս
 Պէյրուս
 Գահիրէ
 Լոս Անճելըս
 Պուէնոս Այրէս
 Պուէնոս Այրէս
 Պէյրուս - Լոս Անճելըս
 Կլէնտլլ
 Աթէնք
 Պէյրուս
 Պէյրուս
 Պէյրուս - Փարիզ
 Հալէպ - Պուրճ Համուտ
 Պուրճ Համուտ - Անթիլիաս
 Լոս Անճելըս
 Մոնթրէալ
 Պէյրուս
 Պ. Համուտ - Սան Ֆրանսիսքօ
 Սիտնի
 Աթէնք
 Աթէնք
 Աթէնք
 Աթէնք
 Աթէնք
 Թորոնթօ
 Պէյրուս
 Պէյրուս - Սան Ֆրանսիսքօ
 Պոսթըն - Լոս Անճելըս
 Հալէպ - Պէյրուս
 Անթիլիաս
 Այնճար - Ժըտլյոտ
 Սիտնի
 Սիտնի
 Հալէպ - Թորոնթօ
 Պէյրուս
 Պէյրուս
 Պէյրուս
 Պէյրուս

ՏՈՒՉՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆ

26 Հոկտեմբեր 1980
 17 Դեկտեմբեր 1980
 28 Նոյեմբեր 1982
 2 Յունուար 1983
 31 Յուլիս 1983
 11 Դեկտեմբեր 1983
 11 Դեկտեմբեր 1983
 25 Նոյեմբեր 1984
 22 Նոյեմբեր 1985
 Մարտ 1987
 24 Նոյեմբեր 1988
 10 Սեպտեմբեր 1988
 10 Սեպտեմբեր 1988
 27 Նոյեմբեր 1988
 27 Նոյեմբեր 1988
 14 Մայիս 1992
 25 Դեկտեմբեր 1992
 26 Նոյեմբեր 1993
 9 Հոկտեմբեր 1993
 18 Դեկտեմբեր 1993
 18 Դեկտեմբեր 1993
 1994
 1994
 1994
 11 Ապրիլ 1995
 11 Ապրիլ 1995

 11 Փետրուար 1996
 11 Փետրուար 1996
 3 Հոկտեմբեր 1998
 22 Յունիս 1999
 18 Յունուար 2000
 8 Յուլիս 2001
 12 Դեկտեմբեր 2002
 2 Փետրուար 2003
 2 Փետրուար 2003
 2 Փետրուար 2003
 2 Փետրուար 2003
 2 Փետրուար 2003
 16 Փետրուար 2004
 21 Մարտ 2004
 26 Յունիս 2004
 26 Յունիս 2004
 11 Մայիս 2006
 Յետ մահու, 17 Յունուար 2006
 Յետ մահու, 5 Նոյեմբեր 2006
 3 Մարտ 2007
 3 Մարտ 2007
 19 Սեպտեմբեր 2007
 19 Սեպտեմբեր 2007
 Յետ մահու, 10 Յուլիս 2008
 Յետ մահու, 14 Նոյեմբեր 2008
 14 Նոյեմբեր 2008

ՀԱՍՏԱՐԱՆ
Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒ

ՄԱՀԱՅԱԾ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ

ՆՈՒԻՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

1938ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 20ամեակի կեդրոնական յանձնախումբին նախաձեռնութեամբ, Փարիզի հայոց եկեղեցիին մէջ կը կազմակերպուի հոգեհանգստեան արարողութիւն՝ ի յիշատակ նահատակուած ու մահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու: Այդ առիթով, յանձնախումբին կողմէ սրտառուջ խօսք մը կ'արտասանէ Պ.Գ. Մերձանոֆ:

Պատմական իր կարեւորութեան համար, ստորեւ խօսքին ամբողջութիւնը:

«ՄԱՐԶԻԿ» 90ԱՄԵՆԱԿԻ ԲԱՏԱՌԻԿ





անունն Հ.Մ.Ը.Մ-ի քսանամեակի տօնակատարութեան կեդրոնական յանձնախումբի, յանուն տարագիր ու ցիրուցան հայ մարզիկներու, կու դամ խոնարհելու նահատակ եւ յաւէտ բաժնուած մեր մարզիկ ընկերներու նուիրական յիշատակին առջեւ:

Անծանօթ գինուորի այս յիշատակարանին առջեւ, ես կը դիտեմ մեր այն բոլոր մարզիկները, որոնք իրենց ջլապինդ բազուկին, ամրակուռ մկաններուն եւ անվհատ կորովին գորութիւնը ի սպաս դրին հայ ժողովուրդի Ֆիզիքական փրկութեան եւ նորահաս սերունդի հայատենչ դաստիարակութեան համար: Զինուորներ էին անոնք ալ, կամաւոր եւ պարտաճանաչ հայ գինուորներ:

Որքան երկար է անոնց շարքը: Դժուար է մի առ մի կանգ առնել անոնց թանկագին անուններուն առջեւ: Պոլսէն մինչեւ Տէր Զօր ու արաբական անապատները, Հայաստանի բարձրաբերձ սարերէն մինչեւ արտասահման ու այլուր, անոնք ամէնքն ալ քալեցին անվկանդ,- տեղ մը գինուորի հրացանը ու մախաղը ուսին, տեղ մը մարզիկի պայուսակը կռնակը, միշտ ի խնդիր հայրենիքի վերածնութեան, միշտ ի խնդիր մեր տառապակոծ ժողովուրդի Ֆիզիքական յարութեան:

Ամէնուրեք անոնք բարձր բռնեցին մեր ցեղին պատմական արժէքները, աւանդական առաքինութիւնները եւ ազգային դարաւոր ժառանգութիւնները: Ամէն տեղ անոնք ներշնչեցին ասպետական հպարտութիւն, կամք եւ ապագայի վառ յոյսեր:

Այսօր չկայ, յաւիտենապէս բաժնուած է մեզմէ տիպար մարզիկը՝ Շաւարշ Քրիսեան, զոհ թրքական նախճիրներու, չկայ Վահան Զերազը, որ Երզնկայի լեռներէն մինչեւ Կարս ու Ղարաքիլիսէի հայկական բանակի բոլոր հերոսամարտներուն իր անձնուէր բաժինն էր բերած, չկայ Հայկ Ճոլուեանը, որ դպրոցներէն ներս մատաղ սերունդը կը կազմակերպէր, չկան Հմայեակ Մատթէոսեանը, Ժիրայր Եղաժուրեանը, Ժիրայր Պոստանճեանը, Նուպար Սրապեանը, Արխանեանը, Զարմայր Այճեանը, Քրիս Ֆէնէրճեանը, Գառնիկ Շէհրիկեանը, Ներսէս Օհանեանը, Վանեցի Առիւծ Խաչիկը, Երուանդ Նշանեանը, Վարդավառ Եսփունճեանը, Աբիկ Խանճեանը, Գէորգ Քէրէսթէճեանը, Յովհաննէս Գորեանը, Գարրօ Պետրոսեանը, Հայկ Սրտիկեանը, Պէօրէքճեանը, Արտաւազդ Վարդանեանը, Սիմոն Սանթուրեանը, Օննիկ Գովանը, Մկր Մկրեանը, Տիգրան Խաչատուրեանը, Մարտիկ եւ Գաբրիէլ Շիշմանեանները, Ենովք Պասմաճեանը, Միհրան Պալքեճեանը, Սավայեանը եւ ուրիշ շատ շատեր, որոնք յաւէտ բաժնուած են մեզմէ:

Մենք վերապրողներս ու գործակիցներս, անոնց թանկագին յիշատակին համար կազմակերպուած այս հոգեհանգիստի արարողութեան միջոցաւ կու գանք սգալու հայ մարզական ընտանիքի անգին զաւակներուն կորուստը եւ ըսելու թէ անոնք մեր սրտերուն մէջ երբեք մեռած չեն: Վառ է անոնց հաւատքը մեր մէջ, եւ տակաւին երկար ատեն վառ կը մնայ բոլոր հայ սրտերուն մէջ:

Ո՛ւր որ ալ ըլլանք, հեռու թէ մօտ, հայրենիքին մէջ թէ տարագիր, մենք գուրգուրանքով պիտի թօթափենք անոնց

յիշատակին վրայէն ժամանակին փոշիները, պիտի սգանք, բայց պիտի ներշնչուինք, առանց ընկրկելու, առանց վհատելու, «միշտ հայ ժողովուրդին հետ, միշտ հայ ժողովուրդին համար»:



ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԲՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



փափաքն է եւ մաղթանքը, որ ան չհասկնայ այդ բառին իմաստը ու ստիպուի պատմութիւնները քրքրել անոր նշանակութիւնը ըմբռնելու համար, որովհետեւ ան, ապագայի սերունդը, այլեւս փրկուած քէմբի անտանելի մթնոլորտէն, պիտի ունենայ, կը սիրենք հաւատալ, իրեն յատուկ հանգըստաւէտ եւ առողջապահիկ բնակարան...»⁽²⁾:

Օր առաջ, քէմբի անտանելի մթնոլորտէն ազատելու եւ առօրեայ ապրուստը ճարելու մտօք, վրանաքաղաքներէն մինչեւ քաղաքներու կեդրոնները երկարող ճամբաներուն եզերքները, ցնցոտիներու մէջ մերկութիւնը հազիւ ծածկող հայն էր, որ օտարին առանց ձեռք երկարելու, պատառիկ մը չոր հացի համար, հայու դարերու ժառանգ ձեռներէց ոգիով զրահապատուած, օրերու հետ սկսաւ իր ապրուստի ճամբան գտնել: Ասոր զուգընթաց, հայ բանուորը, հայ տարագիր մտաւորականն ու գործիչը իր հոգեւորական դասով, շմոռցան ցեղին ոգեկան անունդին մասին մտածել: Թիթեղաշէն քաղաքներուն, թիթեղաշէն եկեղեցիներուն մէջ ու կողքին, արդէն մատաղ սերունդը սկսաւ հեգել Մեսրոպեան տառերն ու կարդալ մեր Մեծաքանչին բառերը: Հայ կեանքը հետզհետէ սկսաւ ձեւ ու մարմին առնել:

Հայաստանէն ետք, հայ մեծագոյն զանգուածը ներկայացնող Սուրբիոյ եւ Լիբանանի հայութեան ազգային ներքին կեանքին զարգացման զուգահեռ, նոյնքան զօրաւոր հիմերով սկսան կազմակերպուիլ հայ քաղաքական կուսակցութիւնները, դարբնելու մտօք հայ մարդուն քաղաքական միտքը: Այս կուսակցութիւններուն զուգընթաց կեանքի եկան այլազան միութիւններ, մշակութային ու մարզական, որոնց իւրաքանչիւրը հրապարակ իջաւ իր ոյժը տրամադրելու ազգային նոր զարթօնքի մը ի խնդիր:

Հայ գաղթականներու տեղաւորման օրերուն, Սուրբիոյ եւ Լիբանանի մէջ չկար երիտասարդական որեւէ լուրջ կազմակերպութիւն, մշակութային ու մարզական, նոյնիսկ բնիկներուն մօտ, այս զոյգ մարզերուն մէջ մենք արդէն հիմնադիրները հանդիսացանք ու յառաջապահը:

Հայլէպի մէջ, 1918ին սկսած մարմնակրթանքի շարժումը, դպրոց ու որբանոցներէն ներս, ասոնցմէ դուրս իր ծաւալը կը ստանար: Իբրեւ կազմակերպուած ոյժ, Հայ Երիտ. Միութեան կողքին հասակ նետող «Համազասպ» Մարզական Միութիւնը, մարզական կեանքի բազմաթիւ երեւոյթներու կիրարկումով, կը գրաւէ առաջնակարգ դիրք:

Հեծելաբաշտը, որ ժամանակի անակնկալներէն մէկը կարելի է նկատել, արդէն մարզանքի սովորական ճիւղ մըն էր միութեան սեմէն ներս: «Համազասպ» գեղեցիկ գաղափարը ունեցեր էր իր կողմէ մարզիկ տրամադրելու ազգային վարժարաններու աղջկանց բաժիններուն, մարզելու համար զանոնք:

«Համազասպ»ին շարքերը հետզհետէ կը խտանան:

Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, Ե. ՄԱՍ

«**Ք**էմբին գետինը կէս կանգուն ցեխ կար. դիմացնիս կը գտնուէին հազարաւոր հայեր, որոնք աւելի ուշ հասած էին եւ վրան չունէին պատսպարուելու համար: Տեսակ-տեսակ քուրջեր եւ պարկեր իրարու կը կապէին, երեք-չորս գաւազանի վրայ հաստատած, եւ այսպիսով ապաստանարան մը ձեւացուցած էին: Այս պատսպարաններէն մէկէն ներս նայելով, տեսայ որ վեց հոգի պառկած էին ցեխին մէջ. վրանին ալիւրի չորս պարկեր բացած ու ցուրտէն կը դողային: Այդ սրտաճմրկ տեսարանին առջեւ չէի պատուիրակը ըսաւ ինձի. «Շատ բան լսած էի, բայց մինչեւ այս պահս չէի կրնար երեւակայել որ մարզկային էակներ այդքան թշուառ կարենան ըլլալ»: Այս թշուառութիւնը, ստիպուած էի ամիսներ շարունակ դիտելու»⁽¹⁾:

«Ապագայ հայ սերունդը քէմբ բառը լսելուն ի՛նչ գաղափար պիտի կազմէ անոր մասին, չենք գիտեր: Ամէն հայու

Ֆուլթոնը կը հանդիսանայ օրուան խաղերուն առանցքը, ու ահա, իբրեւ կազմակերպութիւն, կ'ունենայ իրերաջաշորդ խումբերը:

Հայ Երիտ. «Համազասպ» Մարզական Միութիւնը իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ իրմէ դուրս տեղի ունեցող մարզական ընդհանուր երեւոյթներուն: Յաճախ տեղի ունեցող դաշտահանդէսներուն կը մասնակցի իր մարզիկներով:

Ինչ որ ամէնէն գեղեցիկ երեւոյթը պիտի ըլլար եւ հիմնաքարը՝ ապագայ գայիք բանակներուն, այդ կազմութիւնն է Հայկալի մէջ սկսուտական առաջին խմբակին:

Հայկալի մարզական կեանքին մէջ իր որոշ տեղը ունի Ազգ. Հայկազեան վարժարանը, կիրարկումովը դպրոցէն ներս չափական մարզանքի պարտաւորիչ դասերու եւ զարկ տալով նաեւ այլեւայլ խաղերու, որոնց շարքին Ֆուլթոնի իր խումբերը, որոնք իրարու կը յաջորդեն:

Հայկական որբանոցը ունենալով աւելի յարմարութիւն, միջոց ու միջավայր, աւելի լայն չափերով պիտի կիրարկէր մարմնակրթանքը՝ խաղ, Ֆուլթոն, հեծելանիւ, լողալ, արշաւ ու կանոնաւոր մարզանք:

«Համազասպ» Մարզական Միութեան հեծելանիւի խումբին դէմ հայկական որբանոցը ունէր իրը, աւելի մեծ ծաւալով, որ յաճախ կը մասնակցէր մրցումներու:

«... Հայկական որբանոցը ունէր տասնութ Ֆուլթոնի խումբեր, որոնք կը մարզուէին ընդարձակ մարզարանին մէջ, օժտուած՝ մարզանքի յատուկ բոլոր կարգ ու սարքով: Եւ ասիկա որբանոցի տնօրէն պրն. Լեւոն Ատուրեանի ջանքերուն շնորհիւ:

«Բոլոր որբերը ամէն օր կը ստանան շուէտական մարզանք: Ֆուլթոնի կարեւոր խումբեր են «Տաւրիկ» եւ «Արաքս»: Որբանոցը ունի նաեւ լողալու խումբը, հեծելանիւի արշաւախումբը: Տեղի կ'ունենան նաեւ գօտեմարտ, կռիւմարտ ու գործիքի վրայ մարզանք»⁽³⁾: Մարզական այս եռուն կեանքը, անկասկած, պիտի տար նաեւ մարզիչ ու վարիչ, որոնք հետագային իրենց ստացածէն բաժին պիտի հանէին ուրիշներուն, երբ նետուէին կեանքի ասպարէզ:

Հայկալի մէջ, Ներսէսեան, Հայկազեան, հայ բողոքական, հայ կաթողիկէ ու Կիլիկեան վարժարաններէն եւ հայկական ու տիկ. Եփփէի որբանոցներէն ներս կիրարկուած մարմնամարզի չափական ու գործնական դասաւանդութիւններէն զատ, դուրսը, հանրութեան ծոցէն ծնած, հետզհետէ ձեւ ու մարմին առնող հայ երիտասարդաց «Համազասպ» Մարզական Միութեանէն զատ, կային այլ խմբաւորումներ, որոնք գոյութեան եկած էին, կիրարկելու մտօք, մարմնակրթանքը՝ տարագրութեանէ ետք, նոր շունչ քաշել սկսող հանրութեան մէջ:

Յիշեցինք «Համազասպ» Մարզական Միութիւնը, ապա



«Ուսումնասիրաց»ը, «Արծիւ», «Արարատեան» եւ «Պատանեաց» Ֆուլթոնի խումբերը, ինչպէս նաեւ Բարեգործականի որբանոցի «Նուպարեան» Ֆուլթոնի խումբը:

Ասոնց մէջ «Ուսումնասիրաց»ը իր յատուկ տեղը ունի: Ան ծնունդ առած է Այնթապի մէջ եւ ուր մարմնակրթանքի տարածման մէջ մեծ դեր ունեցած է:

Այնթապը հայահոծ քաղաք եղած է եւ ուսման կեդրոն: Ամերիկեան միսիոնարութիւնը հոն կանուխէն մուտք գործած է ու քաղաքը օժտած բարձրագոյն վարժարաններով: Ասոնց դէմ նախանձախնդիր ազգայիններ ունեցած են համապատասխան իրենց վարժարանները: Միսիոնարները ընդհանուր ուսման հետ չէին անտեսեր մարմնակրթանքը: Այս պէտք է եղած ըլլայ գլխաւոր իմանք, որ Այնթապի մէջ, դեռ 1905ին, կազմուի «Ուսումնասիրաց Մարմնամարզական Ակումբ»ը: Այս ակումբը գործած է ընդարձակ գետնի վրայ: Ունեցած է Ֆուլթոնի քանի մը խումբեր ու կիրարկած է շուէտական մարզանք:

«Բռնագաղթի շրջանին անոր 3-4 անդամները երբ կըցեր են իրարու քով գալ, հոն կազմած են մարմնամարզական խումբեր: Զինադադարին «Ակումբ»ը վերագործած է հայրենիք, ուր դարձեալ բոլորանուէր յանձնուեր է իր նպատակին եւ իր դերը ունեցեր է մարզական այլ խումբերու կազմութեան մէջ:

«Կիլիկեան երկրորդ գաղթին Հայկալ եկած ու շարունակած է իր գործը: Մասնակցած է 12 մրցումներու, որոնց երկուքը միայն կորսնցուցած է: Արժանի եղած է կոչուելու Հայկալի ընդհանուր մարմնամարզական ակումբներու ախոյեան»⁽⁴⁾:

Այս շրջանին, Հայկալի մէջ, մարմնամարզի տարածման սատարողներ եղեր են տղքթ. Ալթունեան հայր եւ որդի, որոնք երկար ատեն «Համազասպ» ակումբին կը տրամադրեն մարզարան, ուր հարիւրէ աւելի հայորդիներ կը մարզուէին: Ասոնց կարգին կու գան Յարութիւն Քհնյ. Եսայեան, Ատուր Լեւոնեան, տղքթ. Պապիկեան եւ Ազգ. վարժարանի



հոգաբարձուները⁽⁵⁾ Այս բոլորին հետ եւ բոլորէն աւելի, մարզանքի սէրը արծարծող, անոր ծառայող նուիրեալ անձր կը հանդիսանայ մարզանքի ուսուցիչ Լեւոն Աբգարեանը:

Պէյրուսի նորահաստատ հայկական դպրոցը, որ կը սահմանափակուէր գլխաւորաբար Ս. Խաչ եկեղեցւոյ քէմբին ու Քարանթինայի շուրջ, դժուար թէ կարենար իր սկզբնական օրերուն մշակոյթի մարզին մէջ շօշափելի վերելք արձանագրել: Այդ օրերու Տոհմունի վարդապետը, ապաւինելով նորընտիր թաղական խորհուրդին, կը կատարէ փոխառուութիւն մը եւ շինել կու տայ տախտակաշէն Առաջնորդարան մը՝ երկու յարկով եւ անոր կողքին կտաւեայ տանիքով փայտաշէն եկեղեցի մը ու վարժարան մը, վերջինը Ամերիկեան Նպաստամատոյցէն առնուած մեծ վրան մըն էր: Ունէին 550 երկսեռ աշակերտ: Պերճանք պիտի նկատուէր այդ օրերուն վրան դպրոցի վարիչներէն պահանջել մարզական կեանքի շուրջ որեւէ տեսակի շարժում: Այս շարժումը Լիբանանի մէջ պիտի գար աւելի լաւ յարմարութիւն եւ աւելի լաւ պայմաններ ունեցող Ամերիկեան Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի որբանոցներէն, որոնց կարգին իր բացառիկ տեղի ունեցած է Պէյրուսի 35 քլմ. դէպի հիւսիս, փիւնիկեան նշանաւոր քաղաք, Պիպլոսի պատմական աւերակներուն անմիջական ստորոտը գտնուող Ժիպէյի մանչերու որբանոցը:

1920ին, երբ պրն. Թրէվիզ դուռը կը բանար այս որբանոցին, խղճի եւ սրտի մարդ ինքը, առաջին օրէն իսկ իր շուրջ կը հաւաքէ ժամանակի հայ լաւ ուսուցիչները եւ անոնց ինամքին կը յանձնէ որբերուն ու Ֆիզիքական դաստիարակութեան պատասխանատու գործը:

Ժիպէյի ուսուցչական կազմը, իրեն յանձնուած որբերուն մտքի մշակումին հետ, անոր հաւասար, նոյնիսկ գերազանց դիրքի վրայ ուզեց դնել տղոց Ֆիզիքական դաստիարակութիւնը: Հոն, մարմնակրթանքի բոլոր տեսակներն ալ

կիրարկել սկսուած է առաջին օրէն իսկ: Սկզբնական օրերուն, որբերու ընդհանուր զարգացման գործին լծուած են Ստեփան Տարտունի, Հայկ Արամ Պալեան, Կոստան Պանտիկեան, Մ. Պալիկեան, Կոպեռնիկ Մանսուրեան, որոնք ինքնանուիրումով մը ուզած են դարբնել որբ սերունդին մտային զարգացումին հետ նաեւ ազգային գիտակցութիւնը, եւ այս բոլորը կատարեալ եւ լաւագոյն արդիւնքով յառաջացնելու համար, առաջին օրէն իսկ մօտէն հետաքրքրուած են մարմնակրթանքով:

Որբանոցին առաջին մարզիկը եղած է Կոպեռնիկ Մանսուրեան, իսկ Ստեփան Տարտունի, իբրեւ գլխուորական, ջանացեր է որբերը աւելի չարքաշուրթեան մղել: Յաճախ, նոյնիսկ ձմրան ցուրտ օրերուն, Տարտունի, տղաքը ներքնագգեսաներով, երկար արշաւի կամ վազքի մղելով դէպի լեռները, ապա քրտնաթոր գանոնք իջեցուցեր է ծով, ապա լաւ մը հագուեցուցեր ու հանգիստի տարեր է: Քանի մը հարիւր

տղաք մէկ անգամէն, սիրով եւ անհուն հաճոյքով հետեւեր են այս եւ նման արշաւներու: Այս արշաւները իրենց արդիւնքը պիտի տային հասնող սերունդը դարձնելով խիզախ, կորովի, ձեռներէց եւ առոյգ: Սպարտական ուղիով ընթացող այս արշաւանքներով ու մարզանքով չբաւականանալով, որբանոցին տնօրէնութիւնը այս բոլորը, մանաւանդ սկսուածից աւելի զարգացնելու համար, Հայկէսին կը հրաւիրէ մարզիչ եւ սկսուած խմբապետ Լեւոն Աբգարեանը:

Նահր Իպրահիմի տղոց որբանոցը, որ Ժիպէյ չհասած, համանուն գետին ծովեզերեայ փերուն վրայ կը գտնուէր, երկար կեանք չ'ունենար, որովհետեւ մալարիան գոհեր կը խլէր որբերու շարքերէն: Հոս ալ մարմնակրթանքը ի պատուի էր: Շատ հաւանաբար լաւ մրցող մը ըլլար Անթիլիասի եւ Ժիպէյի որբանոցներուն դէմ, եթէ շուտով լուծարքի չենթարկուէր: Այս որբանոցին տղոց մէկ մասը Ժիպէյ, իսկ միւս մասն ալ Անթիլիաս կը փոխադրուի:

Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի որբանոցներու շարքին շատ կարեւոր տեղ կը գրաւէր Անթիլիասի որբանոցը, ուր որբերուն թիւը երբեմն հասաւ մինչեւ 1500ի, մէջը ըլլալով նաեւ Ժէյ Էլ Տիպի որբանոցը: Կային նաեւ Մաամըլթէյի տղոց որբանոցը, ինչպէս նաեւ Ղազիրի, Ճիւնիի եւ Սայտայի աղջկանց որբանոցները: Ասոնց կարգին նաեւ Քէլէկեան եւ հայ կաթողիկէներու որբանոցները, որոնք սակայն, դժբախտաբար, որեւէ կապ չունէին Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի որբանոցներուն հետ:

Դեռ 1922ին, Պէյրուսի ժողովուրդին համար, բացի Ամերիկեան Համալսարանի շրջափակէն ներս, բացարձակ նորութիւն համարուող ողիմպիականները սկսան կատարել, Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի որբանոցներէն ներս, իբրեւ միջ-որբանոցային ողիմպիական մրցումներ: Այս մրցումները առհասարակ տեղի կ'ունենային Ամերիկեան Համալսարանի դաշտին վրայ:

Մեծ խանդավառութեան, հոգեկան հա-
ճոյքի ու կազդոյրի աղբիւրներ էին այս
մրցումները: Որբանոցները կ'ունենային
իրենց յատուկ ողիմպիականները գտումի
համար: Լաւագոյնները կը զրկուէին միջ-
որբանոցային մրցումներուն:

1924ին, գտումի այս մրցումները տեղի
կ'ունենան Մայիս 10ին, նոյն ատեն թէ՛ Ան-
թիլիասի եւ թէ՛ Ժիպէյլի մէջ: Երկու գոյնե-
րու բաժնուած խումբերը՝ «Շանթ» ու
«Կայծ» անուններով մկրտուած, իրենց
որբ խմբապետներով՝ Օննիկ Փիլիկեանով
եւ Դանիէլ Դանիէլեանով կը մրցին: Այդ
օրուան թարմ տպաւորութեան ներքեւ
գրի առնուած հետեւեալ տողերը կը քա-
ղենք Օննիկ Փիլիկեանի յուշատետրէն:

«1924 Մայիս 20ին, Պէյրութի Ամերիկ-
եան Համալսարանի խաղավայրին վրայ
տեղի ունեցաւ միջ-որբանոցային դաշտա-
հանդէս: Կը մասնակցէին Մերձաւոր Արե-
ւելքի Նպաստամատոյցի հովանաւորու-
թեան տակ գտնուող երեք որբանոցները՝
Ժիպէյլ, Անթիլիաս ու Սայտա:

«Սայտան արաբական որբանոց էր Նպաստամատոյցի
հովանաւորութեան ներքեւ, թէ՛ եւ նուազ մարզուած էին,
բայց կայտառ եւ եռանդուն էին: Մեր ձեռք բերած արդիւն-
քով օտարներուն եւ տեղացիներուն հիացմունքին առար-
կան եղանք:

«Անգամ մը եւս հպարտացան հայկական վեհ ճակատնե-
րը, անհետացան կարծէք այդ թարմ ճակատներուն վրայ
ակօսուած որբի կնճիռները... Ու հայ հանդիսականներուն
դէմքերուն վրայ ուրուագծուեցաւ հայու քաղցր ժպիտը:

«Յաղթականներ, խելացուցիչ ծափերու տարափին մէ-
ջէն յառաջանալով իրենց մրցանակները ստացան:

«Մեր որբանոցը - Ժիպէյլ- արժանացաւ պատուի դրօշին,
որուն ծալքերուն մէջէն կը նշմարուէր - Ժիպէյլ ախոյեան:

«Մեր խլած մետաքսահիւս դրօշով, նուագախումբի
առաջնորդութեամբ, երկու շրջան կատարեցինք խաղավայ-
րին շուրջ եւ աճապարեցինք հասնիլ որբանոց, ուր հազարա-
ւոր որբեր ակնդէտ մեր դարձին կը սպասէին:

«Ուրախ երգերով, բացականչութիւններով կը հասնինք
որբանոց: Հոն կար խանդավառութիւն, եռուզեռ: Հազա-
րաւոր որբերու կեցցէները օդը կը թնդացնէին. որբացած
կրծքերը հրդեհուած էին խանդ ու եռանդով, ի՛նչ ոգեւորու-
թիւն, ի՛նչ աղաղակ յաղթութեան...»:

Որբանոցներու շրջափակերէն ներս կազմակերպուած
դաշտահանդէսներուն ներկայ կ'ըլլային ազգային եւ օտար
անձնաւորութիւններ: Այս անձնաւորութիւններուն մէջ
առանձնայատուկ տեղ ունէր Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ
Բ. Հայրապետը, որ միշտ ներկայ եղած է, աչքերով դիտած
ու հոգեկան կազդոյր զգացած է տեսնելով իր անժառանգ
զաւակներուն եռանդն ու աւիւնը:

Մեր տրամադրութեան ներքեւ գտնուող յուշատետրէն
օգտուելով, կու տանք նաեւ հետեւեալը-



8 Ապրիլ 1928. Հ.Ս.Ս.ի Պէյրութի ֆութպոլի Բ. խումբը:

«Ամսոյս 25ին, 1924ին,- ամսուան անունը չկայ Ն. Բ.-
տեղի կ'ունենայ Շաբաթ օրը, կէսօրէ ետք ժամը 2ին, Ժիպէյ-
լի որբանոցին տարեկան դաշտահանդէսը իր մասնաւոր
խաղավայրին վրայ:

«Որոշուած ժամուն, հիւրերը, 200 հոգիէ աւելի, հայ եւ
օտար, իրենց տեղերը գրաւեր էին:

«Հանդիսականներուն մէջ ներկայ էր Սահակ Բ. Կաթո-
ղիկոսը, որ որբանոցին տնօրէնին կողմէ մասնաւոր հրա-
ւիրուած էր: Կէսօրին ան որբանոց հասաւ, այցելեց ճաշաւոր-
րահները, օրհնեց մեր սեղանները:

«Դաշտահանդէսը սկսաւ սկսուածներու եւ մանկապար-
տէզի փոքրիկներու տողանցքով... Ապա սկսան ողիմպիա-
կան խաղերը: Մեր որբ մարզիկները կատարեալ հնազան-
դութեամբ կը հետեւէին իրենց խմբապետներու հրամաննե-
րուն... Որբանոցին նուագախումբը մերթ ընդ մերթ
կը նուագէր ոգեւորող եղանակներ, որոնց ազդեցութեան
տակ մրցակցութիւնը սուր հանգամանք կը ստանար:

«Հանդիսականները պահ մը հին յունական օրերը ապրե-
ցան, երբ սկսաւ զօտեմարտ, կռիւմարտ, վազք ու պոռթ-
կում...»:

(Շար. 5)

- (1) «Մասիս», թիւ 155:
- (2) «Սուրիահայ տարեգիրք», բժ. Սեւեան, էջ 208:
- (3) «Սուրիահայ տարեգիրք» 1924, էջ 248:
- (4) Նոյնը, 1924, էջ 289:
- (5) Նոյնը:

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐՈՒՆ ՊԱՏԳԱՄԸ



Ազգասիրության ամենն կարելու գործերն մեկն է սիրելի անոնք, որոնք օր մը ազգին նայուածքները, յոյսերը, ակնկալութիւնները իրենց վրայ պիտի կեդրոնացնեն, ամեն հայ տղու եւ ամեն ծնողքի համար մեր ստեղծած նոր շարժումը, Հայ Պոլ Սկաուտներու շարժումը - հաւատքի չափ նուիրական պետք է ըլլայ, որովհետեւ ան հիմնուած է ազգասիրութեան եւ բարոյականութեան առաջնորդող գաղափարներուն վրայ:

Մեր երդումը շատ կարճ ու պարզ պիտի ըլլայ. հրաւերը ազգային է, որովհետեւ յառաջ գալիք բարիքը ազգային պիտի ըլլայ. այդ երդումը կը պարտադրէ. «Պատուոյ վրայ երդնուլ ազգին ու հայրենիքին որեւէ կերպով օգտակար ըլլալ»: Այս երդումը գիտակցօրէն կ'ընենք, այս երդումին տակ կը ստորագրենք ու ձեզի կ'ըսենք պիտի չուզէի՞ք ինծի պէս ընել:

ՇԱԽԱՐԾ ԶՐԻՍԵԱՆ

Ամեն բանէ առաջ, նոր սերունդին բարոյական ուժերը պետք է խնայել, եւ ես չեմ գիտեր այս նպատակին ծառայող անելի լաւ միջոց՝ քան սկաուտութիւնը: Բոլոր ազգերու պատկանող լրջամիտ խորհողներ, կառավարութեանց պետերն եւ համալսարաններու ուսուցիչներն սկսեալ, կը գնահատեն սկաուտութիւնը, իր իրական արժէքովը. այն է՝ իբր լուրջ կազմակերպութիւն մը, որ նպատակ ունի նոր սերունդը պատրաստել ոչ միայն հոգեբանական, մանկավարժական նորագոյն ամենն լուրջ սկզբունքներու համաձայն, այլեւ՝ ընկերային նոր պահանջներու հիման վրայ:

Յառա՛ջ, ուրեմն, ինչպէս կ'երգէին երբեմն Պոլսոյ սիրեցեալ հայ սկաուտները, յառա՛ջ անվեհեր, սիրելի՛ երիտասարդներ, բարի է գործը գոր կը կատարէք, ազգին երախտագիտութիւնն է ձեր վարձքը: Յառա՛ջ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԻՆԴԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները առանց պատճառի չէ որ որդեգրեցին «ՀԱՅ ՄԱՐՏՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ» վերտառութիւնը: Մարմնամարզական բաժնի բաւական չէր հիմնադիրներուն իտեալը պարզելու համար: Մեր որդեգրածը մարմնամարզը չէր միայն, այլ՝ մարմնակրթութիւնը, իր լայն, ամբողջական եւ բարերար իմաստովը:

Հայ ժողովուրդի գլխուն պայթած փոթորիկները Հ.Մ.Ը.Մ.ի ընթացքն ալ խանգարեցին պահ մը, բայց չկարողացան ջնջել նետուած բարերար սերմը: Հ.Մ.Ը.Մ.ը կանգուն է, եւ վստահութեամբ կը դիտէ ապագան: Ան կը հաւատայ իր ճիգերուն ուժին, ու իր իտեալին յաւերժութեան: Ան կը հաւատայ, թէ պիտի գա՛յ իր երազած սերունդը:

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ



«ՄԱՐԶԻԿ» 90ԱՄԵՆԱԿԻ ԲԱՅԱՆՐԿ

ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Հայրենիքը մարդու սեփական տունն է, ուր ան օտար օրհնքին ենթակայ չէ, ուր ինքն իր տէրը կը զգայ, թէ եւ զայն միլիոնաւորներու սեփականութիւնը կը նկատէ միաժամանակ ու անոնց հետ կը բաժնէ: Մարդ իր հայրենիքին մէջ ինքզինքը ազատ կը զգայ, ամէն մէկուն հաւասարը, իր սեփական արժանապատուութիւնը յարգուած, ինչ որ մեծապէս կը հաստատէ հայրենիքի զգացումին վեհութիւնը: Ընկերային անհաւասարութիւնները, կրօնական ըմբռնումներու շուրջ կողմնակցութիւնները, կաշկանդումներն ու հալածանքը հայրենիքի գաղափարը կը ջլատեն:

Հայրենիքը թէ եւ անկորնչելի կը նկատեն շատեր, սակայն պատմութենէն կան բազում օրինակներ, ուր անոր պաշտպանութիւնը յարատեւ ճիգի կը կարօտի, եւ մէկ սերունդի անուշադրութիւնը կամ թերացումը համարժէք է դաւաճանութեան, քանզի հայրենիքը կրնայ կորստեան մատնուիլ, ինչպէս եղած է դժբախտաբար մեր՝ հայուն հայրենիքին պարագան: Ուստի քանի որ ամէն ոք իրը կը սեպէ զայն, ունի ուրեմն անձնական պատասխանատուութեան նոյնքան կարեւոր բաժին, իրմէ կախում ունի նաեւ հայրենիքի կորուստը կամ փրկութիւնը:

Հայրենիքի էութեան համար ուրեմն նոյնպէս անհրաժեշտ է մշտական բարոյական դաստիարակութիւն, որպէսզի անոր նկատմամբ մեր գաղափարաբանութիւնը իր նպատակէն չչեղի, որպէսզի մարդուս միտքը չկուրանայ եւ իր պաշտած զօրեղ հայրենիքը կայսերապաշտութեան ուղին չմտնէ, ատելի չդառնայ միւս ազգերու աչքին, որ մարդկայնութեան զգացումներէն չհեռանայ:

Այս բարոյական դաստիարակութեան գլխաւոր նպատակը պէտք է ըլլայ յարգել ուրիշներու հայրենիքը, յարգել մարդը առհասարակ, սիրելով իր հայրենակիցները: **ԶԿԱՅ ԱԻԵԼԻ ԱՐԴԱՐ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ՝ ՔԱՆ ՊԱՏԿԱՆԻԼ ԱԶԱՏ, ԱՆԿԱՆ ԵՒ ԲԱՐԳԱՒԱՃ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԸ:**

Դուք ինձմէ կը սպասէիք պատմել ռազմիկի մը եւ իր ընկերներուն քաջագործութիւնները: Պատերազմի դաշտին վրայ մարդ վկան է մարդկային ամէն տեսակ առաքինութիւններու ու թերութիւններու, ան ականատես է դժոխային պատկերներու, մարդկային տառապանքի հազար ու մէկ երեւոյթներու: Գալով ինձ ես տեսայ քաջութեան եւ վատութեան անհամար դրուագներ: Պատմել քաջութիւններու մասին, մէկզի թողուլ ստոր արարքները, ճշմարիտ պատկերը պիտի չըլլար:

Այն բոլոր կռիւներուն յաջողոյց հանգիստի պահերուն, որոնց ես մասնակցած եմ, հաւատացէք որ ինքզինքս մինակ կը զգայի, ու կը խորհրդածէի այդ բոլորը կանխելու աւելի լաւագոյն միջոցի մը մասին, ու մասնաւորաբար մեր ազգին պատկանող անհատներուն ցուցադրած յոռի կողմերուն մէջ կը գտնէի պատճառը մեր մեծ կորուստին, հայրենիքի կորուստին:

ԱՅՍՕՐ, ԱԻԵԼԻ ՔԱՆ ԵՐԲԵՔ, ԵՍ ՀԱԻԱՏԱՅԱԾ ԵՄ ՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՁԵՌՔ ԿԸ ՁԳՈՒԻ ՀԱԻԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԻ ՁՐՈՒԹԵԱՄԲ:



ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶ



«ՄԵՐ ՈՒԺԵՐՈՒՆ ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԱԿԷՏԸ...»

Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսական հիմնական արժեքները ներկայացնող գրու-թիւններ են ստորեւ տրուած երեք հատուածները, որոնք քաղուած են միութեան ծնունդը նախապատրաստած «Մարմնամարզ» թերթի 1913ի խմբագրական-ներէն:

1913-1918, 1918-2008. Այժմ ուղղութիւնը, այժմ յանձնառութիւնը՝ ծառայելու «մեր ուժերուն մինչեւ վերջակէտը, մեր նիւթական միջոցներուն մինչեւ վերջին կաթիլը...»:

ՅԱՌԱՎՁ...

Սկսանք քայել ու ամբողջ կեանք մը պիտի քալենք: Ծամբայ ելլելէ առաջ ունեցանք մեր տարակուսանքները, խնդրոյն վրայ նայեցանք քիչ մը գործնական մարդու տեսակէտով, նկատի ունեցանք այդ երկա՛ր ճանապարհին բոլոր հաւանական դժուարութիւնները, եւ սակայն ճամբայ ինկանք աւելի՛ կայտառ քան երբեք, աւելի՛ պինդ փարած մեր գաղափարական դրօշին, զոր բարձրացնելէ վերջ չէինք կարող թողուլ, ու մանաւանդ, աւելի խոր կերպով համոզուած մեր ապագայ երիտասարդութեան կենսունակութեան եւ հայ ազգին վերածնութեանը մասին:

Երիտասարդական խանդով մը էութիւնը կորսնցուցած ինքնախաբէութիւն մը չէ՞ արդեօք մեր այս հաւատքը: Գուցէ: Բայց, այժմէն մենք հանդիսաւորապէս յանձնառու կ'ըլլանք մեր բոլոր ճիգերը, ուժերը, կարողութիւնները տրամադրելու մեր գաղափարներու տարածման, տեսականացման եւ իրականացման: Հայ ազգի Ֆիզիքական ուժին, մարմնական առողջութեան եւ անոնցմով յառաջ գալիք անոր ապագայ բարօրութեան դատին ի սպաս դնելու, եւ այս՝ ո՛չ թէ մէկ, ո՛չ թէ երկու տարի, այլ մեր ուժերուն մինչեւ վերջակէտը, մեր նիւթական միջոցներուն մինչեւ վերջին կաթիլը, մենք այս բոլորը պիտի ընենք եւ պարտաւոր ենք ընելու:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐԸ

Քանի մը տարի առաջ, ձենէ ո՞վ պիտի կարենար վստահօրէն ըսել, թէ այսքան քիչ ժամանակի մը մէջ ի վիճակի պիտի ըլլար որդեգրելու եւ իւրացնելու այնպիսի գաղափարներ, որոնք նոյնիսկ շատ նոր են եւրոպական քաղաքակիրթ երկիրներու համար:

Դանդաղօրէն քալեցինք, ճիշդ է թէ յուսահատութեան պահեր ունեցանք, եւ սակայն արդար է խոստովանիլ, թէ անընդհատ կերպով մեզի հետ եւ մանաւանդ մեր կողքին քալեց հայ ժողովուրդին ամենակենսունակ մա-

սը, այն է՝ հայ երիտասարդութիւնը: Մեր կոչերուն, իբր համակրանքի գործնական պատասխան, կազմուեցան մարզական խումբեր, տեղի ունեցան ողիմպիական խաղեր եւ գոյութիւն առին հայ սկաուտական կազմակերպութիւններ, որոնք մարզական գաղափարին ամէնէն արդիական ձեւը կը մարմնացնեն:

...Այսքան ոգեւորութիւն արդէն կ'սկսեցինք հանրութենէ մը, որ արդէն զանազան առիթներով ապացոյցը տուած է իր ողջմտութեան: Մենք մեր հիացումին հետ մեր շնորհաւորութիւնները կը յայտնենք այս գեղեցիկ շարժումը գլուխ հանող տարրերուն:

Հ.Մ.Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ

Հ.Մ.Ը. Միութիւնը կոչուած է ամենամեծ չափով պակաս մը լրացնելու հայ իրականութեան մէջ: Մեր նպատակը շատ որոշ է եւ սակայն գերազանցօրէն ազգային եւ վսեմ նպատակ ունի. այն է, հայ ցեղին ֆիզիքական եւ բարոյական ազնուացումը ձեռք բերել մարմնակրթութեամբ, որուն անուղղակիօրէն պիտի հետեւին նաեւ բարոյական կարողութիւններու եւ արժանիքներու զարգացումը:

...Եթէ մենք ենք որ հայ ազգին մէջ այս շարժումը եւ իր խանդավառութիւնը առաջ բերինք, իրաւունք կու տանք մենք մեզի ուրիշներէն քիչ մը աւելի մօտենալու խնդրոյն եւ անոր տալու գոյն մը, ձեւ մը, որուն շնորհիւ միայն կարելի պիտի ըլլար ֆիզիքական դաստիարակութեան բարեբար շարժումը տարածել հայութեան բոլոր խաւերուն, դասակարգերուն եւ մտայնութիւններուն մէջ, անոր գոյութիւնը ապահովել եւ զօրացնել:

Եւ այս ձեռնարկը վստահեցանք ու յանձնեցինք այնպիսի անձերու, որոնք իրենց խորհելակերպովը, թէ դաստիարակութեամբը եւ թէ համոզումներովը, փորձառութեամբը եւ կեանքի փիլիսոփայութեամբը միշտ քիչ մը աւելի հեռուն տեսնել վարժուած են:

90ԱՄԵԱՅ ՅԱՂԹ-ԱՆԱԿԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

90 տարի առաջ՝ 1918 թուին, Եղեռն ապրած մեր ժողովրդի հարազատ գալակները Կոստանդնուպոլսում հիմնադրեցին Բ.Ս.Ը.Մ.ն հաւատալով «Առողջ միտքը՝ առողջ մարմնում» նշանաբանին: Այս խիզախ քայլն առնողներն թերեւս չէին էլ պատկերացնում, որ իրենց հիմնադրած միութիւնը ամբողջ 90 տարի, եթէ ոչ իր ծննդավայրում կամ Գայաստանում, ապա Սփիւռքում աշխարհացրիւ մեր ժողովրդի գոյատեւմանը խթանող հիմնական ազդակներից մէկին է վերածուելու:

Անգնահատելի է Բ.Ս.Ը.Մ.ի կատարած դերը սփիւռքահայ սերունդներին ազգային ոգով դաստիարակելու, նրանց հայրենասիրութեամբ, արդարադատութեամբ, քաջութեամբ տոգորելու գործում, ուր իւրաքանչիւր մարզիկ կամ սկաուտ, նշանաբան ունենալով՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ը դառնում է միութիւնը ուժեղացնող սիւներից մէկը:

Բ.Ս.Ը.Մ.-Գ.Ա.Ս.Կ.ի հիմնադրումը վերանկախացած Գայաստանի Գանրապետութեան մէջ, կիսատ մնացած գործի շարունակութիւնն է, որը յարատեւ աշխատանքի շնորհիւ անկասկած հայրենասէր սերունդներ դաստիարակելու գործում իր ազդեցութիւնն է ունենալու Գայրենիքում նաեւ:

Բ.Ս.Ը.Մ.ի 90ամեայ վաստակի նշումը պարզ մի տարեդարձ չէ, այլ 90ամեայ յաղթանակը՝ վեհ մի գաղափարի, հայ մնալու կամքի, յարատեւ պայքարի եւ ապագայ յանձնառութեան:

Գայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութիւնը, որ Իրանում, իր չորս մասնաճիւղերով եւ շուրջ 2000 անդամներով, որպէս կրտսեր եղբայրը Բ.Ս.Ը.Մ.ի, արդէն 64 տարի միեւնոյն նպատակներով եւ վարքագծով սերունդներ է դաստիարակել, ի սրտէ շնորհաւորում է Բ.Ս.Ը.Մ.ի գործունեութեան 90ամեակը եւ մաղթում նորանոր յաջողութիւններ եւ վերելք նրա բոլոր մասնաճիւղերին:

Փառք ու պատիւ հիմնադիրներին:

Փառք ու պատիւ անցած սերունդներին:

Ուժ ու կորով ներկայ եւ գալիք սերունդներին՝ ի զօրացում Սփիւռքի եւ Գայրենիքի:

Թեհրան

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ԱՐԱՐԱՏ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

90 ԱՄԵԱԿ Զ.Ս.Ը.Մ.Ի



ՄԱՐԺՈՒՄՈՒՄ

**Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական համոզումները ներկայացնող արժեքա-
լոր փաստաթուղթ մըն է ստորեւ տրուած գրութիւնը, որ իբրեւ
խմբագրական լոյս տեսած է միութեան անդրանիկ պաշտօնաթերթին՝
«Հայ Սկաուտ»ի առաջին թիւին մէջ (25 Հոկտեմբեր 1919): Խմբագի-
րը՝ Կարօ Ուշագլեան հայ մարդու տոկունութեան եւ աննկուն հաւատ-
քին անդրադառնալէ ետք՝ կը գրէ.-**

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը (Հ.Մ.Ը.Մ.) խոր համոզում գո-
յացուցած ըլլալով իր ձեռնարկին առաջ բերելիք դրական եւ բարոյական ար-
դիւնքին կարեւորութեան վրայ, գործի ձեռնարկեց զինադադարի սկիզբէն եւ
ետ կազմակերպելով մարմնակրթական եւ սկստական խումբեր եւ մինչեւ
այսօր գործեց կատարեալ հաւատքով...

Արդ, սպաք զնահատելով Հայուն տոկունութիւնն ու կորովը, կ'ուզենք այդ բարեմասնու-
թիւնները կարգի բերել եւ խնայողական ձեւով մը կիրարկել, որ քիչ ուժով շատ արդիւնք
դուրս գայ, որ մեր թրուական նուազութիւնը, մեր պակասածները դարմանենք մնացածներուն
հոգեկան եւ մարմնական ուժերու օրինաւոր տնտեսումովը, պատրաստենք անհատներ,
որոնք կարող ըլլան ապագայ քաղաքակիրթ աշխարհի հարուածները զիմագրաւելու, մրցում-
ներու կուրծք տարու:

Մենք հայերս դարերով անտիսիփիլին կեանք մը ապրելով վարժուած ենք կամայականու-
թեան եւ անհաւասարակչութեան, որով կրնանք չարաչար տուժել մեր այդ թերութիւննե-
րուն երեսէն եւ «ծովէն անցնելով գետի մէջ խեղդուիլ»:

Մենք հաւատք չունինք զուտ բարոյական քարոզներու վրայ, երբ անոնց չընկերանար
ԳՈՐԾԸ. մենք կ'ուզենք հաստատուն հիմերու վրայ դնել մեր ազգային նկարագիրը, կ'ուզենք
պատրաստել օրինապահ՝ բայց ոչ ստրուկ մարդը, տալ անոր առողջ եւ կորովի մարմին եւ
ուղղադատ միտք, ջնջել անկէ գձձութեան, կեղծիքի, եսասիրութեան ու գողութեան ջիղե-
րը եւ անոր տեղ դնել շիտակ անշեղ նկարագիր, ձեռքազատել քաղաքակրթութեան մատակա-
րարած կարգ մը թոյներէն ու տալ անոր բնութեան օրինակը եւ օրէնքը. ընտելացնել զինք ու
բնութեան եւ սորվեցնել անոր քաղաքակրթութիւնը, հաշտեցնել բնութեան անտեղիտալի
օրէնքներուն հետ, պատրաստել այլասէր ազատ մարդը, ազնիւ հպարտութիւն մը տալ անոր,
փափկանկատ ընել զայն առանց կեղծաւոր ըլլալու, չսակարկուող ուղղամտութիւն մը դնել
անոր մէջ:

Մենք այս ամէնը կը սպասենք մեր սկստական կրթութենէն եւ իրաւունք ալ ունինք.
մենք փորձերը տեսանք եւ կը տեսնենք ամէն օր: Սկստութիւնը մոգական գաւազան մըն է,
որ հրաշքներ կը գործէ տակաւին, որովհետեւ բարոյական խրատները փոխանակ չոր խօսքե-



րով աւանդելու գործնականօրէն ցոյց կը տրուի պատանիներուն. մեր դպրոցը բնութեան ծոցն է, մեր ուսուցիչները բնութեան տեսարաններն են, հոն պատանիին հոգին կը մաքրագործուի իր ժանգերէն, թուիչք կ'առնէ եւ կը ձգտի դէպի բարձրը, առողջ նրբութիւն մը կը ստանայ իր հոգին, իսկ մարմինը մաքուր օդի, արեւի ճառագայթներու եւ ծաղիկներու բոյրերու լոգանքին մէջ կ'ուռճանայ եւ ընդունակութիւն ու կորով կը ստանայ բարձր հոգիի մը հրամանները գործադրելու համար: Հոգին ու մարմինը կրնան համերաշխիլ միայն բնութեան ծոցին մէջ, գեղեցիկ տեսարաններու առջեւ: Հոն պատանին ու նոյնիսկ տարեցը զօրաւոր կերպով ազդեցութիւնը կը կրեն բնութեան տեսարաններուն եւ տարրերուն, ժայռերը հոգիին վրայ կը դրոշմեն իրենց խորխտութիւնը եւ կորով կը ծնանին պատանիին մէջ. հսկայ ծառերը սլացք կու տան մտքին եւ գգացումին, խորունկ ձորերը խորհելու նիւթ կը մատակարարեն անոր, իսկ ծաղիկներու խաղաղ տեսքը կու գայ քնքշութեան քողով մը ծածկելու այս ամեհի տպաւորութիւնները: Ահա այս դպրոցին մէջ է որ կը կերտուի բնութեան գաւազ տուցող մարդը:

Սկստական դաստիարակութիւնը չ'ուզեր միակողմանի ըլլալ եւ պատանեկութիւնը կիսավայրենիներու պէս թափառեցնել լեռ ու սար. ան պիտի կազմէ քաղաքի մարդը. ընկերութեան մարդը, տալով անոր քաղաքակրթութեան օգտակար կողմերէն օգտուելու ամէն միջոց: Հայ սկստաւոր յարգանք եւ վստահութիւն պէտք է ներշնչէ նոյնիսկ թշնամիին. անոր ներկայութիւնը որեւէ տեղ քաջալերանք եւ ապահովութիւն պէտք է ազդէ շուրջիներուն, ուր տիրութեան տեղ ժպիտ եւ յոյս պէտք է սփռէ ան. վերջապէս ան ըլլայ լաւատես եւ յուսադրող, գործնական, վստահելի եւ կարգապահ անհատը, որուն կարենաս յանձնուել եւ յանձնել հայրենիքի շահերը, իբր ամենակորովի քաղաքացին:

Եւ այս նպատակին հասնելու համար մենք կեցած ենք անխորական հողի վրայ, անկախ յարանուանական եւ կուսակցական նկատումներէ: Մեզի համար արժէք ունին ամէն անհատ, ինչ յարանուանութեան եւ ինչ կուսակցութեան ալ պատկանի, մենք պաշտօնապէս որեւէ կուսակցութեան չենք յարած: Մեր կազմակերպութիւնը հաւաքաբար չի զբաղիր քաղաքականութեամբ, իսկ անդամները անձատաբար ազատ են իրենց համոզումներուն մէջ. մեր դռնէն ներս կը դադրի ամէն կողմնակալութիւն եւ կուսակցական ու կրօնական խտիր, եւ մենք միազանգուած կ'ընթանանք մեր իտէալին ընդառաջ:

Պիտի թափանցենք ժողովրդական խաւերու մէջ, արթնցնելու տարեց երիտասարդութեան մէջ սփորի եւ աթլետիկ խաղերու ճաշակը՝ իրենց պարապոյ ժամերը օգտակար կերպով անցնելու եւ իրենց մարմնական կորովը պահելու, սատարելու համար, պիտի թափանցենք տուներէն ներս՝ կազմակերպելու առողջապահիկ, պարզ եւ հաճոյալի ապրելակերպը: Վերջապէս մեր գաղափարականն է պատրաստել ԱՌՈՂՋ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ համար:



ՎԱՍՏԱԿԱՇԱՏ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍԻՆ

Հ.Մ.Ը.Մ.ի գոյութիւնը կախում չունի իր խումբերուն եւ մարզիկներուն տարած յաղթանակէն կամ կրած պարտութենէն:

Պարտութիւններէն կրնան մտահոգուիլ անոնք, որոնց գոյութեան միակ յենարանը եւ նպատակը իրենց խումբերուն յաղթանակներն են:

Հ.Մ.Ը.Մ.ը սրբացած, բիրեղացած նպատակին ձգտող միութիւն է: Անոր համար պարտութիւններն ու յաղթանակները կարելորութենէ զուրկ են:

Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակը Հայ հոգիի, Հայ նկարագրի եւ Հայ բազուկի ազնուացումն ու ուժեղացումն է:

ԼՈՒՏԵՐ ՄԱՍԳԱՆԱՃԵԱՆ

Հայ ժողովուրդը ձեր լաւ կեցուածքին, ձեր յաջողութիւններուն պէտք ունի, որովհետեւ դուք միայն Հ.Մ.Ը.Մ.ի խումբ չէք: Դուք հայութեան խումբն էք: Թեւ դժուար եւ քրտինք ու զոհողութիւն պահանջող պատասխանատուութիւն է, բայց վճռական ու ազնիւ իմացականութեամբ հետապնդեցէք ձեզի յանձնուած պարտականութիւնը, որպէսզի մեր միութեան, մեր ժողովուրդին արժանի խումբը ըլլաք: Եւ հաւատացէք, թէ կը յաջողի՛ք...:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՀԻՆԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. արժանի է փառքի ու ողջոյնի, որովհետեւ ան գիտցաւ միշտ բարձրի՛ն նայիլ, բարձրանալ եւ բարձրացնել, եթէ երբեմն միշտ դէպի վեր բարձրանալ ուզեց եւ չհասաւ, սակայն շնորհիւ իր կամքին, յաղթահարեց բազմաթիւ դժուարութիւններ, որպէսզի երբեք վար չհասնի բարձունքէն: Միշտ մնաց պատենշի վրայ, կարծես հայ ժողովուրդի վերջին 40 տարիներու արթուն պահակը ըլլար:

Հ.Մ.Ը.Մ.ով հայ ժողովուրդը դարձաւ մարմնով ուժեղ ու գեղեցիկ, նկարագրով մաքուր եւ անկեղծ եւ հաւատքով բարձր ու ազնիւ:

Հ.Մ.Ը.Մ. վազեց միշտ դէպի գործ, շնորհիւ իր կարգապահութեան, հնազանդութեան, չարքաշութեան եւ հայրենասիրութեան:

ՉԱԻՆ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. թափանցեց հայ երդիքներէ ներս, ջերմացուց մարդոց սրտերը հայրենիքին հանդէպ, բաժնեկիցը դարձաւ անոնց տառապանքներուն եւ ուրախութիւններուն, համատեղեց զանոնք ապահով վայրերու մէջ, տիրութիւն ըրաւ անոնց, ժողովուրդին կուռքը դարձաւ եւ սիրուեցաւ պաշտուելո՛ւ աստիճան:

Թիւով քիչ, բայց որակով հիասքանչ հայ ժողովուրդի արգանդին ծնունդն է Հ.Մ.Ը.Մ.ը, որ շատ բան առաւ անկէ, սակայն նաեւ քիչ բան չտուաւ անոր: Հայ պատանիին սորվեցուց ըլլալ չարքաշ ու արի, ազնիւ եւ վեհանձն, պարկեշտ եւ նուիրուող: Սերունդներ փրկեց ձուլումի երախեն եւ դարձաւ հայրենի՛ք օտար երկինքներու տակ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Այսօրուան սկաուտը վաղուան ազգային, եկեղեցական շարժումներուն արթուն պահակն է, ինչպէս երեկի սկաուտը կը տեսնենք այսօրուան ազգապահպանման հիմերուն խառնուած տոկուն ժայռ:

Քննեցէ՛ք արտասահմանի բոլոր միութիւնները ու պիտի հաստատեք, որ անպայման այսինչ վարչականը ժամանակին եղած է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ:

Տարիներու ընթացքին Մեծ Նշանաբանը տուած է Մեծ Բերք:

Նոյն նշանաբանը պիտի տայ Նոր Բերք:

ՆՇԱՆ ԹԻՄՈՒՉԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.

Չորս գիյլեր, որոնք խանդավառութեան ալիքներ կը բարձրացնեն ընդհանրապէս հայ ժողովուրդին եւ յատկապէս պատանիներուն եւ երիտասարդութեան մօտ:

Չորս կախարդական գիրեր, որոնք յիշատակ, յուզում կը պատճառեն բոլոր անոնց, որոնք անցան անոր շարքերէն, իբրեւ սկաուտ կամ մարզիկ, գիրեր՝ որոնք կը նշանակեն գայլիկի երգ ու կանչ, արշաւ ու բանակում, աշխատանք եւ խարուկահանդէս, մարզախումբ եւ մրցում, յաղթանակ եւ պարտութիւն, շքեղ տողանցք: Ու տակաւին ժողով ու անհատնում ժողով:

Այս բոլորն է Հ.Մ.Ը.Մ.ը:

Հ.Մ.Ը.Մ.՝ բարձրացիր եւ բարձրացուր: Պատմութիւն:

Հ.Մ.Ը.Մ.՝ հաւատք եւ յոյս, հայութեան, հայկականութեան ամուր խարիսխ, պատնէշ ու վճռակամ երթ դէպի լինելութիւն: Անսասան շքերթ դէպի յաղթանակ: Այս է Հ.Մ.Ը.Մ.ը եւ կ'արժէ աւելի մօտէն եւ խորապէս ծանօթանալ այս մեծ կազմակերպութեան, գիտնալ թէ ինչո՞ւ գունդ առ գունդ կու գան խտացնելու Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը, իբրեւ սկաուտ, մարզիկ կամ անդամ: Ի՞նչ կը սպասեն Հ.Մ.Ը.Մ.էն, իրենց Հ.Մ.Ը.Մ.ի պատկանելիութեան գիտակցութիւնը ի՞նչ ձեւով ունին, եւ վերջապէս, միւս կողմէն, ի՞նչ ձեւով եւ մտայնութեամբ պետք է գործեն Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն պատասխանատուութիւնը ստանձնած Հ.Մ.Ը.Մ.ականները:

ՎԱՐԴԳԵՍ ՏԵՐ ՎԱՐՎՊԵՏԵԱՆ

«ՄԱՐԶԻԿ» 90ԱՄԵԱԿԻ ԲԱՑԱՌԻԿ

ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՓԱՐՈՍԸ



այուլիան քսաներորդ դարու գողգոթան հազիւ վերջ գտած, կը հիմնադրուի Հ.Մ.Ը.Մ.ը: Մեր ժողովուրդի կէսը բնաջնջուած եւ միւս կէսն ալ ստոյգ կորուստէ հազիւ փրկուած, կը մտածուի կազմակերպել մարզական մրցութիւն մը:

Նման կացութեան մէջ կազմակերպուած այս միութիւնը, կասկածէ վեր է որ իր յայտարարուած նպատակէն գերիվեր իտէյալ մըն ալ կը հետապնդէր, եւ լոկ մարզական մտահոգութիւններէ առաջացուցած եւ մարզական գործունէութիւն միտան նպատակադրող կազմակերպութիւն մը չէր կրնար ըլլալ Քրիսեանի եւ Յակոբեանի ճիգերով ծնունդ առնող Հ.Մ.Ը.Մ.ը:

Այսօր, իր հիմնադրութենէն վաթսուհինգ տարիներ վերջ, երբ յետադարձ ակնարկով մը կը փորձենք կշռադատել Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը, անվարան կը հաստատենք որ Հ.Մ.Ը.Մ.ը լրիւ կերպով գործադրած է ու կը շարունակէ գործադրել անոր հիմնադիրներուն կրկնակի նպատակները: - ա) Հայ ժողովուրդի պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը կապել մարզական գործունէութեան եւ բ) մանաւանդ նոյն այդ միութեան միջոցաւ ազգապահպանման մեր ընդհանուր ճիգերուն նպաստել՝ հայութեան մէջ հայ ծնած ըլլալու եւ հայ ապրելու հպարտութիւնը ներմուծելով՝ տփուկող, իր ինքնութենէն պարտադրաբար պարպուող մեր բազմութիւններուն:

Ձոյգ այս առաջադրանքներով հիմնադրուած Հ.Մ.Ը.Մ.ը, այսօր ի սփիւռս աշխարհի տարածուած մեր տարագիր բեկորներուն մտքին ու հոգիին մէջ դրոշմուած է անջնջլիօրէն: Լիբանանէն մինչեւ Աւստրալիա, մինչեւ Հարաւային ու Հիւսիսային Ամերիկաները, մինչեւ Եւրոպա, մեր գաղութներու լաւագոյն տարրերը երբեմն նուիրուեցան այս կազմակերպութեան:

Ի՛նչ խանդավառութեամբ Լիբանանի, Սուրիոյ եւ այլ գաղութներու խեղճուկ մեր մարզադաշտերը լեցուցին մեր ոտաբոյսի ու կիսամերկ ժողովուրդի գաւակները, ի ինդիր Հ.Մ.Ը.Մ.ի մէկ խումբին սիրագործութիւնները վայելելու ձգտումին, եւ ինչքա՛ն շուտ մոռցան, նման առիթներով, իրենց բոլոր տեսակի դժբախտութիւնները ու լեցուեցան հպարտութեան զգացումներով, գալիքը դիմագրաւելու յաւելեալ վճռակամութեամբ:

Կորուսեալ մեր փառքին խաբկանքը ունենալու ի՛նչ գեղեցիկ առիթներ եղան մեր շրջաններու մարզական փառատօները, եւ են մինչեւ այսօր, Պոլիսէն մինչեւ Հայէպ, Պարսկաստանէն մինչեւ Սիտնի կամ Մելպուռն, Հայէպէն մինչեւ Քայիֆորնիա կամ Պուէնոս Այրէս: Երբ հազարներով մեր մարզիկներն ու սկաուտները կը սողանցեն փողերախումբերու առաջնորդութեամբ, ծովածաւալ մեր բազմութիւններու ծափերու տարափին տակ, ինչպիսի՛ զգա-

ցումներ, մտածումներ ու տեսիլքներ կ'այցելեն իւրաքանչիւրիս մտքին ու հոգիին:

Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր իրագործումներու բարոյական ու նիւթական կռուանը մնաց միշտ մեր ժողովուրդին սիրտն ու հոգին, քրտինքն ու քսակը, առանց պետական որեւէ օժանդակութեան: Եւ հոս պէտք է փնտռել նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հայութիւն կապուածութեան գերագոյն գաղտնիքը: Ժողովուրդը գուրգուրաց Հ.Մ.Ը.Մ.ի վրայ եւ պահանջեց միշտ հպարտութիւն ներշնչող արարքներ՝ Հ.Մ.Ը.Մ.էն:

Այսօր, քսաներորդ դարու վերջին քառորդին, երբ բոլոր տեսակի գաղափարաբանութիւնները դարձած են վիճելի եւ ամէնօրեայ փոփոխութեանց ենթակայ են, երբ մարդկային ու ազգային բոլոր տեսակի բարոյական չափանիշները խրատաբիբ քննադատութեանց կ'արժանանան, երբ հայրենագուրկ եւ ազատութեան բարիքներէն զրկուած բազմութիւններ կ'արհամարհեն նախապէս ընդունուած եւ գնահատուած կռուանները, բնականաբար հայութեան մէջ եւս պիտի գտնուին դարերու եւ ժամանակի պարտադրած հոսանքներուն հետեւորդներ: Այդպիսիները պիտի չզոհանան մինչ այժմեան մեր ամէն տեսակի բարոյական ու գաղափարական հասկացողութիւններէն, աւելի ազդու միջոցներու որոնումին պիտի նուիրուին կամ պարզապէս մեկուսանան եւ ուրանան ամէն ճշմարտութիւն:

Բայց բարեբախտութիւն է, որ մեր պարագային նմաններու թիւը զանցելի կը մնայ, ամէն մարզի մէջ, գէթ առ այժմ, եւ մենք կառչած կը մնանք մեր պատմութենէն մեզի փոխանցուած ազգապահպանման կռուաններուն՝ եկեղեցի, դպրոց, բարեսիրական ու մարզական կազմակերպութիւններ, քաղաքական ու գաղափարական վարդապետութիւններ:

Եւ Հ.Մ.Ը.Մ.ը ներկայ ժամանակներու հայ իրականութեան մէջ կը շարունակէ մնալ իբրեւ մեր գաղութները իրարու զօդող զօրաւորագոյն կազմակերպութիւն, իր ամէն տեսակի գործունէութիւններով ու խոյանքներով, նուիրեալներու փաղանգներով: Աւելի քան յիսուն իր մասնաճիւղերը փաստն են այն իրականութեան:

Հ.Մ.Ը.Մ.ը փարոս մըն էր, որուն կը ձգտէին նաւաբեկման վտանգին ենթակայ մեր գաղութները ժամանակին: Այսօր եւս, ան կը շարունակէ հայ ինքնութեան, հայկական լինելութեան տազնապը ապրող ամէն հայու հոգեկան աչքերուն դիմաց վառ փարոս մնալ, այլոց կարգին: Գուրգուրա՛նք այս փարոսին վրայ, եւ մաղթենք որ իր հարիւրամեակը տօնուի ազգային շատ աւելի դրական եւ գօտեպնդիչ պայմաններու մէջ:

Պէյրուիթ, 1983

Ա. ՈՒՐՅԱԼԵԱՆ



«ԲԱՐՁՐԱՑՈՒՄ - ԲԱՐՁՐԱՑՈՒՄ»

ՀՄԼՄ-ի հիմնադրույթի ենթաբաժնի անդամները ունենում են իրենց առանձին կողմնակիցները, որոնք հաճախում են համարձակվել իրենց հետընկերներին։ Այս փոխհարաբերակցությունը, անհատապես թե՛ հաճախակի, յարատևելի է ինքնուրույն գերազանցելու հրաժարման մեջ հանդիսացավ բոլոր ազնիւ հոգիներուն համար։ Նոյն բայը, հրամայականի չէ գոք եւ ներգործական ձեւերու երջանիկ յարակցութեամբ՝ բանաստեղծական թռիչք ու թռվիչանք, իմաստասիրական խորութիւն ու խայտանք պարզեցի իր արծուկութեւ հովանիին տակ համախմբուող երիտասարդութեան։

Կրօնական վարդապետութեան մը, բարեպաշտ կամ բարոյապաշտ աղանդի մը համար պատուաբեր այս կարգախօսը զարմանալի չէ, որ առնական հմայքով մը ճաճանչաւոր, դրոշմուած կը գտնենք հայ մարմնակրթական միութեան մը ճակատին։ Որովհետեւ՝ այդ նշանաբանը չքեղ արտայայտութիւններէն մէկն է Հայու Ոգիին, ա՛յն ոգիին՝ որ հնուց անտի, հաւասարակշիռ ներդաշնակութիւնն իսկ եղած է իմացականին, հոգեկանին եւ մարմնականին։

Եթէ միայն մարմնակրթանք ըլլար ՀՄԼՄ-ի հետապնդած նպատակը՝ մարզական ընթացիկ ակումբի մը շրջագիծէն անդին պիտի չտարածուէր անոր հմայքը։ Երբեք պիտի չվերածուէր ան ազգային իտէպ մը մարմնաւորող հպարտանքի։ ՀՄԼՄ-ի հիմնադիրները, ունկնդիր մեր պատմութեան ճայնին, նշանաբանի ոգին տարածելով Կանոնագրին մէջ, առաջադրած են հայ պատանիին ու երիտասարդին մարմինը կերտել մաքուր եւ ամրակուռ՝ զայն իբր աշտանակ ծառայեցնելու համար գաղափարական հուրի, բարոյական լոյսի։ Մարմնի, մկանի հետ զօրացնել հոգին, միտքը, նկարագրի։

Լերան մը լանջին բոցավառած խորոյկին մէջ ՀՄԼՄ-ի սկսուած կը տեսնէ, կ'ապրի ազգին, հայրենիքին ու մարդկութեան համար ողջակիզուելու խորհուրդը։ Բարձրութեան չափանիշ մը նուաճելու հետամուտ ախոյեանը իր ու-

տումին ներշնչումը կը գտնէ ոգեկան սլացքին մէջ։ Դաշտին վրայ, խմբական խաղով յաղթանակի նկրտող մարզիկները՝ եղբայրական գործակցութեամբ եւ ազնիւ պայքարով թելադրուած են դափնեպսակը տանիլ, նուիրելու բարոյական գեղեցկութեան արձանին։

Ուժին, գաղափարին՝ ՀՄԼՄ-ի նշանաբանը կը ներդաշնակէ զգացումին քաղցրութիւնը, ջերմութիւնը։ Ցուրտ ու այլամերժ գերմարդու տիպարը չէ իր տեսլականը, այլ վեհօրէն մարդանայու, համայնանայու աստուածահաճոյ առաքելութիւնը։ Օրական բարիք մը գործելու երդմնագիրը՝ ՀՄԼՄ-ականը կը դարձնէ ուխտագնացը իր ճիւղ ու Հաւատքի ճանապարհներուն, եւ յաճախ Բարի Սամարացիին դերը ստանձնել կու տայ անոր՝ կեանքի այս կամ այն մարգերուն մէջ։

ՀՄԼՄ-ի քաղցրահունչ նշանաբանը կը հրակրթէ անհատը նախ գօտեպնդել, կազմակերպել, լիարժէք դարձնել ինքզինք, բայց միաժամանակ փշրել իր մէջ անձնակերպող ամէն զգացում, քանդել զինք աշխարհէն անջատող ամէն պարիսպ, ապա դուրս գալ եսի պատեանէն, բաշխուիլ գերթ ջուր, օդ, արեւ՝ անսակարկ, ըլլալ անանձնական ուրախութիւններու անշահախնդիր դարբին։ Բարձրանալ՝ խոնարհաբար, ու իր հետ բարձրացնել անաղմուկ՝ ընկեր, ընտանիք, ազգ ու մարդկութիւն։ Դառնալ լուռ բայց ամուր քար մը, խոյանք մը դէպի յաւերժ բարձրացող հաւաքականութեան շէնքին մէջ։

Ի՛նչ անսահման կարելիութիւններ գոյգ մը բառերու կախարդանքին տակ...

«Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ը ոսկի նշանակ մը, շողափայլ գարդ մը չէ երբեք ՀՄԼՄ-ականի լամբակին։ Անոր սրտին զա՛րկն է, շրթներու մնայուն յանկերգը, կեանքի լուսաստղը՝ պատերազմի թէ՛ խաղաղութեան օրերուն։

3. ԳԵՂԱՐԴ

ՄԵՐ ՓԱՌԻԸ

Տ

նունդներ կան, որոնք բնական բերումի արդիւնք են: Բայց կան նաեւ, որ պէտք է տեղի ունենան, որովհետեւ կու գան պակաս բան լրացնելու, անհրաժեշտ պահանջ մը գոհացնելու:

Վերջին տեսակէն է Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութիւնը, որ իրական անկիւնադարձ մըն է մեր հանրային կեանքին մէջ: Այս ծնունդը կը գուգադիպի 1918ին, որ մեծ, գրեթէ անկարելի, բայց շատ սիրելի յոյսեր ներշնչեց ոչ միայն հայութեան, այլ նաեւ բովանդակ մարդկութեան:

Դաշնակից յաղթանակին վրայ կը վերադառնայ բեկորը նոր օճախ շինելու, վէրքեր դարմանելու եւ նոր կեանք սկսելու համար:

Եւ ի՞նչ կ'ուզէք որ պատահի: Մինչ ուրիշներ կը մտածեն միայն իրենց նիւթական կորուստները դարմանելու մասին, ասդին, Պոլսոյ քարափներուն վրայ նետուած գաղթական

ժողովուրդը կը մտածէ փրկել իր բեկորները եւ անոնց մէջ վառ պահել մշակոյթի ջահը, յանձին իր երիտասարդ ուժերու համախմբումին: Ու 16 Նոյեմբեր 1918ին, երբ պատերազմը դեռ վերջ գտած չէր, ոչ իսկ գինադադարը ստորագրուած, խումբ մը երիտասարդներ, Վիթայի խան, թիւ 7 հաւաքուած, կը գումարեն այն ժողովը, որ մեկնակէտը պիտի հանդիսանար համագգային այս միութեան, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն անունով: Հոն էին Գրիգոր Յակոբեան, Հայկ Ճիգմէճեան, Տիգրան Խոյսեան, Գարլո Շահինեան, Լեւոն Յակոբեան եւ Սիրունի: Մարմնով բացակայ, բայց հոգիով ներկայ էր նաեւ կրթական անզուգական մշակը՝ Յ. Թ. Հինդլեան, որ առաջին անգամ մեր մէջ գտած էր սկաուտութեան յարմարագոյն բանաձևերը:

Առաջին այս նիստին արդէն գծուած էր անշեղ ուղին, ուրիշ պիտի ընթանար Հ.Մ.Ը.Մ-ը: Պահանջքի մը գոհացում տալու համար աշխարհ եկած միութիւնը անմիջապէս փա-



րեցաւ նուիրական գործին, որուն ռահվիրան հանդիսացած էր անգուգական Շաւարշ Քրիսեանը: Եղերաբախտ մարգիկն ու մարզանքի ռուսացիչ-խմբագիրը, որ նոյնիսկ երջանկութիւնը չուէնցաւ տեսնելու իրականացումը իր մեծագոյն երազին, որն էր զանազան միութեանց եւ օգտակար այլ իրերամերժ ճիգերու մէկտեղումը համազգային կազմակերպութեան մը մէջ:

Արհաւիրքի մէջէն ծնունդ առած Հ.Մ.Լ.Մ-ի առաջին գործը եղաւ խնամատարութիւնը- հաւաքել մեր խլեակները, տուն առ տուն, թաղ առ թաղ մէկտեղել զանոնք, կապել վէրքերը, ամոքել ցաւերը, դեղ հասցնել անկարներուն, սնուցանել անօթիները եւ մանաւանդ յոյս ու հաւատք ներշնչել զանգուածներուն: Զրի դարմանատուներ, օգնութեան կայաններ, նախ խեղճ ու կրակ, յետոյ օր ըստ օրէ աւելի ճոխ, հաստատուեցան ամէն տեղ:

Հ.Մ.Լ.Մ. յայտնաբերած էր իր մէկ նոր յատկանիշը, հիմնովին փոխել գործունէութեան իր յատակագիծը եւ յարմարիլ այս ժողովուրդին պահանջներուն, դառնալու համար անոր արժանաւոր զաւակը, որ ներկայ է միշտ երբ կոչ կ'ըլլայ իրեն: Տեսակ մը համախառնում ժողովուրդին ու իր զաւակին միջեւ, ստեղծելու համար միութիւն մը, որ մարմնական է ու նաեւ հոգեկան:

Սակայն հայր դեռ դառնութեան բաժակը քամած չէր մինչեւ մրուրը: Հազիւ աչքը բացած, անոր վիճակուեցաւ նոր ցրուում մը, կրկին ձեռք առնել պանդուխտի զաւազանը՝ ի խնդիր նոր կայքերու: Եւ ինչ որ ամէնէն ծանրն էր, ամէնէն աւելի բուռնը եղաւ՝ պարպումը Պոլսէն եւ Իզմիրէն, կեդրոններ որոնք համեմատաբար զերծ մնացած էին նախորդ ցնցումէն:

Հայ ժողովուրդին հետ աստանդական է նաեւ անբաժան զաւակը՝ Հ.Մ.Լ.Մ-ը, որ կը նետուի հոն ուր է հայը, հոն՝ ուր կը տանի գինք իր քայլն ու ճակատագիրը:

Նոր երկիրներու մէջ նոր օճախներ կը շինէ մեր պատւական ժողովուրդը: Նոր հորիզոններու տակ- Ֆրանսա, Ռումանիա, Պուլկարիա, Յունաստան, Եգիպտոս, Մ. Նահանգներ, նոր Հ.Մ.Լ.Մ-ներ կը հիմնուին, նոր թափով շարունակելու համար փրկարար կայծը: Հիւրընկալ երկիրներուն ամէնէն ազնուականներէն մէկը՝ Սուրիա-Լիբանանը չէր որ անմասն պիտի մնար այս համատարած շարժումէն: Ու 1923ին, պանդխտութեան փոշին հազիւ թօթափած, երիտասարդ ու հաւատաւոր տարրեր, առանց մտածելու իրենց օրապահիկը ճարելու մասին, կը մտածեն հիմնել Սուրիոյ մէջ Հ.Մ.Լ.Մ. մը, համախմբելու համար այն ինչ որ անվթար մնացած էր ցիրուցան ժողովուրդէն:

Մինչ վարժարաններէ դուրս մարմնակրթանքը գրեթէ անծանօթ էր նոյնիսկ տեղացի ժողովուրդին, Հ.Մ.Լ.Մ-ի հիմնադիրները զայն ժողովրդական դարձուցին իրենց կազմակերպած ֆուլթայոլի հանդիպումներով, որոնք եթէ սկզբնական շրջանին տղայական համարուեցան, հետագային սակայն չուշացան իրեն զիրենք պարտադրելու զանգուածներուն, իբր առողջարար զբաղում: Այդ շրջանին տեղի ունեցած մրցումները օտարներու հետ միշտ վերջացան մեր միութեան յաղթանակով, անգամ մը եւս փաստելով որ մենք տէ՛ր ենք վերածնունդի գաղտնիքին:



Պէյրութի մէջ կազմուած կորիզը խթան հանդիսացաւ միւս կեդրոններուն: Կազմուեցան համեստ մասնաճիւղեր, որոնք կռթնած իրենց յամառ աշխատանքին ու իրական արժէքները գնահատող մեր ժողովուրդի սիրոյն, յառաջ բերին այնպիսի վիճակ մը, որ անհրաժեշտ դարձուց կեդրոնական, Շրջանային Վարչութեան մը գոյութիւնը, ներդաշնակելու եւ ղեկավարելու համար մասնաճիւղերու գործունէութիւնը Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի մէջ:

Ու այսօր, բեղուն գործունէութեամբ մը բեռնաւոր, վերապրողներու օրինակով խանդավառ ու հաւատաւոր աւելի քան երբեք, Հ.Մ.Լ.Մ. կը սօսէ իր 25ամեակը օտար հորիզոններու տակ, հիւրընկալ ժողովուրդի մը ծոցին մէջ, աչքերը հայրենաբաղձ անգուսպ փափաքով սեւեռած անմատչելի կատարին, որուն նայեցան հաւատաւոր մարզիկներէն ու մարզիչներէն մէկ քանին, չվարանելով նոյնիսկ մահը պաղարհնութեամբ դիմակալել, երբ այդ կը պահանջէր պարտականութիւնը:

Հակառակ փոթորիկներու, որոնց մէկ մասն իսկ շատ է արմատախիլ ընելու այլ կազմակերպութիւններ, միութիւնը կը մնայ աւելի քան առոյգ, ոտքը ամուր, հասակը սլացիկ, ճակատը բաց եւ աչքերը հրացայտ, ճիշդ բարեւի կեցած պահակի նման, միշտ ինքնամատոյց այն ժողովուրդին, որուն ծոցէն ծնաւ եւ որուն անխարդախ ու աննկուն ծառան մնաց շարունակ, լաւ թէ գէշ, մանաւանդ գէ՛շ օրերուն:

Եւ ժողովուրդէն ալ սէր ու փայփայանք գտաւ, իբրեւ անդրանիկը, աչքի լոյսը, որուն կապուեցան ու կապուած են այնքան յոյսեր:

ԵՂԻՇԷ

«Ազգարար», 1943



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ

Մուսյլ դէմքով Հ.Մ.Ը.Մ.ականի հանդիպած էք: Եթէ այո, սխալ բան կայ հոն. կա՛մ ենթական անհանգիստ է, կա՛մ... Հ.Մ.Ը.Մ.ական չէ:

Հանդիպած էք ծոյլ Հ.Մ.Ը.Մ.ականի: Եթէ այո, վստահ կրնաք ըլլալ որ անդամատետր չունի, իսկ եթէ ունի՝ զայն իրեն չեն պահեր պատասխանատուները: Ծոյլը Հ.Մ.Ը.Մ.ական չի կրնար մնալ:

Հանդիպած էք հայրենիքով ու ազգով չհետաքրքրուող Հ.Մ.Ը.Մ.ականի: Անկասկած որ ոչ: Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալ արդէն կը նշանակէ հաւատալ դրօշի մը, քայլերգի մը, նուիրական հողի մը, Դատի մը:

Հ.Մ.Ը.Մ.ականը չի կրնար խառնակիչ ըլլալ եւ ոչ ալ եսակեղրոն արարած մը: Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալ կը նշանակէ ըլլալ անանձնական մարդ. բաժնուելու պատրաստ հաց:

Այլապէս, եսասէր ու եսակեղրոն մարդուն տեղը հոս չէ: Հ.Մ.Ը.Մ.ը բոլորին կը պատկանի. հետեւաբար Հ.Մ.Ը.Մ.ականը պէտք է բոլորին ըլլալու գիծը ունենայ:

Հ.Մ.Ը.Մ.ը կը նմանի ծովուն: Կա՛մ ինք իր մէջ կը լուծէ իրեն եկողը, կա՛մ զայն ափ կը նետէ, որպէս խորթ:

Հ.Մ.Ը.Մ.ականը երդումի տակ գործող մարդ է: Ան ոչ թէ իր միութեանական գործունէութեան շրջագիծին մէջ միայն կը գործէ այդ գիտակցութեամբ, այլեւ իր կեանքի բոլոր երեսներուն վրայ կը տարածէ երդումի ճառագայթումը՝ հաւատարմութիւն Աստուծոյ, ծառայութիւն հայրենիքի եւ մարդկութեան:

Հ.Մ.Ը.Մ.ականը ծերութիւն չի ճանչնար: Անոր քալածքին մէջ ազնուականութիւն մը ինքզինք տեսանելի կը դարձնէ ու անոր խօսելաձեւը պատշաճ ու զուարթ է:

Երանի անոր, որ Հ.Մ.Ը.Մ.ական բարեկամ ունի:

Երանի մանաւանդ անոր, որ Հ.Մ.Ը.Մ.ական է:

Յիշեալ բարենիշները վարժութեամբ եւ հետեւողականութեամբ միայն ձեռք կը բերուին:

Անդամատետր ունենալով կարելի չէ այդ արժանիքները ժառանգել, ինչպէս օդաչուին տարազը ունենալ չի բաւեր... կարենալ օդանաւ քշելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ը ինք տուն է, ընտանիք է, դպրոց է, եկեղեցի առաջնորդող միջոց է, մաքրամաքուր ու անսահման դաշտ է:

Կը բաւէ որ հոն ինկող հունարը փուռ չըլլայ:

Ու Հ.Մ.Ը.Մ.ականը կը ծլի ու կ'աճի, ինչպէս բարտի, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի արեւուն տակ ազգի ներկան կը խմորուի, եւ ապագան աւիշ կը ծծէ հողէն, պատմութենէն:

ԵՐՈՒԱՆԴ ՏԵՄԻՐՃԵԱՆ

Իւրաքանչիւր ազգ ունի իր ուրոյն նկարագիրը եւ ազգերու ընկերութեան մէջ իւրաքանչիւրը անոնցմէ իր այդ գիծերուն համար բնորոշումի ենթակայ է:

Անգլիացի՞ն - պաղարիւն է, Ֆրանսացի՞ն, ռո՞ւսը, միւսները:

Իւրաքանչիւր ազգի իւրաքանչիւր նահանգ անգամ իրարմէ տարբեր հասարակաց գիծերով կը ճանչցուի: Այս անգամ օրինակները բերենք մեզմէ. այնթապցիին այսպէս, մարաշցիին այդպէս, տիգրանակերտցիին ու միւսները:

Իւրաքանչիւր միութիւն այս կարգով ունի իր գիծը, նկարագիրը, կնիքը: Եւ իւրաքանչիւր միութեանական ունի իր միութեան որոշ յատկանիշները:

Հ.Մ.Ը.Մ.ականը տիպար մըն է եւ երեւակայութիւններու մէջ ստեղծած է պատկեր մը իր հաշուոյն, որ եթէ չերեւի՝ զինք կը վերածէ ինչ որ ի լինելութեան վստահուած յոյսի:

Հ.Մ.Ը.Մ.ականը նախ ժպտերես է, հաճոյակատար, ծառայասէր:

Հ.Մ.Ը.Մ.ականը խոստմնապահ է ու վստահելի:

Հ.Մ.Ը.Մ.ականը անաղմուկ հայրենասէր մըն է, անմեղ պատանի մը, որ պատրաստ է ձեզի օգնելու, ձեզի հետեւելու, ձեզի հաւատալու:

ՄԵԾ ԴԱՐԲՆՈՑԸ

Շուրջ 90 տարի է անցել Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրման և գործունեության թուականից: Այս երկար ու ձիգ տարիների ընթացքում Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունը հայ եկեղեցու և հայ դպրոցի կողքին եղաւ այն մեծ դարբնոցն, ուր աշխարհասփիռ մեր սերունդներին դաստիարակեց մարդկային ու ազգային վեհ գաղափարներով և սովորեցրեց դրօշակակիրը լինելու Հայ Դատի աշխատանքներին ու պահանջատիրութեան:

Հ.Մ.Ը.Մ.ն այն հնոցն եղաւ, ուր տարբեր սերունդներ որպէս սկաուտ և մարզիկ իրենց հոգին ու մարմինը թրծեցին՝ դառնալով ապագայի Հայ Դատի զինուորներ և մշակոյթի ջահակիրներ: Այդ մեծ ընտանիքում հասակ նետեցին այնպիսի մեծանուն մտաւորականներ, հոգեւոր և աշխարհական նուիրեալներ, որոնք հետագային դարձան Ամենայն Հայոց Կաթողիկոս, գրող, փաստաբան և ազգային դեմքեր:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունը 20րդ դարի գլխաւոր օժանդակ ձեռքն էր Ցեղասպանութիւնից վերապրողներին ու փրկուածներին, և այսօր ունենալով աշխարհացրիւ շուրջ 100 մասնաճիւղեր, արմատ է նետել նաեւ Մայր Հայրենիքում, Ջաւախքում ու Արցախում:

Յարգելի Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Հ. Մ. «Միփան» Միությունը ի սրտէ ողջունում է միութեանդ գործունեութեան 90ամեակը և մաղթում ձեզ նորանոր յաջողութիւններ Ձեր ազգանուէր գործունեութեան ասպարէզում:

Վարձքներդ կատար:

Թեհրան

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՓԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

90 ԱՄԵԱԿ Հ.Մ.Ը.Մ.Ի

90ԱՄԵԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐՈՒՆ ԴԷՄ ՅԱՆԴԻՄԱՆ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿԸ ՆԱՅԻՆ ԴԷՊԻ 100ԱՄԵԱԿ ԵՒ ԱՆԿԷ ԱՆԴԻՆ

(ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ)

Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակի յատկանշական նորութիւններէն է Կեդրոնական Վարչութեան ռազմավարական ծրագրումի յանձնախումբը, որ ամիսներէ ի վեր լուրջ աշխատանքի լծուած է՝ պատրաստելու համար միութեան յառաջիկայ 10-20 տարիներու զարգացման հեռանկարները ներկայացնող ծրագիր մը: «Մարզիկ»ի այս հարցազրոյցը յանձնախումբի անդամներուն հետ՝ կ'անդրադառնայ ծրագրին տուն տուող մտահոգութիւններուն եւ անոր պատրաստութեան ընթացքին: «Մարզիկ»ի հարցումներուն կը պատասխանեն յանձնախումբի անդամ եղբայրներ Արմէն Աբրահամեան, Շահէ Ենիգոմշեան, Ռազմիկ Շիրիմեան, Վիգէն Դաւթեան (Մ. Նահանգներ) եւ Գեորգ Մանկէլեան (Գանատա):

Ի՞նչպէս ծնաւ ռազմավարական ծրագրում (Strategic Plan) կատարելու գաղափարը: Ինչո՞ւ անհրաժեշտ կը գտնէք նման ծրագրում մեր օրերուն:

-Ռազմավարական որեւէ ծրագրում սերտուած աշխատանք մըն է, որուն կը դիմեն մեծ թէ փոքր հաստատութիւններ եւ միութիւններ: Հ.Մ.Ը.Մ.ի համար, ռազմավարական ծրագրում կատարելու գաղափարը ներկայացաւ եւ որդեգրուեցաւ Պատգամաւորական Յրդ Ընդհանուր Ժողովին, Սեպտեմբեր 2007ին, Հայաստանի մէջ: Նոյն ժողովէն ընտրուած Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը Դեկտեմբեր 2007ին յառաջացուց ռազմավարական ծրագրումի յանձնախումբ մը՝ հետապնդելու համար այս աշխատանքը:

Իսկ թէ ինչո՞ւ անհրաժեշտ կը գտնենք նման ծրագրում մեր օրերուն: Պարզ է, որ Հ.Մ.Ը.Մ. միշտ հաւատարիմ կը մնայ իր բուն նպատակին, որն է՝ կրթել մեր մատղաշ սերունդը, իբրեւ առողջ նկարագրի տէր անհատներ, որոնք սատարեն իրենց պարած գաղութներու յաջողութեան եւ նուիրուին Հայ Դատի լուծման ու անկախ Հայաստանի յանձնարարական յաջողութեան: Ինչպէս որեւէ այլ յաջող միութիւն,

Հ.Մ.Ը.Մ. եւս ամուր եւ կենսունակ մնալու համար պէտք ունի հետեւողական գործընթացի մը, որ հիմնաւորէ ապագայի իր ծրագիրները: Հ.Մ.Ը.Մ. պարբերաբար պէտք ունի ինքզինք վերազնահատելու, վերաբեւոյնելու, քննարկելու իր աշխատանքներուն արդիւնքը, որպէսզի յաղթահարէ լծացումի վտանգը եւ մնայ առաջնակարգ պատանեկան-երիտասարդական միութիւն:

Նման աշխատանքի մը յաջողութիւնն ու շարունակութիւնը կախեալ է կազմակերպական նոր ոգիի մը ստեղծումէն, ուր անհրաժեշտ է մէկտեղումը անցեալի հարուստ փորձառութեան եւ ապագայի յուսատու հեռանկարին:

Անկախ Հայաստանի ծնունդը, 1991ին, մեծ փոփոխութիւն յառաջացուց ավանդական կուսակցութիւններու թէ միութիւններու իրավիճակին եւ պատասխանատուութիւններուն մէջ: Իբրեւ պատանեկան-երիտասարդական միութիւն, որ կը ձգտի հայ ոգին վառ պահել նորահաս սերունդներու սրտերուն եւ մտքերուն մէջ, Հ.Մ.Ը.Մ. պարտականութիւնը ունի երբեմն-երբեմն վերանայելու իր ազգային պարտաւորութիւնները եւ վերատեսութեան ենթարկելու

իր աշխատանքային ծիրը: Այս իմաստով, Հ.Մ.Ը.Մ. Սփիւռքի մէջ պէտք է յանձնառու ըլլայ ո՛չ միայն զօրաւոր գաղութներու կազմաւորման, այլեւ՝ այդ գաղութներու շարունակական հզօրացման:

Միաժամանակ, Հ.Մ.Ը.Մ. պարտի յստակացնել ու համադրել Հայաստան-Սփիւռք յարաբերութեան եւ համագործակցութեան ձեւերը: Այս մէկը կը նախատեսուի կատարել նորաստեղծ Սփիւռքի նախարարութեան հետ գործակցաբար, շօշափելի ծրագիրներու միջոցով օգտակար հանդիսանալով հայրենիքին:

Ռազմավարական ծրագրումը նաեւ սփիւռքահայ երիտասարդութեան կենցաղային զարգացումներէն եւ կեանքի փոփոխութիւններէն թելադրուած անհրաժեշտութիւն մըն է:

Ի՞նչ տուեալներու (հաստատումներ, արժեւորումներ, մտահոգութիւններ) վրայ կը հիմնուի ռազմավարական ձեր ծրագրումը:

- Ռազմավարական մեր ծրագրումը կը հիմնուի հետեւեալ մտահոգութիւններու վրայ.-

Ա. Միջին Արեւելքի մեր գաղութները ընդհանրապէս եղած են Սփիւռքի սիրտն ու առանցքը: Վերջին 20-30 տարիներուն սակայն, Սփիւռքի մեր ժողովուրդին տեղաբաշխական պատկերը փոփոխութեան ենթարկուեցաւ եւ մեր ժողովուրդի թիւէն կարեւոր մաս մը Միջին Արեւելքէն փոխադրուեցաւ Արեւմուտք՝ Ամերիկա եւ Եւրոպա: Աւելի ուշ, Հայաստանէն արտագաղթ տեղի ունեցաւ դէպի նախկին Խորհրդային Միութեան երկիրներ, ի մասնաւորի Ռուսիոյ տարբեր շրջաններ, ուր ստեղծուեցան նորանոր գաղութներ: Այդ գաղութներէն ոմանք ունին այնպիսի միջավայրեր, ուր հայերէն չի խօսուիր: Շատ մը գաղութներ նոյնիսկ հայկական դպրոցներ չունին: Այս իրողութիւնը մեծապէս կ'ազդէ յիշեալ գաղութներու ազգային մարդուժի եւ հայապահպանման կռուաններու ապահովման, ստիպելով գործել առանց հայերէն լեզուի: Ահաւասիկ, լեզուական այս հարցին եւս պէտք է հակադարձէ Հ.Մ.Ը.Մ.:

Բ. Աշխարհի չորս ծագերուն պատանի-երիտասարդներ մասնակից են տեւական շարժուն ուժականութեան մը, ուր արդի արհեստագիտութեան յառաջխաղացքը հիմնական ազդեցութիւն ունի իրենց մտածելակերպին, գործելակերպին եւ հետաքրքրութիւններուն վրայ: Ժամանակն է, ուրեմն, որ Հ.Մ.Ը.Մ. եւս դառնայ արդի արհեստագիտութեան բարեկամը, ըլլայ ճկուն ու յարմարի նոր միջոցներու, ստեղծէ նոր աշխատեցման, որպէսզի կարենայ երիտասարդութեան հետաքրքրութիւնն ու մասնակցութիւնը ներգրաւել: Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ. պարտի մէջտեղ բերել երիտասարդ ղեկավարներու սերունդ մը, որուն անդամները ունենան պէտք եղած կարողութիւնը՝ հասկնալու եւ գործադրելու երիտասարդութեան կարիքներն ու ցանկութիւնները, միութեան մէջ ստեղծեն նոր մշակոյթ, ըստ որուն՝ ղեկավարները աւելի մտիկ ընեն երիտասարդները եւ մասնակից դարձնեն զանոնք իրենց որոշումներուն, գործակցութեան իսկական ոգի ստեղծելով հին եւ նոր սերունդներուն միջեւ:



Հ.Մ.Ը.Մ.ի այժմեականութիւնը հիմնական հարց է: Այս իմաստով, կարեւորը Սփիւռքի երիտասարդութեան արդի պահանջներուն հետ Հ.Մ.Ը.Մ.ի առնչութիւնը պահելն է ու յատկապէս՝ այդ երիտասարդութեան ազգային հասկացողութիւնը ներկայ ժամանակներուն մէջ տեղադրելը:

Գ. Ինչպէս որ երիտասարդական կարիքներու անհասկացողութիւնը արգելք կը հանդիսանայ միութեան յառաջդիմութեան, նոյնպէս ալ փորձառու, յարգուած եւ նուիրեալ անձերու պակասը կը խոչընդոտէ միութեան զարգացումը:

Հ.Մ.Ը.Մ.ի համար այս անձերը անոնք են, որոնք տարիներու իրենց վաստակով կը մարմնաւորեն միութեան իսկական արժէքները եւ կարողութիւնը ունին Հ.Մ.Ը.Մ.ի հարազատ ոգին փոխանցել մէկ սերունդէն միւսը:

Այս ոգին փոխանցման դժուարութիւնը մեծ արգելք է ապագայի յառաջդիմութեան համար: Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը այսօր ունին նուիրեալ անդամներու բանակ մը եւ, սակայն, կը թուի թէ միութեանական ոգին, միութեան առաքելութիւնն ու արժէքները մեր ամէնօրեայ աշխատանքներ



րուն մէջ իրենց արտայայտութիւնը չեն գտներ յաճախ: Ընդհակառակն, աշխատանքային շեշտը դրուած է անմիջական գործունեութիւն տուող, կարճ տեւողութեամբ նպատակներու իրականացման վրայ: Այս իրավիճակը պատճառներէն մէկն է, որ ներկայիս սկսուածութեան թիւը եւ աշխատանքային որակը տեղաբայի մէջ ըլլայ: Փորձառու խորհրդատուներու պակասը նաեւ պատճառներէն մէկն է, որ միութեան կարգ մը մասնաճիւղերուն մէջ մարզախաղերը (ի մասնաւորի Ֆութպոլն ու պասքեթպոլը) դառնան պարզ մրցակցութեան խաղեր, ուր նպատակը ըլլայ պարզապէս յաղթել, մոռնալով Հ.Մ.Ը.Մ.ական մարզական ոգին, ինչպէս նաեւ՝ «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին արժէքը: Այս բոլորը հակասիկ մտահոգութիւններ են, որոնց լուծումները պէտք է գտնենք անյապաղ:

Դ. Իրականութիւնն է, որ հակառակ բոլոր տեսակի դժուարութիւններու, Հ.Մ.Ը.Մ. օրէ օր կ'ուռճանայ իր անդամներու թիւով եւ իր կառույցներով: Հետեւաբար, ան հետզհետէ կը դառնայ հսկայ միութիւն մը, զոր ղեկավարելը բաւական բարդ գործ կը դառնայ: Այս մարտահրաշխան իբրեւ լուծում, Հ.Մ.Ը.Մ. սկսած է կամաց-կամաց հեռանալ կամաւոր աշխատանքէ եւ ուղղուիլ դէպի աւելի ժամանակակից գործերակերպ, ուր «կամաւոր բանակ»ի կողքին սկսած է մէջտեղ գալ մասնագէտ պաշտօնեաներէ բաղկացած խաւ մը, որուն պարտականութիւնն է լուծել աշխատանքային ամէնօրեայ հարցերը: Ահա այս զոյգ մօտեցումներուն միջեւ (կամաւոր-պաշտօնեայ) հասարակ յայտարար գտնելը, այսինքն՝ մեր միութեանական արժէքներուն պահպանումը եւ շարժ դարձնել կազմակերպական պահանջներուն եւ նորանոր յառաջդիմութիւններուն գոհացում տալու անհրաժեշտութիւնը անմիջական եւ կենսական կը դարձնեն ռազմավարական նման ծրագրումի մը աշխատանքը:

Ի՞նչ կը նպատակադրէ Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագրումը եւ ի՞նչպէս կը ձգտի իրականացնել զայն:
- Ռազմավարական ծրագրումը ամէն բանէ առաջ

կը նպատակադրէ տեսական իմաստով յստակ պատկերացում մը տալ Հ.Մ.Ը.Մ.ի ապագայի գործունեութեան: Հ.Մ.Ը.Մ.ը պատկերացնել նուազագոյնը յառաջիկայ տասը տարիներուն:
Այդ պատկերացումին մէջ, ազգային մեր ըմբռնումներուն եւ գաղութային տուեալներու առարկայական ուսումնասիրութեամբ ու գործնական ծրագրումով, կարելի պիտի ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը պահել իր արդիւնաւէտ ընթացքին մէջ:

Ռազմավարական ծրագրումը նաեւ ղեկավարման անհրաժեշտ տուեալ մըն է որոշումներ եւ ծրագիրներ իրականացնելու համար:
Յանձնախումբին ծրագիրը պիտի գործադրուի երեք հանգրուանով.-

- Ա. Հանգրուան (2008-2009) Կազմաւորում
- Ա. Շրջաններու ներկայացուցիչներու անդամագրում:
- Բ. Շրջաններու ներկայացուցիչներու կողմնորոշում: Պիտի յստակացուին ներկայացուցիչներու պարտականութիւններն ու պարտաւորութիւնները եւ անոնք պիտի ծանօթանան ռազմավարական ծրագրին:

Ծրագրումի նախապատրաստութիւն
Գ. 2008ի կէսէն սկսեալ, ձեռք կը բերուին մասնաճիւղերու-շրջաններու վերաբերեալ հիմնական տեղեկութիւններ. մասնաճիւղերու-շրջաններու պատմականը, անցեալի եւ ներկայի նիւթական տուեալները եւ այլն:





Գ. Շրջանային քննարկումներու ձեռնարկում: Պիտի օգտագործուին PEST (Political, Economic, Social and Technological, քաղաքական, տնտեսական, ընկերային եւ արհեստագիտական) եւ SWOT դրուժիւնները իւրաքանչիւր շրջանի համար:

Բ. Հանգրուան (2009-2010)

- Շրջաններու հետ համադրաբար պիտի պատրաստուի նախնական ծրագիր մը:

- Նախնական ծրագիրը պիտի վերջնականացուի շրջաններու եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան հետ համախորհուրդ:

Գ. Հանգրուան (2011 եւ անկէ ետք)

- Ծրագիրը պիտի վաւերացուի Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

- Ծրագիրը պիտի որդեգրուի Պատգամաւորական 10րդ Ընդհանուր Ժողովին կողմէ:

- Ծրագրի գործադրութեան եւ արդիւնքներու ստուգման սկիզբ:

Յ.Մ.Ը.Մ. ունի աշխարհասփիւռ գործունէութիւն: Ռազմավարական ծրագրում մը ի՞նչպէս կրնայ բաւարարել տարբեր երկիրներու մէջ գործող Յ.Մ.Ը.Մ-ի սման միութեան մը տեղական պահանջները: Այլ խօսքով, որքանով նկատի առած էք շրջաններու եւ գաղութներու կարիքները՝ ձեր ռազմավարական ծրագրումի մէջ:

- Հ.Մ.Ը.Մ-ը միութիւն մըն է, որ արմատներ ունի ամբողջ աշխարհի մէջ: Այս մէկը լաւ երեւոյթ է ուժեղ, լաւ կազմակերպուած եւ յարաբերաբար ինքնաբաւ գաղութներու համար, ինչպէս նաեւ՝ գործօն գաղութներու պարագային, ուր մարդու թիւն եւ այլ կարիքներու մեծ պահանջ կայ:

Ուշադրութեան արժանի է նաեւ այն կէտը, որ ժամանակակից մեր երիտասարդութիւնը իրողականօրէն նուազ կապուած է հայկական սովորութիւններուն եւ մշակոյթին,

քաղաքականօրէն նուազ յանձնառու է, ըլլալով աւելի չէզոք կամ անտարբեր, որուն պատճառով ձուլումն ու մշակութային նահանջը շեշտակի մարտահրաւէրներ դարձած են քիչ մը ամէն տեղ: Այս կացութեան ի տես, Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր մասնաճիւղերը պէտք է պայքարին հասնելու միեւնոյն նպատակին, ի հարկին օգտագործելով տարբեր միջոցներ:

Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ- պէտք է որդեգրէ աշխատանքային նոր գործելակերպ մը, որպէսզի միութիւնը ուղղէ այսօրուան «Բոլորին համար միատեսակ ուղեգիծ»-էն դէպի այլ տեղ, ուր միութիւնը որդեգրէ աւելի ճկուն գործելակերպ, յարմարելով իւրաքանչիւր գաղութի կամ մասնաճիւղի պէտքերուն, միշտ հաւատարիմ մնալով իր նպատակին եւ առաքելութեան: Այլ խօսքով, Հ.Մ.Ը.Մ- պէտք է մնայ կեդրոնացեալ իր գաղափարախօսութեան եւ բարոյական արժէքներուն, սակայն ապակեդրոն ըլլայ իր կազմակերպական գործունէութեամբ:

Հ.Մ.Ը.Մ-ի համար անհրաժեշտ է ունենալ շարունակական ծրագրումի ընթացք մը եւ յանձնախումբ մը, որ օժանդակէ Կեդրոնական Վարչութեան՝ միութեան հեռաւոր ապագայի ծրագիրները մշակելու եւ զարգացնելու համար:

Կը կարծենք որ ծրագրումի սկզբնական աշխատանքը պիտի կեդրոնանայ միութեան դիմագրաւած ընդհանրական մարտահրաւէրներուն եւ կարիքներուն վրայ: Այնուհետեւ, ռազմավարական ծրագրումը պիտի հիմնուի տեղական տուեալներու վրայ: Սիւիււքի գաղութներու տարբեր միջավայրերը առարկայական յստակ պայմաններ կը ներկայացնեն ռազմավարական ծրագրումի համար: Իւրաքանչիւր գաղութ ունի իրեն յատուկ պայմանները, ըլլան անոնք քաղաքական, ընկերային, տնտեսական թէ՛ մշակութային, որոնք կը պայմանաւորեն ռազմավարական ծրագրի մը մշակումը:

Մեր ակնկալութիւնն է, որ իւրաքանչիւր շրջան տեղական մակարդակի վրայ եւ աւելի կարճ ժամանակամիջոցով կատարէ նմանօրինակ ծրագրում, իր տեղական կարիքներուն եւ մարտահրաւէրներուն հիմամբ:



Յ.Մ.Ը.Մ.ի կանոնագիրը ծանօթ է բոլորին: Յստակ է նաև միութեան առաքելութիւնը: Արդեօք ռազմավարական նման ծրագրում մը շփոթ չի կրնա՞ր յառաջացնել Յ.Մ.Ը.Մ.ի կանոնագիրին եւ առաքելութեան հետ:

- Ընդհակառակն, ծրագրումի աշխատանքը նպատակ ունի կրկին սերտելու միութեան առաքելութիւնը, անփոփոխ պահելով հիմնադիրներուն նպատակն ու ոգին:

Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-կանոնագիրին մէջ յստակօրէն ներկայացուած է միութեան նպատակը: Ծրագիր-կանոնագիրը իր մէջ կ'ընդգրկէ միութեան առաքելութիւնը եւ մնայուն արժէքները: Մենք պիտի ջանանք միութեան հիմնադիրներու ոգիին հարազատ մնալով, աւելի յստակացնել միութեան առաքելութիւնն ու արժէքները, նախկին բանաձեւումները փոխարինելով աւելի պարզ ու դիւրին հասկնալի նախադասութիւններով: Այդ ձեւով կը կարծենք կարողացած պիտի ըլլանք մեր միութիւնը եւ իր արժէքները աւելի մատչելի դարձնել ներկայ երիտասարդութեան:

Տեսականօրէն եթէ պիտի խօսինք, ռազմավարութիւնը միջոց է ճշդուած առաքելութիւն մը իրագործելու համար: Հետեւաբար, նախ կը ճշդուի ապագային նայող մեր տեսլականը կամ նպատակը, ապա գործնական առումով կը յստակացուին մեր թիրախները եւ վերջապէս, ներկայի մեր

առարկայական պայմաններէն եւ ինքնաճանաչումէն մեկնած՝ կ'առաջնորդուինք դէպի ճշդուած նպատակը: Նման մօտեցում մը, առանց շփոթ յառաջացնելու, կրնայ միայն յստակացում ու այժմէականացում տալ Հ.Մ.Ը.Մ.ի կանոնագիրին եւ առաքելութեան:

Չմոռնանք նաեւ, որ ծրագիր-կանոնագիրները միութիւններու կողմէ որդեգրուած ներքին օրէնքներ եւ կանոններ են, ներքին ղեկավարման համար: Օրինակ, անոնք կը ճշդեն վարչական անդամներու թիւը, իւրաքանչիւրին պաշտօնը, քուէարկութեան ընթացքը եւ այլն: Կարգ մը երկիրներու եւ քաղաքներու մէջ անհրաժեշտ է ծրագիր-կանոնագրի պետական վաւերացումը:

Ռազմավարական ծրագրումը ղեկավարման միջոց է: Ան կ'օգնէ, որ միութիւնը իր ուժը կեդրոնացնէ որոշ նպատակի մը վրայ, միութեան ուղղութիւնը պատշաճեցնելով օրէ օր փոխուող իր շրջապատին:

Ծրագրել կը նշանակէ յստակօրէն ճանչնալ միութեան թիրախները, ուժի աղբիւրները եւ ըստ այնմ պատրաստուիլ փոփոխութեան ենթարկուող շրջապատին: Ծրագրումը անհրաժեշտ է, որովհետեւ կը հիմնուի կարգ մը նպատակներու եւ անոնց իրականացման ընթացքին վրայ:

Ծրագրումը հիմնուած է ծրագիրներու եւ աշխատանքներու վրայ: Ծրագիրը որոշումներ են. ի՞նչ պէտք է ընել, ինչ՞ով պէտք է ընել, ե՞րբ եւ ի՞նչպէս պէտք է ընել, որովհետեւ անկարելի է ամէն ինչ միաժամանակ ընել: Ծրագրումը կ'օգնէ նաեւ առաջնահերթութիւնները ճշդելու: Ան կը շեշտէ կարեւորութիւնը կարգ մը աշխատանքներու եւ միութիւնը աստիճանաբար կ'առաջնորդէ նորութիւններու:

ժամանակի սահմանում ունի՞ք: Պատկերացում մը ունի՞ք, թէ որքա՞ն ժամանակէն կրնաք ձեր ռազմավարական ծրագրումը կատարել:

- Յանձնարխումբը կը ծրագրէ առ ի քննութիւն եւ վաւերացում իր պատրաստած ծրագիրը Կեդրոնական Վարչութեան ներկայացնել 2011ի սկիզբը: Կեդրոնական Վարչութիւնը իր կարգին 2011ին զայն պիտի յղէ Պատգամաւորական 10րդ Ընդհանուր Ժողովին, առ ի քննարկում եւ որդեգրում:

Սկառուտական եւ մարզական մտահոգութիւններէ անկախ՝ ազգային եւ համահայկական մտահոգութիւնները որքանո՞վ տեղ գտած են ռազմավարական ձեր ծրագրումին մէջ:

- Ծրագիրը պիտի ընդգրկէ այն բոլոր ներքին եւ արտաքին ազդակները, որոնք ազդեցութիւն ունին ոչ միայն սկառուտական եւ մարզական բաժիններու վրայ, այլեւ՝ միութեան ընդհանուր աշխատանքին եւ յառաջդիմութեան վրայ:

Սկառուտական եւ մարզական մտահոգութիւնները բնականաբար կը ներառուին եւ կ'ամփոփուին ազգային մտահոգութիւններու ծիրէն ներս: Իւրաքանչիւր շրջանի սկառուտական եւ մարզական գործունէութիւնը ազգային նկարագիր ունի եւ կ'արժեւորուի անոր մէջ:

**Ի՞նչպես կը գործէ ձեր
յանձնախումբը: Որո՞նք
են անոր անդամները:**

- Ծրագրումի յանձնախումբը կը գործէ հինգ անդամով, բաղադրացած եղբայրներ Արմէն Աբրահամեանէ, Շահէ Ենիգոմշեանէ, Ռազմիկ Շիրինեանէ, Վիգէն Դաւթեանէ (Մ. Նահանգներ) եւ Գէորգ Մանկէլեանէ (Գանատա): Շըրջանները յանձնախումբին մօտ ունին իրենց ներկայացուցիչները: յանձնախումբին մօտ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան լիազօր ներկայացուցիչն է Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան: Շըջաններուն հետ կապերը կը համադրէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան գործավարութիւնը:



Աշխատանքի ձեւին իմաստով նկատի ունինք հետեւեալ հանգրուանները:-

- Ծրագրումի աշխատանքը բացատրել Շըջանային եւ Մեկուսի վարչութիւններուն եւ մասնաճիւղերուն:
- Կազմակերպել աշխատանքային սեմինարներ:
- Լաւատեղեակ ըլլալ շըջաններու վերջին 10 տարիներու աշխատանքին:
- Ծրագրումի յանձնախումբին օժանդակել անհրաժեշտ տեղեկութիւնները տրամադրելով անոր:



Ռազմավարական ծրագրումը այսօր իր վերջնական ձեւին մէ՞ջն է, թէ ոչ քննարկման եւ վերատեսութեան կրնայ ենթարկուիլ: Եթէ ոեւէ մէկը կարծիք, տեսակէտ կամ պատկերացում ունի, ի՞նչպէս կրնայ ձեռք փոխանցել:

- Ռազմավարական ծրագիրը շարունակական վերատեսութեամբ առաջնորդուող ծրագիր է: Այս ծրագիրը կը միտի նաեւ գործունէութեան լայն տարածք ստեղծել, եւ այդ ուղղութեամբ որեւէ կարծիք օգտակար է յանձնախումբին համար:

Յանձնախումբին մօտ նշանակուած Շըջանային եւ Մեկուսի վարչութիւններուն ներկայացուցիչները պարտականութիւնը ունին մէկ կողմէ իրենց շըջաններուն փոխանցելու ծրագրումի ընթացքը, իսկ միւս կողմէ՝ իրենց շըջաններէն յանձնախումբին փոխանցելու կատարուած աշխատանքին արձագանգը:

Ե՞րբ կը կարծեք ձեր ռազմավարական ծրագրումը գործադրութեան կրնայ դրուիլ:

- Ծրագիրը կրնայ որդեգրուիլ 2011ի Պատգամաւորական 10րդ Ընդհանուր Ժողովին եւ գործադրութեան կրնայ դրուիլ Յունուար 2012ին:

Աւարտին, ծրագրումի յանձնախումբին անդամները չնորհակալութիւն կը յայտնեն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, որ նեցուկ կը կանգնի այս աշխատանքին: Շնորհակալութիւն նաեւ բոլոր շըջաններուն եւ ներկայացուցիչներուն, որոնք կ'օժանդակեն յանձնախումբին: Մենք միայն նախնական քայլերը առած ենք եւ դեռ երկար ճամբայ ունինք կտրելիք: Յառաջդիմելու, խորհրդակցելու եւ միասին աշխատելու պատրաստակամութեամբ, կը հաւատանք որ պիտի կարենանք հասնիլ մեր նպատակին:

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍԻՆ

Հ.Մ.Ը.Մ. եզակի է իր ծնունդով, նոյն դրօշին տակ միացուցած ըլլալով թե՛ սկաուտական եւ թե՛ մարզական շարժումներ, ազգային-գաղափարական առաջնորդող ուղիով:

Հ.Մ.Ը.Մ. եզակի է իր տարողութեամբ: Այսօր աշխարհի վրայ չկայ միութիւնը մը, որ 5 ցամաքամասերու 89 քաղաքներու մէջ գործէ նոյն ոգիով եւ գաղափարական ներշնչումով՝ կեդրոնական մէկ մարմինի հովանիին տակ:

Հ.Մ.Ը.Մ. եզակի է իր առաքելութեամբ: Ան մարզական կամ սկաուտական սովորական միութիւն մը չէ, այլ մարդակերտումի եւ հայակերտումի նուիրում գաղափարական շարժում մըն է:

ԲԻԻԶԱՆԴ ԹՈՐԻԿԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ը նիւթական երեւոյթներու ցուցադրութիւն, ֆութպոլի յաղթանակ, մարզիկի մթ գեղեցիկ խոյանք, կամ՝ փառաւոր շէնքի մը հոյակապ կառոյց ըլլալէ առաջ՝ մարդակերտումի, հայակերտումի վարդապետութիւն մըն է: Ազգային իմացականութեան դպրոց մըն է: Դպրոց մը, ուր կը սորվեցնեն զոհողութեան ոգի, եղբայրական սիրոյ քաղցրութիւն, բարոյական դաստիարակութիւն, գեղեցկութիւն, ու այս բոլորին պսակը՝ ազգային ոգի:

ՍԱՍՈՒԷԼ ՄԿՐՏԻԶԵԱՆ

Ոմանք կը մտածեն որ իրենց անցը Հ.Մ.Ը.Մ. կը նշանակէ ժամանց մը՝ կատարելագործելու համար իրենց ֆիզիքական կարողութիւնները եւ հռչակաւոր դառնալ՝ իրենց կիրարկած մարզական մէկ խաղով: Ուրիշներ, աւելի օժտեալները, համոզուած են որ ծառայել ակումբին՝ կը նշանակէ հասնիլ ե՛ւ գագաթին, ե՛ւ իտեալին: Երրորդ դասակարգ մը, որ ամենէն անանձնականն է, ուրիշ մտահոգութիւն չունի՝ եթէ ոչ ի մի խառնուիլ խումբին, եթէ նոյնիսկ իր ներկայութիւնը անօգուտ նկատուի:

Եւ հիմա, իրաւունք չունի՞նք հարց տալու, թէ մեր երիտասարդութիւնը ի՞նչ կը սպասէ Հ.Մ.Ը.Մ.էն եւ Հ.Մ.Ը.Մ. ի՞նչ կը սպասէ մեր երիտասարդութենէն: Երեք բառեր կը բաւեն մեր միտքը ամփոփելու համար.- Չոհողութիւն, զոհողութիւն եւ մի՛շտ զոհողութիւն:

ԺՈՂԵՅ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Սիրելի՛ տղաք, Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ, պետք է լաւ գիտնաք որ մեր սիրելի միութեան մէջ շփացած մարզիկը արժէք չունի, որքան ալ ձիրքերով օժտուած ըլլայ ան: Փա՛ստը.- Վազգէններուն, Արսէններուն, Արմէններուն, Յամագասպներուն եւ Յակոբեաններուն հարցուցէք: Հ.Մ.Ը.Մ.ին համար կարելորդ այն է, որ մենք ըլլանք իսկական հայեր, մաքուր երիտասարդներ եւ համեստ ֆուրթպոլիստներ: Ըլլանք կարգապահ ու հնազանդ: Իսկ ամենէն կարելորդ, աշխատիք ու աշխատիք, որովհետեւ սալոններու մէջ նստած՝ ֆուրթպոլիստներ եւ ախոյեաններ չենք կրնար ըլլալ:

ՎԱԶԳԵՆ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ը ազգային, բարոյական, ապահովագրական ընկերութիւն է: Ծնողներ պետք է իրենց գաւակները անդամագրեն Հ.Մ.Ը.Մ.ին, եթէ կ'ուզեն որ իրենց երեխաները ոչ միայն հայ մնան, այլեւ՝ ընտանիքի հասկացողութեան մէջ մնան, ապագային իրենց ծնողքին հանդէպ սեր ունենան: Հ.Մ.Ը.Մ.ը դպրոց է, մթնոլորտ է, եկեղեցի է:

ԿԱՐՕ ԹԻԹԻՒՆՃԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի պատկանելիութեան գիտակցութիւնը ամուր պետք է ըլլայ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի մօտ, ըլլայ այն սկաուտ, մարզիկ, պատասխանատու անդամ կամ պարզ անդամ:

Այս գիտակցութիւնն է, որ կը զօրացնէ Հ.Մ.Ը.Մ.ը, զայն աւելի կազմակերպ, աշխոյժ եւ գործօն կը դարձնէ:

Պատկանելիութեան գիտակցութիւն կը նշանակէ գիտնալ թէ ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.ական ենք, ի՞նչ ստանալու եկած ենք Հ.Մ.Ը.Մ.էն եւ ի՞նչ տալու եկած ենք մեր միութեան:

Բաւարար չէ ունենալ միայն պատկանելիութեան գիտակցութիւն, այլ՝ պետք է սիրել Հ.Մ.Ը.Մ.ը, խանդավառուիլ անով, քաջալերել անոր ձեռնարկները, ծափահարել եւ յուզուիլ անոր տողանցքներով, հպարտանալ Հ.Մ.Ը.Մ.ով:

ՊԵՏՐՈՍ ՇԵՄՍԵՍԵԱՆ



20Ն Հ.Մ.Ը.Մ.ԻՆ

*(Հիմնադրութեան
90ամեակին առիթով)*

Կամքիդ ուժով դուն բարձրացար,
Ու քեզի հետ բարձրացուցիր,
Սերունդներդ բազմահազար,
Եղար բանակ հայոց ազգին:

Հ.Մ.Ը.Մ. միշտ յաղթական,
Պարծանքն ես դուն ողջ հայութեան:
Առանց քեզի չկայ հայ տուն,
Մեր մեծ երթին դրօշն ես դուն:

Անցիր հպարտ ճամբաներէն,
Օտարութեան ցուրտ հովին դէմ,
Եղիր պատկէշ, բերդ անառիկ,
Հ.Մ.Ը.Մ. մեր հայրենիք:

Ազատութեան շեփորն ես դուն,
Մեր առաջնորդ, քաջ, մշտարթուն:
Հ.Մ.Ը.Մ. անուն բարի,
Փառքըդ տօնենք ամեն տարի:

Կրկներգ.- Բարձր բռնած դրօշ Եռագոյն,
Հայ սրտերուն միշտ ծաղկիս դուն:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ



ՀՔԱՆՀԱՆ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ

(ՅԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԶՕԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Հանդես է հիմա
իննսունամեայ

ծիրանի գօտին
հագած պատմուճան

Հանդես է հիմա
իննսունամեայ գոյատևման հանդես է անոր
որուն ծնունդը գարնան պես աղուոր
եղաւ փառաւոր,

Ազատութեան շէն

լուրը շեփորոջ
օրուան հետեւորդ
օր մը կենսայորդ
եւ արեւաշող:

Տեսլականներու նուիրեալներէն

ծնունդն իր առած

Միութիւնն այս մեծ

մեծցաւ ու դարձաւ աշխարհատարած.

Ամփոփեց իր մէջ ազգը բաղադրող

տարրեր զանազան
ներկայացնելու
ազգին սեփական
արժանիքներով
արդար վաստակով
ազգն ամբողջական ...

Մեծերը միայն կրնան տեսնել ներկային առջեւ
անտեսանելի
ապագան նաեւ.

Եւ մեծեր եղան

անոնք որ տեսան
այս մեծ միութեան
արժեքը վաղուան.



Արժեքը՝
կարիք,
Կարիքը՝
օգուտ,
Օգուտն՝
ազօգուտ

զոհաբերութիւն.

Եւ մեծերէն ետք՝

նոյն նուիրումով
եւ հաւատաւոր
յետնորդներ եկան
իրարու ետեւ եւ յաջորդական
- մանուկ, պատանի, երիտասարդ, ծեր -
դառնալու համար

արժանաբար
իրենց ալ մեծեր.

Մանուկը եղաւ՝

տակաւին թաթիկ՝
սիրասուն գայլիկ.

գլխարկը ծռած
փողկապը քակուած
քայլերը փափուկ
ձայնը երգեցիկ
մարմինը վտիտ
աչքերը վճիտ
ու դէմքին ժպիտ.

Օ՛ իրաւ քաղցր է

ըլլալը գայլիկ...
սակայն.. չըլլայ որ յանկարծ մոռցուի...
Հ.Մ.Ը.Մ.ի սիրասուն գայլիկ,
գայլիկ կամ արծուիկ...

Պատանին եղաւ արի-արեւնոյշ,
տիպար սկաւուտ.

Երիտասարդը դարձաւ խմբապետ,
երեց սկաւուտ.

Ծերը՝
ծերունի

կոչուած հանգստեան
Հ.Մ.Ը.Մ.ի յարգոյ վեթերան.

Եւ տարազաւոր այս փաղանգին քով
մարզիկներ կեցան

մարզախաղերու ներկայացումով
ու խիտ շարքերով

Եւ միշտ յաղթական

իրենց պատկանած
հպարտ միութեան

թովիչ անունով
Պարծանք ու պատիւ բերին հայութեան...

Ըսե՛մ, ձեզի հետ,
իր բոցով անշեշ
Այս միութեան մէջ
Մենք միասնաբար

եթէ կայ բան մը սխալ կամ պակաս
հմայքով անվերջ
եւ անցեալով պերճ

Ըսե՛ք, ինձի հետ,

տանք յորդոր, խրատ,
սրբագրութեան դաս,
ապա առաջարկ.

որ կայ - պակաս՞ թէ - բան մը աւելի
աւելի յարգի
քան որպէս նուեր
սպասածը մեր,
բան մը սիրելի
անձէն աւելի.

Վասնզի իր մէջ անձը չէ միայն
Այլեւ անձին հետ
Ազգ մ'ամբողջական:

որ միութիւնն այս կը խտացնէ,
անձերու շարան
եւ շարանին հետ

Միութեան տօնն է,

Այս մեծ միութեան,

տօնահանդէսը իննսունամեայ
մեծ ընտանիքին,
որ երկնային նուրբ
ձեռքով կերտուած
Արարատի զոյգ
ձիւնապատ ու սուրբ
գագաթներով ճոխ
Շուշանաբոյրով
Չինանշանով
Դրօշն իր պարզած
վեր բարձրացուցած
բարձրանալու եւ
բարձրացնելու
նշանաբանով

Նահատակ ցեղի

յառաջխաղացքով



	քայլ նետեց յառաջ
եւ յառաջացաւ	դէպի յաղթանակ...
Միութիւնն այս մեծ	
միտքերն տարակարծ	
դարձուց համակարծ	
դարձուց համախոհ	
սրտերը անհաշտ	
դարձուց համերաշխ	
հասցուց սերունդներ	ազգին պատուաբեր
տուաւ սկառուտ	պատուի արժանի
տուաւ մարզիկներ	փառքի արժանի
կերտեց մարմնի հետ	
է՛ւ նկարագիր	կամք ու համարում
	անբեկ համոզում
ներշնչեց ոգի	յոյս ու խրախոյս
	եւ վստահութիւն
մշակեց հոգի	միտք եւ սկզբունք
	խիղճ ու բարութիւն
սերմանեց հունտեր	պարտականութեան
	եւ յանձնառութեան
սորվեցուց սիրել	մարդուն առընթեր
սիրել կենդանին	
սորվեցուց յարգել	
յարգել տարեկից	երիտասարդ, ծեր
սորվեցուց ըլլալ	պատրաստ, մի՛շտ պատրաստ
ըլլալ կարգապահ	եւ խոստմնապահ
ըլլալ ճշդապահ	եւ աւանդապահ
ըլլալ օգտակար	
շարունակաբար	բոլորին համար
ըլլալ վեհանձն	արդար, անաչառ
Ծառայել ազգին եւ հայրենիքին	

անձնուիրաբար

հաւատարութեամբ

եւ անանձնական

գոհունակութեամբ

Պարծանք ու պատիւ բերել հայութեան:

Solահանդես է,

վասնզի հիմա

այս պայծառ օրին

Մեծարանքն է այս մեծ միութեան

մեծ ընտանիքին

հայուն սիրելին

փառքը բոլորին

Պատիւ հայկական

պարծանքը ազգին:

եւ շքանշան

Յ.Մ.Ը.Մ.ին:

Պէյրուք, 2008





ՊԱՏԻՒ ՈՒ ՓԱՌՔ ՔԵԶ Հ.Մ.Ը.Մ.

Անմեղ զոհերի աճիւններից,
Ծնունդ առիւր դու Հ.Մ.Ը.Մ.:
Տառապանքի ուղիներից,
Մեզ տուն բերիր Հ.Մ.Ը.Մ.:

Քեզմով եւք մենք հպարտ այսօր,
Սերունդների դու փրկարար:
Տնից հեռու դու տուն մի կոր,
Դու փարոս ես մեծ Հ.Մ.Ը.Մ.:

90ամեայ քո պատմութեամբ,
Պատրաստեցիր բանակ ու խումբ:
Բարձրացուցիր քո բարձրութեամբ՝
Ազգի պարծանք մեր Հ.Մ.Ը.Մ.:

Փայլուն մետալ մարզիկի կրծքին,
Ու արիի դու վառ խարոյկ:
Եղար պաշտպան Եռագոյնին,
Պատիւ ու փառք քեզ Հ.Մ.Ը.Մ.:

Դու ալեհեր մի երիտասարդ,
Գաղափարի մեր հին ընկեր:
Երթո՛ւ լինի կանաչ ու հարթ,
Քեզ շնորհաւոր իմ Հ.Մ.Ը.Մ.:

ՄՅԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ



ՄԿԱՌԻՏԻ ԵՐԳԸ

Գուրգեն Մահարիի այս քերթուածը կը պատկանի իր գրական առաջին փորձերուն: Գրած է 1922ին, երբ սկսուտ էր Կիւմրիի (այդ օրերուն՝ Ալեքսանդրապոլի) Ամերիկեան Նպաստամատոյցի Կազաչի Փոստ որբանոցին մէջ, որուն սկսուտապէտը Գ.Ս.Ը.Ս.ական Վահան Չերազն էր: Այս ոտանաւորը այդ օրերուն Վահան Չերազի միջոցով դրկուած է Գ.Ս.Ը.Ս.ի պաշտօնաթերթ «Հայ Սկսուտ»ին:

Օրը մթնում է, թնդում են անքուն
Սրտերը մեր ժիր խնդութեամբ ջահել,
Ստուեր է հագել մեր պահակատուն,
Ու մենք չենք կարող մեր ճիչը պահել,

Անցնում ենք շարքով առաջ ու առաջ,
Մեր ոտների տակ գետինն է թնդում,
Մեզ հրդեհել է նոր կեանքի մի կանչ
Ու մենք հզօր ենք աշխարհիկ բանտում...

Շարքեր նոյնազօր, շարքեր բիրաբիր
Փռուել ենք որպէս Վարդավառ մի սօն,
Կազաչի Փոստից մինչեւ ջինջ Վոսփօր,
Մինչեւ արեւմուտք, հեռաւոր Պոսթօն,

Անկումներից վեր, վերելքից վերե՛լք,
- Եկե՛ք, կանչում ենք ուշացածներին,
Եկեք շարք առ շարք մեր աշխարհով մէկ,
Հները անցան, նոր բախտ չբերին...

- Եկեք կանչում ենք. թող մեր կանչը սեզ
Ձեր հոգիներուն հուրի պէս այրի,
Մեր յաղթանակին եկեք ու հասեք,
Եկեք միացեք մեր հոծ շարքերի...

Երկիրը մեր հին, մորթուած բիր անգամ,
Կանչում է արթուն, կանչում ու կրկին
Մեր խումբերն են անցնում յաղթական,
Հիսում նոր պսակ, նոր կեանքին, փառքին:



Ալեքսանդրապոլ, 1922

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ





Հ.Մ.Ը.Մ.

Հ.Մ.Ը.Մ. Մեծ Եղեռնի
Մոխիրներեն ծնած Փիւնիկ
Ու արիւնի ծովէն յառնող
Աստանդական նո՛ր հայրենիք:

Հ.Մ.Ը.Մ. սերունդ հայկեան՝
Մեր դարերու խռովքն իր մէջ,
Ոգին հպարտ, կամքն աննուաճ
Ու հաւատքի հուրը անշէջ:

Այդ հուրն անշէժ-բոցն հիւսաւորց
Կը փոխանցենք սերունդներուն,
Եւ դեռ կու տանք՝ մեր սրտին հետ
Կրակը մեր նախնիքներուն:

Տասնութին, երբ մենք ծնանք
Կամքով արի, երազով վառ,
Սակաւ էին շարքերը մեր,
Հիմա եղանք բիւր ու հազար:

Հիմա արդէն ամենուրեք
Կը տողանցեն շարքերը մեր,
Մեր երզն հզօր կը տարածուի,
Հայ հոգիին հետ անվէտեր:

Վաղը՝ վատահ պիտի դառնանք,
Պիտի դառնանք կամքն անսասան
Ազատատենչ մեր պապերուն,
Հերոսական մեր պատմութեան:

Մարտ 1958

ԱՐՄԵՆ ԱՆՈՅՇ



«ԲԱՐՁՐԱՑԻՐ - ԲԱՐՁՐԱՑՈՒՐ»

Նուեր՝ Հայ Սկաուտին

Յառա՛ջ, ով արի, հայ վսեմ ցեղին,
Յառա՛ջ, կարօտովն հայրենի հողին,
Միտքդ մշտարթուն, կամքդ կորովի,
Սիրտդ յորդ աղբիւր սիրոյ, գորովի,
Տիպար կենցաղով եղի՛ր դու կերտող
Պատիւ հայութեան դափնեգարդ կրթող
Քեզմով պարծենայ ցեղը Վարդանի
Իբրեւ հայ ուժին վկայ կենդանի:

Դեմքիդ ժպիտ, աչքիդ հուր
Բարձրացի՛ր-բարձրացուր,
Քաջարի հոգիդ ցոյց տուր
Բարձրացի՛ր-բարձրացուր:

Բարւոյն ախոյեան, հեռացիր չարէն,
Ձգտէ վեհութեան, սեգ սրտիդ խորէն,
Դարբնէ անվիատ հայուն ապագան,
Կոփէ՛ հայդուկներ, համակ ջիդ, մկան,
Մանկանց դեռատի մշակէ հոգին,
Վառէ՛ անոնց մէջ ազգասէր ոգին,
Յոյց տուր թէ հայու սրտին ապաստան
Միայն մէկ վայր կայ, այն է Հայաստան:

Դեմքիդ ծիծաղ, աչքերդ հուր
Բարձրացի՛ր-բարձրացուր,
Քաջարի հոգիդ ցոյց տուր
Բարձրացի՛ր-բարձրացուր:

Զ. ԺՊՏՈՒՆԻ



ՀԱՆՐԱԾԱՆՈՒ ԴԷՄՔԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍԻՆ

Հ.Մ.Ը.Մ. այն եզակի միութիւններէն է, որուն աշխատանքները տարածուած են ամբողջ աշխարհի մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը հայկական ոգին պահեց Սփիւռքի սերունդներուն մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը 1912 թուականէն սկսեալ հայ ազգային ոգին պահեց մանաւանդ այն երիտասարդութեան մօտ, որ երբեք Հայաստանը չտեսաւ: Այսօր այդ աւանդութիւնը կը շարունակուի:

ԺԱԳ ՄՈՐԵՆՆ
(Հ.Ս.Շարժումի նախկին ընդհ. քարտուղար)

Դուք, սիրելի հայ արիւներ, դուք հայրենիքի յոյսն ու լոյսն էք: Ձեր բարոյական գիտութեան լայն ու գեղեցիկ դաշտ մը ունի իր առջեւ: Կազմակերպուեցէք, ազնուացէք որքան կրնաք, լեցուցէք Ձեր սիրտն ու միտքը, վասնզի դուք պիտի ըլլաք վաղուան սրբազան հայրենիքին հրաշակերտ տաճարին սիւները:

ՉԱԲԵՆ ԱՐԸ. ՏԵՐ ԵՂԻԱՅԵԱՆ
Պատրիարք Պոլսոյ

Սիրած եմ մեր տղաքը, Պոլսոյ մէջ, Հայաստանի մէջ, Յունաստանի մէջ, Լիբանանի մէջ, Սուրիոյ մէջ, Իրաքի մէջ, Իրանի մէջ: Ամէն տեղ:

Սիրած եմ անոնք, մեր տղաքը, երբ մանուկ էի ու կը նայէի անոնց, իբրեւ մեր հերոսները՝ Զրիսեան, Յակոբեան, Ճիգմեզճեան, Ճոլոլեան...

Սիրած եմ մեր տղաքը Հայաստանի մէջ, ուր կը մարզէիք Անկախ Հայաստանի ազատ սկաւտները Եռագոյնին, մե՛ր Եռագոյնին ծալքերուն ու ծփանքներուն տակ: Անմոռանալի եղերաբախտ նահատակ Վահան Չերազն ու իր ընկերները:

Սիրեցի մեր տղաքը: Տեսայ թէ ինչպէս անապատներէն եւ անդունդներէն ճողոպրած սերունդն ու իր գաւակները բարձրացուցած էին Հ.Մ.Ը.Մ.ի նուիրական դրօշը, զոր հայ ժողովուրդի արիւնկալ թշնամին ուզեց այրել, ջուրերուն ու ծովերուն յանձնել անոր մոխիրները: Տեսայ թէ փիւնիկի նման յառնող մեր նոր տղաքը ի՞նչ սքանչելի դեր կը խաղան անոր ծփանքներուն ներքեւ, մեր գաղութներուն մէջ:

Եթե մարմնակրթական այս շարժումը կը ստեղծենք տեսակ մը ունայնամիտ ցոյցի եւ գռեհիկ փառասիրութիւններու գոհացումին համար, պետք է խոստովանինք, որ մենք դեռ շատ եղկելի մարդիկ ենք: Բայց կը հաւատամ որ այդպէս չէ: Շարժումը ծայր տուած է ազգային խորունկ եւ անյետաձգելի պետքէ մը մղուած. անիկա արդիւնք է միահամուռ կերպով զգացուած այն անհրաժեշտութեան, թէ մեր կործանած ազգը հարկադրուած է, վերակենդանացման սա դժնդակ օրերուն, հաւաքել եւ արժէք տալ իր բոլոր ուժերուն, գերագոյն պրկումով մը կարենալ դիմակալելու համար գալիք ծանր օրերը: Եթէ այս տեսակետով մօտենանք սփորին, եւ ընդհանուր կերպով բովանդակ մարմնակրթութեան, անիկա իսկոյն կը գրաւէ՝ ստեղծուած ուրիշ շատ մը համազգային շարժումներու քով, առաջնակարգ տեղերէն մէկը: Եւ ինչո՞ւ չգրաւէ:

ՄԱՏԹԵՆՍ ԶԱՐԻՖԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի սկաւտների հայրենանուէր ապագային հետեւողները ամենամեծ ներդրում են անում հայութեան գանձարանում, քանի՜ աւելի մեծ գանձ, քան հայ մանուկն ու պատանին, քան հայ անհատը, անհնար է երեւակայել:

Յաջողութիւն Հ.Մ.Ը.Մ.Ի նուիրական աշխատանքներին՝ միասնական Հայութեան, միասնական Հայրենիք կերտելու ճանապարհին:

ՈԱԶՄԻԿ ԴԱՌՅԵԱՆ

Տեսայ մեր նոր տղաքը, որոնք գիտակից իրենց կոչումին, հաւատարիմ, Հ.Մ.Ը.Մ.Ի վեհ սկզբունքին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր» հաւատարիմ իրենց նախորդներու սքանչելի օրինակին, կանգնած էին պարտականութեան ճամբուն, պատուաբեր գործերու մէջ եւ պատասխանատու դիրքերու վրայ, պատրաստ՝ ծառայութեան յօգուտ եւ ի պատիւ զիրենք ծնող ժողովուրդին:

Կը սիրեմ մեր կազմակերպութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ը, իբրեւ մեր ազգային կեանքի մէկ ամուր կայանը, ուրկէ մեր նոր սերունդը առած նոր ուժ ու թափ, գտած՝ թափ ու կշիռ, կը նետուի ազգային եռուն կեանքի, պատասխանատու գործի ասպարեզ:

Ահա այդ կայան հասած այս օրերու մեր տղաքն են որ իրենց ճիգին ու թռիչքին մէջ պետք ունին մեր աջակցութեան: Չենք կրնար կասեցնել անոնց թափը, մեր անտարբերութեամբ, սակայն կրնանք արագացնել ու ամրացնել զայն համակրալիր վերաբերումով, հաւանող նայուածքներով, եւ աջակցութիւն կարկառող ձեռքով:

Սիրենք զանոնք, ժպտինք անոնց: Օգնենք անոնց որ օգնեն իրենց յաջորդներուն: Տանք անոնց որ տան իրենց հետեւորդներուն:

«Բարձրացի՛ր-բարձրացուր»

ՃՈՐՃ ՄԱՐՏԻԿԵԱՆ

«ՄԱՐԶԻԿ» 90ԱՄԵԱԿԻ ԲԱՑԱՌԻԿ



Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Յ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը 2007-2011 նստաշրջանի իր Բ. լիազումարը կատարեց 2էն 5 Սեպտեմբեր 2008ին, Երեւան, Հայաստան:

Կեդրոնական Վարչութիւնը երկարամիստ ժողովներու ընթացքին առաջին հերթին անդրադարձաւ անցնող տարեշրջանի իրագործումներուն եւ կատարեց անհրաժեշտ արժեւորումներ, ապա ուսումնասիրեց եւ քննարկեց Բ. լիազումարով ձշդուած օրահարցերը, որոնք ընդհանրապէս կը միտին կազմակերպել իր գործունէութեանց ժամանակաշրջանին տեղի ունենալիք ձեռնարկները եւ անոնց համաձայն մշակեց յատուկ ծրագիրներ:

Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

Կեդրոնական Վարչութիւնը իր ներկայացուցիչներէն լսեց Շրջանային եւ Մեկուսի բոլոր շրջաններու մասին ամփոփ գեկոյց մը եւ ախտաճանաչումներ կատարելով՝ արժեւորեց անոնց գործունէութեանց մարզերը: Ապա անդրադառնալով ներքին մասնակի դժուարութիւններուն, ան տուաւ լուծումներ: Կեդրոնական Վարչութիւնը իր ուշադրութեան առանցքը դարձուց վերջին տասնամեակին վերամիացած ու նորաստեղծ մեկուսի շրջանները եւ իւրաքանչիւրի պարագային յանգեցաւ եզրակացութիւններու՝ պարագայաբար ներկայացուցիչներ գործուղելով պահանջուած Շրջանները, ինչպէս նաեւ առիթ ստեղծելով անոնց առաւել ինքնակազմակերպման ու վերաշխուժացման:

Կազմակերպական ու ծրագրաւորումի մշակուած առաջադրանքներով Վարչութիւնս ձշդեց համահիութեանական վարչական միջ-դիւանական 7րդ խորհրդաժողովին օրահարցերը: Խորհրդաժողովը տեղի պիտի ունենայ Ապրիլ 2009ին, Փարիզ, Ֆրանսա:

Բ. ԾՐԱԳՐԱԻՈՐՈՒՄ

Կեդրոնական Վարչութիւնը լայնօրէն սերտեց ծրագրաւորումի իր յանձնախումբին պատրաստած նախագիծը, անդրադարձաւ անոր յաջորդական ծրագրային հանգրուաններուն, որոնց աշխատանքները արդէն սկիզբ առած են Շրջանային եւ Մեկուսի Շրջաններէն ներս:

Համա-Յ.Մ.Ը.Մ.-ական յառաջիկայ միջ-դիւանական խորհրդաժողովին ծրագրաւորումի յանձնա-

խումբը պիտի ներկայացնէ ամբողջական ծրագիր մը:

Գ. ՍԿԱՈՒՏԱԿԱՆ

Կեդրոնական Վարչութիւնը կանգ առաւ համա-Յ.Մ.Ը.Մ.-ական Խմբապետական Ե. համագումարի աշխատանքներուն վրայ: Համագումարը տեղի ունեցած էր 24էն 29 Օգոստոս 2008ին, Ծաղկածոր, Հայաստան: Անոր կը մասնակցէին կազմակերպական 11 շրջաններէ եւ Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութենէն, «Նայիրի» եւ «Սիփան» միութիւններէն 24 բարձրաստիճան խմբապետ-ուիներ: Համագումարը ամբողջութեամբ ղեկավարուած էր իր ներկայացուցիչներուն կողմէ: Ներկայ էր նաեւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրական կազմէն ներկայացուցիչ մը:

Համագումարը աշալրջութեամբ ուսումնասիրած ու վերամշակած էր սկաուտական բարձրագոյն կարգերու՝ «Վկայեալ»-ի եւ «Արարատեան»-ի գիտելիքները: Առաջինին նպատակն է խմբապետներ պատրաստել, իսկ երկրորդինը՝ խմբապետներ ղեկավարել, պատրաստած խմբապետներու վերաորակաւորման դասընթացքի գիտելիքները մշակել: Այս աշխատանքները իրագործելու համար ձշդած է անոնց մասնակցութեան, գործնականացման հանգրուաններն ու եղանակը, որոնք տեղի պիտի ունենան 2009ին, միջ-ցամաքամասային դրութեամբ, իսկ 2010ին՝ ընդհանրական բնոյթով:

Գայլիկական ու արծուիկական շարքերու Սոկլիի բաժանմունքին անդրադառնալով, ուր որոշ շրջաններու մէջ կը մէկտեղուին 3էն 6 տարեկան փոքրիկները, համագումարը մշակած է անոնց յատուկ գիտելիքներ եւ գործունէութեան մարզեր:

Համագումարը լայնօրէն անդրադարձած է 2010ին տեղի ունենալիք համա-Յ.Մ.Ը.Մ.-ական 9րդ բանակումին եւ նախկին փորձառութիւններէ մեկնած՝ կատարած անհրաժեշտ առաջադրութիւններ, որոնց շարքին, Պատգամաւորական 9րդ Ընդհանուր Ժողովէն թելադրուած, մասնակցութեան թիւ սահմանափակում:

Վարչութիւնս, հիմնուելով Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի եւ համագումարի բանաձեւերուն վրայ, որոշեց մասնակցութեան թիւը սահմա-

նափակել առաելագոյնը 450 մասնակիցով:

Ինքնաքննարկման ու ինքնաճանաչման հասկացողութեամբ համագումարը քննարկած է Սփիւռքի եւ Հայաստանի մէջ օտարամոլութեան դէմ պայքարելու, հայրենասիրութեան եւ ազգապահպանման դիմագրաւած դժուարութիւնները եւ ապա, միակամ կեցուածք ճշդած է՝ հաւատքով ու անձնուիրութեամբ պայքարելու մեր ինքնուրոյն դիմագիծի պահպանման համար:

Կեդրոնական Վարչութիւնը հիմնուելով համա-Յ.Ա.Ը.Մ.-ական խմբապետական Ե. համագումարի կատարած բժախնդիր աշխատանքին վրայ, ընդհանուր գիծերով վերահաստատեց բոլոր բանաձեւերը:

Դ. ՄԱՐԶԱԿԱՆ

Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեամբ, համա-Յ.Ա.Ը.Մ.ական 8րդ մարզախաղերը տեղի պիտի ունենան 1էն 8 Օգոստոս 2009ին, Երեւան, Հայաստան: Անոնք պիտի ընդգրկեն ֆութպոլ, պասքէթպոլ, փինկ-փոնկ, լող եւ ճատրակ:

Այս առթիւ, խաղերու կազմակերպական նախապատրաստական աշխատանքները լաւագոյնս ծրագրելու հեռանկարով, Հայաստան կը գտնուէր գործադիր յանձնախումբի ատենապետը, որ իր կարգին կատարած էր անհրաժեշտ հետազօտութիւնները բոլոր մարզերու մէջ:

Արդարեւ, Կեդրոնական Վարչութեան հետ համատեղ ուսումնասիրութեամբ ու քննարկութեամբ ձեռնարկը իրագործելու զանազան կարելիութիւնները. կեցութիւն, դաշտեր, փոխադրամիջոցներ, մասնակցութեան սակ, եւ այլն, որոնց հիմամբ Վարչութիւնս աշխատանքի իրագործումը վստահեցաւ յառաջացուած յանձնախումբին:

Ե. 90ԱՄԵԱԿ

Միութեան հիմնադրութեան 90ամեակի յիշատակութեան առիթով, Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ Հայաստանի մէջ տեղի ունեցաւ հիմնադիրին անուամբ՝ Շաւարշ Քրիսեան լսարանի բացումը, պետական անձնաւորութեանց եւ մտաւորական անձնակազմերու ներկայութեան, մարզական պետական հիմնարկին մէջ, ինչպէս նաեւ գիտաժողով մը:

Հայոց Ցեղասպանութեան յիշատակին նուիրած Ծիծեռնակաբերդի յուշակոթողի մուտքին Վարչութիւնս տնկեց մշտադալար ծառ մը, որ խորհրդանիշն է հայ ժողովուրդի յաւերժացման:

Նոյն իմաստով, Շրջանային եւ Սեկուսի Շրջաններու մէջ տեղի ունեցած են յիշատակի պանծացման ձեռնարկներ, որոնք պիտի շարունակուին մինչեւ 2008ի աւարտը:

Զ. «ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Կեդրոնական Վարչութիւնը անդրադարձաւ «Մարզիկ»ի խմբագրութեան եւ անձնակազմին կատարած տքնաջան ու հետեւողական աշխատանքին, ապա քննարկեց շրջաններու մէջ անոր տարածման դրութիւնը եւ, առհասարակ, ընթերցողներու թիւի նահանջը. թելադրութեամբ շրջաններու մէջ աւելի կազմակերպ դրութեամբ հետեւիլ «Մարզիկ»ի տարածման աշխատանքներուն:

Է. ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Կեդրոնական Վարչութիւնը իր լիազումարին առընթեր այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին, որ շատ ջերմ ընդունելութիւն ցուցաբերեց Վարչութեանս անդամներուն:

Հանդիպում մը տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի պետական կոմիտէի նախագահուհիին հետ, որուն հետ արծարծուեցան Հայաստանն ու Սփիւռքը յուզող հարցեր եւ ակընկալութիւններ: Կարծիքներու փոխանակում տեղի ունեցաւ նաեւ կրթութեան եւ մարմնամարզի նախարարներուն հետ:

Վարչութիւնս հիւրընկալուեցաւ Գ.Յ.Գ. Բիւրոյին կողմէ եւ առանձին տեսակցութիւն մը ունեցաւ անոր ներկայացուցիչին հետ, որուն հետ արծարծեց մեր ժողովուրդը տազնապեցնող հարցեր:

Վարչութիւնս շատ սերտ խորհրդակցական հանդիպում մը ունեցաւ Գ.Յ.Գ. Հայաստանի Գերագոյն Մարմնին հետ: Եղաւ կարծիքներու փոխանակում՝ Հայաստանի այժմու իրավիճակին շուրջ: Գերագոյն Մարմինը իր ամբողջական պատրաստակամութիւնը յայտնեց իր ներդրումը բերելու յառաջիկայ տարուան՝ 2009ին տեղի ունենալիք համա-Յ.Ա.Ը.Մ.-ական 8րդ մարզախաղերու բոլոր աշխատանքներուն:

Կեդրոնական Վարչութիւնը այցելեց Գ.Ա.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գրասենեակը, որ նաեւ իր տունը կը համարուի, եւ տեղւոյն Վարչութեան հետ ունեցաւ խորհրդակցութիւններ: Իր կազմէն ներկայացուցիչներով ներկայ գտնուեցաւ Չարենցաւանի միաւորի կեդրոնի բացման հանդիսութեան, ուր փոխանցուեցան որոշ թելադրութիւններ:

Նոր 90ամեակներու սեմին, Կեդրոնական Վարչութիւնը, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, պիտի գործէ, առյաւէտ պիտի ընդարձակէ իր գործունէութեան դաշտն ու սահմանները՝ շնորհիւ իր հաւատաւորներու փաղանգին, որոնք անձնուէր ու անձնուրաց կամքով գործեցին ու պիտի գործեն՝ մարմնաւորելով միութեան վեհաթռիչ նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»-ը:

Հ.Ա.Ը.Մ.Ի

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՄԻՈՒԹԵԱՆ ԶՈԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ՝ ՀԱՒԱՐՀ ՔՐԻՍԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԼՍԱՐԱՆԻ ԲԱՅՈՒՄ ԵՒ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՀՄԼՄ-ի հիմնադրութեան 90ամեակին առիթով, Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, Շաբաթ, 6 Սեպտեմբեր 2008ի առաւօտուն, Հայաստանի մարմնակրթութեան հիմնարկին մէջ տեղի ունեցաւ միութեան հիմնադիրներէն Շաւարշ Քրիսեանի անուան լսարանի բացումը, որուն յաջորդեց նոյն նպատակին նուիրուած գիտաժողովը:

Լսարանի բացման հանդիսութեան ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան կրթութեան նախարար Սպարտակ Սէյրանեան, երիտասարդութեան եւ մարմնամարզի նախարար Արմէն Գրիգորեան, նախկին նախարար Ռոյանտ Շառոյեան, մարմնակրթութեան հիմնարկի տնօրէն Վահրամ Առաքելեան, լիազուժար նիստերու առիթով Երեւան գտնուող ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, հիմնարկի անձնակազմը եւ հայրենի լրատուամիջոցներու ներկայացուցիչներ:

Լսարանին ամբողջական վերանորոգման եւ կահաւորման բարերարութիւնը

ստանձնած էր եղբ. Սերոբ Տէր Պօղոսեան, իսկ արդի նկարչական գործիքներ նուիրած էր եղբ. Աւօ Պէրպէրեան:

Լսարանին բացումը կատարուեցաւ պետական նախարարներու եւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ եղբ. Գրիգորիս Պողարեանի ձեռամբ: Ապա, յանուն Կեդրոնական Վարչութեան՝ յատուկ յուշանուէրներ յանձնուեցան նախարարներուն, որոնք իրենց կարգին խօսք առնելով



Լսարանի մուտքին, ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամները նկարուած՝ լսարանի վերաշինութեան բարերար եղբ. Սերոբ Պօղոսեանի հետ (ձախէն չորրորդ):



Խօսքեր կ'արտասանեն Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Յարութ Յարութիւնեան, նախարարներ Սպարտակ Սէյրանեան, Արմէն Գրիգորեան, նախկին նախարար Ռուանտ Շառոյեան, Գրիգոր Ծանիկեան, Վահրամ Առաքելեան եւ Սաթենիկ Գրիգորեան:

Հնորհատորեցին միութեան իննսունամեայ երթը եւ բարձրօրէն գնահատեցին անոր հարուստ պատմութիւնը, որուն ընթացքին ան գործած է ի փառս հայ ժողովուրդին եւ Հայաստանին: Խօսք առնողները արտայայտեցան միութեան շարքերուն մէջ սերունդներու դաստիարակութեան առաքելութեան մասին եւ 90 տարեկան, սակայն տակաւին երիտասարդ միութեան մաղթեցին նորանոր նուաճումներ ու յաջողութիւններ:

Լսարանի բացման պաշտօնական արարողութեան յաջորդած գիտաժողովին խօսքեր արտասանեցին Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան, նախկին նախարար Ռուանտ Շառոյեան, մարմնակրթութեան հիմնարկի տնօրէն Վահրամ Առաքելեան, գրող-հրապարակախօս Գրիգոր Ծանիկեան եւ Երեւանի Պետական Համալսարանի ուսանողուհիներէն Սաթենիկ Գրիգորեան: Այս առիթով խօսք արտասանեց նաեւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Յարութ Յարութիւնեան:

Խօսք առնողները հիմնականօրէն ներկայացուցին միութեան գաղափարաբանութիւնը, հիմնադրութենէն մինչեւ օրս անոր ունեցած առաքելութիւնն ու մեծ ներդրումը՝ սերունդներու դաստիարակութեան, հայրենասիրութեան, ազգասիրութեան եւ հայրենաշինութեան վեհ գործին մէջ:

Իր հիմնադրութեան 90ամեակը նշող միութիւնը վերարժեւորել է գնահատել է ետք, խօսք առնողները անդրադարձան Հայաստանի եւ Սփիւռքի մէջ միութեան ծաւալած աշխատանքներուն: Անոնք նաեւ շեշտեցին, որ նման աւանդ ունեցող միութեան մը պատասխանատուները բնականաբար նոյնքան մեծ յանձնառութեան մը դէմ յանդիման կը գտնուին այսօր եւ անոնցմէ բազմաթիւ ակնկալութիւններ կան:

Կեդրոնական Վարչութիւնը առ ի գնահատանք՝ յուշանուէրներ յանձնեց լսարանի բարերարին, տնօրէնին եւ գիտաժողովի նիւթերը ներկայացնողներուն: Զեռնարկի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ



Վեհափառ Հայրապետին ծանօթացուց իր 90ամեայ պատմութիւնը եւ գործունէութիւնը, զոր զանազան գաղութներուն մէջ աշխոյժ կերպով կը վարէ՝ իր սկստական եւ մարզական բազմատեսակ աշխատանքներուն ընդմէջէն՝ աւելցնելով, որ միութեան առաքելութիւնը առաւելագոյն ջանքերով լծուիլ է հայապահպանման աշխատանքի: 1989էն ի վեր, Հ.Մ.Ը.Մ.Ի Հայաստան վերադարձով, Կեդրոնական Վարչութիւնը իր ուղղորդութիւնը կեդրոնացուցած է Հայաստանի վրայ՝ կազմակերպելով ու աշխուժացնելով ըսկստական շարքերը եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական իր բոլոր նախաձեռնութիւնները կատարելով Հայաստանի մէջ:

Իր կարգին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հ.Մ.Ը.Մ.Ի 90ամեակին առիթով Հայրապետական իր գնահատանքն ու քաջալերանքը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.Ի շարքերուն:

Այս առիթը Կեդրոնական Վարչութիւնը իր երախտագիտութիւնը յայտնեց Կաթողիկոսին եւ անոր յանձնեց յուշանուէր մը:

Աւելի քան մէկ ժամ տեւած այցելութենէն ետք, Գարեգին Բ. Կաթողիկոսին առաջնորդութեամբ, Կեդրոնական Վարչութեան անդամները ծանօթացան վեհարանի վերանորոգուած եւ նորակառոյց բաժիններուն:

Իր Բ. լիազուցար նիստերու նախօրեակին, Երեքշաբթի, 2 Սեպտեմբեր 2008ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը այցելեց Ս. Էջմիածին եւ պաշտօնական հանդիպում մը ունեցաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին հետ: Հանդիպումին ընթացքին Կեդրոնական Վարչութիւնը

... ԵՒ ՍՓԻՒՌՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՐԱՆՈՒՇ ՅԱԿՈՒԲԵԱՆԻՆ

Երեւանի իր պաշտօնական այցելութիւններու ծիրին մէջ, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր 2008ին այցելեց արտաքին գործոց նախարարութեան Սփիւռքի պետական կոմիտէին եւ սիրալիք ընդունելութեան արժանացաւ Կոմիտէի նախագահ (այժմ նախարար) Հրանուշ Յակոբեանի կողմէ:



Հանդիպումին ընթացքին Յակոբեան ներկայացուց մօտիկ ապագային ստեղծուելիք Սփիւռքի նախարարութեան ծրագիրները, որոնք ընդհանուր առմամբ պիտի գործադրուին արտասահմանի մէջ գործող Հայաստանի դեսպանատուներուն միջոցով: Ան հաստատեց, որ Սփիւռքի մէջ գործող բոլոր կազմակերպութիւնները համահաւասար եւ նոյն բարձրութեան ու հեռուորութեան վրայ կը գտնուին Հա-

յաստանի պետութեան համար: Ան վստահեցուց, որ հայրենիքը եւ ըՍփիւռքը յարատեւօրէն պիտի գործեն իբրեւ մէկ մարմին՝ այն մօտեցումով, որ հայը հայ է ուր որ ալ ըլլայ:

Կեդրոնական վարչութիւնը իր կարգին ներկայացուց 1994էն ի վեր Հայաստանի մէջ իրագործուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկները, ապա անդրադարձաւ ապագայի իր ծրագիրներուն, որոնք լայն տարողութեամբ պիտի գործադրուին 2009ի ամրան՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրգ մարզախողորմով եւ 2010ին՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Յրդ բանակումով: Այս իմաստով Կեդրոնական Վարչութիւնը խօսեցաւ իր բարոյական եւ նիւթական ակնկալութիւններուն մասին:

Մտերմիկ խօսակցութեան աւարտին Կեդրոնական Վարչութիւնը յուշանուէր մը յանձնեց Հրանուշ Յակոբեանին: Ապա, յիշատակի խմբանկարէ մը ետք՝ համագործակցութեան խոստումով հրաժեշտ առաւ անկէ:

ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԾԱՌԱՏՆԿՈՒՄ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐՂԻ ՄԷՋ

Միութեան հիմնադրութեան 90ամեակի նախաձեռնություններու շարքին, Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը այցելութիւն մը տուաւ Մեծ Եղեռնի Ծիծեռնակաբերդի յուշարձան եւ անմար կրակին շուրջ իր յարգանքի տուրքը մատուցեց մէկուկէս միլիոն զոհերու յիշատակին: Այս առիթով ան կատարեց նաեւ ծառատնկում, ներկայութեամբ Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան: **Ձեռնդրուեցաւ Հ.Ս.Ը.Մ.ի անունով յուշատախտակ մը: Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը ապա ուղղուեցաւ Ցեղասպանութեան թանգարան, ուր հանդիպում մը ունեցաւ տնօրէնին հետ: Կեդրոնական Վարչութեան անդամները շրջագայեցան թանգարանի յարկերը: Ուշագրաւ էր, որ թանգարանին մէջ ստեղծուած էր մարզական բաժին մը, ուր յատուկ յիշատակութեան արժանացած էր միութեան հիմնադիր Շաւարշ Քրիսեանը եւ Հ.Ս.Ը.Մ.ի առաջին սերունդը: Այնուհետեւ, Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը մեկնեցաւ Չարենցաւան, ուր սկաուտական շարքերու ընդմէջէն ընդունուեցաւ Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան եւ տեղւոյն միաւորի պատասխանատուներուն կողմէ: Տեղի ունեցաւ Չարենցաւանի Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի միաւորի սրահի բացում: Արտասանուեցան խրախուսիչ խօսքեր եւ յարատեւ յաջողութեան մաղթանքներով Կեդրոնական Վարչութեան անդամները հրաժեշտ առին ներկաներէն:**



«Մարտիկ» 90ԱՄԵԱԿԻ ԲԱՑԱՌԻԿ



24-29 ՕԳՈՍՏՈՍ 2008ԻՆ, ԾԱՂԿԱԶՈՐԻ ՄԵՋ՝

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ Ե. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱՄՇՆԱԿԵՑ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ «ՎԿԱՅԵԱ», «ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԵՐՈՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ, ՃՀԴԵՑ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ՎԵՐԱՈՐԱԿԱՒՈՐՄԱՆ ԴԱՄԸՆԹԱՑՔԻՆ ՆԻԻԹԵՐԸ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԵՑ ՄՈՎԿԻՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՈՒՂԵԳԻԾ

**ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ**

● **Խմբապետական առաջին համագումարը տեղի ունեցած է 18-21 Փետրուար 1982ին, Աթենքի մէջ:** Համագումարին զլխաւոր օրակարգը եղած է սկաուտական ընդհանուր կանոնագրութեան մշակումը եւ համագաղութային բանակումներու յատուկ ծրագիրներու պատրաստութիւնը: Համագումարը քննած է նաեւ սկաուտական շարքերու ազգային գիտելիքները ներդաշնակող դաստիարակչական յատուկ ուղեցոյց մը, որուն կիրարկումը վստահուած է շրջաններուն, ըստ տեղական պայմաններուն եւ կարելիութիւններուն:

● **Երկրորդ համագումարը կատարուած է 26 Յունիսէն 5 Յուլիս 1988ին, Քալիֆորնիա:** Դաստիարակչական բազմաթիւ հարցերու քննութեամբ ծանրաբեռնուած համագումարին օրակարգը յատկանշուած է սկաուտական եւ ազգային-պահանջատիրական նիւթեր արծարծող տասնեակ մը դասախօսութիւններու ներկայացումով:

● **Երրորդ համագումարը տեղի ունեցած է 14-23 Դեկտեմբեր 1996ին, Սիտնի:** Համագումարը առաւելաբար զբաղած է սկաուտական գիրքերու պատրաստութեամբ: Համագումարը նաեւ քննած է միութեան զանազան շրջաններու սկաուտական աշխատանքները համադրելու եւ անոնց յարաբերութիւնները աւելի եւս ամրապնդելու կարելիութիւնները:

● **Չորրորդ համագումարը կատարուած է 9-14 Օգոստոս 2004ին, Ծաղկածորի Գրողներու Տան մէջ:** Համագումարը ընդհանուր արժեւորում մը կատարած է միութեան սկաուտական աշխատանքներուն եւ ծրագիրներ առաջադրած է սկաուտական եւ ազգային դաստիարակութեան ամրապնդման համար: Համագումարին հիւրաբար իրենց մասնակցութիւնը բերած են Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան ներկայացուցիչները:



**Սեդա Պէշլեան
ԾԱՂԿԱԶՈՐ-ՊԵՅՐՈՒԹ**

ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ եւ միութեան 11 շրջաններէ բարձրաստիճան խմբապետ-խմբապետուհիներու մասնակցութեամբ, 24-29 Օգոստոս 2009ին, Ծաղկաձորի «Մալթի Ռեսթ Հաուս» պանդոկին մէջ տեղի ունեցաւ համա-ՀՄԼՄ-ական խմբապետական Ե. համագումարը, որ վերամշակեց սկսուողական «Վկայեալ» եւ «Արարատեան» կարգերու գիտելիքները, ճշգրեց խմբապետներու վերաորակաւորման դասընթացքին նիւթերը եւ պատրաստեց 3-6 տարեկան մոկլիներու գործունէութեան ուղեգիր՝:

Համագումարին իրենց մասնակցութիւնը բերին Իրանի Հայ Մշակու-

թային «Արարատ» Կազմակերպութեան (Հ.Մ.Ա.Կ.), ինչպէս նաեւ՝ «Նայիրի» եւ «Սիփան» Մշակութային Միութիւններու ներկայացուցիչները: ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ ներկայ գտնուեցան եղբայրներ Կարպիս Գապասագալեան (Լիբանան) եւ Գարլոս Սէֆէրեան (Հարաւային Ամերիկա): Պարագայբար մասնակցեցան նաեւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գօգօ Պալեան (Արեւմտեան Մ. Նահանգներ) եւ Յարութ Յարութիւնեան (Հայաստան): Համագումարին մասնակիցներու շարքին էր նաեւ «Մարգրիկ»ի խմբագրական կազմի անդամ քոյր Սեդա Պէշլեան:

ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ

Համա-ՀՄԼՄ-ական խմբապետական Ե. համագումարին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Կիրակի, 24 Օգոստոս 2009ի յետմիջօրէի ժամը 4ին:

Յանուն ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան, համագումարին բացումը կատարեց եղբ. Կարպիս Գապասագալեան: Ան ողջունեց ներկաները եւ պարզեց համագումարին առաջադրանքները, թելադրելով որ մասնակիցները ՀՄԼՄ-ի սկսուողական վերելքին ի խնդիր քննեն, ուսումնասիրեն եւ ծրագրեն դաստիարակչական այն բոլոր ծրագիրները, որոնք օգտակար կրնան ըլլալ դիմագրաւելու համար միութեան եւ նոր սերունդին դէմ սպառնացող դժուարութիւնները:

Եղբ. Գապասագալեան շեշտեց միութեան սկսուողականը ամուր հիմերու վրայ դնելու անհրաժեշտութիւնը եւ առ այդ ներկաները հրաւիրեց իրենց ամբողջ գիտութիւնն ու կարողութիւնը համագումարին յաջողութեան ի սպաս դնելու:

Բացման խօսքէն ետք, համագումարը անցաւ իր օրակարգի կէտերու քննութեան: Ներկայ խմբապետ-խմբապետուհիները զեկուցեցին իրենց շրջաններու սկսուողական աշխատանքներուն մասին: Ներկայացուցին դժուարութիւններ եւ լուծման պատկերացումներ: «Նայիրի» եւ «Սիփան» Մշակութային Միութիւններու եւ Ալմելոյի մասնաճիւղի ներկայացուցիչները իրենց զեկուցումները ներկայացուցին փառլոր փոյնթի միջոցով:



Խմբապետական Ե. համագումարի մասնակիցները ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Կարպիս Գապասագալեանի (Բ. շարք, ձախէն առաջինը) եւ Գարլոս Սէֆէրեանի հետ (Բ. շարք, աջէն առաջինը):

Շրջաններու գեկուցումներու կողքին, գեկուցում մըն ալ ներկայացուց «Մարզիկ» ի խմբագրութեան անդամ քոյր Սեդա Պէշլեան: Քոյրը խօսեցաւ «Մարզիկ» ի աշխատանքներուն մասին, բացատրութիւններ տուաւ թերթին տարբեր բաժիններուն մասին եւ թելադրեց շրջաններու սկստական աշխատանքներուն թղթակցութիւնները անպայման առաքել խմբագրութեան՝ առ ի հրատարակութիւն:

Զեկուցումները առիթը ստեղծեցին, որ մասնակիցները ծանօթանան իրարու մտահոգութիւններուն եւ փորձառութիւններուն: Յաջորդեց կարծիքներու փոխանակում եւ ընդհանուր իրավիճակի գնահատում: Այս օրակարգով, իբրեւ հասարակաց մտահոգութիւններ, երեւան եկան հետեւեալ երեւոյթները:-

- Հայաստանի նահանջ:
- Կեանքի պայմաններու բերումով (Արեւմուտքի մէջ) եւ արտագաղթի ալիքներու պատճառով (Արեւելքի մէջ) պատրաստուած խմբապետներու պակաս:
- Կամաւոր աշխատանքի տրամադրութեան նուազում:
- Նորութեան եւ արդիականութեան հետ քայլ պահելու դժուարութիւններ:
- Շրջապատի անտարբերութիւն:
- Ազգային-միութենական ըմբռնումներու նահանջ:

Մտահոգութիւններու ներկայացումին յաջորդեց լուծումներու որոնումը: Առաջարկուեցաւ քարոզչական լայն աշխատանք տանիլ եւ դաստիարակչական արդիական ծրագիրներ մշակել՝ սկստական շարքերու թափ տարլու համար: Խօսուեցաւ նաեւ հաղորդակցութեան նորագոյն միջոցներու լայնօրէն օգտագործման մասին: Վերջապէս, մասնակիցները կարեւորութեամբ ընդգծեցին սկստական աշխատանքներուն նիւթական աւելի լայն միջոցներ տրամադրելու անհրաժեշտութիւնը:

ՅԱՆՁՆԱԽՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Համագումարին երկրորդ օրը յատկացուեցաւ յանձնախմբային աշխատանքի: Մասնակիցները բաժնուեցան



երկու խումբի եւ առանձնաբար քննեցին «Վկայեալ» եւ «Արարատեան» կարգի գիտելիքները: Խոր քննարկումներու ճամբով խմբապետ-խմբապետուհիները սերտեցին յիշեալ կարգերու մասնակցութեան պայմանները, փոխանցուելիք գիտելիքները եւ անոնց փոխանցման ձեւերը: Ի հարկին կատարուեցան գիտելիքներու յաւելումներ եւ ճշդութեան զանոնք փոխանցելու արդիական նոր ձեւեր:

Ընդհանուր առմամբ, գիտելիքներու համար նկատի առնուեցան հետեւեալ գլուխները:-

- Ա. Ազգային
- Բ. Միութենական
- Գ. Սկստական
- Դ. Քաղաքացիական
- Ե. Հոգեբանական- Մանկավարժական

Զ. Կրօնական
Ճշդութեան նաեւ իւրաքանչիւր գլխուն տակ նկատի առնուելիք նիւթերը եւ զանոնք մասնագէտ դասախօսներու միջոցով փոխանցելու ձեւերը:

ԽՄԱՊԵՏՆԵՐՈՒ ՎԵՐԱՌՐԱԿԱՒՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔԻ ՆԻԹԵՐՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ

Աշխատանքային յանձնախումբերը մեծ կարեւորութեամբ քննութեան առարկայ դարձուցին գործող խմբապետներու վերաորակաւորման դասընթացի նիւթերը, որոնք կ'ընդգրկէ-

ին կարեւոր նորութիւններ:

Տրուած ըլլալով որ Վկայեալ կարգի գիտելիքները եւ խմբապետներու վերաորակաւորման դասընթացը զիրար կ'ամբողջացնեն, համագումարը յարմար նկատեց զանոնք կատարել միաժամանակ եւ երեք հանգրուանով՝ տեսական, գործնական եւ փորձառական:

Տեսական հանգրուանը պիտի սկսի Յունուար 2009ին: Գործնական բանակումը տեղի պիտի ունենայ 2009ի ամրան, երեք ցամաքամասերու մէջ, իսկ փորձառականը պիտի աւարտի 2009ի Դեկտեմբերին, որմէ ետք թեկնածուն պիտի ստանայ համապատասխան վկայական եւ պէճ:

«Արարատեան» կարգը պիտի որդեգրէ նոյն ընթացքը՝ երեք հանգրուանով: Տեսական հանգրուանը պիտի սկսի Յունուար 2010ին, գործնական բանակումը տեղի պիտի ունենայ 2010ի ամրան՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զրդ բանակումի նախօրեակին, իսկ փորձառական հանգրուանը պիտի կիրարկուի Զրդ ընդհանուր բանակումի ընթացքին, որմէ ետք թեկնածուն պիտի ստանայ համապատասխան վկայական եւ պէճ:

ՄՈԿԼԻՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ ՈՒՂԵԳԻԾԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Ե. համագումարը երկարօրէն կանգ առաւ սկստական շարքերու

կրտսերագոյն անդամներու դաստիարակութեան եւ գործունէութեան ուղեգիծին վրայ: Շրջանները մեծ կարիքը ունէին 3-6 տարեկան մոկլիներու դաստիարակչական-մանկավարժական ծրագրի: Համագումարը մշակեց համապատասխան ծրագիր մը՝ նկատի ունենալով հետեւեալ գլուխները.-

- Ա. Կրօնական
- Բ. Ազգային
- Գ. Կենցաղավարական գիտելիքներ
- Դ. Զեռային աշխատանքներ
- Ե. Մաքրութիւն
- Զ. Մարզական խաղեր
- Է. Բնութեան եւ կենդանական աշխարհի կապուած գիտելիքներ

Մոկլիներու դաստիարակութեամբ զբաղողներու համար պայման դրուեցաւ, որ անոնք ըլլան 16 տարեկանէն վեր եւ նուազագոյնը Ա. կարգ ունենան եւ մանկավարժական նիւթերու հետեւած ըլլան: Որոշուեցաւ մոկլի փոհմակին համար խորհրդանշան մը (լոկօ) մը ունենալ, տարազը ձգելով շրջաններու յարմարութեան: Մոկլիներու կարգախօս ճշդուեցաւ «Միշտ ուրախ»:

ՍԵՒԱՆԱՅ ԼԻՃ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Համագումարին չորրորդ օրը, Զորեքշաբթի, 27 Օգոստոսին, մասնակիցները առին կէս օրուան դադար եւ



պտոյտ մը ունեցան դէպի Սեւանայ լիճ: Սեւան հասնելով, խմբապետ-խմբապետուհիները փափաքեցան առաջաստանաւով մը շրջիլ լիճին վրայ: Բոլորին ուրախութիւնը մեծ եղաւ, երբ «Նայիրի» առաջաստանաւուն հետ անոնք իրականացուցին իրենց փափաքը: Անոնք մասնակցեցան առաջաստանաւուն տեղափոխութեան աշխատանքին եւ իրենց բազուկներով Հ.Մ.Ը.Մ-ի նաւը նաւարկեցին դէպի լիճին խորերը, անցընելով հաճելի

եւ յիշատակելի պահեր: Կէսօրուան ճաշը կատարուեցաւ Սեւանի ափին: Ապա, բարձր տրամագրութիւններով, վերաթարմացած եւ բաւական մը կազդուրուած՝ բոլորը վերադարձան Մաղկաձոր եւ... հետեւեցան երկու դասախօսութեան:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԶՈՑԳ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Համագումարին զոյգ դասախօսութիւնները ընդգրկեցին Հ.Մ.Ը.Մ-ի կառույցին եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Համաշխարհային Սկսուողական Շարժումին անդամակցութեան վերաբերող նիւթեր:

Դասախօսութիւններէն առաջինը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեան: Իր նիւթին սկիզբը ան բացատրեց, թէ ի՞նչպէս հաստատութիւններ եւ միութիւններ կը ղեկավարուին: Ան ներկայացուց նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի ղեկավարման ձեւը, ըսելով թէ Հ.Մ.Ը.Մ-ի նման համահայկական միութիւն մը ղեկավարելու համար անհրաժեշտ է գլխաւոր երկու բան. հեզասահ յարաբերութիւն միութիւնը բաղկացնող շրջաններու միջեւ եւ կարգապահութեան բարձր ոգի: Երբ այս երկուքը բացակային միութիւն մը կը դադրի ամրապինդ կառույց ունենալէ: Եղբ. Գապասագալեան այս առի-





եան: Ան ըսաւ, որ ՀՄԸՄ-ՀԱՍԿ 1997էն ի վեր անդամ է Համաշխարհային Սկաուտական Շարժումին եւ իր լիիրաւ մասնակցութիւնը կը բերէ անոր աշխատանքներուն: ՀՄԸՄ-ՀԱՍԿ կը մասնակցի Համաշխարհային սկաուտական ճամպորիներուն՝ Եռագոյնը պարզելով այլ երկիրներու դրօշներու կողքին:

Իր նիւթին երկրորդ մասով, եղբ. Յարութիւնեան քննարկեց սկաուտական ընդհանրական մտահոգութիւններ եւ անդրադարձաւ կարգ մը երեւոյթներու.- նոր սերունդի օտարամոլութիւն, ազգային դաստիարակութեան կարեւորութիւն, մարդուժի պատրաստութեան անհրաժեշտութիւն եւ այլն: Ներկաները իրենց տեսակէտները յայտնեցին արծարծուած հարցերուն մասին եւ փորձեցին յանգիլ յարմար եզրակացութիւններու:

Թով ներկայացուց ՀՄԸՄ-ի համագաղութային կառուցի վերածման ընթացքը եւ ըսաւ, որ ՀՄԸՄ նախապէս համագաղութային միութիւն կը նկատուէր, սակայն Հայաստանի վերանկախացումէն ետք ան դարձաւ համահայկական միութիւն: Ան յայտնեց, որ շուտով միութիւնը կ'ունենայ իր 100րդ մասնաճիւղը Մոսկուայի մէջ:

Երկրորդ դասախօսութեամբ, համագումարին մասնակիցները ծանօթացան ՀՄԸՄ-ՀԱՍԿ-ի Համաշխարհային Սկաուտական Շարժումի անդամակցութեան հոլովոյթին: Նիւթը ներկայացուց ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ ՀՄՇարժումի եւրոասիական բաժնի նախկին նախագահ եղբ. Յարութ Յարութիւն-

ԲԱՆԱԶԵԻՆԵՐԸ ԵՒ ՅՈՒՇԱՆՈՒՒՆԵՐԸ

Համագումարին վերջին օրը մասնակիցները սերտեցին սկստակապ ծրագիր-կանոնագիրը եւ նոր օրերու պահանջներու համաձայն կատարեցին բարեփոխութեան կարգ մը առաջարկներ: Անոնք արտայայտուեցան նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զրդ բանակումին մասին, որ տեղի պիտի ունենայ Բիւրականի մէջ, 2010ի ամառը: Նախորդ բանակումներու փորձառութենէն մեկնած՝ կատարուեցան շինիչ առաջարկներ եւ գործնական նկատողութիւններ:

Համագումարին վերջին նիստը յատկացուեցաւ բանաձեւերու որդեգրման: Բանաձեւի յանձնախումբը, բաղկացած՝ քոյրեր Թալին Հինտոյեանէ (Արեւմտեան Մ. Նահանգներ), Արմինէ Մարգարեանէ (Իրան-Հ.Մ.Ա.Կ.) եւ Սեդա Պէշչեանէ (Լիբանան-«Մարգրիկ») ներկայացուց համագումարի մասնակիցներուն տրամադրութիւնները արտայայտող բանաձեւեր, որոնք որդեգրուեցան ամբողջութեամբ:

Աւարտին, տեղի ունեցաւ յուշանշաններու եւ հաստատագիրներու փոխանցում: Կեդրոնական Վարչութեան կողմէ կատարուեցաւ համագումարի մասնակցութեան հաստատագիրներու տուչութիւն: Ապա, շրջաններու ներկայացուցիչները իրարու, Կեդրոնական Վարչութեան եւ «Մարգրիկ»ի ներ-



կայացուցիչին փոխանցեցին յուշանշաններ:

Խօսքերով հանդէս եկան Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գարլոս Սէֆէրեան եւ եղբ. Կարպիս Գապասագալեան: Եղբ. Սէֆէրեան յաջողութիւն մաղթեց ներկաներուն եւ կոչ ուղղեց, որ իրենց լաւագոյնը ներկայացնեն իրենց շրջաններուն մէջ: Իր կարգին, եղբ. Գապասագալեան յայտնեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ե. համագումարը պատմութեան կ'անցնի եւ իր նպատակին ծառայած կ'ըլլայ, երբ տրուած որոշումները թողլի վրայ չեն մնար, այլ՝ գործադրութեան կը դրուին: Համագումարը պէտք է աշխատանքի նոր հորիզոններ տայ մեզի,

չեչետեց եղբ. Գապասագալեան եւ յոյս յայտնեց, որ կարճ ժամանակի մէջ կարելի կ'ըլլայ նոր թափ եւ մղում տալ մեր աշխատանքներուն:

Շարունակելով, եղբ. Գապասագալեան կանգ առաւ Հարաւային Ամերիկայի շրջանէն քոյր Մելինա Այվագեանի օրինակելի եւ գօտեպնդիչ երեւոյթին վրայ: Քոյրը հակառակ հայերէն լեզուի դժուարութիւն ունենալուն՝ համագումարին ընթացքին ճիշտ չինայեց միշտ հայերէնով արտայայտուելու: Դաստիարակիչ էր նաեւ նոյն շրջանէն եղբ. Ակոսլիին Անարեանի մէկ ելոյթը, որուն ընթացքին ան նշեց, թէ իր գէնքը իր կամքն է: Հետեւաբար, թելադրեց եղբ. Գապասագալեան, ձեր գէնքը թող ըլլայ ձեր կամքը: Երբեք կրաւորական մի՛ ըլլաք, այլ՝ ձեզի փոխանցուած գիտելիքները փոխանցեցէք այլոց եւ անշահախնդրօրէն գործեցէք Հ.Մ.Ը.Մ.ի եւ հայրենիքի սիրոյն:

Եղբ. Գապասագալեանի խօսքէն ետք, համագումարը իր աւարտին հասաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՂՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ...

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական համագումարը չէր կրնար իր աւարտին հասնիլ առանց Հ.Մ.Ը.Մ.ականի յարգանքի տուրքը տալու Հայկական Յեղասպանութեան նահատակներու յիշատակին, Ծիծեռնակաբերդ այցելութեամբ:

Այցելութիւնը կատարուեցաւ Ուր-

Կեդրոնական Վարչութեան անդամները յիշատակի ծաղիկներ կը գետեղեն նահատակ Վարդան Բախշեանի շիրիմին:



բաթ, 29 Օգոստոսի յետմիջօրէին, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեանի եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Կարպիս Գապասագալեանի եւ Գարլոս Սէֆէրեանի: Ընկերակցեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան:

Յուշակոթող հասներով, համագումարին մասնակիցները ծաղկեպսակ մը գետեղեցին 1915ի Հայկական Յեղասպանութեան զոհ գացած հայորդիներու յիշատակին: Ապա, յուշարձանի անմար կրակին շուրջ բոլորուելով, անոնք երգեցին «Յառաջ նահատակ» քայլերգը: Տեղի ունեցաւ յիշատակի խմբանկար:

... ԵՒ ԱՐՅԱԽԵԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԸԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Այնուհետեւ, բոլորը ուղղուեցան

Արցախեան պահանջատիրութեան նահատակներու պանթէոն՝ Եռաբլուր, ուր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները յիշատակի ծաղիկները գետեղեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, Արցախեան պայքարի նահատակ ազատամարտիկ եղբ. Վարդան Բախշեանի շիրիմին:

ՎԵՐՁԻՆ ԿԱՅԱՆԸ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԿԵԴՐՈՆԸ

Ծիծեռնակաբերդէն եւ Եռաբլուրէն ետք, համագումարի մասնակիցներուն հանդիպման վերջին կայանը եղաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի գրասենեակը: Այս առիթով, մասնակիցներուն ի պատիւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան կողմէ յուշանուէրներու փոխանցում:

Խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի

վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան եւ ողջունեց ներկաները: Ան անդրադարձաւ համագումարի կարեւորութեան եւ մաղթեց, որ համագումարին բանաձեւերը արդիւնաւորւին մօտիկ ապագային: Համագումարը ճշդեց համապատասխան ուղեգիծ՝ կը մնայ որ մասնակիցները ձգտին անոր իրագործման, յայտնեց եղբ. Շմաւոնեան եւ շրջաններու ներկայացուցիչներուն յանձնեց սկստութեան հիմնադրութեան 100ամեակին առիթով պատրաստուած յատուկ դրոշմաթուղթէն օրինակներ:

Վրայ հասաւ բաժանումի դժուար պահը: Ներկաները փոխանցեցին իրենց տպաւորութիւնները համագումարին մասին եւ խոստացան վերանորոգ թափով եւ անշեղ հաւատքով շարունակել Հ.Մ.Ը.Մ.ի Գործը, իբրեւ կենսագործում իր մեծ նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր!»ին:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Ե. համագումարին մասնակցեցան 24 խմբապետ- խմբապետուհիներ, որոնք ներկայացուցին հետեւեալ շրջանները.- Արամ Գայսէրեան (Արեւելեան Մ. Նահանգներ), Թալին Յինտոյեան, Արի Պոյաճեան եւ Յրայր Պոյաճեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Ժագ Մատաղտոյեան (Ալմելօ), Էրիք Արապեան (Գանատա), Յակոբ Չպլաքեան (Լիբանան), Պետրոս Մարտիրոսեան (Լոնտոն), Յարութ Նասոյեան, Կարէն Տերտերեան եւ Լիլիթ Չաքարեան (Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.) Ակուսիքն Անալեան, Մելինա Այվազեան (Հարաւային Ամերիկա), Գոհար Ալեանաքեան (Յունաստան), Պօղոս Մահպուպեան եւ Շանթ Չաքարեան (Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս), Աւագ Կարապետեան (Քուէյթ), Ատրիճ Դարասեան եւ Արմինէ Մարգարեան (Իրան-Հ.Մ.Ա.Կ.) Անտրէ Յովսէփեան, Սեւան Աւագեան, Մեղեդի Պօղոսեան (Իրան-«Նայիրի») Մասիս Աբրահամեան, Գարմէն Չարմահալեան (Իրան- «Սիփան»):




Սեդա Պէշլեան ՊԵՅՐՈՒԹ

Համա-Հ.Մ.Ը.Մ-ական հանդիպումները անջնջելի տպաւորութիւններ կը ձգեն մասնակիցներու մտքերուն ու սրտերուն մէջ: Խմբապետական Ե. Համագումարը եւս ձգեց մեծ տպաւորութիւններ, քաղցր յիշատակներ:

Նիստերու, քննարկումներու, առաջարկներու եւ գրոյցներու կողքին, Համագումարը ունեցաւ իր դաստիարակիչ, յուզիչ պահերը, որոնք մասնակիցներուն մտածել տուին, թէ ո՞վ է հայը: Պարզապէս հայերէն խօսո՞ղը, հայկական անուն-մականուն ունեցո՞ղը, թէ՞ մէկ ուրիշը...

Համագումարը պարզեց, թէ հայը, հոգևոր սրտով հայը, հեռաւոր Արժանթինէն եկած քոյր Մելինան է, հայաշունչ ոգիով այդ տիպար խմբապետուհին, որ նիստերու ամբողջ տեւողութեան, բառարանը ձեռքէն չձգեց, ջանաց գտնել իր արտասանելիք իւրաքանչիւր բառին հայերէնը, որպէսզի հայերէնով արտայայտուի, հայերէն գրէ, հայերէն զեկուցէ, հայերէն մտածէ:

Հայը նոյն Արժանթինէն եկած եղբայր Ակոս-թինն էր, որ չուզեց զինք կանչել իր անունով, այլ ինդրեց զինք կոչել մեծ հօրը անունով՝ Երուանդ: Հպարտացաւ եւ ուրախացաւ Երուանդ ըլլալով, փամանակի մը մէջ, երբ ուրիշներ այնքան դիւրին կը հրաժարին իրենց հայկական անուններէն, դիմագիծէն եւ ինքնութենէն: Հակառակ հայերէնի իր դժուարութեան, ան ճիշդ չինայեց իր մասնակցութիւնը բերելու Համագումարի բոլոր աշխատանքներուն: Ու երբ ազատ պահ գտաւ, զայն լեցուց հայերէն երգով, հայերէն պարով եւ նուագով: Գեղեցիկ կը նուագէր: Գեղեցիկութեան միա-



(ԸՈՅՐ ՄԵԼԻՆԱՅԻ ԵՒ ԵՂԲ. ԱԿՈՍԹԻՆԻ ԵԼՈՅԹՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ)

ցուց հայկական իր շունչն ու ոգին:


Համագումարի նիստերէն մէկուն, եղբ. Ակոսթին ոտքի կանգնելով, հաստատ ու վճռակամ յայտնեց, թէ «Իր կամքը իր գէնքն է»: Մեր օրերուն թերեւս ոմանց տարօրինակ թուի նման մտածողութեամբ

երիտասարդներու գոյուցութիւնը: Ան ունէր իր աշխարհը, քիչ մը տարբեր սովորական երիտասարդներու աշխարհէն: Երանի՛ սակայն իր աշխարհը ըլլար նաեւ մերը: Երանի՛ բոլորս ունենայինք իր եւ քոյր Մելինային կամքը, որ հայու գէնքն է եւ գրաւակաւնը՝ հայ ըլլալու եւ հայ մնալու այսօր, վաղը եւ ընդմիշտ:



ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ Ե. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՏՊԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Անձնագէս շնորհակալութիւն կը յայտնեմ մասնակից բոլոր շրջաններու ներկայացուցիչներուն՝ իրենց գաղափարներուն համար: Համագումարը տպաւորութեանս մէջ պիտի մնայ իբրեւ յաջող համագումար:

ԷՐԻՔ ԱՐԱՊԵԱՆ
(Գանատա)

բոլոր ղեկավարութիւնները:

Վարձքը կատար կազմակերպողներուն:

Վարձքը կատար մասնակցողներուն:

ՅԱԿՈՒ ԶՊԼԱՔԵԱՆ
(Լիբանան)



Մենք մեր շրջանը կը վերադառնանք Հ.Մ.Ը.Մ.ական մեր երգումը վերանորոգած: Համագումարը առիթը ընծայեց, որ անդրադառնանք մեր ղեկավարութիւններուն եւ անդրդուելի համոզումով շարունակենք Հ.Մ.Ը.Մ.ական մեր աշխատանքները:

ԱՐԻ ՊՈՅԱՃԵԱՆ
(Արեւմտեան Մ. Նահանգներ)



Առաջին անգամ ըլլալով կը մասնակցիմ նման համագումարի: Առիթը ունեցայ այլ երկիրներու քոյր-եղբայրներու հետ խօսելու, վիճաբանելու եւ մտքերու փոխանակում կատարելու: Կրնամ հըպարտ եւ սրտանց ըսել, որ շատ տպաւորիչ եւ յուզիչ փորձառութիւն ունեցայ:

Այլ երկիրներու քոյր-եղբայրներու ղեկավարութիւններն ու մտահոգութիւնները լսելով կարողացայ զօրացնել անձնական պայքարս ղեկավարութիւններու դէմ:

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
(Լոնտոն)



Համա-Հ.Մ.Ը.Մ.ական այս համագումարը ինծի համար եղաւ շատ մեծ փորձառութիւն մը: Նման համագումարներու կարիքը շատ ունինք:

ԱԻԱԳ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
(Քուէյթ)



Համա-Հ.Մ.Ը.Մ.ական նման համագումարներուն բոլորը կը հաւաքուին մէկ իտէալով՝ միութեան աշխատանքները յառաջ տանելու համար: Համոզուած եմ, որ համագումարը արդիւնաւէտ պիտի ըլլայ եւ, ինչպէս մեր նշանաբանը, պիտի բարձրացնէ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր սկաուտները:

Հպարտ եմ որ մաս կը կազմեմ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին եւ անհամբեր կը սպասեմ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական յաջորդ հանդիպումին:

ՊՕՂՈՍ ՄԱՀՊՈՒՊԵԱՆ
(Փարիզ)



Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ե. համագումարը առաջին փորձառութիւնս էր, ուր կարողացայ ստանալ սկաուտական գիտելիքներ:

Որպէս խմբապետ, պարտականութիւնս է իրագործել համագումարին որոշումները եւ ծրագրել աշխատանքներ՝ միշտ բարձր պահելով Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը:

Ինծի համար մեծ պատիւ էր համագումարին մասնակցիլ քոյր-եղբայրներուս հետ եւ ամրապնդել մեր առաքելութիւնը:

Համոզուած եմ, որ կամաւորական այս շարժումը մեր գաղափարները պիտի ապրեցնէ եւ մեր սկաուտները զարգացնէ իբրեւ օրինակելի ու հայրենասէր հայեր:

ԱԿՈՒՍԹԻՆ ԱՆԱԼԵԱՆ
(Հարաւային Ամերիկա)



Հաճելի եւ օգտաշատ համագումար մըն էր: Հայրենիքի օդն ու ջուրը կարծես աւելի պայծառացուցին մեր մտքերն ու գաղափարները՝ յաղթահարելու համար



Շատ ուրախ եմ որ այս համագումարին ներկայ գտնուեցայ: Մեծ աշխատանք տարինք: Կարգ մը հարցերու լուծումներ գտանք: Յոյսով եմ որ յառաջիկային մնացեալ հարցերուն եւս լուծումներ կը գտնենք:

ԺԱԳ ՄԱՏԱՂՏՈՅԵԱՆ
(Աւմեթ)



Նոյն նպատակի քոյրեր ու եղբայրներ մասնակցեցանք համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ե. համագումարին, հայրենիքի մէջ:

Կեդրոնական Վարչութեան կողմէ պատրաստուած օրակարգի բոլոր կէտերը շատ կարեւոր էին եւ յստակացուցին յառաջիկայի մեր աշխատանքները:

Մաս կազմեցինք յանձնախումբերու եւ փոխանցեցինք մեր շրջաններու փորձառութիւնն ու առաջարկները, որպէսզի աւելի բարձրանայ մեր խումբերու դեկավարման մակարդակը: Այս է Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը, պատրաստել առողջ, չարքաչ եւ արի անհատներ, որոնք միաժամանակ յանձնառու ըլլան իրենց միութեան եւ ազգին:

Համագումարի ամբողջ տեւողութեան, Կեդրոնական Վարչութեան եղբայրներուն հետ աշխատեցանք ամուր օղակի մը պէս: Համագումարը շատ արդիւնաբեր էր:

ԳՈՀԱՐ ԱԼԵԱՆԱՔԵԱՆ - ՏԱՆԿՈՏԵԱՆ
(Յունաստան)



Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութիւնը ներկայացրելով, ինձ համար անձնապէս, որպէս առաջին փորձ, շատ տպաւորուած եմ ժողովի ընթացքից:

Նկատի ունենալով այն իրողութիւնը, որ Սփիւռքում ապրող բոլոր հայերն տարբեր մասշտապներում ապրում են նոյնանման խնդիրներով, մասնակիցները համագումարում փորձեցին խնդիրները եւ մտահոգութիւնները արտայայտելով՝ լուծումներ գտնել իրենց համար:

Յուսամ համագումարը հասել է իր նպատակին: Իսկ ամենակարեւորը նոր փորձառութիւններ եւ մտերմութիւններ ստեղծուեց բոլորիս մէջ:

Շնորհակալական խօսքս եմ ուղղում Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին եւ հաւատացած եմ, որ բոլորս միասին կը կարողանանք յաղթահարել բոլոր խոչընդոտները:

ԱՐՄԻՆԷ ՄԱՐԳԱՐԵԱՆ
(Իրան- Հ.Մ.Ա.Կ.)



Ես Կ'ուզենայի ասել որ իմ առաջին մասնակցութիւնն էր նման համագումարի:

Տպաւորութիւնս է, որ բոլոր շրջանները նոյն յոյսն ու հաւատարմութիւնը ունին ծառայելու համար մեր նպատակին, որ բարձրանանք ու բարձրացնենք:

ՇԱՆԹ ԶԱՔՐԵԱՆ
(Փարիզ)

Առաջին անգամն լինելով մասնակցեցի Հ.Մ.Ը.Մ.ական համագումարի, եւ արդէն հաւատացած եմ, որ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը կայսրութիւն է. յուսամ որ կը շարունակւին մեր կապերը եւ կը փոխանակուին գիտելիքները: Ուժ եւ կորով կազմակերպիչներին:

ՄԱՍԻԱ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ
(Իրան-«Սիփան»)



Համագումարին օրակարգը թէեւ բաւականին յազեցած էր, իմբապետական հաւաքի 5 օրերն անցան աննկատ՝ լի նոր ծանօթութիւններով ու հաճելի տրպաւորութիւններով:

Անհամբերութեամբ ու սիրով պիտի սպասեմ յաջորդ հանդիպման:

ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐԵԱՆ
(Հ.Մ.Ը.Մ.-Հ.Մ.Ա.Կ.)



Այս համագումարի աշխատանքներէն յայտնի դարձաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտութեան ապագան փայլուն է աշխարհի բոլոր շրջաններուն մէջ:

ԱՐԱՄ ԳԱՅՍԷՐԵԱՆ
(Արեւելեան Մ. Նահանգներ)



Իմ տպաւորութիւնը այս համագումարից շատ լաւ էր, որովհետեւ ես առաջին անգամ էի մասնակցում Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպած համագումարին:

Շատ փորձառութիւններ ձեռք բերեցի այս համագումարին, յուսամ որ կարողանամ այս գիտելիքները ամենայ դիւրին ձեւով փոխանցել իմ շրջանին:

ԱԳՐԻՆԷ ԴԱՐԱՍԵԱՆ
(Իրան-Հ.Մ.Ա.Կ.)

Հ.Մ.Ը.Մ.Ի 100ՐԴ ՄԱՍՆԱԾԻԻՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ՝ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ



Կիրակի, 14 Սեպտեմբեր 2008ին, Մոսկուայի Զմալովոյի մարմնամարզական հիմնարկին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի 100րդ մասնաճիւղին հիմնադրութեան ժողովը:

Ժողովը կը հովանաւորէր Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը, որուն կազմէն ներկայ էին եղբայրներ Կարպիս Գապասազալեան եւ Յարութիւն Յարութիւնեան: Ներկայ էին նորաստեղծ մասնաճիւղին անդամները, որոնք մօտիկ անցեալին միութեանական գործօն անդամներ եղած են Լիբանանի, Սուրիոյ եւ Հայաստանի մէջ: Այժմ անոնք Մոսկուա հաստատուած ըլլալով, չէին կրնար հեռու մնալ իրենց երկրորդ ընտանիքի երդիքէն:

Հիմնադիր ժողովին բացումը տեղի ունեցաւ երեկոյեան

ժամը Յին: Գարլո Պէրպէրեան բարի գալստեան խօսք ուղղեց ներկաներուն եւ հակիրճ ձեւով հիմնաւորեց նորաստեղծ մասնաճիւղի անդամներուն փափաքը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղ մը ունենալու Մոսկուայի մէջ եւ անոր ճամբով հայանուէր գործ կատարելու: Այս առիթով ան կարդաց 40 անդամներու անունով պատրաստուած դիմումնագիր մը, որ օրին յղուած է Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան՝ միանալու համար միութեան մեծ ընտանիքին (դիմումնագիրը տեսնել առանձին):

Կեդրոնական Վարչութիւնը ընդհանուր կանոնադրութեան հիմամբ կատարեց կարգ մը հաստատումներ, որոնցմէ ետք ժողովը ստացաւ իր օրինական ընթացքը:

Ներկաներէն ոմանք առաջարկներ ներկայացուցին ապագայ գործունէութեան համար, ապա միաձայնութեամբ ընտրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Մոսկուայի մասնաճիւղի անդամնակ վարչութիւնը՝ բաղկացած հետեւեալ եղբայրներէ.- Տէր Մարտիրոս Քհնյ. Պէրպէրեան, Փիէր Օհաննէս, Գարլո Պէրպէրեան, Դրօ Գնտոյեան, Զարեհ Մուրատեան, Վազգէն Սարուխանեան, Սարգիս Առաքելեան, Արման Առաքելեան եւ Կիմ Կարապետեան:

Ընտրութեանէն ետք, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. Կարպիս Գապասազալեան միութեան դրօշակը յանձնեց նորընտիր վարչութեան ատենապետին՝ եղբ. Փիէր Օհաննէսին, ներկաներուն յանձնարարելով, որ այս առիթով վերանորոգեն հայ ժողովուրդի ծառայութեան իրենց ուխտը եւ սրբութեամբ պահեն դրօշակը ու անոր մէջ խտացած արժէքները: Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Յարութիւն Յարութիւնեան, իր կարգին, միութեան ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը յանձնեց Տէր Մարտիրոս Քհնյ. Պէրպէրեանին, թելադրելով որ մասնաճիւղը անչեղ ու անսասան յանձնառութեամբ գործէ՝ իրա-

կանացներու համար միութեան նպատակները:

Ժողովի աւարտին, յաջողութեան բարեմաղթութիւններ փոխանցեցին Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչները, որոնք շնորհաւորեցին կատարուած յանձնառութիւնը եւ ներկաները հրաւիրեցին վճռակամ, միութենական բարձր գիտակցութեամբ եւ խոր հաւատքով շարունակելու սկսուած գործը: Անոնք նաեւ շեշտեցին, որ Հ.Մ.Ը.Մ.ի 100րդ մասնաճիւղին հիմնադրութիւնը պատահականօրէն չի զուգադիպիր միութեան հիմնադրութեան 90ամեակին, այլ ան պատգամ մըն է հիմնադիրներու անբասիր հաւատքով ու կամքով կերտելու նոր 90ամեակներ՝ միշտ հաւատարիմ միութեան վեհապանծ նշանաբանին՝ «Բարձրացիր՝ բարձրացուր»ին:

Ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, նոր նուաճումներու եւ յաղթանակներու տեսիլքով:



Կեդրոնական Վարչութեան անդամները մասնաճիւղի նորընտիր վարչութեան հետ:

ՄՈՍԿՈՎԱՅԻ Հ.Մ.Ը.Մ.ԱԿՎՆՆԵՐՈՒ ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՆԴԱՄԱԿՅԵԼՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Պատուարժան Զ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,

Մենք, խումբ մը Զ.Ս.Ը.Մ.ականներ, հաւաքուած ենք Մոսկուայի մէջ, հաւատալով Զ.Ս.Ը.Մ.ի գաղափարին եւ գիտնալով Զ.Ս.Ը.Մ.ի ազդեցութիւնը հայութեան վրայ՝ աշխարհի տարածքին, կը ցանկանք Մոսկուայի մէջ Զ.Ս.Ը.Մ.ի մասնաճիւղ մը ստեղծել:

Նկատի ունենալով որ Մոսկուայի հայութեան թիւը նկատառելի է, եւ ընդհանրապէս հայութիւնը անկազմակերպ վիճակ ունի, համոզուած ենք որ միայն Զ.Ս.Ը.Մ.ով կրնանք Մոսկուայի հայութիւնը համախմբել:

Կը գիտակցինք, թէ Զ.Ս.Ը.Մ.ի նպատակն է դաստիարակել հայ արի եւ վեհանձն մարդը, ծառայելով ազգին ու հայրենիքին, եւ հետեւաբար կը ցանկանք այս նպատակը իրականացնել Մոսկուայի հայ գաղութին մէջ:

Ուստի, կը խնդրենք Ձեր արտօնութիւնը՝ սկսելու համար նուիրական այս աշխատանքին:

Ստորագրեալներս՝ Փիէր Օհաննէս, Մարտիրոս Քինյ, Պէրպէրեան, Գարլօ Պէրպէրեան, Յարութ Տէմիրձեան, Չարեհ Մուրատեան, Դրօ Գնտոյեան, Նատեժտա Պէրպէրեան, Մանուշ Պետրոսեան, Քրիստինա Արթինեան, Լուսինէ Խանքելթեան, Յայկ Միքայէլեան, Վաղօ Գալստեան, Սիլվա Մատալեան, Սէյրան Այվազեան, Անի Սիմոնեան, Վազգէն Սարուխանեան, Յովիկ Սարուխանեան, Սարգիս Առաքելեան, Կիմ Կարապետեան, Ռոպէրթ Փաշիշեան, Դաւիթ Եղիազարեան, Գարիկ Գէորգեան, Արման Առաքելեան, Տաթևիկ Խանքելթեան եւ Արմէն Չայլեան:



Մասնաճիւղի հիմնադիր ժողովին խօսքեր կ'արտասանեն Զ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Կարպիս Գապասագալեան եւ Յարութ Յարութիւնեան:



«Յառաջ նահատակ»ը կը հնչէ Մոսկուայի մէջ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈԲԼԿԱՐԻՈՅ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից ՍՈՖԻԱ



անի մը տարուան ընդմիջումէ ետք, անցնող ամրան, Հ.Մ.Ը.Մ.Ի Պոբլկարիոյ ընտանիքը ունեցաւ սկաուտական միջ-մասնաճիւղային իր տարեկան բանակումը, Վիտոշլերան լանջերուն:

Բանակումին ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան, որ Սոֆիա կ'այցելէր ներկայ գտնուելու համար Պոբլկարիոյ մասնաճիւղերու ատենապետներու ժողովին: Արդարեւ, բանակումին ներկայ էին Սոֆիայի մասնաճիւղի ատենապետ քոյր Տիրուհի Գրիգորեան, Ռուսէի մասնաճիւղի ատենապետ եղբ. Սարգիս Խաչիկեան եւ Շումէնի մասնաճիւղի ատենապետ եղբ. Կարին Կարապետեան:

Բանակումին մասնակցեցան 26 սկաուտներ Սոֆիայէն, Ռուսէէն, Շումէնէն եւ Վառնայէն: Բանակումը երկարեցաւ 25-29 Օգոստոս 2008, խմբապետ ունենալով եղբ. Անդո Սթեֆանոն:

Պաշտօնական բացումը կատարուեցաւ Երկուշաբթի, 25 Օգոստոսի առաւօտեան, դրօշակի հանդիսաւոր արարողութեամբ: Այնուհետեւ, հինգ օրերու ընթացքին, բանակումը ունեցաւ սկաուտական, մարզական եւ դաստիարակչական ճոխ յայտագիր:

Սկաուտական բաժինը ընդգրկեց սկաուտական կապերու, վրան լարելու եւ կրակարան պատրաստելու ձեւերու ծանօթացում, մորս, դրօշախօսութիւն, լեռնազնացու-



Թիւն (հինգ ժամ տեւողութեամբ՝ դէպի լեռան գագաթը) եւ արշաւներ:

Մարզական բաժինով կազմակերպուեցան վազքի եւ նշանառութեան մրցումներ:

Դաստիարակչական յայտագիրը ընդգրկեց երեք դասախօսութիւններ:

● Բնութեան ծանօթացում- դասախօս՝ Սոֆիայի մասնաճիւղի վարչական՝ փրոֆ. եղբ. Կարօ Մարտիրոսեան:

● Հայ ժողովուրդի ծագումն ու զարգացումը- դասախօս՝ Պուլկարիոյ պատկերասփիւռի կայանի հայկական ժամի պատասխանատու՝ Միհրան Պողոսեան:

● Սկաուտական գիտելիքներ- Դասախօս՝ վաստակաւոր սկաուտ խմբապետ եղբ. Վարուժան Թիւրպէթլեան:

Երեկոները տեղի ունեցան խարուկահանդէսներ, որոնք ստեղծեցին խանդավառ մթնոլորտ: Բանակումին առաջին օրուան երեկոյեան, խարուկահանդէսին խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան եւ թեյադրեց կառչած մնալ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական սկզբունքներուն եւ բարոյական արժէքներուն:

Խարուկահանդէսներու ընթացքին, ընդհանուր խմբապետը կը յայտարարէր օրուան աշխատանքները լաւագոյնս կատարած խմբակին անունը եւ խմբակի անդամները իրեն ներկայանալով կ'արժանանային զնահատական խօսքի:

Բանակումին վերջին օրը, փակման խարուկահանդէսին, բանակողները ստացան յատուկ հաստատագիրներ, յիշատակի պէճեր եւ Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեակի խորհրդանիշով թիշորթներ: Լաւագոյն խմբակը արժանացաւ յիշատակի նուէրի:

Բանակումը այցելեցին «Երեւան» թերթի խմբագիր Վարդանոյշ Թոփաքպաչեան, Հ.Մ.Ը.Մ-ի Սոֆիայի մասնաճիւղի ատենադպրուհի Մարկարիթա Քէրփիճեան եւ հասարակական գործիչ Սահակ Չալքեան:

Հնգօրեայ աշխատանքներու աւարտին, բանակումը փակուեցաւ «Ցտեսութիւն» երգով եւ քաղցր յիշատակներով: Ողջերթի խօսք արտասանողները շեշտեցին յառաջիկայ տարի դարձեալ տեսնուելու եւ աւելի մեծ թիւով բանակում կատարելու յանձնառութիւնը:

Վերը՝ բանակումին առօրեայէն: Վարը, Զ.Ս.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Սիիրան Շիմշիրեան բանակողներուն կը փոխանցէ իր խօսքը:



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆՂԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան որոշումով հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւն: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ ավելի ամբիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:

«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆՔՆԵՐԷՆ Ազատուիի Դանիէլեան, Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուիի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Չարեհ Գարակիլեան, Յակոբ Թոքթաթեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էհրամճեան, Արթօ Մարգարեան, Տիանա Հաճեթեան, Հրանդ Տետեան, Բարգէն Կարապետեան, Երուանդ Շահինեան եւ Կարապետ Ն. Թովմեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ Ճորճ Տաքեան:

ԳՂԻՑԱՆՍ

ՇԱԽՄԱՏԻ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ռոլանտ Շառոյեան, Գագիկ Յակոբեան
«Գէորգ-Հրայր» ՍՊԸ, Երեւան, 2007:

*
* *

ԷՐԳՐԻ ԱՏՏՈՒԱԾՆԵՐԸ. ԳԵՈՐԳ ՉԱԻՈՒՇ

(Մենագրութիւն)
Ռոլանտ Շառոյեան, «Լուսակն»,
Երեւան, 2008:

Ալպոն-Յուշամատեան նուիրուած

ԻՐԱՆԻ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ 40-ԱՄԵԱՅ ՊԱՏՄԱԿԱՆԻՆ
Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութիւն,
Իրանի Հայ Արհեստաւորների Միութիւն,
Թեհրան, 2008:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եղբ. Յարութիւն Ծառուկեան (Արժանքին) \$100
- Եղբ. Յովհաննէս Աւագեան (Քուէթ) \$ 50

ՀԱՒԱՏՔ, ՄԷՐ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ

90

տարի առաջ՝ 1918ին, հայ ժողովուրդը խորհուրդ խորին զօրութեամբ կերտեց իր վարդափեղեղ ապագան: Սարդարապատի, Քաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսական ծակատամարտներով՝ 1918 Մայիս 28ին ծնունդ առաւ Ազատ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը, իսկ նոյն տարուան Նոյեմբեր 16ին խումբ մը իմաստուն եւ տեսլապաշտ հաւատացեալներու յղացումով կեանքի կոչուեցաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:

Մեր ապագայատեսիլ հերոսները Ազատ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութիւն կերտեցին, որովհետեւ ունէին ամրակոռ հաւատք իրենց ազգային ըմբռնումներուն մէջ, տենդագին սէր՝ իրենց ժողովուրդին նկատմամբ եւ արտակարգ նուիրում, զոր փաստեցին իրենց կեանքով, եւ կեանք տուին հայոց պատմութեան նորագոյն հրաշքին՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի համազգային գաղափարին:

Հ.Մ.Ը.Մ.ի պատմակերտ հիմնադիրները իրենց անաղարտ հաւատքով եւ հայավայել վճռականութեամբ հիմը դրին հայ պատանիին ու երիտասարդին հոգին, միտքը եւ մարմինը կերտող մեծ դպրոցին եւ յղացան մեր նշանաբանը՝ «Բարձրացիր՝ բարձրացո՛ւր»ը, որ կը մարմնաւորէ գերակշիռը, այսինքն՝ իր անձէն առաջ եւ իր անձէն ետք, իր նմանին ծառայելու նուիրական ոգին ու յանձնառութիւնը, ամբողջական հաւատարմութիւնը:

90ամեայ մեր պատմութիւնը հարուստ եղաւ բացառիկ սխրագործութիւններով, իսկ միութենական կեանքը՝ անջնջելի ձեռքբերումներով եւ անոնց միշտ ուսանելի դասերով:

Յոբելեանները առիթներ են, որպէսզի առաջին հերթին արագ ակնարկ մը նետենք մեր իրագործումներու ճանապարհին վրայ, ո՛չ միայն արծանագրուած յաղթանակներով հպարտանալու եւ պարծենալու, այլեւ՝ ինքնաճանաչման ու ինքնաքննարկման լոյսով մեր ներկան յստակ տեսնելու եւ հաստատ քայլերով դէպի ապագայ առաջնորդուելու համար:

Թէեւ 90ամեայ անցեալ ունինք, բայց շատ երիտասարդ ենք տակաւին: Եւ կոչուած ենք այդպէս ալ մնալու, որովհետեւ միշտ ապրեցանք նոյն խանդով ու միեւնոյն ստեղծագործ հաւատքով: Այդպէս է նաեւ մեր ներկան, ինչպէս եւ տարբեր չի կրնար ըլլալ ապագան: Հետեւաբար, պէտք է ձգտիլ նպատակասլաց կեանքի ոգին ու պահանջը միշտ կենդանի պահելու նպատակակէտին: Ահա թէ ինչո՛ւ, այսօր, մենք յաւելեալ վճռականութեամբ եւ անխախտ հաւատքով պիտի շարունակենք Հ.Մ.Ը.Մ.ի անդեղեւ եւ հաւատաքայլ երթը:

Այս կը պահանջէ նաեւ ազգը, մեր ներկան ու ապագան, եւ ասիկա անժամանցելի, անփոխարինելի ու համահայկական պահանջ մըն է, որ առաջին հերթին կը պահանջէ Հաւատք, Մէր եւ Միութիւն: Կ'ենթադրէ՝

Լսել խղճին ձայնը՝ անեղծ հաւատքով միշտ դէպի հաւատքն ու ճշմարիտը ուղղուելու համար:

Գերադասել հայ լեզուն, հայ մշակոյթը, հայկական արժէքները, աւանդութիւններն ու ազգային նկարագիրը:

Հետապնդել մեր ժողովուրդի արդար եւ անժամանցելի դատը:

Յանձնառու ըլլալ զոհողութեանց ու գիտակցօրէն նուիրուիլ:

Անշահախնդրօրէն գործել եւ տալ անմնացորդ հաւատարմութեամբ:

Յամառօրէն պայքարիլ դժուարութեանց դէմ՝ Հայկերու վճռականութեամբ եւ Վարդաններու զօրութեամբ:

Միասին զգալ, միասին մտածել, միասին գործել, միասին յառաջ ընթանալ եւ միասին բարձրանալ բարձունքէ բարձունք:

Եկէք, միասնաբար ընթանանք դէպի հաւատքի, սիրոյ եւ միասնականութեան պայծառ ուղիին հորիզոնները, առաջնորդուինք հայակերտ ու մարդակերտ նուիրական նոյն արժէքներով, որոնք մեր նահատակներէն ու հիմնադիրներէն մեզի փոխանցուած այն եզակի ժառանգն ու կտակ են, որ պիտի լուսաւորեն մեր եւ ներկայի, եւ գալիքի ճամբան:

Հ.Մ.Ը.Մ.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ
Ե. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

